



ՄԻՈՒՆ

ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ - ՄԱՐՏ

Թիւ 1.2.3 2006

ՄԻՈՒ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

Զ. ՏԱՐԻ - ՆՈՐ ՇՐՋԱՆ

2006	ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ - ՄԱՐՏ	ԹԻՒ 1-2-3
2006	JANUARY - FEBRUARY - MARCH	No. 1-2-3

S I O N

VOL. 80

A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press, Jerusalem

ՄԻՋԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳԵՂԱՐԱՊԵՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՊԵՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՊԵՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՊԵՏԱՆԻ

2. ՏԻՐ - 1906 ՎԱՐՈՒՅ


2006	ՀԱՅԱՍՏԱՆԻ - ԳԵՂԱՐԱՊԵՏԱՆԻ	2006
2006	ՀԱՅԱՍՏԱՆԻ - ԳԵՂԱՐԱՊԵՏԱՆԻ	2006

ՏԻՐ

VOL. 80

ՄԻՋԱՅԻՆ
ՄԻՋԱՅԻՆ
ՄԻՋԱՅԻՆ

ՄԻՋԱՅԻՆ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՊԵՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՊԵՏԱՆԻ



104-2006

St. James Press, Jerusalem

21798-112

ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ

ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱՇԵՆ



SUPREME PATRIARCH

CATHOLICOS

OF ALL ARMENIANS

MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԻՐՈՋ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՇՆՆԴԵԱՆ ԵՒ
ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

(Սուրբ Էջմիածին, 2006 թ. Յունուարի 6)

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամեն:

«Տեսք, որպիսի սեր շնորհեաց մեզ Հայր,
զի որդիք Աստուծոյ կոչեսցուք մեք»

(Ա Յովհ. 9 1):

Սիրելի բարեպաշտ հայորդիներ.

Աստուածայայտնութեան սքանչելատես խորհրդի առջև վերստին կանգնած՝ յուսառատ ու բերկրաշատ հոգով ողջունում ենք ձեզ և աշխարհասփիւռ մեր բոլոր զաւակներին «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» աւետիսով և կրկնում առաքելի խօսքը. «Տեսք, ինչպիսի սեր շնորհեց մեզ Հայրը, որպէսզի մենք կոչուենք Աստուծոյ որդիներ»:

Աստուծոյ սիրով միաւորուել են երկինքն ու երկիրը: Աստուծոյ ողորմութեամբ երկինքն է բացուած: Աստղի պայծառ լոյսն է Բեթղեհէմից վեր, լոյսերի հետ՝ օրհներգութիւն հրեշտակների, որ լցնում են պարզ մտւորը, որտեղ իմաստուն մոզերն ու մաքրասիրտ հովիւները խոնարհուում են մանկացեալ Աստուածորդուն: Խնդութիւն է, յոյսի աւետում, քանգի ծնուել է Փրկիչն աշխարհի:

Փրկչի յայտնութեան աւետիսը քարոզուում է երկու հազարամեակ՝ ուսուցանելով ի լրումն ժամանակի մարդու փրկութեան համար Աստուծոյ Միածին Որդու մարդեղանալու, աշխարհ գալու և մարդկանց մէջ բնակուելու մասին: Նրանով մարդկային բնութիւնը միաւորուեց աստուածայինին: Ով յաւիտեաններից առաջ է, մտաւ ժամանակի մէջ, որպէսզի բացայայտի պատմութեան և մարդկային կեանքի իմաստը, և լինի նոր մարդ ու նոր աշխարհ, հաւատարիմ ու հարազատ՝ Աստուծոյ սիրող, արարող և օրհնող էութեանը. «Նրանով ճանաչեցինք Աստուծոյ սերը մեր հանդէպ», Աստուծոյ փրկարար կամքը: Ի՞նչ ունի պատասխանելու մարդը այս շնորհին, բացի հաւատարմութիւնից: Ի՞նչ ունի կառուցելու աւելին, քան իր հոգու մէջ տաճար Աստուծոյ:

Աշխարհի անցուդարձի մէջ մենք յաճախ դժուարանում ենք լսել Աստուծոյ ծայնը, դժուարանում ենք տեսնել Տիրոջ ճշմարիտ դէմքը և յաճախ աւելի ապաւինում ենք մարդկային մեր ուժերին, որ միշտ տկար են առանց Աստուծոյ: Աւելի ապաւինում ենք տարբերակելու, գնահատելու մեր ունակութեանը, որ անկատար է առանց Աստուծոյ: Առանց Աստուծոյ նիւթապաշտութիւնն է իշխում սրտերին, ատելութիւնն է յաղթանակում և առաջնորդում մարդկանց գործողութիւնները: Այսօր էլ խաղաղութիւնը վտանգուած ենք տեսնում շատ տեղերում, արհամարհուած են մնում մարդկային իրաւունք, ազատութիւն ու արդարութիւն, մրցավազքերի ճանապարհներին մարդը հեռանում է մարդասիրութիւնից, աշխարհը՝ իր Արարչից:

Այսօր Աստուծոյ յայտնութեան, մարդկանց մէջ ներկայութեան, աշխարհի փրկութեան Սուրբ Աւետիսն է հնչում: Շնորհն ունենք ժառանգակից լինելու մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսին, Ով գալիս է խաղաղութեամբ, արդարութեամբ, ողորմութեամբ, որպէսզի չցամաքի սէրն այս աշխարհից, գալիս է աստուածային զօրութեամբ՝ անվախճան լոյս սփռելու և կեանք: Աստուծոյ հետ է կենդանութիւնն ու յաւերժութիւնը, բարին ու բարիքը: Նա է Տէրը, և հայրական տնօրինութեամբ դէպի փրկութիւն է առաջնորդում տիեզերքը: Նրանն է իշխանութիւնը, որ այսօր վերստին Սուրբ Ծննդեան խորհրդով երևում է մեզ փառքով ու զօրութեամբ: Լրացել է ժամանակը: Փրկութեան շնորհով թագադրուած է տիեզերքը, աստուածային սիրով ու սրբութեամբ նորոգուած է մարդկային կեանքը: Արդ, ամենը, ինչ խորհում ու գործում է մարդը, սիրով թող լինի, Աստուծոյ համար լինի, և կլինի աշխարհի խաղաղութեան ու շինութեան համար և կլինի մարդկանց ուրախութեան ու երջանկութեան համար՝ արժանի Տիրոջ գովասանքի խօսքին ու գնահատանքին. «քաղցած էի, և ինձ կերակուր տուցիք, ծարաւ էի, և ինձ ջուր տուցիք խմելու, օտար էի, և ինձ ձեր մէջ առաք, մերկ էի, և ինձ հագցրեցիք, հիւանդ էի, և ինձ տեսնելու եկաք, բանտում էի, և ինձ այցի եկաք ... քանի որ իմ այս փոքրիկ եղբայրների համար արեցիք, ինձ համար արեցիք» (Մտք. Իե 35-40):

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց, «Անհասանելի Աստուծոյ անընդմիջելի մերձաւորութեան» այսպիսի վստահութեամբ մեր հայրերն ապրել են, ստեղծել են հաւատով ու յաղթանակել հաւատով: Փրկչին ապաւինած՝ խաւարների մէջ լոյս ենք գտել, մահերից՝ վերածնունդ: Դարեր, ծիգ դարեր օտարների ասպատակութիւններից, կեղեքումներից ու ջարդերից հալածական ու աշխարհով մէկ սփռուած՝ հաւատով միասնական ենք մնացել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու թևերի ներքոյ՝ հոգւո մեր հայեացքը միշտ ուղղած դէպի Արարատի շուրջ տարածուող հայրենի մեր երկիրը բիբլիական: Մեր հաւատի մարմնաւորումն են այսօր Հայաստանի պետական անկախութիւնը, Արցախի ազատութիւնը և Սփիւռքի կեանքում ազգային ու հոգևոր նորազարթօնը: Հաւատով ձեռքբերուածը հաւատով պիտի պահպանենք, ամրապնդենք և զարգացնենք՝ սիրով, միաբանութեամբ: Ճանապարհ ունենք դեռևս անցնելու: Պատուիրանասիրութեամբ, քրիստոնէական բարոյականով ու արժէքներով ընթանալով դէպի մեր ժողովրդի միացեալ, վստահութեամբ լեցուն ու լուսաւոր գալիքը, դէպի նոր օրը մեր Հայրենիքի, որպէսզի մեր կեանքում իրողութիւն դառնայ անտարանական ճշմարտութիւնը. «Եթէ սկիզբը սուրբ է, սուրբ է և զանգուածը, և եթէ արմատը սուրբ է, ապա և՛ ոստերը» (Հոռմ. ԺԱ 16):

Այսօր գոհութեան մաղթանք և օրհներգութիւն ենք մատուցում Մարդացեալ Աստուածորդուն, որ փրկութեան աստուածային շնորհին ու յոյսին ապաւինած ազգս՝ ցեղասպանութիւնից վերածնուած, անկախ պետականութիւնը վերականգնած՝ իր ներդրումն է բերում պետութիւնների ու ժողովուրդների բարի յարաբերութիւններին ու համագործակցութեանը և տարբեր ազգերի ու մշակոյթների կողքին մասնակից է մարդկութեան խաղաղ, ստեղծագործ կեանքին:

Շնորհանորդ այս օրը հայցում ենք, որ Փրկիչն ու Տէրն ամենայնի բարօրութեան ու հոգևոր պայծառութեան մէջ պահի մեր ժողովրդին, յաղթութեամբ պսակի Արցախի ազատ ապրելու իրաւունքը և Հայոց ցեղասպանութեան ճանաչման ու դատապարտման արդար պահանջը: Աղօթում ենք, որ ամենախնամ իր զօրութեամբ անփորձանք պահպանի աշխարհը համայն, բոլոր ժողովուրդներին, հեռու՝ աղէտներից, աղքատութեան չարիքից, պատերազմի ու ահաբեկչութեան արհաւիրքներից ու սարսափներից և օրհնի ժողովուրդների բոլոր ջանքերը աստուածսիրութեան ճանապարհներին, ուր յոյսն է գալիքի և բարիքը մարդկութեան:

Աստուածակառոյց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ Հայոց Բեթղեհէմից, եղբայրական սիրոյ Սեր ողջոյնն ու բարեմաղթանքն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Սանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Սուրբաֆեանին և մեր Եկեղեցու ուխտապահ հոգևոր ողջ դասին:

Տիրոջ Սուրբ Ծննդեան աւետիսով ողջունում և Հայրապետական Սեր օրհնութիւնն ենք բերում հայոց պետական աւագանուն՝ գլխաւորութեամբ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարեանի: Մեր օրհնութիւնն ու ողջոյնն ենք յղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիար Արկաղի Ղուկասեանին և պետական այրերին: Օրհնում ենք Հայրենիքի պաշտպաններին, զիտութեան, կրթութեան, մշակոյթի ու արուեստի գործիչներին, եկեղեցական վարչութեանց անդամներին ու հաւատաւոր մեր ողջ ժողովրդին:

Ի Քրիստոս սիրով ողջունում ենք Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Աւետիս է Սուրբ Ծննդեան և Աստուածայայտութեան: Աւետիս է կեանքի նորոգութեան ու փրկութեան: Աղօթենք միասին, որ Աստուծոյ կենդանարար Հոգին բոլոր մարդկանց հետ լինի, և յաւելի ու առաւել ևս յաւելի հաւատ և յոյս, մխիթարի նեղութիւնների մէջ, զօրացնի դժուարութիւնների մէջ, պահպանի հաստատուն ու հաւատարիմ աստուածասէր ճանապարհներին: Եւ թող այս աշխարհում միշտ օրհնեալ լինեն ու առատ պտուղներ տան խաղաղութիւնը, ժողովուրդների եղբայրութիւնը, մարդկանց մէջ սէրն ու հաճութիւնը:

Սեր է շնորհել մեզ Հայրը, որպէսզի Աստուծոյ որդիներ կոչուենք: Մնանք աստուածապարզ և շնորհի մէջ, և բարին ու խաղաղութիւնը Հայր Աստծուց և մեր Տեր Յիսուս Քրիստոսից կլինի մեզ հետ այժմ և յաւիտեանս. ամէն:

Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ
Ձեզ և մեզ մեծ աւետիս

*Միրեցեալ ժողովուրդ Հայոց
Որ յԵրուսաղէմ, ի Յորդանան,
ի Պաղեստին, ի Հայաստան
և ի Սփիւռս ցրուեալ.*

Տիրոջ ողորմութեամբ, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան և հաւատաւոր մեր զաւակներուն մասնակցութեամբ՝ ուխտատրաբար խմբուած ենք Քրիստոսի Սուրբ Ծննդեան Տաճարի Մսուրին շուրջ, Բեթղեհէմի մէջ, Միածին Որդւոյն Յայտնութիւնը փառաբանելու համար հայադրոշմ շարականներով և աղօթանուէր մաղթանքներով, և աղերսելով առ Բարձրեալն Աստուած, որ խաղաղութեան բալասանով օծէ խռոված հոգիները մարդկութեան: Խաղաղութիւն՝ մանաւանդ համերաշխ համակեցութեան յոյսով, որուն այնքան կը ցանկայ Քրիստոսակոխ Սուրբ Երկիրը, իր ժողովուրդով:

Գոհունակութեամբ կը նշենք, որ մեզի հետ աղօթակից են.—

1. Պաղեստինեան Իշխանութեան Նախագահ՝ յարգարժան Տիար Մահմուտ Աբբասը և Աւագանին:

Մեր սրտագին բարեմաղթութիւնները կ'առաքենք Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներու գահակալներուն.-

2. Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոս, Նորին Ս. Օծութիւն, Տ. Տ. Գարեգին Երկրորդ Հայրապետին, ի Սուրբ Էջմիածին:

3. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, Նորին Ս. Օծութիւն, Տ. Տ. Արամ Առաջին Հայրապետին, յԱմբիլիաս:

4. Թուրքիոյ Հայոց Ամենապատիւ Պատրիարքին, Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանին, ի Կոստանդնուպոլիս:

* * *

Անցեալ տասնամեակին, ամբողջ աշխարհի մէջ ընդհանրապէս, և մեր շրջանին մէջ մասնատրապէս, փոխանակ սիրոյ և խաղաղութեան, ատելութիւն և բռնութիւն ի գործ դրուած է, մարդկային էակները մղելով ահաբեկչութեան և կոտորածի անմարդկային արարքներու:

Զգացակից ենք համայնքներու և ժողովուրդներու կրած գրկանքներուն, մահացումներուն, անգործութեան, բռնաբարութեանց, տաժանալից կեանքին և վախերուն:

Վկայ ենք և վշտակից իրենց տառապանքներուն, Սրբազան այս վայրերուն մէջ, որ կոչուած է ըլլալ Երկիր Խաղաղութեան: Եւ արդարև

բոլոր լեզուներով Սրբազան Գիրքերու մէջ, Խաղաղութիւն բառը (“Սա’լամ”, “Շալօմ”) օրհնութիւն բաշխող, տարածող շունչ մը ունի:

* * *

Սիրոյ և խաղաղութեան այդ պատգամով է որ կրօնական Առաջնորդներ իրենց դիմումները կ’ուղղեն Պետական Ղեկավարներուն, Միացեալ Ազգաց Խորհուրդին եւ բոլոր կրօններու խղճամիտ հաւատացեալներուն, որ միանան աղօթքով և գործով, հաստատելու համար մշտական ապահովութիւն և խաղաղ համակեցութիւն Սուրբ Երկրի բնակիչ ժողովուրդներու միջև, սերունդէ սերունդ:

* * *

Սուրբ Երկրի ծնունդ երիտասարդ սերունդն է որ ամենէն աւելի ուժգնօրէն կը կրէ հետևանքները տագնապալից ընկերութեան մը խուժրուժ արարքներուն: Հրեայ, Քրիստոնեայ, կամ Իսլամ, անոնք հաւասարապէս զոհերն են անմարդկային արարքներու ողբերգութեան:

* * *

Բոլոր ազգերու մանուկներուն “ողբին” արձագանգն են քերթողական այն տողերը, ուր անմեղ զոհերը մարդկային վայրագութեանց, կ’ակնկալեն որ “Արիւնարբու ղեկավարներ” դարձի գան դէպի աղբիւրը “համամարդկային Սիրոյ և Եղբայրութեան”, դէպի երանութիւնը Աստուածաշունչ ղրախտին:

* * *

Մանուկներուն ուղղուած այդ տողերը, կ’ըսեն.--

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Ով մանուկներ, ծիլ ու բողբոջ,
Յոյսն ու երազ մարդկութեան ողջ,
Սիրտս կըրակ կու լայ ձեր հետ:
Ձեզ կը լափէ սով, հուր, աղէտ:

Անխիղճ մեծեր՝ արիւնարբու,
Եւ խելագար, եւ գինարբու,
Կըրակ կու տան իրենց իսկ տան,
Յանուն կրօնի, ազատութեան:

Ի՞նչ անիրաւ աշխարհ է այս:
Սովալըլուկ ձեր աշուկներ,
Լեցուն կեանքով, հըրապոյրով,
Կը պաղատին սէր, յոյս, երազ ...:

Միայն դարձով՝ Աստուածաշունչ ղրախտին,
Մօր սիրտն զաւկին տայ հունչ,
Տիեզերքին նորաստեղծեալ

Բանայ ճամբան երանական
Դէպ՝ բազմազգեան եղբայրութեան:

Ով մանուկներ, ծիլ ու բողբոջ,
Դո՛ւք ձայնեցէք մարդկութեան ողջ:

* * *

Մարդացեալ Աստուածորդայն և Խաղաղութեան Իշխանին պատգամին անսալով, երանի անխարդախ խաղաղութիւնը հաստատուի իրերամերժ ժողովուրդներու միջև, սերունդներու ապահովութեան, և մարդկութեան յառաջդիմութեան համար, որպէս զի երախտագէտ հոգիով կարենանք աւետել աշխարհին, թէ արդարև.—

-- Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ.

-- Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի:

Ամէն:

Թ.Ա.Մ.

-- Beloved Children of the Armenian Apostolic Orthodox Church, dwelling in the Motherland of Armenia, and dispersed in the Diaspora;
 -- Dear Members of the Universal Church of Christ; and
 -- Faithful Children of the Creator God of Universe.

* * *

We greet you from the Grotto of the Holy Manger of the Nativity, in the city of Bethlehem, where we are gathered, on the Feast of the Birth and Revelation of our Lord Jesus Christ, together with the members of the Saint James Brotherhood of the Armenian Patriarchate of Jerusalem, and the faithful of our community.

We are pleased to have with us in prayers:

1. The Honorable President of the Palestinian Authority, His Excellency Mahmoud Abbas, accompanied by representatives of the Palestinian Authority;

We extend our heart-felt best wishes:

2. To His Holiness, the Catholicos of All Armenians, Karekin the Second, of the Holy See of Etchmiadzin, Armenian

3. To His Holiness Aram the First, the Catholicos of the Great House of Cilicia, in Antelias.

4. To His Beatitude, Archbishop Mesrob Mutafian, the Armenian Patriarch of Istanbul, and of all Turkey.

* * *

As in all troubled times, the real peace seems to be one minute within our grasp, and the other, tantalizingly unreachable.

It is the crisis of this uncertainty that is devouring the younger generation, the youth of all backgrounds – Jewish, Christian, Muslim alike. And perhaps that is the most heart-breaking tragedy of the present situation in our part of the world.

* * *

While thinking of our children, we should be reminded, that we all are the children of the same God, whether we pray to Him in synagogues, in churches, or in mosques, we are acknowledging Him as “Our Father”, “Hayr Mer”, as we say it in Armenian. And He is not a distant or aloof Father. He is approachable and ready to offer us guidance, and words that heal us.

And the Psalmist would advise us, saying: “Hear what the Lord God will speak. For he will speak Peace to His people, to His saints, to those who turn to Him in their hearts.” (Ps. 85:5)

“Shalom”, “Sala’am”, “Khaghaghootiune”, “Peace”, is a sacred word in all languages and in all Holy Scriptures.

* * *

Here and in Jerusalem, the call for peace sounds the loudest, yearning for the creation of an atmosphere of tolerance and understanding and compassion, and urging the acceptance of the rights of all, to live in peace, in harmony together.

We pray the Lord to expedite establishing permanent peace, security, trust and prosperity, for all the peoples of the world, and to restore the moral and social order of civilized society, which has been subjected to a horrific violence.

* * *

In our own time and age, we are beset by all sorts of travails and turmoils. The endless machinations of the Devil will never cease.

On every point on the world map, people are facing daily trials, and fighting unequal battles for survival. If it is not guns and bombs, incurable diseases or unendurable pain, it is natural disasters.

* * *

Reflecting upon the Good-Word of God on this momentous night, we are reinforced in our reassurance of God's compassion and mercy. Let us open our eyes and our hearts, and unstop our ears for a moment, and see the angels, and hear their comforting words to the shepherds, and through them to the world.

* * *

Let us renew our faith, not only here, at the birthplace of Christ, or in Jerusalem, at His Sepulchre, but everywhere and at every opportunity.

Faith is not defined by time, or confined by space. But like the life-bestowing sun or the gently invigorating breeze, it is omnipresent, gaining strength and endurance, with each trial.

The test of faith is not so much in outward manifestation, as it is in still depth of the human heart, in our love for our fellow men, in our imitation of Christ.

* * *

Even though hope for a better future seems to be slim, the message of Christmas remains one of hope, love and peace, as well as justice, freedom and security.

The evil of injustice and war and disaster must be uprooted.

* * *

May our God of Peace, the Allah of Sala'am, and the Jehovah of Shalom, shine His face upon the people and the land of Palestine, Jordan and Israel.

And may He grant all Nations of the World, the hope for His compassion and Peace, the assurance of the dignity of man, and security of life.

May the Universe join the Choir of Angels in joyful harmony, as they herald the good-news: "Glory to God in the highest, Peace on Earth, and good-will among men." AMEN.

T.A.M.

ԿՐՈՆԱԿԱՆ

ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ

«Ձի որպէս անհնազանդութեամբ միոյն մարդոյ՝ մեղաւորք
բազում եղեն, նոյնպէս եւ հնազանդութեամբ միոյն՝ արդարք
բազումք եղիցին»: (Հռովմայեցիս Ե:19)

Վայրկեանի մը համար թեւ տուէ՛ք
ձեր երեւակայութեան, եւ ձեր միտքերուն
մէջ ստեղծեցէ՛ք ա՛յն դրախտը զոր պիտի
ուզէիք տեսնել: Գեղեցիկ ու ջինջ կապոյտ
երկինք մը, փարթամ կանաչութեամբ
ծածկուած բարձրաբերձ լեռներ, առանց
ձիւնի, հաճելի գարնանային օդ, ճոխ
բուսականութիւն ու մարդահասակ սէզ,
ծառեր եւ երփներանգ ծաղիկներ, գուլալ
եւ քաղցր վազող ջուրեր, գունագեղ ու
քաղցրածայն թռչուններ, մինչ անդին
գառնուկն ու առիւծը իրար հետ անմեղ
խաղի բռնուած, եւ վերջապէս քիչ մը
հեռուն՝ մեր նախահայրն ու նախամայրը
ձեռք-ձեռքի տուած անհոգ ու զուարթ
կ'ուսումնասիրեն բնութիւնն ու կը
սքանչանան Աստուծոյ իրենց
յատկացուցած այդ բնակավայրին վրայ:
Մօտաւորապէս այս պիտի ըլլար իմ
տեսնել ուզած դրախտս, անշուշտ երբ
այդ օրը հասնի, եւ եթէ Հայր Աստուած
գիս արժանացնէ ատոր տեսութեան:

Ու այդ տեսարանին
յափշտակութեանը մէջ, յանկարծ, մեր
նախամայրը՝ Եւա, վայրկեանի մը համար
առանձին ձգելով իր կողակիցը՝ Ադամը,
կը մօտենայ գեղեցիկ եւ պտղատու
ծառի մը, որ գիտութեան ծառն էր - եւ
որուն մօտենալն անգամ արգիլուած էր
- ու կախարդուած անոր տեսէն ու
բոյրէն, կը փրցնէ հատ մը անոր պտուղէն
եւ ուտելով կը մօտենայ Ադամի ու
մնացածը կու տայ անոր, որ իր կարգին
հազիւ համտեսած դրախտային այդ
պտուղը, երկուքն ալ միաժամանակ կ'ան-
դրադառնան որ սխալ մը գործած են, եւ
կը փորձեն պահուրտիլ: Հայր Աստուած

գիտնալով թէ Նախաստեղծը դէմ գացած
էր իր պատուէրին, հարց կու տայ անոնց
թէ ինչո՞ւ զանցառու եղած էին իր
հրամանին, որուն Ադամի պատասխանը
կ'ըլլայ.

- Մարդ ենք, սխալեցանք:

Եւ այդ օրուրնէ ասդին, բոլոր
անոնք՝ որոնք սխալ մը կամ յանցանք մը
գործած են, իրենց չմեղանքի եւ
ինքնապաշտպանութեան վերջին բառերը
եղած են, «Մարդ ենք, սխալեցանք»: Այլեւս
ընթացիկ դարձած բառեր, որոնցմով կը
փորձենք մենք զմեզ արդարացնել, պարտկելու համար մեր
թերացումները, մոռացկոտութիւնը,
անհոգութիւնը եւ կամ անպատաստ
գտնուիլը կեանքի անակնկալներուն դէմ,
բառեր՝ որոնք մէկ կողմէն
խոստովանութիւն մըն են թէ մենք միշտ
հակամէտ ենք սխալելու, սայթափելու,
մեղանջելու, սխալ հաշուարկումներ
ընելու, ու միւս կողմէն ալ ընդունելու
մեր անկատարելիութիւնը: Բայց եւ
այնպէս, այդ միեւնոյն բառերը կարելի
է առնել իբր խոստում մը, որ մենք միշտ
պիտի գտնուինք նոյն սխալները կրկնելու
տրամադրութեան մէջ «վերջապէս՝ չէ՞
որ, «Մենք մարդ ենք եւ սխալական...»:

Բայց եթէ պատահի որ մենք
վիրաւորենք իրար, մեր ընտանիքի
անդամներէն կամ սիրելիներէն մին, եւ
որոշենք անդրադառնալ մեր սխալին, եւ
կամ երբ մենք զմեզ հեռացնենք մեր
Արարիչէն եւ կամ անողոքաբար փնաց-
նենք իր ստեղծագործութիւնը, արդեօք
պարզ ու անհոգ ձեւով ըսուած, «Մարդ
ենք եւ սխալեցանք» խօսքը, բաւարար

արդարացում պիտի նկատուի⁶։ Մեր ընտրութիւնները հեռու պիտի ըլլա՞ն ճշգրտութենէ եւ մեր արարքները ենթակայ կասկածի մեր յետին նպատակի մասին։ Ուրեմն այդպէսով մենք պիտի ակնկալենք որ մեղքն ու Աստուծմէ հեռանալը այլեւս անբաժան մէկ մասնիկը կը կազմեն մեր կեանքերուն, քանի որ «Մարդ ենք ու սխալական», եւ ուրեմն... պիտի չհասնինք կատարելութեան։ Եւ ի վերջոյ ինչպէ՞ս պիտի կարենանք ուրիշներու վստահութիւնը ունենալ մեր անձին եւ իրար հանդէպ, երբ անոնք գիտեն թէ մենք «սովորական մահկանացուներ ենք» եւ հետեւաբար... «սխալական»։

Անկասկած ձեւ մը կայ վստահելու մենք մեզի ու նաեւ իրարու, սակայն ո՛չ անպայմանօրէն որովհետեւ մարդկային են մեր արարքները։ Մենք լոկ արարածներ չենք, այլ մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ մաս կը կազմենք երկնաւոր Հօր աստուածային կեանքին ու ընտանիքին, որովհետեւ Աստուածաշունչը յստակ կերպով կ'ըսէ թէ Աստուած Մարդը ստեղծեց իր պատկերին համաձայն, սակայն Մարդը ի՞նք էր որ եղծանեց այդ պատկերը, շնորհիւ իրեն տրուած ինքնիշխանութեան եւ ազատ կամքին, ընտրելու քարին կամ չարը։

Այսու ամենայնիւ Մեծ Պահոց Բ կիրակին կու գայ մեզի անգամ մը եւս յիշեցնելու Ադամի եւ Եւայի անհնազանդութեան պատմութիւնը, թէ ինչպէս անոնք փորձութեան ենթարկուեցան օձին կողմէ, ճաշակելով Բարիի ու Չարի Գիտութեան Ծառին պտուղէն, որովհետեւ անոնք ուզեցին աստուածանալ, քանի որ Մարդը բնութեամբ միշտ ձգտած է ու տակաւին պիտի ձգտի հասնիլ կատարելիութեան։ Իրենց գերմարդ, կէս-աստուածներ դառնալու այդ ճիգին մէջ, մեր նախածնողները

ինքզինքնին խզեցին իրենց Ստեղծիչին կամքէն, եւ հետեւաբար այդ անջատումով կորսնցուցին մասնիկ մը իրենց նկարագրի անուշութենէն եւ գեղեցկութենէն։

Իրենց գերմարդ դառնալու ճախող փորձով՝ Ադամ եւ Եւա կարեւոր մասնիկ մը կորսնցուցին նաեւ իրենց իսկ մարդկայնութենէն, որովհետեւ մենք կատարեալ կ'ըլլանք ա՛յն ատեն միայն, երբ ամբողջական եւ կատարեալ յարաբերութեան մէջ ենք Աստուծոյ հետ, եւ ո՛չ թէ երբ ուզենք դառնալ մենք մեր աստուածները, խզելով մեր կապերը նախ՝ մեր Արարչին, եւ ապա իրար հետ։ Ադամի եւ Եւայի պատմութեան մէջ, Արգիշեալ Ծառի պտուղը ճաշակելէ ետք անոնք անդրադարձան թէ մերկ էին, հետեւաբար անմիջապէս փորձեցին ինքզինքնին ծածկել. անոնք հիմա գերմարդ, կիսաստուածներ դառնալու իրենց գերագոյն ճիգին մէջ ոչ միայն ինքզինքնին խզած էին Աստուծմէ, այլ նոյնիսկ բաժնուած էին իրարմէ։ Մեղքը իր հետ աշխարհի ու մարդկութեան բերաւ նոր սահմանում մը, մենք դարձանք սովորական մարդ արարածներ, որովհետեւ մենք զմեզ հեռացուցինք Անկէ՝ որ ստեղծեց ու կեանքի կոչեց մեզ, մենք արտաքինեցինք մենք զմեզ Անոր սէրէն՝ որ սիրեց մեզ։

Մենք՝ «Սխալական, մարդարարածներ ենք» խօսքի ընտրութեամբ, կարծէք ձեռով մը խուսափած կ'ըլլանք Աստուծոյ մեզի տուած շնորհներն ու տաղանդները օգտագործելէ, ո՛չ միայն յօգուտ ուրիշներու՝ այլ նոյնիսկ մեզի համար։ Երբեմն, մենք մեզ արդարացնելու համար, մեր մարդկայնութիւնը կը պատրուակենք, երբ քարկութեան կամ անտրամադիր մէկ պահուն վշտացուցած ենք սիրելի մը, եւ լոկ հպարտութեան պատճառով կը յամառինք անդրադառնալ մեր սխալին, միշտ կը կրկնենք նոյն

յանկերգը ըսելով, «Մարդ ենք, կը սխալին»:

Մատթեոսի Աւետարանին մէջ, Քրիստոս կը յայտնէ իր մարդկային բնութիւնը, որուն կ'ուզէ մեզմէ իւրաքանչիւրը բաժնեկից դարձնել: Ան եւս զանազան փորձութիւններու ենթարկուեցաւ, սակայն ո'չ նման մեր նախածնողներուն. ան թէեւ ապրեցաւ մեղանշող մարդոց հետ, սակայն միշտ մնաց իր Հօրը հնազանդութեանը մէջ. որովհետեւ ան պէտք չուներ դառնալու ինքնիր աստուածը, կամ ուրիշ աստուած մը:

Մենք կրնանք այս աշխարհի վրայ մեր կեանքերը նմանեցնել անապատային ուղեւորութեան մը, նման մեր Փրկչին Քրիստոսի անապատի ֆառասնօրեայ շրջանին, լեցուն մեր իսկ աստուածները դառնալու փորձութիւններով: Ամէն կողմէն կը լսենք տեսակաւոր կանչեր, որոնք մեզ կը հրաւիրեն տէրը դառնալու մեր կեանքերուն, եւ տիրապետելու մեզ շրջապատող աշխարհին: Սակայն այս ընելով՝ մենք վտանգած կ'ըլլանք ո'չ միայն մեր յարաբերութիւնը նախ՝ Արարչութեան հետ, ապա իրար հետ եւ ի վերջոյ մենք մեզի հետ, այլ առաջին հերթին մենք գլխաւորաբար վտանգած կ'ըլլանք մեր մարդկայնութիւնը: Մենք կատարեալ մարդեր կրնանք դառնալ այն ատեն միայն՝ երբ ներքնապէս կ'ընդունինք թէ մեզմէ իւրաքանչիւրը իր մէջ ունի նաեւ Աստուծոյ նմանութիւնը:

Յառաջիկայ օրերու եւ շաբաթներու ընթացքին, հաւանաբար մեր ֆիզիքական ապահովութեան եւ կարիքներու կողքին, կարիքը զգանք նաեւ շատ մը այլ բաներու, սակայն իւրաքանչիւր Քրիստոնեայի առաջնահերթ պարտականութիւնը պէտք է ըլլայ ապահովել Աստուծային Սէրը, ու զայն դարձնել նպատակակէտը կեանքին: Մեր

գլխաւոր մտահոգութիւնը պէտք է ըլլայ մենք մեզի ներշնչել այն զգացումը թէ Հայր Աստուծոյ հետ բնաւ պիտի չզգանք կեանքի մեղութեան կսկիծը: Մենք պարտինք մտահոգուիլ միայն թէ ի՞նչպէս պիտի կարենանք մենք մեզի ներշնչել վստահութեան այն ջերմացնող զգացումը, որ մեր կողմէն մեզ իսկ Աստուած մեզ առանձին չձգեր: Ոմանց համար գալիք օրերը կրնան շատ ապահովութիւն չենբշնչել, սակայն եթէ ֆաշութիւնը ունենանք իբր Աստուծոյ զաւակները աղօթելու, եւ մեր բառերուն եւ մտածումներուն ընդմէջէն մենք զմեզ նուիրելու մեր երկնաւոր Հօր, այն ատեն մեզի կը տրուի այդ անբացատրելի ներքին ոյժն ու ֆաշութիւնը դիմագրաւելու ամէն տեսակի դժուարութիւնները:

Այնպէս ինչպէս մեղաւոր մարդու մը՝ Ադամի, անհնազանդութեան պատճառով մեղաւորներու թիւը շատցաւ, նոյնպէս ալ մէկ անձի հնազանդութեան՝ Քրիստոսի շնորհիւ, արդարեւ պիտի բազմանան, կ'ըսէ Պօղոս Առաքեալ՝ Հռոմէացիներուն ուղղած իր նամակին մէջ: Եւ ահա նիշդ այս հնազանդութեան ոգիին պէտք ունինք Մեծ Պահոց Քառասնօրեայ մեր այս ուղեւորութեան շրջանին, որպէս զի փոխանակ մեր, բերութիւններն ու սխալները վերագրելու մարդկային մեր տկար բնութեան, այլ զօրացած Քրիստոսի օրինակով՝ դառնանք արժանի զաւակները Հայր Աստուծոյ, որուն պատկերին համաձայն ստեղծուած ենք, եւ այդպէսով կարենանք Աւետարանի Մաքսաւորին նման արդարացած ու սրբուած սիրտերով դիմաւորելու Զատկական արշալոյսն ու հրեշտակին, «Զէ աստ, այլ յարեալ» միտքարող աւետիսը:

ՆՈՒՐԶԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԵՐԿՈՒ ՄՈԼՈՐԱԿՆԵՐՈՒ ԱԻԵՏԱԲԵՐ ՈՂՋԱԳՈՒՐՈՒՄԸ

Աշխարհի եկաւ աստուածութիւն մը՝ ջահաւորուած նախայախտեաններու փառով, որպէս կատարեալ մարդ եւ կատարեալ Աստուած: Երկինգէն առաքուած հոգի մը եւ էութիւն մը, որ ո՛չ մէկ աղերս ունի երկրի հետ: Գերբնական ծնունդ մը՝ աստուածային ծագումով. երբեք աշխարհը չէր նանչցած նման աննախադէպ երեւոյթ մը:

Կ'ապրի բւ կը շնչէ երկրի վրայ, առանց կառչելու անոր հողին ու ժանգին: Երկինքը իր ներշնչումն է, իր իմաստութիւնը, իր աներեկոյ կեանքը, իր առաքելութեան մղիչ զօրութիւնը եւ իր հոգեւոր ուսուցումներու աղբիւրը: Ո՛րքան ձգողական է ու համագրաւիչ իր շնորհազարդ կերպարը, եւ ո՛րքան գերիվեր ու զօրաւոր՝ իր մարդկային եւ աստուածային բնութիւնը: Իր կեանքին ու առաքելութեան ուղեցոյցն է երկինքի Առաջնորդող Աստղը:

Այն բոլորին, երբ մարդկային տկարութիւնները զօդուեցան Փրկչին ամենակարող զօրութեան, մահը դարձաւ անմահութիւն, կեանքը՝ յաւերժութիւն, երկիրը՝ երկինք, գերեզմանը՝ մշտնջենական կեանքին սկիզբն ու շարունակութիւնը, եւ մահկանացու մարդը՝ երկնաբաշխ: Մարդկային հոգին՝ յառնած մեղքերու բոստէն՝ ստացաւ յախտեաններու տարածք:

Քրիստոս խոնարհեցաւ՝ որ մարդը բարձրանայ, աղքատացաւ՝ որ մարդը հարստանայ, մահացաւ՝ որ մարդը անմահանայ: Ո՛րքան կը վսեմանայ հայ հոգեւորականը, երբ Փրկչին նմանութեամբ կ'անշահանայ, կը փոքրանայ, կը համեստանայ, ու կը բարացուցէ երկինքը՝ իր հոգեւոր կեանքով ու արժանիքներով:

Երկնակամարին վրայ՝ նոր աստղ մը (գիսաւոր մը, կամ երկու մոլորակներու հանդիպումը) ծնունդ տուաւ պատմական աննախադէպ երեւոյթի մը, որ ո՛չ կը բացատրուի, ո՛չ ալ կը մեկնաբանուի: Նորահրաշ դէպք մը, որ կը հաղորդուի մարդկութեան աւետարանական ճշմարտութիւններով: Առասպել չէ՝ որ աւանդօրէն ընդունինք, այլ արձանագրուած անհերքելի վկայութիւն, որուն պէտք է հաւատանք՝ առանց փոքր տարակուսանքի:

Աստղ մը չէ՝ միւսներուն նմանութեամբ նշուող, որ գիշերը կը շողայ եւ արեւածագին կ'անհետանայ: Լուսափայլ աստղ մըն է, որ անարեւ հոգիները կը ջահաւորէ՝ մթին հորիզոններէն անդին մշտնջենաւորելով մահկանացու մարդուն անցողական կեանքը: Տիեզերալոյս աստղ մըն է, որ չի մոլորեցներ ուղեւորները, չի մթագներ հաւատով հրդեհուած հոգիները, ու չի հերքեր ականատեսներու վկայութիւնները:

Այս մշտապայծառ աստղը բացարձակ ու հաւատքի իրողութիւն է, որ անշփոթ կը զատորոշուի միւս բիւրաւոր աստղերէն՝ իր նշանակալից խորհրդաւորութեամբ: Միայն այս մէկը պէտք է տեսնենք, որ շատ մօտ է մեզի, որ մեր մէջն է, եւ կրնանք շատ որոշ տեսնել զայն, եթէ բարեպաշտօրէն խոնարհինք Միածին Մանուկին մսուրին առջեւ:

Այս անգուգական Աստղը մեր անհերքելի յոյսն է, մեր անխախտ հաւատքը, մեր խրախուսիչ միփթարութիւնը եւ մեր աստեանական կեանքը յաւերժութեան ազուցող աղամանդակուռ օղակը: Երբ խաւարին փարատումով երկինքի համաստեղութիւնը

կը շիջի, ան կը շողայ մեր էութեան անհուն տարածքին:

Ի՞նչ նշանակութիւն ունի գեհեկնի ոյժերուն շղթայազերծած ամէնօրեայ դաւադրութիւնները: Ո՞ր հասան եւ ո՞ր բն բոլոր ժամանակներու ամբարիշտները, որոնք հուրով ու սուրով փորձեցին մեր հոգիէն ջնջել աւետաբեր Աստղին լուսանանչ նառագայթները: Այն սիրտը՝ որ կը սիրէ, կը պայքարի եւ իր նակատագրին ուղղութիւնը կը վստահի Փրկչին աւետարանական նշմարտութիւններուն, կը մնայ անպարտելի ամենադաժան մարտահրաւէրներու դիմաց:

Աստուծոյ զօրակցութեան ապաւինած պայքարողը լաւ կը հասկնայ թէ երբեք պարտութիւն չի նանչնար, եւ մղուած ամէն նակատամարտ սեւ ոյժերու դէմ՝ ի վերջոյ կը յանգի վճռական յաղթանակի: Սակայն պէտք է շատ զգոյշ ըլլանք՝ որ փորձութիւններու խորշակը չմտնէ մեր հոգիէն ներս ու մարէ հաւատքին ջահը:

Քրիստոս՝ թէեւ շատ կարճատեւ կեանք մը ապրեցաւ երկրի վրայ, իր սիրոյ յեղափոխութեամբ նուաճեց երկիրն ու երկինքը: Աշխարհի հողածին հզօրներէն ո՛չ մէկը կրցաւ իր ծնունդով, հանճարով, զօրութեամբ եւ ապշեցուցիչ սխրագործութիւններով աստուածանալ: Քրիստոնեայ մարդկութեան համար՝ Միածին Որդին վախճանած սուրբի մը սրբանկարը չէ, նահատակ մարտիրոսի մը կամ ազգային հերոսի մը յուշակոթողը չէ, ո՛չ ալ աշխարհահռչակ գիտնականի մը հոյակերտ արձանը: Ան մեր կեանքէն ընդմիշտ անբաժան՝ վստահելի Առաջնորդն է: Կը քաշէ մեր առջեւէն, ու մենք կ'երթանք իր ետեւէն: Ամենափոքր կասկած մը անգամ չ'ակօսեք մեր միտքը՝ թէ կրնանք մոլորիլ ու կորսնցնել զինք:

Հարցնենք թէ ի՞նչ կ'ակնկալենք Ծննդեան այս իրերայաջորդ տարեդարձներէն: Ի՞նչ կը սպասենք՝ որ երկինքը շնորհէ մեզի, եւ իրապէս ի՞նչ է մեր ներքին բաղձանքը, որ շուրջ երկու հազար տարիէ ի վեր լռութեամբ կը դիմագրաւուի: Հարստութիւն, նիւթական անբաւ քարիքներ, հանգստաւէտ կեանք, կամ փառք ու պատիւ: Եթէ այս սին ու մեղապարտ վայելքները պիտի ըլլան մեր իղձերուն թիրախը, զանոնք պիտի չստանանք՝ ո՛րքան ալ անսպառ տարիներ ապրինք երկրի վրայ:

Այս տօնական օրերուն՝ համեմատե՛նք մեր փոխանակած նուէրները այն ընծաներուն հետ, զորս բարեհոգի ու բարեպաշտ հովիւները եւ իմաստուն մոգերը մատուցին նորածին Աստուծոյ: Անոնք տունին ոսկի, կնդրուկ եւ զմուռս: Իսկ մենք՝ հայ քրիստոնեաներս՝ ի՞նչ կու տանք, որ համարժէք ըլլայ Տօնին սրբազան խորհուրդին:

Յիսուսի Ծնունդը չ'ըսեք մեզի. «Կերէ՛ք, խմեցէ՛ք եւ կռուեցէ՛ք», այլ կը պատուիրէ. «Սիրեցէ՛ք, աղօթեցէ՛ք, ներեցէ՛ք եւ փառաւորեցէ՛ք զԱստուծո՛ւ»: Այս բարոյագուրկ աշխարհին մէջ՝ միայն սուրբերն ու արդարները կրցան նանչնալ թէ ո՛ր ուրախութիւնները սուրբ են, ո՛ր սէրերը՝ անարատ, ո՛ր վայելքները՝ աստուածահաճոյ, եւ ըստ այնմ ապրեցան:

Ամենամեծ դժբախտութիւնը՝ որ այս տարտամ ու տագնապալի ժամանակներուն կը հարուածէ Հայուն նակատագիրը, իր անուղղայ անմիաբանութիւնն է: Ան հայ աշխարհին մէջ կը ստեղծէ հակամարտութիւններ, վրիժառու ոճիրներ, հայաջինջ արտագաղթներ, ու երկրին բարոյականը ապականող կեղեքողներ, վաշխառուներ, կաշառակերներ եւ շողոքորթներ: Երբ

մեր շուրջը կը նայինք եւ կը տարածենք մեր տեսողութիւնը մինչեւ հայրենիք, չենք տեսներ երիտասարդութիւն մը՝ որ հայրենիքը սիրէ հիմնաւորը հայրենասէրներու հրաշքով: Եթէ կայ սրտին մէջ յամեցող զգացում մը՝ որ կ'այլասերէ իր սիրոյ տրոփումները, առիկա հանդամոլութիւնն է, նիւթապաշտութիւնն ու մարմնապաշտութիւնը:

Սակաւաթիւ են իրաւ հայրենասէրները, որ կը մնան կառչած հայրենի սրբազան հողին, եւ պատրաստ են բարձրագոյն պատնէշներու վրայ ողջակիզելու իրենց գարուն կեանքը հայրենիքի պատշպանութեան: Պէտք է ապերախտ ըլլալ հայ նահատակ ժողովուրդին հանդէպ, որուն կը պարտի ամէն հայ իր գոյութիւնը, իր հարստութիւնը, իր երջանկութիւնը, իր հանճարը եւ տաղանդը, իր պատիւն ու փառքը:

Ապագայնացած կիսահայր պարտաւոր է հասկնալ թէ մեղք կոչուած պատուհաս մը կայ, որ կրնայ փուլզումներ ստեղծել իր կեանքին մէջ, եւ անանուն բեկորի վերածել օտարաբոյր անհայտ վրայ իր... ապերախտութիւնը: Իսկ արտագաղթող հայերն ալ ասպնջական երկիրներու մէջ տարբեր կը հաւատան: Փրկութիւն կ'ուզեն, բայց Փրկիչը կը մերժեն. խաղաղութեան կը ցանկան, սակայն կռնակ կը դարձնեն խաղաղութեան Առաքեալին. սէր կը փնտռեն, բայց սիրոյ Աստուածը չեն ընդունիր:

Ժամանակն է որ այս տօնական օրերուն՝ լա՛յն բանանք մեր սրտերը երկնային Մանուկին մտորին առջեւ, եւ տանք անոր պատուականագոյն տեղը, որ իր բերած խաղաղութիւնը դառնայ նառագաթող իրականութիւն մեր կեանքին մէջ:

ՎԱՐԴԱՆ Ա. ՔԷՆՅ. ՏԻԻԼԿԷՐԵԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՊԱՏՈՒԷՐԸ

Ղուկաս Ժ 27-28

Որպէս ներածական, լսենք Յիսուսի ուրախութիւնը. - Նոյն ժամուն Յիսուս Սուրբ Հոգիին պարգեւած ուրախութեամբ ըսաւ.

«Հա՛յր, երկինքի եւ երկրի Տէր, շնորհակալ եմ՝ Քեզի, որ այս բաները պահեցիր իմաստուններէն ու գիտուններէն եւ յայտնեցիր պարզ ու համեստ մարդոց: Այո՛, Հա՛յր, Դուն այսպէս ուզեցիր»: Ղուկ. Ժ. 21:

Աստուծոյ խտացեալ պատուէրը իր մարդ արարածներուն հետեւեալն է. -

«Սիրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ, ամբողջ զօրութեամբդ եւ ամբողջ մտքովդ» եւ «սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս»:

Աստուած ինչո՞ւ մարդ արարածին, մարմնական եւ հոգեկան ամբողջականութիւնը կը պահանջէ: Աստուած, միթէ կ'ուզէ գերեզմարե՞լ Իր արարչագործած մարդը: Հա՛յր Աստուած, զոր Յիսուս ներկայացուց որպէս Սիրոյ Արարիչը, ինչո՞ւ թող չտար մարդ արարածին, որ ապրի այնպէս ինչպէս որ ան կ'ուզէ: Ուստի, Աստուծոյ փափաքը՝ պահա՞նջ մըն է, թէ անոր մէջ շնորհի մը եւ վայելչութիւն մը տեսնելու ենք:

Արարիչ Աստուած ունի բազմաթիւ յատկանիշներ եւ հանգամանքներ, որոնց գերագոյն առանձնաշատկութիւնը՝ սրբութիւնն է: Աստուած մարդ արարածէն յաջողութիւն չակնկալեք, այլ

հաւատարմութիւն: Ինչո՞ւ, որովհետեւ Աստուծոյ կերպարին ու նմանութեան պէս ոեւէ արարած, ունի նաեւ ազատ կամք, այնպէս ինչպէս Արարիչ Աստուած Ի՛նք:

Այս անսահման տիեզերքին մէջ, աստուածաստեղծ երկու անձեր գտնուեցան, որոնք իրենց ազատ կամքի եւ սնանկ սիրոյ պատճառաւ ըմբոստացան իրենց Արարիչին: Առաջինը կը կոչուէր. «Ով առտուանց ծագող Արուսեակ», եւ յետոյ կոչուեցաւ՝ Սատանայ: Երկրորդը, կը կոչուէր Յուդա, որ կոչուեցաւ՝ մատնիչ եւ գող:

Ներկայ ժամանակաշրջանին մէջ, ժողովուրդներ կը դիտեն իրենք զիրենք ցեղայի՛ն դիմակով: Օրինակ, երբ հայեր ներգաղթեցին Գաւառ, հիմնեցին հայ եկեղեցիներ եւ հայ դպրոցներ: Նաեւ բոլոր զանազան ազգեր եւս հիմնեցին իրենց ուրոյն եկեղեցիներն ու դպրոցները: Աստուած ազգութիւններ չհիմնեց, այլ մարդկութիւն: Նոյնպէս ալ, Աստուած մարդ արարածը միայն այս երկրին համար չստեղծեց, այլ համայն տիեզերքի սպասաւորութեան համար: Վերոյիշեալ պատճառաւ Ան ղրկեց Իր Միածին Որդին Յիսուս, որպէս Դաստիարակ, պատրաստելու համար մարդկութիւնը համայն տիեզերքի քաղաքացիներ ըլլալու: Յիսուս եկաւ հողաշէն մարդկութիւնը փոխակերպելու հոգեղէնի՝ եւ անոր պարգեւելու յաւիտենակա՛ն կեանք: Կարգ մը մանկամիտ հաւատացեալներ կը կարծեն, թէ մեռելոց յարութենէն յետոյ բոլոր հաւատացեալներ քնարը իրենց ձեռքին շարունակ պիտի երգեն ու փառաբանեն զԱստուած:

Արարիչ Աստուած ոչ թէ մեզմէ փառաբանուիլ կ'ակնկալէ, այլ մեր սէրը, հաւատարմութիւնը, վստահութիւնը եւ գործունէութիւնը: Համայն տիեզերք իր անհամար յուսատու ջահերով, սկզբնական

դարերէ ի վեր, կը փառաբանեն զԱստուած: Մեր աշխատասիրութիւնը եւ հաւատարմութիւնն է որ պիտի փառաբանէ եւ ուրախացնէ զԱստուած եւ ոչ մեր քնարական երաժշտութիւնը: Ան մարդը ծուլութեան համար չստեղծեց, այլ մարդը դառնալու է ստեղծագործ եւ բեղուն: Յիսուս ըսաւ.

«Իմ Հայրս մինչեւ հիմա կը գործէ, ես ալ կը գործեմ»: (Յով. Ե. 17)

«Ես եմ ճշմարիտ որթատունկը, եւ Հայրս մշակն է: Անիկա կը կտրէ վրաս հաստատուած բոլոր այն ճիւղերը որոնք պտուղ չեն տար» (Յով. ԺԵ. 1-2):

Տեսնենք թէ Աստուծոյ բարձրագոյն պատուէրները ի՞նչ կը յայտնաբերեն իրեն կերպարանակից մարդ արարածին:

Առաջին.- «Սիրէ քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ»:

Ի՞նչ կը նշանակէ «Սիրել», եւ ինչո՞ւ սիրելու ենք զԱստուած: Սիրել, յանձնառութիւն մըն է, այսինքն պարտականութեան ստանձնում: Աստուած բոլոր աշխարհը սիրեց, եւ այդ սիրոյն համար ղրկեց Իր Միածին Որդին, բայց ի՛նչ օգուտ, երբ անոնք Ջինք չսիրեցին եւ սպաննեցին Անոր Միածինը: «Բառ երբ կարելոր չեն, այլ ապրող ու շնչող հաւատք, նման այն զոյգերուն՝ որոնք կ'ապրին միասին ու կը սիրեն իրար, եւ յաճախ խօսիլը կը նկատեն անկարելոր. որովհետեւ երբեմն նայուածք մը, ժպիտ մը եւ ձեռքի սեղմում մը աւելի շատ բան կ'ըսեն քան որեւէ խօսք» (Նուրհան Արքեպիսկոպոս):

Ի՛նչ փառք ու փրկութիւն, բռնել ու սիրել աստուածային բարեբար Ձեռքը, այդ հրաշագործ ու ամենասուրբ Ձեռքը, որ գթառատ՝ կու տայ ու կը մոռնայ, կը փրկէ ու կը գոհանայ, կը նախատուի ու կը ներէ, եւ ցոյց տրուած ապերախտութիւններու հակառակ՝ չի զրկեր մեզ Իր աստուածային շնորհներէն ու պաշտպա-

104 - 2006



նութենէն: Մեծագոյն պատուիրանը ըստ Յիսուսի հրահանգին «Պիտի սիրես քու Տէր Աստուածդ քու ամբողջ սրտովդ» է: Հրահանգ պատուէրը, հաւատալէն աւելի սիրել է: Սիրելը տառապիլ է: զԱստուած սիրելը՝ պաշտել է, սրբութեամբ: Մի՛ սպասեր սիրուիլ, կրնա՞ս սիրել՝ սիրէ՛: Մի՛ ակնկալեր առնել, կրնա՞ս տալ՝ տուր: Մի՛ սպասեր փնտռուիլ, կրնա՞ս փնտռել. փնտռէ: Հաւատալ ու սիրել այն զոյգ ճառագայթաբաժակ շողերն են, որոնք կը սրբացնեն մարդը եւ տեսանելի կը դարձնեն Անտեսանելին: Սատանան ալ կը հաւատայ քայքայ սիրեր զԱստուած:

Քրիստոս այնքան սիրեց մարդը, որ իջնելով զօրութեան քարձոնքներէ ոչ միայն «Մարմին եղաւ», այլ լուաց նաեւ իր աշակերտներուն ոտները եւ այսպիսով եղաւ քացառիկ օրինակը սիրոյ եւ խոնարհութեան: Յիսուսը խաչեցին, որովհետեւ Ան ուսոյց ա՛յն տեսակ սէր մը, որ վտանգ էր հասարակ մարդու, սէր մը որ ամբողջական նուիրում եւ անձնատուութիւն կը պահանջէր:

Երկրորդ - «Սիրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ սիրտովդ»:

Կեանքի իսկական գեղեցկութիւնն ու զօրութիւնը, սիրտով սիրելու հրաշագործ արտայայտութեան մէջ կը կայանայ: Հաւատքի եւ յոյսի բանալին սէրն է, Քրիստոնէութիւնը խարսխուած է սիրոյ վրայ, որովհետեւ Աստուած սէր է: Սիրոյ ծիրը լայն է: Սահմանը՝ անծայրածիր, ինչպէս մեզ Ստեղծողին Հոգին: Պետրոս առաքելի սրտին սիրոյ զսպանակը ոտքի կանգնեցուց զինք՝ իր ուրացումէն յետոյ: Կեանքը պարտի դառնալ հանդիսարան հաւատքի, սիրոյ եւ ծառայութեան: Մարդու ինքնակատարելագործման ուղին կ'անցնի սիրող սրտի մը մաքրագտման բուրախով:

Աստուածաշունչին մէջ «սիրտ» բառը ընդհանրապէս իր սովորական

իմաստով չէ որ կը գործածուի, այլ՝ փոխաբերական նշանակութեամբ: Ընդհանրապէս միտքը, այսինքն խորհողութեան, դատողութեան եւ կամեցողութեան կեդրոնը. - Մատ. ԺԲ. 34, ԺԵ. 18-19, Մար. Բ. 6, Ղուկ. Գ. 15:

Ամէնէն առաջ սիրտը կ'ստեղծուի մօր արգանդին մէջ: Առաքելներու հրեղէն լեզուները չկարողացան ջերմացնել սառ դարձած Հրեայ ժողովուրդին սիրտը: Երանի՛ անոնց, որ մաքուր են սրտով (կը նշանակէ՝ Աստուծոյ նուիրուած, Աստուծոյ յատկացուած, կամ Աստուծոյ պատկանող), որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն»: Աստուած կը փնտռէ քարութեան, ծառայութեան եւ նուիրումի ոգիով օժտուած սիրտերը: Հաւատացեալի մը սիրտը աւելի խոր կը զգայ, քան միտքը կը մտածէ:

Սիրտը գիրք մըն է ուր կ'արձանագրուին ոչ միայն ինչ որ կը սորվի մարդ, այլեւ անոր խորհողներն ալ:

1. Առաջին էջն է գիմագիծը, մանաւանդ աչքերը:

2. Աչքեր կան որ հեռատես են, աչքեր ալ որ կարճատես կ'ըլլան: Աչքեր կան, մշուշոտ, աչքեր կան ամէն ինչ պղտոր տեսնելու հակամէտ...:

Գաղափարականը, քիւրտ իրականութենէն շատ գերազանց ըլլալով, միտքը կը դիւթէ, եռանդը կը վառէ, երեսակայութիւնը կը բորբոքէ եւ սիրտը կը լեցնէ յորդ գագաթմաներով: Մեղքը կը կարծրացնէ մարդու սիրտը, սէրը կը կակուղցնէ: «Սէր անուն Յիսուս, սիրով քով նմեա՛ սիրտ իմ քարեղէն»: Սէրը իրեն բնակարան ունի սիրտը: Ուրեմն սուրբ պահեմք մեր սիրտը, մեր միտքը եւ մեր կեանքը: Աննուանելի մեծութիւնը, ո՛չ հանճարեղ գիտունն է, ո՛չ ներհուն մտաւորականը, ո՛չ շնորհագարդ

արուեստագետը, ո՛չ դափնեկիր ֆերթողը, ո՛չ վերապաց աղօթողը, ո՛չ ամենագոր աշխարհակալը եւ ո՛չ ալ ոսկեկշիռ միլիոնատէրը: Կեանքի մէջ իսկական մեծութիւնը՝ այն մահկանացու մարդն է, որուն սիրտը կը գործէ աստուածային գթութեան եւ զոհողութեան բարախումներով: Մարդկային սիրտը ոսկեհամ մըն է գոր պարտի պեղել ամէն Քրիստոնեայ, ի գիտակցութիւն այն գանձին, որուն վրայ խօսեցաւ Սուրբ Փրկիչը:

1. Սուրբ մարդուն սրտին մէջ ամէն առաւօտ կը ծագի Արդարութեան Արեգակը:

2. Պիղծ մարդուն սրտին մէջ, կը տիրէ ատելութիւնը՝ մա՛յրը բոլոր չարիքներուն:

3. Սուրբ Աւետարանը Սի՛րտն է Յիսուսի, որ բացուած է բոլոր մարդոց առջեւ, գերզգայուն, բարերար, կարեկից եւ շնորհաբաշխ:

Այն սիրտը, որ կը հաւատայ, կը յուսայ, կը սիրէ, կը պայքարի եւ իր կեանքի ուղղութիւնը կը վստահի Աւետարեք Միածնին՝ կը մնայ անպարտելի ամէն արհաւիրքի դիմաց:

Ախրտն է որ սուրբեր կը պատրաստէ:

Երրորդ.- «Սիրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ հոգիովդ»:

«Հոգի» բառը կը նշանակէ ու կը յայտնաբանէ այդ անտեսանելի գործօն գորոյթը, որ կը շարժէ մարդկային ընկերային, մշակութային, գաղափարական եւ ֆաղափական ընթացքը, ըմբռնումը եւ կամեցողութիւնը: Մարդկութիւնը ունի իր հոգին, եւ այդ հոգին Աստուծոյ հետ իր ունեցած սուրբ հաղորդութիւնն ու աղօթքն է: Մարդ արարած՝ մարմին եւ հոգի, սակայն իրապէս մէկ են:

1. Մարդկային մարմինն ու հոգին Աստուծոյ կամքին արտայայտութիւնն են:

2. «Հոգի» բառը կ'ակնարկէ մարդկային կեանքին եւ անոր ընդհանուր անձնաւորութեան:

3. «Հոգի» նաեւ կ'ակնարկէ մարդուն ներքին սկզբունքին եւ համոզումին:

Հոգեկանը իրականութեան գործօն արտացոլացումն է, որ կ'իրագործուի բարձրագոյն էակներուն մէջ, որոնք կը սիրեն զԱստուած: Սիրելով զԱստուած հոգին կը ջահաւորուի եւ իմացականութիւնը կը ծլարձակուի: Մարդ բաղադրութիւնն է նիւթի եւ հոգիի, մահուան եւ յաւերժութեան: Միտքը կը զարգանայ, իսկ հոգին թռիչք կ'առնէ կը սաւառնի եւ կը խոյանայ: Տիեզերքն համօրէն խորհրդանշումն է Հոգեւորին: Հոգեկանին կարեւորութիւնը անոր աստուածաբանական յատկանիշները չեն, այլ Անոր դերը մեր կեանքին մէջ:

Սուրբ Հոգին, Յիսուսը Փոխարինողն է Անոր երկրաւոր բացակայութեան ընթացքին. - Յով. ԺԴ. 26: «Դեռ շատ բաներ ունիմ ձեզի ըսելու, բայց հիմա չէ՛ք կրնար տանիլ: Երբ որ գայ Ինքը՝ ձձմարտութեան Հոգին, ամենայն ճշմարտութեամբ պիտի առաջնորդէ ձեզ. որովհետեւ ոչ թէ ինքնիրմէ պիտի խօսի, այլ ինչ որ լսէ՝ զայն պիտի խօսի. եւ գալիք բաներու մասին պիտի պատմէ ձեզի» - Յով. ԺԶ. 12-13:

Չորրորդ.- «Սիրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ գորութեամբդ»:

Հաւատալու գորոյթը, ո՛չ թէ հաւատքի՝ մէջն է, այլ չհաւատալու՝ ազատութիւնը ունենալով հանդերձ, հաւատալուն մէջն է: Մարդ էակը աղօթքով ու խորհրդաբանութեամբ սպասելու է մինչեւ որ գորութեամբ զգեստաւորուի բարձունքներէն, մեզ սիրո՛ղ՝ Հոգի Աստուծմէ: Անտեսանելի, սակայն զգալի ներկայութիւն մը կայ թէ՛ մեր շուրջը եւ թէ մեր մէջ, Որուն Զօրութեամբ մենք

թէ՛ կը գոյատեւենք ու նաեւ յաղթական կ'ըլլանք: Քրիստոսի վերանորոգիչ՝ զօրութեամբ էր որ հայը վերանորոգեց իր օճախը ուր որ ափսոսանք, ամէն անգամ որ մարդիկ ֆանդել փորձեցին: Սուրբ Հոգւոյ խոստումը ոչ լեզուներով եւ ոչ ալ կրակով էր, այլ՝ զօրութեամբ:

Հայաստանի հողը, ջուրը, կարծր քարը, շօշափելի միջավայրը, մասնաւոր հրապոյր մը ունի, ֆաշտական ոյժ մը ունի հայ մարդուն համար,

1. Հայրենի հողին այդ հմայքը, միաժամանակ զօրութիւն է, եւ ոյժ է:

2. Հայրենիքի հողը շաղախուած է, մեր նախնեաց բիրաւոր նահատակներու եւ անթիւ անձնուրաց հաւատացեալներու արիւնով:

3. Հողը անբացատրելի զօրութեամբ մը կը համակէ մեր բոլորին հոգին:

4. Տեսանելի հողին ընդմէջէն՝ անտեսանելի հոգեկա՛ն ոյժ մըն է որ կը ցոլայ դէպի մեզ:

5. Անկենդան հողէն ու ջուրէն, եւ կարծր միջավայրէն, կը հաղորդուինք կենդանի զօրութեամբ մը, որ թեւեւ չի տարրալուծուիր գիտականօրէն, բայց կ'ապրուի իմանալի զօրութեամբ:

Կա՞յ գիրք մը որ աւելի սատարած ըլլայ մարդկային մշակոյթին եւ հոգեկան անման: Եւ կա՞յ հայերէն գիրք մը, որ աւելի խոր ազդած ըլլայ հայ սրտի ու հոգւոյ վրայ, աւելի գեղեցկօրէն պայծառակերպած ու զօրացուցած զայն, քան Մաշտոցի թարգմանած Աստուածաշունչը: Ուստի՝ մեր ուղին փնտռենք այն բացառիկ զօրութեան մէջ, որ աստուածային առաջնորդութիւն կ'ըսուի: Զօրութեան եւ յաղթանակի (Յարութեան) այս անդիմադրելի ուժը չի կրնար յերկրածոյ, պատրանքային կամ ինքնախաբէական դէպքի մը արդիւնք ըլլալ աշխարհի բոլոր ազգերուն մէջ: Յիսուսի եկեղեցին Հայութեան միութեան

եւ զօրութեան ամրապնդիչ հոգե-կրօնական կոռուանն է: Աստուածային Սէ՛րը՝ մեր կեանքին, իմա՛ստն է, մեր գոյութեան եւ զօրութեան աղբիւրը, եւ գաղտնիք մեր յաւերժութեան:

«Յիսուս կանչեց տասներկու աշակերտները եւ անոնց զօրութիւն եւ իշխանութիւն տուաւ բոլոր չար ոգիները հանելու եւ հիւանդութիւնները բժշկելու: Ապա զանոնք ղրկեց որ Աստուծոյ արքայութիւնը փարփեն եւ հիւանդները բժշկեն» - Ղուկաս Թ. 1-2:

Աղօթքը՝ զօրութեան եւ կեանքները հիմնովին փոխող վառ իրականութիւն մըն է: Ազդու եւ արդիւնաւոր գործօն մըն էր աղօթքը Յիսուսի կեանքին մէջ:

Հինգերորդ.- «Միտէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ մտքովդ»:

Գոյութիւնը (նիւթ, մարմին եւ էութիւն) ոչինչէն յառաջ չի կրնար գալ: Նիւթը միտէն յառաջ եկած ըլլալու է, որովհետեւ ամէն ինչ մտածումի մը արդիւնք կամ հետեւանքն է: Միտք մը եւ նպատակ մը կայ անջրպետի գոյացութեան մէջ: «Խորհուրդ խորին, անհասանկիզբն:» Նիւթը յառաջ եկած ըլլալու է Տիեզերակա՛ն Միտէն՝ Աստուծմէ: Միտքը պարզ ուղեղային բջիջներու տրցակ մը չէ՛: Միտքը անձնաւորութեան մը ներկայութիւնն ու գոյութիւնը կ'ապացուցանէ: Կեանքի D.N.A. գանձարանին տեղեկութիւնները ո՛րքէ գոյութեան եկած են: Ո՞վ ամբարած է զանոնք ու կարգաւորած իւրաքանչիւր անձին համար: Նիւթէն՝ մտածում եւ օրէնք չի կրնար աղբիւրել: Մտածում եւ օրէնք միտէն կու գայ՝ Տիեզերական սիրոյ՝ Միտէն՝ Աստուծմէ:

Ինչո՞ւ սիրել զԱստուած մեր ամբողջ միտքով: Որովհետեւ «միտք»ը կրնայ թէ՛ աստուածային ըլլալ, եւ թէ՛ սատանայական: Մարդ որո՞ւ որ բանայ իր սրտին դուռը, ա՛ն կը կառավարէ

մարդու միտքը այնուհետև: «Աստուծոյ Որդին եկաւ ու բացաւ մեր միտքերը, որպէս զի նանչնանք ճշմարիտ Աստուածը» - Ա. Յով. Ե. 20: ՄԻՏՔԸ նիւթականէն աւելի անձնական եւ գիտակցական իրողութիւն մը կը ներկայացնէ տիեզերքին մէջ, ոչ պարզ զօրութիւն մը: Զօրութիւնը առանձինն, առանց մտքի, չի կրնար հնարել գեղեցկութիւն, արդարութիւն եւ բարին: Եթէ Անձնաւորութիւն, Ինքնութիւն եւ Հեղինակաւորութիւն նանչցուած ՄԻՏՔ՝ Աստուած գոյ չէ, մարդ ինչո՞ւ կ'աղօթէ ու կը շարունակէ աղօթել եւ հնազանդիլ Գերագոյն Միտքի կամ Բացարձակի: Եթէ կը փափաքիս գտնել, փորձէ՛ աղօթել եւ հանդիպիլ Աստուծոյ՝ Գերագոյն ՄՏՔԻն:

Մարդուն անաղարտ միտքը Յաւիտեանականին Մտքին մէկ ցոլքն է, լոյսի ոկկէանին մէկ հիւլէն: Միտքը տեսանելի կը դարձնէ բազմաթիւ սկզբունքներ եւ գիտական կանոններ՝ «թէօրիա», իսկ հոգին կը տեսաւորէ խորհուրդն ու կ'իմաստաւորէ մտածումներու բարիի կամ չարի ընթացքը: Միտքը գերագոյն եւ գեղեցկագոյն պարզեւններէն մէկը՝ Աստուծմէ շնորհուած է մարդուն: Միտքը կը նախը հոգեկան եւ իմացական տարածութեան անսահման ոլորտները: Ան կը զննէ անցեալ դարերու հեգիաթային հորիզոնները, կը հրապարակէ զմայլելի ճշմարներ, գանձեր եւ ճշմարտութեան ճշոյլներ եւ անսպառ նիւթ կը հալթայթէ հնախոյզին, երկրաբանին եւ բանասէրին:

Աստուած յայտնութիւն մըն է, որ կը ծագի մարդկային սրտին երկնակամարին վրայ ու կը լուսաւորէ միտքը: Ամէնէն հարցասէր միտքը գոհացնող բացատրութիւնները՝ Խաչեցեալին լոյսով կը բանան իրենց դռները: Թէեւ միտքը կախում ունի ուղեղին եւ անոր աջակ-

ցութեան որպէս մեքենայ, այսուամենայնիւ տարբեր է ու աւելի գերադաս ուղեղէն: Որոշում առնողն ու դատողը միտքն է ու ոչ ուղեղը: Միտքն ու կամքը ոչ մարմնական են ու ոչ ալ շօշափելի, այլ ազատ իրողութիւններ եւ իսկութիւններ: «Այս աշխարհի «աստուած»ը նկատուած Սատանան կուրցուցած է այդ անհաւատներուն միտքը, որպէս զի չըլլայ որ Աւետարանին բերած լոյսը ծագի անոնց մէջ, այսինքն՝ տեսնեն փառք Բրիստոսի, որ անտեսանելի Աստուծոյ Պատկերն է» - Բ. Կորնթ. Դ. 4:

Յիսուս ի՞նչպէս կը տեղեկանայ ուրիշի մը մտածումին: Մտածումը շօշափելի կամ տեսանելի առարկայ մը չէ: Մտածումը անձի մը իսկական ու էական հոգեղէն ինքնութիւնն է: Ներքին այդ անթափանցելի կորիզը, այդ կեդրոնական անմատչելի ուրոյն գոյացութիւնը, որ կը զանազանէ մարդը անասուններէն ու նաեւ իւրաքանչիւր մարդ արարածը իրարմէ:

1. Մեր Տիրոջ թափանցումը սոյն անմատչելի ներքին էութեան, ապացոյց է, թէ Ի՛նքն է այդ հոգեկան ինքնութեան Արարիչը եւ Ի՛նքն ունի սոյն հաղորդակցութեան բանալին եւ մատչելիութիւնը:

2. Այս հոգեկան մօտեցումի, մատչելիութեան եւ հաղորդակցութեան համար է, որ Աստուած կը լսէ ու կ'իմանայ մեր աղերս խնդրանքները երբ կ'աղօթենք: Աստուած է որ կը ֆննէ մեր սրտերը: Աներեւոյթ երեւելի կը դառնայ հաղորդական դարձնելով խորհուրդը: Մենք մարդկային բառերով չենք աղօթեր Աստուծոյ, այլ հոգւոյ՝ անմրմունչ զգացութեամբ ու գիտակցութեամբ, որովհետեւ Ան որպէս տիեզերական Միտք, յարաբերութեան մէջն է մեր մտածողութեան:

Եկեղեցիները եւ հաւատացեալները իրարմէ բաժնող գլխաւոր պատճառները,

անոնց սեփականացուցած ծէսերն ու իմաստասիրական հեթանոս վարդապետութիւններն ու նաեւ «գլիշէ» եղած խօսքերն են, որոնք այլեւս կորսնցուցած են իրենց արժէքը սխալ գործածուելով, ինչպէս «Վերստին Մնած եմ» խօսքը: Միացո՛ւր բու կեանքդ՝ մտածումներդ եւ ապրումներդ Յիսուսի Լոյսին: Աստուծոյ էութիւնը միշտ վեր պիտի մնայ մարդոց կերտած կաղապարներէ եւ մտածումներէ: Մարդկային ուղեղը, որ նիւթեղէն է, կը պատկերացնէ մարդկային աննիւթական մտածումները եւ խորհրդածութիւնները - գի՛րն ալ որ պատկերալից է, տեսանելի եւ շօշափելի կը դարձնէ ուղեղին տեսանելի եւ աննիւթական ըմբռնողական խորհուրդները:

Ուրեմն երբ «բոլոր մտքով սիրենք զԱստուած», ա՛յդ ժամանակ պիտի կարենանք տեսանելի ընել զԱյն մեր կեանքով, ապրումով եւ առարկայականօրէն: Ուստի կ'ուզե՞ս վկայել զԱստուած ու դառնալ Անոր գործակիցը, սիրէ՛ բու Տէր Աստուածդ բոլո՛ր մտքով որպէս զի դառնաս՝ անտեսանելի Արարիչիդ, տեսանելի՛ արարած մարդ էակը:

Վեցերորդ.- «Սիրէ՛ ընկերդ բու անձիդ պէս»:

Զգացող եւ որոնող հոգին կը հարցնէ. «Ինչո՞ւ կ'ապրիմ, ո՞ւր կ'երթամ, ի՞նչ է կեանքիս էութիւնն ու նպատակը»: Արուեստն ու գիտութիւնը պատասխան չունին: Յիսուս, չպատճառաբանուած բան մը չէ ձգած, եթէ ընդունակութիւնն ունիս տեսնելու, լսելու, զգալու, մտածելու եւ տրամաբանելու: Մարմնական մտածողութեան տեսադաշտը կանոնական ու դատողական տարածութեան շրջագիծին մէջ կը գործէ, իսկ հոգեւորութիւնը իրականին ու իսկականին կը ներթափանցէ: Որովհետեւ կ'ողջագուրէ զԱստուած հաւատքի լոյս նախաբանով:

«Ընկեր», «ընդկեր»ը այն անձն է որուն հետ մենք սեղան կը նստինք, այսինքն՝ սեղանակցութիւն եւ սրտակցութիւն կ'ընենք: Մարդկային կեանքը բարդ է, ընկերական պատահարները այլազան: 18րդ դարու վերջին տասնամեակներուն, Ֆրանսական Մեծ Յեղափոխութեան այս երկու տիտաններուն (Ռոպէսպիէր եւ Տանթոն) սկզբնական սերտ ու ընկերական գործակցութիւնն ու հետագայ մահացու ատելութիւնը անջնջ ելիօրէն արձանագրուած պիտի մնան իբրեւ ընկերական ոգիի աղետաման ցաւագին օրինակներ եւ ամէն գնով իշխանութեան տիրանալու մարդկային ամենավատ բնագղներու դրսեւորում: Այս է վերջը բոլոր ընկերադաւ վատերուն...:

Մեր Տէրը՝ Յիսուս ոչ մի տող գրած է, բայց ապրած է Իր աշակերտներու ընկերակցութեան մէջ իբրեւ կենդանի Գիրք: Իր պատուիրաններով այնպիսի Լոյս սփռած է անոնց հոգիներէն ներս, որ անջնջելի պիտի մնայ յաւերժօրէն: Ուիլիըմ Քէյրի ներշնչեց մօտ 2 հարիւր կղերականներ, որոնք 1795ին հիմնեցին Լոնտոնի Աւետարանչական Ընկերակցութիւնը աւետարանելու համար ոչ-քրիստոնեայ զգգրը: 1804ին, Լոնտոնի Աւետարանչական Ընկերակցութեան հետեւանքով է որ հիմնուեցաւ Ս. Գրոց Ընկերութիւնը:

«Այսօրուայ ընկերային կեանքի սկզբունքները, շուկայականութիւնը, նիւթին նոխութիւնը, նոյնիսկ բարօր պայմաններու ստեղծումը չեն կրցած ամբողջապէս ապահովել սրտի այն անդորրութիւնը զոր կը փնտռենք մենք» (մարդկութիւնը). - Դոկտ. Արէլ Քենյ. Օղլուգեան: Ճարտարարուեստականացումն ու արդի գիտութեանց յառաջացումը յեղաշրջեցին մարդկային բաղադրութիւնն ու ընկերային կեանքը: Այժմ մարդ արարած ազատ է,

բայց միայնակ, մանաւանդ երբ հոգեպէս ու մարմնապէս կը կարօտի՝ ընկերոջ մը:

Հայր Աստուծոյ Պատուիրակ Յիսուս երբ իր սիրոյ պատուէրը աւարտեց, ողորմելի Փարիսեցիին ինքզինք արդարացնել ուզելով, հարցուց Յիսուսի.

«Բայց ո՞վ է իմ ընկերս»:

Մարդասէր Բարի Հովիւ Յիսուս, փոխանակ բարկանալու աստուածաբան Փարիսեցիի անմտութեան, պատմեց Բարի Սամարացիին Առակը:

Առակները հայելիներու կը նմանին, ուր անձ մը ինքզինք կը տեսնէ: Առակը, սակայն, անկախ է ամէն ազգային ու աշխարհագրական սահմանափակումէ եւ պայմանաւորումէ: Անկա կը պատկանի բոլոր ժամանակներուն եւ կը խօսի բոլոր ժողովուրդներուն՝ նոյն լեզուով: Առակը ճշմարտութիւնը ճանչցնելու ամէնէն արագ եւ ուժգին կերպն է: Յիսուսի առակները յաւիտենական ճշմարտութեան մեկնութիւն ցոյացնող պատկերներ են: Քրիստոսի առակները, արուեստի բոլոր մարզերուն մէջ, դարձած են բանաստեղծութիւն, ֆանդակ, իմաստասիրութիւն կամ նկարչութիւն, գրականութիւն կամ գեղարուեստ: Եկեղեցւոյ հովիւը, իրարու հետ հաշտեցնելու է երեւելին եւ աներեւոյթը, իրականութիւնը եւ գաղափարը, ճշմարիտը եւ գեղեցիկը ու ժամանակաւորն ու յաւերժականը:

«Բարի Սամարացի»ի առակին կեդրոնական յորդորն ու խրատականն է, «ընկեր» նկատել բոլոր անոնք, որոնք կը կարօտին մեր օգնութեան, առանց

ազգային, ցեղային կամ քաղաքական նկատումներէ տարուած: Մարդիկ ինչո՞ւ ինկածի մը, վիրաւորեալի մը, կամ անօթիի մը կամ բշտամիի մը օգնութեան հասնելու կը դժուարանան: Որովհետեւ օգնել՝ սիրել է: Երբ օգնես ոեւէ ինկած մը, օտարական մը կամ ցեղակից մը, անպայման փսկէդ բան մը կը պակսի: Իսկ եթէ սպաննես զայն, անոր հարստութեան կը տիրանաս:

Բարի Սամարացին մարդասէր էր: Ան սիրե՛ց իր թշնամին, ուստի օգնելու համար զայն, նկատի չառաւ իր փսկը եւ ժամանակը: Ան մոռցաւ իր օրապահիկ աշխատանքը, ու անոր փոխարէն կիսամեռ օտարականը տարաւ պանդոկը, խնամեց զայն, փոխանակ ֆահանային ու կղերականին նման որոնք իրենց ճամբան շեղեցին որպէս զի չտեսնեն իրենց կիսամեռ ցեղակիցը եւ օգնեն անոր: Իսկ Սամարացին՝ իր թշնամին եւ օտարականը, ամբողջ օր մը խնամելէն յետոյ, պանդոկապետին երկու արծաթ դահեկան տուաւ եւ ըսաւ. «Խնամէ՛ զայն, եւ ինչ ծախս որ ընես իրեն համար՝ յաջորդ գալուս կը վճարեմ»:

Յետոյ Յիսուս հարցուց Փարիսեցիին, ըսելով. «Արդ, քու կարծիքովդ՝ այս երեքէն ո՞ր մէկը եղաւ աւագակներուն ձեռքը ինկողին ընկերը»: Օրէնքի ուսուցիչը ըսաւ. «Ան՝ որ հոգ տարաւ անոր»: Յիսուս, մեծ համբերատարութեամբ ըսաւ.

«Գնա՛, դո՛ւն ալ նոյնը ըրէ»:

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Ս. ՍԱՐԳՍԻ ՏՕՆԻՆ

«Ամենասուրբ երրորդութեան ընտրեալ ծառայ եւ հաւատարիմ...» (Շարական):

Այսօր սուր Սարգսի տօնն է, նրա որդու՝ Մարտիրոսի եւ տասնչորս զինուորների տօնը, որոնք եւս նահատակութեան պսակին էին արժանացել: Սրբազան շարականագիրը՝ Պետրոս Գետադարձը, որ ամենայն հայոց կաթողիկոսն էր 1019 թուից մինչեւ 1058 թուականը, սուրբ Սարգսի, նրա որդու՝ Մարտիրոսի եւ տասնչորս զինուորների յիշատակի համար գրել է հրաշալի մի շարական, որ մինչեւ այսօր երգւում է եկեղեցում եւ մեր սրտերն է շարժում:

Ո՞վ էր սուրբ Սարգիսը: Սուրբ Սարգիսը ծնունդ էր քրիստոնեայ ընտանիքում, Կապադովկիայի Քամիրքի շրջանում: Նա եղել էր զինուորական եւ Կոստանդիանոս կայսրի թագաւորութեան շրջանում հասել էր մինչեւ ստրատեգութեան, այսինքն՝ զօրավարի աստիճանի: Երբ Կոստանդիանոս կայսրին յաջորդեց Յուլիանոս կայսրը, որն անուանուեց Ուրացող, եւ երբ Սարգիսը տեսաւ, որ Քրիստոսն ուրացւում է կայսրի կողմից, իսկ աշխարհիկ բարեբերը նորից են թափանցել բանակի եւ ժողովրդի մէջ, հեռացաւ Բիւզանդիայից, եկաւ Հայաստան՝ Տիրան թագաւորի մօտ: Իսկ երբ տեսաւ, որ իր ներկայութեան պատճառով Տիրանը եւս ինքն իրեն վստահ եւ ուժեղ չի գգում բիւզանդացիների դիմաց, Հայաստանից եւս հեռացաւ ու գնաց Պարսկաստան՝ ծառայելու պարսից Շապուհ արքային:

Ինչպէս յայտնի է, այդ ժամանակ երկու կարեւոր ուժեր կային. Արեւմտւոտֆում Բիւզանդական կայսրութիւնը, Արեւելքում Պարսկական

կայսրութիւնը: Սրանք յանախ էին իրար դէմ պատերազմներ մղում, որպէս զի կարողանան հողային տարածութիւններ զավթել իրարից եւ կամ Հայաստանի նման այս կամ այն երկիրը իրենց իշխանութեան տակ առնել: Շուտով պարսից Շապուհ արքան իմացաւ, որ Սարգիսն իր զինուորներին քրիստոնէական ոգով է դաստիարակում: Նա պաշտօնապէս իր մօտ հրաւիրեց նրան, որպէս զի մեհեաններում զոհեր մատուցի: Սարգիսը չանսաց նրա հրամանին, եւ այդ ժամանակ զայրացած արքան սպանել տուեց Սարգիս զօրավարին: Նրանից առաջ արդէն սպանել էր տուել նրա որդուն՝ Մարտիրոսին: Իսկ Սարգսի տասնչորս զինուորները, որոնք գիշերով նրա մարմինը ուզեցին տանել առանձին մի տեղ թաղել, եւս մահուան դատապարտուեցին, սպանուեցին: Մեր աւանդութիւնն ասում է, որ Մեսրոպ Մաշտոցը՝ հայոց եռամեծ Վարդապետը, նրա մարմինը հետագայում տեղափոխել է Արագածի շրջանում Կարբիի մօտ գտնուող Ուշի գիւղում: Մինչեւ այսօր էլ Ուշիում է գտնւում սուրբ Սարգիս զօրավարի ուխտատեղին, եւ ենթադրւում է, որ այնտեղ են նաեւ նրա մասունքները:

Ահաւասիկ մի պատմութիւն մեր եկեղեցու կեանքից, մի սրբի պատմութիւն, որ մինչեւ այսօր յիշւում ու ապրում է մեր ժողովրդի կեանքի մէջ եւ այսօր էլ յուզում է մեր երիտասարդութեանը եւ մեր ժողովրդին: Այն երիտասարդները, որոնք մօտենում են ամուսնութեան տարիքին կամ արդէն թեւակոխել են այդ տարիքը, տարուայ այս օրը աղի բլիթ են ուտում ենթադրելով, որ նոյն գիշերը իրենց երազում գալու է մի երիտասարդ՝ Սարգիս զօրավարի կերպարանով, նրա որդու՝ Մարտիրոսի կերպարանով, որպէս

գի իրենց ծարաւը յագեցնելու համար մի քաժակ ջուր տայ: Այդպիսով նրանք ենթադրում են, որ այդ տարուայ մէջ իրենք կարող են երջանիկ ամուսնութիւն կնիքել կամ որեւէ կերպով երջանկանայ: Իսկ Արեւմտեան Հայաստանում պարմանուհիներ՝ ջահել աղջիկներին անկողնու մօտ մի ափսէ ալիւր էին դնում. եթէ սուրբ Սարգիսը գիշերն այցելէր նրանց, նրա ձիու պայտը նշան կը դնէր այդ ալիւրի վրայ, ու այդպիսով նրանք կը հաւատային, որ իրենց համար նոր կեանք, նոր քայտ է սկսւում:

Սիրելի հաւատացեալներ, այս քոյորն անշուշտ աւանդութիւն է, այստեղ կրօնական կամ դաւանական հարցեր չկան, բայց քանի դեռ մեր երիտասարդութիւնը հաւատում է, թող այդ հաւատով էլ եկեղեցի գալ, որպէս զի այդ հաւատն իրենց մէջ կենդանանայ, ձեւաւորուի, ուժեղանայ եւ դառնայ իրենց համար եկեղեցուն ծառայելու ամբողջական կերպ եւ միջոց: Սուրբ Սարգսի կեանքի հիմնական իմաստը նրա նուիրութեամբութիւնն էր, նպատակաւորութիւնը, այն, որ նա չուրացաւ Քրիստոսին քաղաքական վայրկեաններին ժամանակ եւ ինքն իրեն զոհեց վասն Քրիստոսի, վասն իր հաւատի եւ վասն իր համոզման: Մեր կեանքում, մանաւանդ մեր երիտասարդների կեանքում հաւատը պէտք է ուժեղանայ աշխատասիրութեան հետ միասին: Նրանք առանց նպատակի չպէտք է ապրեն, պէտք է հասունացման տարիքից յետոյ անպայման նուիրուեն մի գաղափարի, մի իդէալի, որը մինչ այդ գտած պէտք է լինեն եւ այդ ուղղութեամբ էլ քոյորանուէր կերպով աշխատեն, որպէս զի յարատեւ աշխատանքի շնորհիւ կարողանան հասնել իրենց իդէալին, իրենց նպատակին: Կեանքի մէջ այն մարդը կը հասնի յաջողութեան, որ

յարատեսօրէն կ'աշխատի, իսկ նրանք,
ովքեր թոյլ են, տատանուող, անվստահ,
նրանք անպայման կեանքի ընթացքում
կը շփոթուեն եւ իրենց ուղուց դուրս
կ'ընկնեն: Շատ են օրինակները մեր
պատմութեան մէջ եւ բոլոր
ժողովուրդների պատմութեան մէջ. թէ
ինչպէս մարդիկ իրենց սրբազան
նպատակների համար ամբողջ իրենց
կեանքն են նուիրել եւ նոյնիսկ իրենց
արիւնն են թափել այդ նպատակների
իրականացման ճանապարհին: Այդպէս
չէ՞ր միթէ Դեվիթ Լիվինգստոն կոչուող
անձը, որ սեւամորթների վաճառքը
դադարեցնել տուեց. այդպէս չէ՞ր Խրիմեան
Հայրիկը, որ օսմանեան դաժան
իշխանութեան ժամանակ իր ժողովրդի
կողմէն կանգնեց, որպէս զի Արեւմուտքն
անդրադառնայ այն տառապանքին, որ
կրում էր մեր ժողովուրդը: Այդպէս էին
նաեւ բոլոր այն մեծ մարդիկ, որոնք
իրենց առջեւ վսեմ եւ բարձր նպատակներ
էին դրել եւ այդ նպատակներին էին
ծառայում: Այսօր եւս անհրաժեշտ է, որ
վսեմ նպատակների ծառայող այդպիսի
սրբազան անձինք լինեն, գոյութիւն
ունենան մեր հայրենիքում: Ընչասիրու-
թիւնը, ընչաքաղցութիւնը, դրամասիրու-
թիւնը, կողոպուտը եւ զանազան այդպիսի
բրեւոյթները պէտք է, որ ընդ միշտ
վերանան մեր երկրից: Մեր իշխանաւոր-
ները պէտք է անդրադառնան, որ իրենք
կոչուած են ծառայելու հայ ժողովրդին
եւ Հայաստանի վերելքին, եւ ոչ թէ
իւրաքանչիւրն իր փառքի, իր ոտքերի
տակ ամուր պատուանդան ստեղծելու
ձգտի: Զգտումը պէտք է լինի մեր
ժողովրդի առաջադիմութեանն ու
բարօրութեանը սատարելը:

Եթեբորոգ դարում ապրում էր
յայտնի գիտնական, մաթեմատիկոս,
իմաստասեր, հոետոր մի անձնաւորութիւն՝
Անանիա Շիրակացի անունով, որ յաճախ

կոչուել է նաեւ Անեցի, որովհետեւ Շիրակը, ինչպէս յայտնի է, գտնուում էր Անիի մօտ, գետի միւս ափին: Նրա ընտանիքի մասին պատմութիւնը մեզ ոչ մի տեղեկութիւն չի տալիս, թէ ովքեր էին եղել ծնողները: Բայց յայտնի է, որ նրանք ապրել են Շիրակում: Զգալով իր մէջ աստուածատուր շնորհ եւ տաղանդ, Անանիան ուզում էր ինքն իրեն նուիրել գիտութեանը, բայց շրջապատի մարդիկ չէին հասկանում նրան. այն ժամանակ ո'չ աստղաբաշխութիւն կար, ո'չ հոե-տորութիւն եւ ո'չ իմաստասիրութիւն: Այդ պատճառով էլ նա թողեց Անին եւ գնաց Կարին իր ուսումը շարունակելու նպատակով: Սակայն այստեղ եւս նա յուսահար եղաւ: Ապա գնաց Բիւզանդիա: Բիւզանդիայում նրան ասացին, որ նա նանապարհին Տրապիզոնից է անցել, եւ իր փնտռած ուսուցիչը Տրապիզոնում է գտնուում, ուստի նա պէտք է վերադառնայ այնտեղ: Նա վերադարձաւ Տրապիզոն եւ Տիւֆիկոս անունով մի գիտնականի աշակերտեց: Անանիան այնքան տաղանդաւոր էր, որ կարճ ժամանակում ուսուցիչն անդրադարձաւ նրա տաղանդին եւ ընդունեց նրան որպէս ընկեր եւ խորհրդակից: Անանիան իր բարձր կրթութիւնն ստացաւ եւ վերադարձաւ Հայաստան, որպէս զի Հայաստանը լուսաւորի, աշակերտներ հասցնի եւ նրանց սովորեցնի կեանքի փիլիսոփայութիւնը: Դեռ այն ժամանակ նա կարողացել էր իմանալ եւ համարձակ ասել, որ աշխարհը կլոր է, մինչդեռ այլ գիտնականներ միայն 12-13րդ դարերում անդրադարձան, որ աշխարհը կլոր կարող է լինել: Տեսնո՞ւմ էք, թէ մարդու տաղանդը ինչպէս է փայլում կեանքի մէջ: Նրա աշակերտներից ոմանք ենթադրելով, թէ իրենք արդէն զարգացած են, ըմբոստացան իրենց ուսուցչի դէմ եւ սկսեցին նկատողութիւններ, դիտողութիւն-

ներ, քննադատութիւններ անել: Բայց նա անհողդողդ մնաց իր տեսակէտների վրայ, կարողացաւ Հայաստանում աշակերտներ պատրաստել եւ փիլիսոփայական միտքը, իմաստասիրական ոգին եւ աստուածաբանութիւնը հաստատուն հիմքերի վրայ դնել: Հետագայում նա գրեց նաեւ գեղեցիկ, հրաշալի, հոգեգրաւ շարականներ եւ այդպիսով հայ ժողովրդի պատմութեան մէջ մնաց յոթներորդ դարի ամենապայծառ դէմքերից մէկը, որպէս գիտնական վարդապետ Անանիա Շիրակացի:

Սիրելի հաւատացեալներ, ովքե՞ր են սրբերը, ի՞նչ նշանակութիւն կարող են ունենալ նրանք մեր կեանքի մէջ: Սրբերը մեծ դեր են խաղում մեր կեանքում, որովհետեւ այսօրուայ մեր կեանքը փոթորկոտ, շփոթ եւ խառը մի կեանք է, աշխարհականացումը եկել թափանցել է մեր հոգիներից ներս: Հոգեւոր հասկացողութիւնը, աստուածային սէրը եւ Աստծու հանդէպ ունեցած մեր պաշտամունքը պակասել են: Աշխարհականացման պատճառով, հեռուստացոյցի, «ինտերնետի», «իմէյլի» եւ զանազան տեսակի ֆիլմերի, տեսաֆիլմերի եւ, յատկապէս, ծաղրուծանակի նմանուող թեթեւ երաժշտութեան պատճառով մեր կեանքը շփոթմունքի, դժոխային մի խառնուրդի է վերածուել: Ո՞վ պիտի կարողանայ մեզ ցոյց տալ ճշմարիտ լոյսը, որպէս զի այս կեանքի մէջ չշփոթուենք, մեր հոգիները դժոխին չյանձնենք, այլ ձգտենք սրբութեան: Ովքե՞ր պիտի մեզ օգնեն, եթէ ոչ մեր սրբերը: Մեր կեանքի խաւար ճանապարհի, մեր խարխափանքների մէջ մեր սրբերը մի-մի փարոս են՝ մեր կեանքի նաւը առաջնորդելու դէպի խաղաղ նաւահանգիստ, նրանց լոյսն է, որ մեզ պիտի ուղի ցոյց տայ, որպէս զի կարողանանք չմոլորուել եւ ծառայել

նշմարտութեանը, արդարութեան արեգակին: Այդ լուսատու փարոսներից մէկն էլ սուրբ Սարգիսն է իր որդու՝ Մարտիրոսի եւ տասնչորս զինուորների հետ միասին: Պահենք եւ միշտ փայփայենք այդ լոյսը մեր հոգիների մէջ, որպէս զի չխամրի՝ այն, եւ մենք խաւարի մէջ չկորչենք, այլ նշմարտութեան լոյսով կարողանանք առաջնորդուել:

Թող Սուրբ Սարգսի շնորհները մեր մէջ կեանքի վերածուեն, նրա նուիրումը, նրա քրիստոսասիրութիւնը մեզ համար լինեն վարակիչ օրինակ, եւ մեր կեանքի դառն, երբեմն էլ բաղժ օրերին նա մեզ համար հանդիսանայ առաջնորդ եւ պահպանիչ. այժմ եւ միշտ եւ յաւոտեանս յաւիտենից. ամէն:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔ. ՊՕԶԱ ՊԱԼԵԱՆ

ՄԵՂԱՅ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ՀՈԳԻՈՅՍ

Մեղքերը անթիւ են եւ այլազան: Հայերուս խոստովանանքին մէջ երեւցող մեղքերը այնքան շատ են որ ժամագրքին երեք էջերը լեցուցած են:

Հին մեղքեր կան եւ նոր մեղքեր կան: Անասելի մեղքեր կան եւ անանուն մեղքեր կան: «Ո՞վ է մարդ որ ոչ գործէ մեղս», կ'ըսէ մեր մաշտոցը: Մարդերս մեղաւոր ծնած ենք եւ մեղաւոր ալ կը մեռնինք: Ադամն ու Եւան թէեւ առաջին այրն ու կինն էին, մեղանչեցին եւ մեղքը մեզի ժառանգ թողուցին:

Մեր Հայրապետները մեղքերը քաժնած են երեք դասակարգի: Հոգեւոր մտային եւ մարմնաւոր: Խորհրդով, քանի եւ գործով:

Հոգիով գործուած մեղքերը մտքով եւ մարմնով գործուած մեղքերէն տարբեր եւ անջատ են: Հոգին՝ մարմին եւ միտք չէ, թէեւ անոնց մէջ կը բնակի: Սիրտ չէ եւ զգացում չէ, թէեւ անբաժան է անոնցմէ: Հոգին մարմինէն եւ մտքէն աւելի բարձր եւ ազնուական կը նկատուի: Կարծես թէ աստուածային նկարագիր ունի:

Յիսուս անգամ զանազանութիւն դրաւ անոնց միջեւ երբ ըսաւ. - «Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ:» Ա.

Պօղոս առաքեալ կը յաւելու. - «Խորհուրդ մարմնոյ մահ է, եւ խորհուրդ հոգւոյ կեանք»:

Խոստովանանքի մէջ երեւցող հոգեկան մեղքերը հետեւեալներն են. - խորամանկութիւն, անզգամութիւն, յանդգնութիւն եւ երկչոտութիւն, շռայլութիւն եւ ժլատութիւն, չարահաւանութիւն, յուսահատութիւն եւ թերամտութիւն:

Վերոյիշեալ բոլոր մեղքերն ալ որակուած են «հոգիին զօրութեամբը գործուող մեղքեր»: Ինչ որ կը նշանակէ թէ անոնք կարող են ահաւոր եւ սոսկալի հետեւանքներ յառաջ բերել: Սոյն մեղքերը կրնան պատճառ դառնալ կորուստի, կործանումի, աւերածի եւ սպանութեանց: Վայ մեզի եթէ անոնք մնան անսանձ եւ անկաշկանդ:

Հոգեւոր տկարութեանց հոգատարութիւն ընելը եւ հոգեկան հիւանդութեանց բուժում մը գտնելը հսկայական գիտութիւն մըն է մեր օրերուն: Հոգեբան եւ հոգեբուժ մարդիկ կան որոնք միայն հոգեկան ախտերու բժշկութեամբը կը զբաղին: Ատեն մը կար, երբ հոգիի վերաբերեալ ամէն տկարութիւն «խենդութիւն եւ յիմարութիւն» կը

նկատուէր: Եւ այսպիսիք շղթայակապ կը պահուէին անկեղանոցի մը անկիւնը եւ մոռացութեան կը տրուէին: Հիմա սակայն հոգեկան ամէն անկանոնութիւն՝ հիւանդութիւն կ'որակուի, եւ մեծ ու պզտիկ ամէն հիւանդանոց հոգեկան հիւանդութեան հոգատարութեանը համար մասնաւոր յարկաբաժին մը ունի: Նոյնիսկ հոգեկան հիւանդութեամբ տառապող շատ մը հիւանդներու դեղահատ մը կը տրուի, եւ կ'արձակուին ազատ, եւ շուրջ կու գան քաղաքի փողոցներուն մէջ:

Յիսուսի օրերուն, հոգեկան հիւանդութիւն ունեցողները, դիւահար եւ այսահար կը կոչէին: Տէր Յիսուս Քրիստոս Իր հրաշագործութեանց մէկ մեծ մասը այսպիսեաց վրան է որ կը կատարէր: Եւ ժողովուրդը իր այսահար հիւանդները Յիսուսին կը բերէր բժշկութիւն ստանալու համար:

Հոգիով գործուած ամէն մեղք սակայն խենդութիւն եւ յիմարութիւն

պէտք է որակել: Ոչ ալ պէտք է քողարկել այսահարութեան ետին: Խոստովանանքի աղօթքին մէջ շարադրուած վերոյիշեալ բոլոր մեղքերն ալ առողջ եւ արթուն հոգի ունեցող մարդոց կողմէ կը գործադրուին եւ ճշմարիտ մեղքեր են: Անոնցմէ բոլորն ալ մենք կը գործադրենք կամովին եւ գիտութեամբ:

Հոգին ինքնին ոչ չար է եւ ոչ ալ մեղաւոր: Ընդհակառակը, ինչպէս վերը ըսած եղանք, հոգին աստուածային նպատակ ունի եւ կրնայ զմեզ սրբութեան առաջնորդել: Աստուածաշունչ Մատեանը զմեզ կը յորդորէ. - «գիտցին մի շիջուցանէք». եւ կը պատուիրէ. - «հոգւով եռացէք»: Եթէ մենք մարդերս կարող ենք մեր հոգիին զօրութիւնը մեղաւոր գործերու յատկացնել, կրնանք նաեւ նոյն այս հոգիի զօրութիւնը գործածել անսահման բարիքներու համար:

ԿԱՐԷՆ Ա. ՔԶՆՅ. ԿՏԱՆԵԱՆ

ՇՆՈՐՀԱՌՈՐԱՆՔ

Պատրիարք Սրբազան Հայրը Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան տօներուն առիթով, բարեմաղթութեանց եւ շնորհաւորանքի գիրքեր եւ հեռագրեր յղեց Հոգեւոր եւ Կառավարական պետներուն, որոնց շնորհաւորագիրքերը ընդունած է. -

- Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Սրբազնագոյն Կաթողիկոսին:

- Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Կաթողիկոսին:

- Հռովմէական Կաթոլիկ Եկեղեցւոյ Քահանայապետ՝ Նորին Սրբութիւն Պենետիկդ ԺԶ. Սրբազան Պապին:

- Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Մեսրոպ Պատրիարք Մութաֆեանին:

- Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոտոքս Եկեղեցւոյ Ամեն. Տ. Տ. Ալէքսէյ Բ. Սրբազան Պատրիարքին:

- Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան նախագահ Մեծայարգ Տիար Միքայէլ Եսայեանին:

- Թեմակալ Առաջնորդներուն, Պետական եւ Ազգային Հաստատութեանց ղեկավարներուն:

ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱՇԻՆ



SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Թիվ 2029

Սուրբ Ծնունդ, 2006 թ.

ԱՍԵՆԱՊԱՏԻԿ
Տ. ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԵՐՈՒՍԱԴՆԵՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺ
Երուսաղեմ, Իսրայել

Ամենապատիվ Սրբազան Պատրիարք,

Միածնաեջ Մայր Աթոռից Հայրապետական Մեր ողջույններն ու բարեմաղթանքն ենք հղում Ձեզ Երուսաղեմի Հայոց Պատրիարքության միաբանությանը և շնորհավելում Ամանորի և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոների ուրախ առիթով:

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջև փառաբանում ենք Սուրբ Ծնունդը մեր Տեր Հիսուս Քրիստոսի և գոհություն մատուցում Ամենախնամ Աստծուն, որ շնորհ է պարգևում մեր ժողովրդին քրիստոնյա ողջ մարդկության հետ մասնակից լինելու Սուրբ Ծննդյան ուրախությանը և «Աստուած ընդ մեզ է» քաջալերությամբ մշտավառ պահելու առ Քրիստոս իր լույս հավատքը, սերն ու նվիրումը առ մեր Սուրբ Եկեղեցին և հայրենին:

Անցնող տարին ազգային-եկեղեցական մեր կյանքում նշանավորվեց Հայոց Գրերի գյուտի 1600-ամյա հոբելյանի տոնակատարությամբ և Հայոց Ցեղասպանության 90-րդ տարելիցի հիշատակումով: Աստվածասեր մեր ժողովուրդը մաշտոցյան գրերի շնչով նորոգեց իր նախանձախնդրությունն ու հավատարմությունը հանդեպ ազգային մեր սրբազան ավանդները, մայրենի ոսկեղենիկ լեզուն և Եղեռնի անմեղ զոհերի հիշատակի առջև աղոթքով զորեղացրեց իր վճռական ոգին՝ հանուն հայության արդար իրավունքի պաշտպանության:

Շնորհաշատ այս օրերին Մեր հոգում առավել զորանում են հույսն ու լավատեսությունը, որ Քրիստոսի Սուրբ Ծնունդով արշալույսվող 2006 թվականը պիտի արգասավորվի եկեղեցաշեն ու ազգապահպան նորանոր իրագործումներով: Մեր Սուրբ Եկեղեցին առ Աստված ապավինությամբ և համախումբ ջանքերով մեր ժողովրդի պիտի շարունակի ազգանպաստ գործունեությունը՝ ի խնդիր Հայաստան ու Արցախ հայրենի մեր աշխարհների առաջընթացի ու բարգավաճման, հայոց պետականության զորացման, Սփյուռքի հայ համայնքների վերածաղկունի և ազգային գիտակցությամբ ու հավատքով զորացյալ նորոգ զարթոնքի: Փրկչական նոր տարում նորոգ ձեռքբերումներով ու մտաց նվաճումներով պիտի առավել արդյունավորենք տերունավանդ առաքելությունը մեր Սուրբ Եկեղեցու քարոզչության, հովվության, եկեղեցաշինության, կրթության ու մշակույթի ոլորտներում՝ ի մխիթարություն աշխարհասփյուռ հավատավոր մեր ժողովրդի:

Աղոթում ենք, որ Մանուկ Հիսուսի Սուրբ Ծննդյան աստվածային սիրո շնորհները ճառագեն ամբողջ աշխարհում՝ սփռելով շողերը հույսի, եղբայրության, համերաշխության ու խաղաղության, որպեսզի մարդկությունը քրիստոսավանդ պատվիրանների իրագործումով երկրի վրա նորիմաստ իրականություն դարձնի «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» հրեշտակածայն ավետիսը:

Այլև աղոթում ենք, որ անվրդով և տևական լինի երկնառաք խաղաղությունը Տերունակոխ սուրբ և նվիրական վայրերում, և Տերը պարգևի Ձեզ քաջառողջ արևշատություն ու հարանորոգ հաջողություններ Ձեր բարձր առաքելության մեջ՝ ի շինություն և ի պայծառություն Երուսաղեմի Հայոց Պատրիարքության և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
Ձեզ եւ Մեզ մեծ աւետիս

Եղբայրական սիրո ողջունիվ,
աղոթակից

ՎԱՅԵՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾՐՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՆԹԻՆՈՍ - ԷԲԸՆԱՆ

Թիւ 242/05

Ամբիւլանս, 16 Դեկտեմբեր, 2005

Ամենապատիւ
Տ. Թորգոմ Արքեպսկ. Մանուկեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի
Երուսաղէմ.

Սիրեցեա՛լ եղբայր ի Քրիստոս,

Մեր Փրկչին՝ Յիսուսի Քրիստոսի Մենդեան ու Մկրտութեան տօնը մեզ դարձ-
եալ կը մղէ մեր հոգիի աչքերը ուղղելու դէպի Բեթղեհէմ:

Արդարեւ, Բեթղեհէմը Աստուծոյ ու մարդուն հանդիպման վայրն է: Հոն,
Բեթղեհէմի խոնարհ մտորին մէջ Աստուած դարձաւ էմմանուէլ, "որ կը նշանակէ
Աստուած մեզի հետ" (Մատթ. 1, 23): Բեթղեհէմի մէջ Աստուած "մարդ եղաւ եւ
մեր միջեւ բնակեցաւ" (Յովհ. 1, 14) ի խնդիր մարդու փրկութեան:

Մարդուն մէջ աստուածատեղծ մարդը վերակերտելու Բեթղեհէմեան առա-
քելութիւնը շարունակելու կոչուած է եկեղեցին՝ որպէս Քրիստոսի խորհրդակա՛ն
մարմինը:

Այս գիտակցութեամբ վկայեց ու ծառայեց դարեւ շարունակ Հայց. Առաքե-
լական Սուրբ Եկեղեցին: Այս կոչումով ան Բեթղեհէմի փրկագործական խորհուր-
դին պատգամաբերը դարձաւ մեր ժողովուրդի կեանքէն ներս: Այսօր, առաւել քան
երբեք, նոյն առաքելութեան է լծուած մեր եկեղեցին: Հետեւաբար, անհրաժեշտ է
որ մեր եկեղեցին իր Նուիրագետական Ս. Աթոռներով որպէս մէկ ամբողջութիւն
վերանորոգէ ու վերակազմակերպէ իր Բեթղեհէմեան առաքելութիւնը:

Ահա այս հաւատով ու յոյսով ջերմօրէն կը շնորհաւորենք Աստուածայայտ-
նութեան տօնը եւ Զերդ Ամենապատուութեան կը մաղթենք եկեղեցաշէն իրագոր-
ծումներով հարուստ երկար գահակալութիւն:

Եղբայրական սիրոյ ողջունիւ.

Աղօթակից՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՍԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



SECRETARIAT OF STATE

No. 23.360

From the Vatican, 6 February 2006

Your Beatitude,

His Holiness Pope Benedict XVI has received the message of greetings and good wishes that you were kind enough to send to him for the feast of Christmas and the New Year, and he joins you in proclaiming the mystery of the coming into the world of Emmanuel, *God-with-us*.

During the celebration of Christmas, we contemplated the light which flows from Bethlehem, where "God's grace has appeared" (*Tit* 2:11). Let us renew our profound conviction that only mutual love will enable us to overcome our divisions and prepare us to enter more deeply into the full communion we so ardently desire.

With these sentiments and the assurance of my personal good wishes, I am

Yours sincerely in Christ,

Secretary of State

His Beatitude Torkom Manoogian
Armenian Patriarch of Jerusalem
Armenian Patriarchate
Saint James Monastery
PO Box 14001
IL-91141
Jerusalem



Патриарх
Московский
и всея Руси

119034 Москва, Чистый пер. 5

ЕГО БЛАЖЕНСТВУ,
БЛАЖЕННЕЙШЕМУ ТОРКОМУ II,
АРМЯНСКОМУ ПАТРИАРХУ ИЕРУСАЛИМА

Ваше Блаженство!

В светлый день Рождества Христова сердечно поздравляю Вас с этим всерадостным праздником, ибо «Бог послал Сына Своего Единородного, Который родился от жены, подчинился закону, чтобы искупить подзаконных, дабы нам получить усыновление» (Гал. 4, 4-5).

Рождество Господа нашего преобразило весь ход мировой истории, даровав человечеству новую жизнь во Христе. В этот святой день мы воспевает песнь: «Слава в вышних Богу и на земле мир, в человеках благоволение» (Лк. 2, 4), благодаря Бога за любовь и спасение, которые Он явил миру через Своего Возлюбленного Сына.

От души желаю Вам светлой радости о Родившемся Спасителе, телесного здоровья, помощи Божией в Вашем высоком служении.

С любовью о Христе Родившемся

ПАТРИАРХ МОСКОВСКИЙ И ВСЕЯ РУСИ

Рождество Христово
2005/2006 г.
Москва

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՄԻԱՅՆ ՔԵԶ ՄՕՏ

Դու ասացիր.

«Ինձ մօտ եկե՛ք դու՛ք բոլորդ,
Որ յոգնած է՛ք ու ծանրաբեռն,
Եւ ես հանգիստ պիտի տամ ձեզ»:
Այո՛, Տէ՛ր իմ,
Միայն քեզ մօտ եմք գնալու,
Այլ տեղ չունենք մե՛նք օթեւան,
Այս աշխարհը ոչ մի մարդու
Պատսպարան չէ յաւիտեան:

Երբ ժամն հնչի վերջին շնչի,
Թող որ պրծնենք չար դուրբի
Ճիրաններից զարհուրելի
Եւ ընթանանք սիրակարօտ,
Վառ լոյսերի յաճախումով
Ուղիղ քեզ մօտ, միայն քեզ մօտ:

Բայց չըլի՛նի թէ մենք դառնանք
Ժանտ մեղքերով ծանրաբեռնուած
Եւ հաւատով ունայնացած,
Քո հանգստին երանական
Միշտ անպատրաստ ու անարժան:

Զի հանգիստը անմահական
Պիտի բաժին լինի նրան,
Որ աշխարհում այս անիրաւ
Զրկուածներին կանգնեց պաշտպան,
Եւ չարութեան դէմ ծառացաւ
Խիզախումով ասպետական:

Ուժ տո՛ւր, ո՛վ Տէր,
Որ այժմուանից միշտ անվեհեր
Հոգով զինուած լինենք յաւէտ՝
Ընդդէմ անարգ եւ նենգ մարդկանց
Գրորոհին չար ու մահաբեր:
Պայքարը մեր թող միշտ լինի
Հերոսական ու անձնուէր,
Որից յետոյ անպարտ սրտով,
Վաստակաշատ ու յոգնաբեկ,
Պիտի գընանք միշտ ապահով
Վեհասըլաց ճամբով անթեփ,
Ու նեղփելով ամպեր թխպոտ
Պիտի հասնենք արտորանով
Ուղիղ քեզ մօտ, միայն քեզ մօտ:

ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ

ԾՆՈՒՆԴԻ ԳԻՇԵՐ

Ծընունդի գիշեր, հոգեգմայլ գիշեր,
Հովիւներ արթուն եւ հըրեշտակներ,
Ուրախ երգերու հնչիւններով վառ,
Կու տան աւետիս համայն մարդկութեան.
Ծընած էր սիրոյ Արքան օրհնարան,
Մեղեքը մարդոց փաւելու համար:

Ծընած էր Արքան՝ Աստուծոյ Որդին,
Լուսաւորելու սրտերը մթին,
Մարդկային ազնիւ ըզգացումներով
եւ աստուածահաճոյ ապրելակերպով
Օժտելու համար անխիղճ եւ անգութ
Կեանք վարող մարդոց կենցաղը անփոյթ:

Բեթղեհէմ փաղափ մտորըն անշուք,
Լոյսով օծուեցաւ Աստուծոյ կամփով,
Աստղ մը լուսաւոր առաջնորդ դարձաւ
երեւ մոգերուն, որոնք հաւատփով,
երկիւղածութեամբ ու նուէրներով,
երկրպագեցին ծնած Արքային:

Յիսուս Մանուկի ծնունդը խոնարհ,
Աւետիս տալով մենք կը տօնենք յար,
Որպէս մարդացեալ Աստուած կենարար,
Որ Աստուածային սիրոյ խորհրդով,
եւ սուրբ Մարիամի մայրական ուխտով,
Դարձաւ մարդկութեան խիղճը իր կեանքով:

Այս գիշեր տօն է՝ Սիրոյ Բուրաստան:
Կը տօնենք հպարտ, սիրով դիւքական,
Մեր սուրբ հայրերու շարականներով
եւ հայրենաւանդ խոր աղօթքներով,
Տալով աւետիս ամբողջ հայութեան,
Որ ծնաւ Արքան՝ Փրկիչ մարդկութեան:

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Նահապետն է նա, դարերի խորֆից,
Ոտքերը փոշոտ, կապան պատրուած,
Հանդարտ ֆայլերով եկող, մեզ հասնող,
Քրտնաթոր դէմքն է սրբում իր թելով:
Ծարաւից պապակ շրթներն է թրջում,
Դարերի խորֆից եկող հայեացքով
Դիտում է իր շուրջն ու խօսում փութով:

Նրա սրտի մէջ՝ անհուն բարութիւն,
Նրա աչքերում մեղըրն է կարծես
Հալւում ու հոսում, եւ նրա շրթից
Դուրս եկող խօսքերն իրենով օծում:
Մարգարէն է նա Սինայից եկող,
Ասես Մովսէսն է ժայռից ջուր ֆամող,
Անապատում նա օձ է բարձրացրել,
Իր ժողովրդի վերքերն է բուժել,
Մահուան դէմ դրել, մահուան է յաղթել:

Նահապետն է նա Սուրբ Գրքից եկած.
Ցան հայոց նրան լոյս աշխարհ բերեց,
Իր ցաւակցելով մեր ցաւը կիսուեց,
Ցաւից ու վշտից նոր ծաղիկ բացուեց
Մեր պարտէզներում եւ մեր սրտերում:

Նրա օրհնութեամբ երկնքից իջնող
Երազներն են մեր իրականանում,
Նրա փոխարէն ազգը իր սիրած
Հասել է արդէն դարեր ըղձացուած
Երազին անհաս՝ իր ազատութեան:

Հայրի՛կ դու հայոց, ննջի՛ր դու անդորր,
Պատգամն է քո, տե՛ս, դարձել կեանք մեզ նոր,
Ազատ եւ անկախ կեանքով ենք ապրում
Աւետեաց երկիր մեր հայրենիքում:

ՆԵՐՍԷՍ ՎԱՆԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ

ՓՈՐՁ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՒ ԵՐՐԱՅԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

Երրայերեկնի մէջ բանաստեղծութիւնն բառին համագօրը բոլորովին տարբեր նշանակութիւն ունի հելլենական առումէն, զոր իւրացուցած են եւրոպական լեզուները եւ արդի հայերէնը: Ասկից, մեր սխալ հասկացողութիւնը երրայական բանաստեղծութեան մասին:

Ապողոնի արուեստը նշանակող բառը յունարէնի մէջ կը նշանակէ ստեղծել, մինչ երրայերեկնի մէջ.

ա. բաղդատել, խօսիլ նմանութիւններով.
բ. յօտել, կտրել, տաշել, յղկել: Այս երկրորդ սահմանումին մասին պիտի խօսինք վերջը, սակայն կ'ուզէի անմիջապէս այստեղ դիտել տալ, որ յօտել, կտրել, տաշել, յղկել, շատ կը յիշեցնեն մեր ֆերթել (եւ ֆերթուած) բառը, (Յունարէնի մէջ դրամմա = գրել, կը մատեն մագաղաթներու վրայ, ֆերելով ու ֆերթելով, մտածումը նշանակելու սովորութիւնը հիւններուն):

Գալով առաջին սահմանումին, ըսել թէ երրայերեկնի մէջ բանաստեղծութիւնն բառին համագօրը կը նշանակէ բաղդատել, խօսիլ նմանութիւններով, փոքրիկ այլ թանկագին ծանօթութիւն մըն է որ, ինծի կը թուի թէ, բաւական է ներկայացնելու երրայական արուեստին ամբողջ նկարագիրը: Հայերէն Աստուածաշունչին մէջ սխալ եւ շատ գէշ թարգմանուած է այդ բառը: Արդարեւ, ինչ որ առակ(1) թարգմանած են մերինները (Գիրք Յորայ Գլ. Իէ, 1, Սաղմ. Գլ. ԽԸ, 5) պէտք էր պարզապէս թարգմանուէր բանաստեղծութիւն (բաղդատելով ու նմանութիւններով խօսելու երրայական արուեստը): Նոյնպէս, ինչ որ առակարկու (Գիրք Թուոց, Գլ. ԻԱ, 27), թարգմանած են, պէտք էր

թարգմանուէր պարզապէս բանաստեղծ: Բացէք բարբուռնի Զատոկ Քանի թարգմանութիւնը, եւ պիտի տեսնէք այդ բառերու փոխադրութիւնը՝ կատարուած ինչպէս դիտել տուի: Արդարեւ, Յորի գրքին մէջ, որ ամբողջ բանաստեղծութիւն մըն է, (2) իմաստ ունի՞ ըսել «...լաւելեալ Յորայ յառակի իւրում»: Կամ ի՞նչ կը նշանակէ «բացից զառակս օրհնութեան» (Սաղմ. Գլ. ԽԸ, 5): Ո՞վ բան կը հասկնայ «օրհնութեան առակ» բացատրութեան: Գրաբար Աստուածաշունչը, ծանօթութեան մը մէջ, նոյն բացատրութիւնը կը թարգմանէ «բացից ֆնարաւ զառեղծուածս իմ»: Աւելի գէշ, միթէ առեղծուածնե՞ր կը նուագէին ֆնարով, երրայերեկնի բանաստեղծները*: Մեր պատուելիներուն աշխարհաբար Աստուածաշունչը աւելի եւս յիմար թարգմանութիւն մը կը կատարէ գրելով. «խրթնաբանութիւնս ֆնարով պիտի բանամ»: Քնար բառին գոյութիւնն իսկ պէտք էր ենթադրել տար թէ խօսքը երգի կամ բանաստեղծութեան մասին է, եւ ոչ թէ առակի, առեղծուածի, խրթնաբանութեան: Մանաւանդ որ անմիջապէս յետոյ տուն մը, երկու տուն երգ մը կը յիշուի. (Զատոկ Քան այդ երգերը կը թարգմանէ բաժնելով հատուածէն): Ուրիշ օրինակ մը, - կարգ մը սաղմոսներ, որ կը կոչուին մասֆիլ, գրաբար Աստուածաշունչը թարգմանած է իմաստութիւն. աշխարհաբարը՝ երգ: Այս մասֆիլը այնպիսի երգ մը կամ բանաստեղծութիւն մըն է, որ բանահիւսուած է համաձայն երրայական արուեստին ամենէն մաքուր եւ ամենէն գեղեցկագիտական օրէնքներուն, այսինքն բանաստեղծութիւն մը, որ լաւ տաշուած

է, լաւ կտրուած է, լաւ յղկուած է, եւ կը մատնէ բանահիւսողին իմաստութիւնը այդ արուեստին մէջ:

Այս սխալ թարգմանութիւններուն պատճառը նախ այն է, որ թարգմանիչները շփոթած են բանաստեղծութեան երրայեքէն համագօրին բառական իմաստէն: Եւ յետոյ այն որ բանաստեղծութեան մասժին բոլորովին տարբեր էր ըմբռնումը, ինչպէս երրայեքիներուն, նոյնպէս Հին Արեւելի ժողովուրդներուն, որոնք թաթախուած էին աստրաբաբելական ֆաղափակրթութեան մէջ: Հետեւաբար, պատմութեան մշուշին մէջէն լսուող երգերն ու բանաստեղծութիւնները ուսումնասիրելու ժամանակ, պէտք է մէկդի նետել հելլենական ու հռոմէական ֆաղափակրթութեան կշիռներն ու չափերը, եւ, անցնելով առաջ քան Աթէնքի եւ Հռոմի աշխարհակալութեան թուականները, մտնել այն տարբեր աշխարհը, թէեւ յետոյ պարտուած ու կործանած, որ աստրաբաբելական աշխարհակալութեան շրջաններուն, ժողովուրդներու իրեքաթափանցման նոյն օրէնքներուն տակ, ինչպէս կայսերական ֆաղափական կաթսաներու մէջ մէկ ֆաղափակրթութիւն եւ մէկ արուեստ էր շիներ:

Չէ՞ որ, ինչպէս կը պնդեն բոլորը, շատ հիմն են հայ Գողթան երգերը, հնդկական դիցաբանութեան հետ կապ մը պահելու աստիճան:

Եթէ շատ հիմն են մեր Գողթան երգերու պատառիկները, ապա ուրեմն անոնք հիւսուած են համաձայն այդ հիմն աշխարհին արուեստի օրէնքներուն: Ահա թէ ինչու Ետուար Տորմ կը պնդէ թէ ինչ որ յատկանիշը կը կազմէ երրայական բանաստեղծութեան, չէր կրնար սեփական ըլլալ միայն երրայեքի ժողովուրդին, այլ հասարակաց եւ ընդհանրական՝ Բաբելացիներուն, Ասորեստանցիներուն,

Արարներուն: Ասորական մշակոյթին եւ երրայական գրականութեան հետ մեր խնամութեան մասին խօսելէ առաջ, անհրաժեշտ է ուրեմն ճշտել երրայական բանաստեղծութեան նկարագիրները, որ յատուկ էին նաեւ Ասիոյ առաջաւոր ժողովուրդներուն:

Երրայեքիները բանահիւսութեան առաջին պայման կը համարէին յիշողութեան ապահովումը: Բանաստեղծութիւնը բերնէ բերան էր, որ կ'աւանդուէր, ուստի հարկ էր միջոց մը գտնել բանահիւսութիւնը պահելու դարէ դար: Որպէս զի երգիչը անսխալ եւ առանց տող մը մոռնալու կարենար երգել բանաստեղծութիւնը, օգտագործուեցաւ Այբուրէնը: Այսպէս քանի մը երրայեքէն բանաստեղծութիւններ հիւսուած կամ յօրինուած են այբուրենական կարգով: Բանաստեղծութեան մէջ ամէն տուն կամ որոշ թիւով տողեր կը սկսէին նոյնատառ բառով: Չեմ կրնար այստեղ յիշել երրայեքէն քնագիրը, ուստի օրինակը կու տամ հայերէնով: Ենթադրենք թէ երգիչ մը երգեց.

Երկնէր երկին եւ երկիր:

Երկրորդ տողը կը պարտաւորուէր սկսելու Ե տառով կամ Երկնէր բառով.

Երկնէր եւ ծիրանի ծով:

Կամ թէ երգիչը երգեց.

Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր:

Երկրորդ տողը կը պարտաւորուէր սկսելու Ը տառով կամ Ընդ բառով.

Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր:

Անշուշտ դժուար էր միշտ յարգել այս օրէնքը: Այս պատճառով, երրայական բանաստեղծութեան մէջ, քիչ են նման կտորները: Յիշենք Սաղմոս 33ԺԸ-ն, ուր, գրաբար Աստուածաշունչին մէջ, գրուած է նոյն տառով սկսող իւրաքանչիւր տուն մէկը միւսէն հեռու: Երրայեքէն Այբուրէնը կը բաղկանայ 22 տառէ, այդ սաղմոսն ալ ունի 22 տուն, իւրաքանչիւր

տուն՝ 8 տող, ուրեմն ամեն տունի մէջ նոյն տառը կրկնուած է 8 անգամ: Այրուրեանական կարգով գրուած է նաեւ Երեմիայի Ողբերուն Գ. գլուխը, ամենը 22 տուն: Նոյն Ողբերուն Գ. գլուխը ունի 66 տուն, այստեղ իւրաքանչիւր տուն կը բաղկանայ եռեանկներէ (երեք տողերն ալ նոյնատառ սկսած են), եւ ամեն երեք տուն յաջորդաբար դարձեալ նոյնատառ:

Դիտելով որ դժուար է միշտ յարգել այս օրէնքը՝ դրուած միայն ու միայն յիշողութեան մէջ պահելու համար քանահիւսական գանձը, երբայցի քանաստեղծները փորձեցին կրկնել ոչ թէ միայն տառը որոշ թիւով անդամներու սկիզբը, այլեւ կրկնել իմաստը որոշ թիւով անդամներու մէջ: Այսպէս, երբ երգիչը երգեց.

Երկնէր երկին եւ երկիր:

Կը պատրաստուի երկրորդ անդամին մէջ ալ կրկնել նոյն իմաստը.

Երկնէր եւ ծիրանի ծով:

Ուրիշ օրինակ մը.

Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր:

Երկրորդ անգամը կու գար կրկնելու նոյն պատկերը, անշուշտ յառաջացնելով գործողութիւնը.

Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր:

Առնենք, հիմա, օրինակ մը եբրայական քանաստեղծութենէն.

Տէր լոյս իմ եւ կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց,

Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողացայց:

Այստեղ անմիջապէս աչքի կը զարնէ զուգահեռականութիւնը: Արդարեւ, եբրայական քանաստեղծութեան գլխաւոր յատկանիշներէն մէկն է զուգահեռական զարգացումը յուզումին, մտածումին եւ վերջապէս քերթողական արտայայտութեան: Այդ զուգահեռականութիւնը կը նշմարուի ոչ միայն երկանդամ, այլեւ

երբեմն եռանդամ.

Խաւարեացի օրն այն,

Եւ մի՛ խնդրեսցէ զնա Տէր ի վերուստ,

Մի՛ եկեսցէ ի վերայ նորա լոյս:

Ընկալցի զնա խաւար եւ ստուեր մահու,

Եկեսցէ ի վերայ նորա մէգ,

Եւ զարհուրեցուցեն զնա որ մթացուցանեն գտիւ:

Այս զուգահեռականութեան մէջ յատկանշականն այն է, որ զուգահեռ անդամները իրարու կը համապատասխանեն ոչ միայն իմաստով, այլեւ ձայներով: Ահա, օրինակ մը, որ ցոյց կու տայ թէ իւրաքանչիւր անդամի մէջ բառերը դրուած են դէմ դիմաց, կարծես իբրեւ մտածման արձագանգ.

Տեառն է երկիր լրիւ իւրով,

Աշխարհ եւ ամենայն բնակիչ՝ նորա:

Նա ինքն ի վերայ ծովու հիմունս արկ նմա,

Ի վերա գետոց պատրաստեաց զնա:

Առաջին անդամին մէջ երկիրը կը համապատասխանէ երկրորդին աշխարհ քառին, երրորդին մէջ ծով՝ չորրորդին գետ քառին:

Ճիշտ ինչպէս մեր երկնէր երկին քանաստեղծութեան մէջ քառերն ու պատկերները իրարու արձագանգ կու տան անդամներուն մէջ.

Երկնէր երկին եւ երկիր,

Երկնէր եւ ծիրանի ծով:

Ընդ եղեգան փող՝ ծուխ ելանէր,

Ընդ եղեգան փող՝ բոց ելանէր,

Ուսկի՞ց կը ծագի այս զուգահեռականութիւնը: Ըսինք թէ ծագում կ'առնէր յիշողութեան անհրաժեշտ մէկ խաղէն: Այս երեւոյթը շատեր կը բացատրեն նաեւ այլ ձեւերով: Այսպէս, մտածման արձագանքը, պատկերներու

գուգահեռականութիւնը, խօսքերու կրկնութիւնը, քսէֆ ինչպէս կ'ուզէֆ, յատուկ է բոլոր նախնական ժողովուրդներուն, որոնց իմացականութիւնը կը սիրէ գաղափարներու գուգակցութիւնը: Էտուար Տ'որմ ուշադրութեամբ կը ֆննէ Ծննդոց գիրքին խմբագրութիւնը եւ կը նշմարէ, որ հեղինակը միշտ գուգորդութեամբ կը յիշէ բոյսերը, կենդանիները եւ գաղափարները, - երկինք եւ երկիր, լոյս եւ խաւար, ցերեկ եւ գիշեր, ծով եւ ցամաք, չար եւ բարի: Յուգումին եւ մտածման օրօրումը կը բացատրուի նաեւ յիշելով, որ, եբրայեցիներուն եւ Ասորեստացիներուն մէջ, երգիչները սովորութիւն ունէին գիրքնէ շրջապատողներուն կրկնել տալ իրենց ստեղծագործութիւնները տող առ տող: Այս ձեւով կը ստեղծուէր կշռոյթ մը, որ, արձագանք տալով երգիչը պաշարողներուն հոգւոյն մէջ, կ'օրօրէր զանոնք: Երեւակայեցէֆ, որ հովիւներ էին երգիչները, - անոնք կը կենային ժողովուրդին մէջտեղը, ճիշտ ինչպէս իրենց ոչխարներու հօտին կեդրոնը, կ'երգէին ինչպէս տուն կուտար ներշնչումը: Ու ժողովուրդը կը մասնակցէր, կրկնելով փոխասացութեամբ: Նկատեցէֆ որ վաչկատուն կամ խաշնարած ժողովուրդներու մօտ տարօրինակ վարժութիւն մըն է խմբուիլ առաջնորդին շուրջը, պաշարել զայն, կախուիլ անոր շրթներէն: Այս վարժութեան հետքը կայ անպայման սաղմոսասացութեան աւանդութիւններուն մէջ: Ինչպէս ովասիսին մէջ, առուի մը եզերքը, ոչխարի հօտին կեդրոնը կանգնած հովիւ մը, այնպէս ալ տանարին մէջ, երգիչներու դասին կեդրոնը կեցած մոսհելը (եբրայերէն կը նշանակէ այն, որ կշռոյթ եւ չափ կու տայ ներշնչման, պարզ խօսքով՝ բանաստեղծ), կ'երգէ եւ ժողովուրդը կը ձայնակցի փոխն ի փոխ:

Երգեցողութեան այս ձեւէն ծագում առաւ դասէ դաս փոխասացութիւնը. «Եւ երկոքին դասք երգեցողացն կացին ի տանն Աստուծոյ» (Գիրք Նէեմ. Գլ. ԺԲ. 40):

Արդ, պահ մը դիտեցէֆ նմանութիւնը, որ գոյութիւն ունի փոխին (սաղմոսներու տուները) եւ գուգահեռ անդամներով բանահիւսութեան միջեւ:

Սկիզբները գրեցինք թէ եբրայերէնի մէջ բանաստեղծութիւն կը նշանակէ յղկել, յօտել (ինչպէս ծառ մը), տաշել: Այս բացատրութիւններն իսկ կը մատնեն, որ եբրայեցիներուն մօտ գոյութիւն ունէին տաղաչափական մասնաւոր օրէնքներ, որոնց վրայ կը ձեւէին ու կը կտրէին, կը կաղապարէին ու կը յղկէին իրենց ստեղծագործութիւնները: Այդ ենթադրութիւնը աւելի եւս կը զօրանայ, երբ նկատի առնենք որ եբրայեցիները բազմաթիւ բառեր ունին բանաստեղծական զանազան ձեւերու մասին: Ասկից զատ, Սաղմոսներուն մէջ կը յիշուին բազմաթիւ բառեր, որոնք կը հաստատեն թէ շատ որոշ օրէնքներ կային երգելու, հետեւաբար բանահիւսելու համար: Այսպէս, գոյութիւն ունէին հատածներ, որ կը նշտուէին աթնա (Աստուածաշունչի մէջ քարգմանուած է հանգիստ) կոչուած շեշտով մը: Դարձեալ կային թէ ամիմ կոչուած նշաններ, որոնք կու գային շեշտել ոտանաւորին անդամներուն վերջին բառերը, բաժնելով տողը տողէն: Այս մասին երկար չափտի խօսիմ, որովհետեւ այնքան բարդ հարց մըն է, որ երկու նակատի բաժնուած են ուսումնասիրողները. մէկ կողմը կ'ընդունի, որ եբրայական բանաստեղծութեան մէջ գոյութիւն չունին տաղաչափական օրէնքներ, ոչ ալ արտաքին ձեւեր, իսկ միւս կողմը կը պնդէ թէ եբրայական բանահիւսութիւնը ունէր իր

տաղաչափութիւնը, ինչպէս իր արտաքին
 ձեւերը: Մենք ցոյց տուինք իր արտաքին
 ձեւերէն մէկ ֆանին, - այստեղ կ'ուզենք
 աւելցնել թէ երրայական բանաստեղ-
 ծութիւնը ծանօթ էր նաեւ տուն կազմելու
 օրէնքներուն: Եւ այս՝ եզրակացութիւնն
 իսկ է տողերու զուգահեռականութեան
 օրէնքին: Արդարեւ, ինչպէս տեսանք, երբ
 պատկեր մը կը կրկնուի երկու անգամով,
 տուն մը կը կազմուի: Երբեմն երեք
 անգամներու կրկնութիւնով է, որ կը
 կազմուի տունը, եւ ահա ստեղծուած է
 եռեակը: Այսպէս եռեակներու գեղեցիկ
 օրինակ մըն է Երեմիայի Ողբերուն Գ.
 գլուխը: Քառեակները, կարելի է ըսել,
 անծանօթ էին երրայեցիներուն, եթէ
 ֆառեակը (3) եւս չհամարենք գումար մը
 երկու երկեակի:

Թէ երրայեցիները որքան ծանօթ
 էին եռեակին, տանք ֆանի մը օրինակներ՝
 ֆաղելով երրայական ամենահին
 բանաստեղծութիւններէն.

Ջարթի՛ր, զարթի՛ր, Դերովրա,

Ջարթի՛ր, զարթի՛ր, խօսեա՛նք գով,

Յարո՛, Բարա՛կ, գերեա՛ն գգերիս:

Աստուածաշունչին մէջ տարբեր
 թարգմանուած են այս տողերը, բայց ես
 կը հետեւիմ ուղղակի բնագրին վրայէն
 կատարուած ֆրանսերէն թարգմանութեան
 մը: Հետեւեալ հատուածին ոտանաւորի
 ձեւը խաթարուած է, բայց կը մնան
 յատկանշական կրկնութիւնները.

Ոչ ապաքէն գտանին, ո՞չ ապաքէն
 քաշխեն աւար,

Աղջիկ մի, նա աղջկունս երկուս
 առ այր,

Կապուտ երանգոց նկարակերտ
 վասն Սիսարայ,

Կապուտ երանգոց նկարակերտ,

Երանգ երկուստեք նկարէն,

Նարօտ պէսպէս նկարուց,

Պարանոցին նորա կապուտ:

Եւ հիմա կարդացէ՛ք հետեւեալը.

Եւ քղխեցէ՛ գաւազան
 յարմատոյն Յեսսեայ,

Եւ ելցէ՛ շառաւիղ յարմատոյ
 անտի,

Եւ հանգիցէ՛ ի վերայ նորա հոգի
 Աստուծոյ:

Հոգի իմաստութեան եւ հանճարոյ,

Հոգի խորհրդոյ եւ զօրութեան,

Հոգի գիտութեան եւ աստուած-
 պաշտութեան:

Եւ բուրեցէ՛ երկիւղի Տեառն,

Ոչ ըստ աչաց դատեցէ՛,

Ոչ ըստ խօսից յանդիմանեցէ՛:

Ի՞նչ կը յիշեցնէ՛ ձեզի այս
 բանաստեղծութիւնը, - երկէն երկի՞րը:
 Արդարեւ, մեր այս գեղեցիկ պատառիկն
 ալ կը բաժնուի եռեակներու, բանալով
 նման ու զուգահեռական պատկերներու
 տեսիլ մը:

Եռեակները այնքան լրիւ են եւ
 գեղեցիկ, որ Տոքթ. Սմբատ Գաբրիէլեան
 դիտել կու տայ թէ առաջին տունը կը
 ներկայացնէ՛ երկունքը, երկրորդը՝
 ծնունդը, երրորդը՝ ծնեալը:

Ոչ մէկ կասկած թէ եռեակը շատ
 ծանօթ ձեւ մըն էր հայ ժողովրդական
 բանաստեղծութեան մէջ: Լէօ կը կարծէ
 թէ հեթանոսական աւանդութիւններէ
 մնացած է հետեւեալ երգը, զոր կ'երգէին
 Վասպուրականի մէջ նորապսակ հարսին
 ու փեսային առջեւ.

էգ քարեւ, ա՛յ էգ քարեւ,

էգն արեւուն տանք քարեւ,

Տայ թագաւորին շատ արեւ,

Վահէ՛, Վահէ՛:

էգ քարեւ, ա՛յ էգ քարեւ,

էգ արեւուն տանք քարեւ,

Տայ թագուհւոյն շատ արեւ,

Վահէ՛, Վահէ՛: (4)

Տոքթ. Գաբրիէլեան դիտել կու
 տայ, որ եռեակ մը կը կազմէ նաեւ
 Արտաշէսի երգը.

Ո՛ր տայր ինձ գծուիս ծխանի եւ

գառաւօտն նաւասարդի,

Զվագելն եղանց եւ զվագելն
եղջերուաց,

Մեք փող հարուաք եւ թմրկի
հարկանէաք:

Եռեակի ձեւն ունի նաեւ Արտաշէսի
անէծքը.

Դու յորս հեծցիս յԱզատ ի վեր
ի Մասիս,

Զքեզ կալցին քաջք, տարցին յԱզատ
ի վեր ի Մասիս,

Անդ կացցես, եւ զլոյս մի՛ տեսցես:

Քանի մը օրինակ ալ Մկրտիչ Նաղաշէն.

Թասերըն չիւնի,

Կարմրորուկ գինի,

Զեզ անուշ լինի:

Զոր մէզէն համեղ,

Գինին է գօրեղ,

Դուք անուշ արէք:

Նաղաշ Յովնաթանէն.

Սեղանըս լի է ծաղիկ,

Այսօր քան ըզվաղըն աղէկ,

Գինի խմէք, ծիծաղէք:

Տէր ողորմեա՛, Տէր յիշեա՛,

Կարմիր գինի, սպիտակ շուշալ,

Ուրախ կենամք համաշալ:

Երկու քառեակ ալ Միքայէլ Սարկաւագէն.

Արեւելք առաջին,

Եւ արեւմուտք որ է վերջին,

Նստեալ հայիմ դէմ փարչին:

Եւ զանազանի լի ֆըչին,

Բարեխօսեա՛ մեծ կարասին,

Որ զանազանէ ի գինին:

Թէ եռեակը անծանօթ չէր հին հայ
գրականութեան, կը վկայեն շարականներն
ալ: Արդարեւ Բարկէն Կաթողիկոս կը
գրէ թէ մեր շարականներուն պատկերները
կազմուած են երեք տուններով: (5)

Միւս կողմէ Մ. Արեղեան կը
հաստատէ, որ հայ ժողովրդական երգերը
իրենց յատուկ եռեակ մը ունին, հետեւեալ
ձեւով.

AAA, BBB, CCC...

Օրինակ մը.

Գացի արտը, բռնի լոր,

Աղջիկ տեսայ եայլի ձոր,

Նման էր կարմիր խնձոր:

Արեւ դիպաւ սարերուն,

Կախաւ թռչաւ փարերուն,

Լորիկ կայնէ վեր դարուն:

Թէ մեր եռեակները բոլորովին
տարբեր են այլ ժողովուրդներու
եռեակներէն, կը հաստատուի նաեւ քննելով
ֆրանսիական եռեակները:

Ֆրանսիացիները ունին քանի մը
տեսակ եռեակներ, գլխաւորներն են՝

Terza-Rima-Villanelle

Առաջինը, զոր գործածած է
Տանթէ, հետեւեալ ձեւն ունի.

ABC,BDB,DED...

Այսինքն, առաջին տունին երկրորդ
տողին հետ յանգ կը կազմեն յաջորդ
տունին առաջին եւ երրորդ տողերը եւ
յաջորդաբար: Երկրորդը, որ շատ չի
գործածուիր, կը կազմուի առաջին տունին
առաջին եւ երրորդ տողերը կրկնելով,
փոխն ի փոխ, յաջորդ տուններուն երրորդ
տողին տեղ: Դիտել կու տանք, որ Մ.
Արեղեան եռեակին AAA, BBB ձեւը
հայկական կը համարի՝ մեկնելով
յանգաւորման եղանակէն: Այդ չէ,
սակայն, ինչ որ հայկական յատկանիշ
մը կու տայ եռեակին, որովհետեւ յանգը
կը բացակայի, ինչպէս մեր անտուններուն
եւ հայրեններուն, նոյնպէս մեր բազմաթիւ
եռեակներուն մէջ: Արդէն յանգը նոր ձեւ
մըն է, հինները չունէին, - թէեւ Միւլլերը
կը պնդէ թէ հումբրական բանաստեղ-
ծութիւնը յանգ կը գործածէր:

Այսպէս, հին հայ տաղաչափու-
թեան մէջ կ'ենթադրենք երրայական
ազդեցութիւն, - նոյնիսկ շարականների
մէջ: «Երբ դարեր ու դարեր ժողովուրդ
մը գիշեր ցերեկ նոյն Ս. Գիրքը կ'որոնայ
եւ սիրտն ու միտքը նոյն
սաղմոսներգութեան քանաստեղծութեամբ

կը համակուի՝ միթէ դժուար է հաստատել անոնց շարականներու բանաստեղծական նոյնութիւնը: Նման երրայական բանաստեղծութեան, մեր շարականները նոյն տաղաչափական արուեստով կը բանահիւսեն: Չենք ալ գիտեր թէ ինչո՞ւ այդպէս կ'ըլլան, քանի որ Գողթան երգերու բանահիւսութիւնը յար եւ նման էր երրայականին» (Միհրան Յովհաննիսեան): Ուրեմն, ինչպէս մեր նախաֆրիստոնէական, նոյնպէս յետֆրիստոնէական մեր տաղաչափական արուեստը կ'աշակերտէր երրայեցիներին, Պարսիկներին, Արաբներին, եւ ոչ թէ յունական-լատինական տաղաչափութեան: Առաջին անգամ, հայ հին տաղաչափութեան մասին խօսելով, Բագրատունի շեղեց այս հարցին ֆննութեան ընթացքը եւ այնուհետեւ բոլորը պարծեցան հայկական չափով մը, որ կու գար արեւմուտէն, եւ ոչ թէ արեւելէն: Բագրատունի կը ծիծաղէր, երբ Գր. Մագիստրոս կը պնդէր.

«Ի Հայումս առաւել քան ի յունականին գտանեմք զտաղաչափական արուեստն, քան զի թէպէտ եւ Յունք զոտանաւորս ստեղծանեն գիտելով զչափն, այլ ոչ կշիռն. քանզի յԱրաբացոց, ի Պարսից եւ յԻսմայելականաց վարժեալ եմք ի չափ եւ ի կշիռ տալից»:

Արդարեւ, արաբական տաղաչափութեան յատկանիշեր պիտի գտնէք մեր շարականներուն մէջ, որոնք երբեմն գրուած են իբրեւ միւլեաշար, երբեմն իբրեւ մեսնեվի, հիմվ, մետե, դանքեյթ, եւ այլն: Վերջապէս, շնորհիւ արաբական ուսուցներու. (յիշեմք էվսատ, ֆահտե, չենպեր, պերեվչան, բեմել, սեմա եւ այլն), «լիքի երգն երաժշտօրէն երգելի»: Այդ ուսուցները կը մնային մինչեւ Պապա Համբարձում, որուն աշակերտները, սակայն, լիեցին կարգ մը ուսուցներ:

Այո, մեր եկեղեցական բանաստեղծութիւնը եւս պէտք է գտնուէր ազդեցութեան տակ արաբական Արուզին (տաղաչափութեան), ինչպէս մեր նախաֆրիստոնէական արուեստը՝ երրայեցի մոսհելներու օրէնքներուն: Ի՞նչ հարկ վանկերուն սուղն ու երկարը բացատրել անպայման լատինական ամանակով, չէ՞ որ սեմական արուեստը մեզի աւանդած էր ճեզմը եւ մետտը:

Գ.

Այս ամենին կը հետեւի, որ յանգիտութիւն մը կայ մեր հին բանաստեղծութեան եւ երրայական բանաստեղծութեան միջեւ: Այս պարագան կ'ենթադրէ ազդեցութիւն մը:

Փաստեր այդ ազդեցութեան.-

Ա. երրայական արուեստը, ինչպէս հայկականը հարկատու էին, կամ ժառանգորդ մեծ քաղաքակրթութեան մը, - ասորաբարելական մշակոյթին: «Ժամանակակից արուեստք եւ գիտութիւն, նոյն դարուն, նման ոգին կը կրեն եւ նոյն դարուն մէջ ապրող ազգաց հասարակաց են, այնպէս որ բանասիրութիւնը կրնայ յայտարարել թէ մեր հին տաղաչափութիւնը հին ազգաց տաղաչափութեան հետ միեւնոյն սկզբանց վրայ հիմնուած էր»: (7)

Բ. Մեր եկեղեցական երգեցողութիւնը, շարականներու ստեղծագործութիւնը, յառաջ, կը բաղկանար երրայական սաղմոսներէ: (8)

Դ. Եղիշէ Արքեպս. Դուրեան կ'ըսէ, լատին հեղինակի մը վկայութեան վրայ հիմնուելով, թէ Հայերը մօտիկ յարաբերութիւն ունէին երուսաղէմի հետ: (9)

Ե. Վերջապէս, ինչպէս ցոյց տուինք, մեր հին գրականութիւնը, ինքն ալ կը հաստատէ թէ նմանութեան շատ կէտեր ունի երրայականին հետ:

ՇԱԽԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Երբայեցիները բանաստեղծութեան զանազան ձևեր ունին, քինա, մասհալ, միֆթամ, շիկայոն, մասֆիլ, միզմօր, քեհիլլիմ, որոնք առանձինն կը նշանակեն նաեւ բանաստեղծութիւն:

2) Շատեր ուզած են վերահաստատել Յորի գրքին ձեւը իբրեւ բանաստեղծութիւն: Մեր մէջ Թորգոմ Արքեպս. Գուշակեան եւս տաղաչափական ձեւ տուած է Յորի գրքին:

*(Առակը որպէս բանաստեղծութիւն ներկայացնելու հեղինակի այս նիգերը հիմնագործ են, որը նաեւ հաւաստում է այս բառը գրաբարեան առակին համարժէքով ներկայացնելը դասական միւս լեզուներով կատարուած թարգմանութիւններում: Պարզապէս առակը գրաբարում իմաստային շատ աւելի մեծ ընդգրկում է ունեցել, քան այսօրուայ հայերէնում: Նաեւ անթոյլատրելի է գրաբարեան թարգմանութեան մասին այդպիսի ոճով արտայայտուելը, վկայակոչելով լոկ ժամանակակից մի թարգմանութիւն եւ

մեկնաբանութիւն:

Ձնայած այս ամենին, նպատակայարմար գտանք մեր ամսագրում վերահրատարակելու ոչ այնքան յայտնի այս յօդուածը իր լայն ընդգրկում ունեցող բանաստեղծական մի շարք իւրօրինակ գուգահեռների եւ հայ գրականութեան վաղագոյն շերտերը վեր հանելու փորձի համար: ԽՄԲ.՝ վ. Դեւրիկեան): ԷՋՄԻԱՄԻՆ, 2002 ժ:

3) Մ. Արեղեան (Հայոց Լեզուի Տաղաչափութիւն, էջ 449) կը դիտէ, որ պարսկական Քառեակին մէջ երկու տողը կը կազմեն մէկ բէյթ, երկու բէյթը՝ մէկ ֆառեակ:

4) Լէօ, Պատմութիւն Հայոց, էջ 348:

5) Սիոն, Յուլիս-Օգոստոս, 1927:

6) L. Mueller, - *Metrique grecque et latine*, Trad. Francaise, Paris, 1882.

7) Միհրան Յովհաննիսեան, Քննական Պատմ. ԺԹ. դարու Դպրութեան, էջ 81:

8) Բարգէնեան, Հայոց եկեղեցին Ե դարուն մէջ, էջ 16-21:

9) Գ. Մխիթարեանի տեսակցութիւնը եղիշէ արքեպս. Դուրեանի հետ (Յուսաբեր, 4 օգ. 1927):

ՇԱԽԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ

ՄԵՂՔԻ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ...

Հայաստանէն նոր գաղթած երիտասարդ տղայ մըն էր Նորիկը, որուն կեանքի պատմութեան գէթ մէկ երեսը այնքան ալ տարբեր չէր մեզի ծանօթ այլ հայրենակիցներու կեանքի պատկերներէն:

Հայրենիքի ֆաղափական ու տնտեսական ծանր պայմանները, գինքնետած էին Մոսկուա, ուր գինետան մը մէջ սորված էր գաղտնիքները տարբեր տեսակի ըմպելիներ պատրաստելու ու մատուցելու յանախորդներուն:

Ժամանակաւոր գործ մը «հացի նամբուն» վրայ, որ միխթարութիւն կը պարգեւէր իրեն ամսականէն «տոկոս մը» առաքելու իր ընտանիքին, որու անդամները կարօտին հետ նաեւ կարիք ունէին Նորիկի օգնութեան:

Տասներկու տարիէ աւելի ապրած էր կամաւոր պանդուխտի դառն ճակատագիրը հայրենաբաղձ ֆանի մը բարեկամներու հետ: Գիշերային այդ հանոյալի զրօսարանի աշխատանքի ճանապարհին, տեսած էր կեանքի տաք ու պաղ օրերը, երբ պարտաւորութիւնն ու պարտականութիւնը օրէ օր խեղդած էին իր հոգին, ու խիղճը, եւ ժամանակի ընթացքին մարած՝ ընտանեկան սիրոյ կրակը հոգւոյն մէջ: Մոռցած էր տուն ու ընտանիք: Ետին թողած կինն ու անչափահաս երկու դուստրերը, որոնց դիմագիծն անգամ տարիներ յետոյ... աղօտ էին մտին պաստառին վրայ: Ու նոր աշխարհի մէջ նոր կեանք մը որոնելու միտումով անցած էր Եւրոպա: Ժամանակ մը աշխատած էր Գերմանիոյ մէջ, ապա Հոլանտա, ու վերջապէս գաղթած Ամերիկա ու կայք հաստատած Լոս Անճելոսի մէջ:

Երկու տարի առաջ էր, երբ բարեկամի մը միջոցաւ ծանօթացայ

իրեն: Նոր ժամանած էր Գոլոմպոսի երկիրը ու գործ կը փնտռէր: Որեւէ գործ: Տան վարձքը եւ ապրուստ մը հոգալու բաւարար գործ մը:

Ու կարն ժամանակ մը ետք բարեկամներու ջանքերով, Նորիկը գործ գտաւ Լաս Վեկասի գազիններէն մէկուն մէջ: Թաւալող ամիսներուն հետ, Նորիկն ալ յիշողութեանս մէջ անցած էր պատմութեան գիրքը: Ո՛չ մէկ լուր ունէի իրմէ: Եւ ի՞նչ մեղքս պահեմ, հետաքրքրուած անգամ չէի իրմով:

Ու յանկարծ, կիրակի առաւօտ մը, հաւատացեալներու խումբի մը մէջ խոնուած ճշմարեցի գինքնետ գլխահակ ու լուռ, մտածումներու մէջ սուզուած, խաչակնքելով երեսը կը մօտենար Ս. Սեղանին, հաղորդուելու համար:

Մեղքի ֆաղափ մեղքերէն վարակուած՝ կարծես փախուստ տուած էր հիմա Լաս Վեկասէն, ու շունչը առած «երեշտակներու սա ֆաղաքը»՝ փրկութիւն որոնելու եկեղեցւոյ սուրբ կամարներուն տակ:

Հաղորդուելէն ետք, խումբ մը հաւատացեալներու օրինակին հետեւելով, ինքն ալ պահ մը կեցաւ ձախակողմեան փոքր խորանին առջեւ մինչեւ որ պատարագիչ ֆահանան «Կեցո՛՛ Տէր զժողովուրդս քո...» աղօթքը արտասանեց: Ապա անցաւ իր տեղը:

Պատարագէն ետք, եկեղեցւոյ բակը, ծառի մը շուփին տակ կանգնած, գաւաթ մը սուրճով ու սիկարէթով կը միխթարուէր երբ մօտեցայ իրեն «հալը, ֆէյֆը» հարցնելու:

Պահ մը լուռ նայեցաւ աչքերուս, ապա... «ոչի՛նչ - ըսելով, բառ մը սահեցուց շրթներէն միայն:

Աչքերուն թախծութիւնը սակայն կը մատնէին խոռվքը սրտին եւ ալեկո-

ծութիւնը հոգիին, ուր կարծես մարած էին այն եռանդը՝ երբ դեռ նոր ծանօթացած էի իրեն եւ գործ կը փնտռէր այս նոր աշխարհին մէջ:

- Ինչպէ՞ս են գործերդ, վերջապէս հաստատուեցա՞ր Լաս Վեկաս - հարց տուի զգալով իր մէջ կուտակուող դառնութիւնը, որ կը կրծէր հիմա իր հոգին:

- Աշխատում եմ... - պատասխանեց յուզուած շեշտով մը: Ապա... - երանի՜ չգնայի այդ անիծեալ ֆաղաքը - փղձկեցաւ ակամայ, ու այս անգամ չկարենալով զսպել յուզումը, դարձաւ ծառին կողմը ու լացաւ, լացաւ դառնօրէն:

Պահ մը շուարած՝ լուռ մնացի, ապա ձեռքս ուսին դնելով փորձեցի միջոցառական ֆանի մը բառեր գտնել մեղմելու ինծի անծանօթ դրդապատճառը սա յուզումին, որ Լաս Վեկասէն հո՛ս անգամ՝ կը հալածէր զինք ու կ'արիւնէր սիրտը հայու այս բեկորին:

Ու չդիմանալով պատմեց...

- «Քանի մը ամիս առաջ, առանձնութենէս ձանձրացած երբ ըմպելատան մը մէջ նստած գաւաթ մը վոտգայով ցաւս կը խեղդէի ու կը վայելէի նազանքը կիսամերկ ամերիկուհիի պարին... յանկարծ մատուցող աղջիկներէն մէկը մօտեցաւ ու առաջարկեց ինծի եթէ յատուկ առանձնասենեակի մը մէջ կը փափաքէի իր պարը վայելել հարիւր տոլար վճարելով:

Պահ մը տատամսելէ ետք, աղջկան ծեփծեփուն շարժումներուն դիմաց, տեղի տուի առաջարկին: Ու աղջիկը այդ կիսամութ սենեակին մէջ կանացի իր գեղեցկութեամբ ու նազանքով հրապուրեց զիս... ու վերջացաւ գրկապարով:

Պարէն ետք, մինչ կը պատրաստուէի դրամապանակէս հարիւրնոց մը հանել աղջկան տալու, ֆրէտիթ ֆարթս ինկաւ գետին: Աղջիկը

վերցուց ֆարթը, ապա անունս կարդալով... պահ մը շուարած ու սառած մնաց, կարծես կանգ առած էր սիրտը, ու ապուշի նման զիս կը դիտէր... իսկ ես հարիւրնոցը թողելով աթոռին վրայ, վերցուցի ֆարթս ու ինքզինքս դուրս նետեցի այդ անիծեալ սենեակէն...:

Պահ մը ետք աղջիկը դուրս վազեց խելագարի նման ու «հայրիկ... հայրիկ...» պոռալով զիս փնտռեց ըմպելատան կանգառի բակը, մինչ ես անզգալարար կը լքէի վայրը, խուսափելով հայր ըլլալէ:

Աղջկան աղաչական ձայնը մինչեւ հիմա կը հալածէ զիս:

Յաջորդ օրը երբ վերադարձայ ընպելատուն... աղջիկը հո՛ն չէր: Անկէ ետք չվերադարձաւ ան:»

Ապա երկա՛ր լուռութենէ մը ետք, շարունակեց...

- «Տարիներ առաջ ես լքած էի ընտանիքս... կինս ու դեռատի աղջիկներս, բայց ահա կեանքի դառն ճակատագիրը ի՛նչ խաղերով իր դասը տուաւ ինծի, երբ աղջիկս անգամ, հաց մը ուտելու համար, ուրիշ միջոց չէր գտած ու ինկած էր կեանքի այս նեխածութեան աւազանին մէջ: Ու այդ մեղքը այսօր իմ վզիս փարած է:

Երանի՜ չոր հաց ու սոխ ուտէի երեւանի մէջ, ֆան այդ տեսարանը ապրէի հո՛ս:»

Ու լռեց...: Լուռ էի եւ ես:

Մարմնավաճառութեան ցաւերուն վրայ... ահա գունագեղ պատկեր մը հայ մարդու կեանքէն փրցուած...: Մեղքի ֆաղաքին մէջ՝ մեղքէն դաս մը ֆաղած, հիմա եկած էր «հրեշտակներու սա ֆաղաքը» գղջումի աղօթքով խեղդելու այն մեղքը, որ երեսուն արծաթով կորսնցուցած էր ընտանիքը ու հիմա խղճահար ու հայրաբար իր աղջիկը կը փնտռէր... մեղքի ճամբուն վրայ:

ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

ԱՇՆԱՆ ՏԵՐԵԻՆԵՐՈՒ ՊԷՍ

- Եկո՛ւր, - ըսաւ Հերրի, - այս կողմերը կայ իտալական փոքրիկ ճաշարան մը, որ կը կոչուի Սորենթօ եւ կը յիշեցնէ Նափոլիի ծովեզերեայ թրաթորիաները: Հոն ամէն ինչ հարազատ է՝ ուտելիքը, ըմպելիքը եւ երաժշտութիւնը: Եթէ այցելած ես Իտալիա, անպայման պիտի սիրես այս անկիւնը, որ կը յիշեցնէ Ամալֆիի ցից ծովափը:

Դէպի հիւսիս, Սանթա Մոնիֆա պողոտան կը հետեւէր ծովեզերքին եւ կը միանար նեղ ֆորնիշի մը, որ կը յիշեցնէր ձունիէն Թրիփոլիի ճամբան՝ մէկ կողմէն ցից բարձունք մը եւ միւս կողմէն ցից ապառաժ մը, որուն կը բախէին ովկիանոսին ալիքները: Սորենթօ ճաշարանը նստած էր ծովուն կողմը երկարող պատշգամի մը վրայ: Արմէն օտար չգգաց, կը կարծէր գտնուիլ Պէյրութի Աղաւնիներու ֆարայրին առջեւ, քայց դիմացը տարածուողը Սէն Ժորժի ծովախորշը չէր, այլ՝ Մալիպուի ծովածոցը:

Խաղաղականը իրենց առջեւ կը տարածէր իր անծայրածիր անդաստանը: Անոր ջուրերուն վրայ, վերի բարձունքէն, ամբան պայծառ օրերուն, կը տեսնուին կղզիներ. Սանթա Գաթալինա, Սան Գլեմբենթէ, Սան Նիգոլաս, իսկ դէպի հիւսիս՝ Սանթա Գրուզ, Սանթա Ռոսա, Սան Միկէլ:

Արմէն ինքզինքը կը կարծէր Միգենայի հրուանդանին վրայ, ուրկէ կը տեսնուէին այդ առասպելական կղզիները՝ Գափրի, Իսֆիա, Փրիչիտա, որոնք ներշնչած էին մեծ ու պզտիկ բանաստեղծներ:

Ճաշարանապետը անձամբ դիմաւորեց նոր յաճախողները: Հերրի եւ ինք բարեկամներ դարձած էին:

- Ժի՛շդ ժամանակին եկաք, - ըսաւ ձորնիօ, որ միջին տարիքով՝ միջահասակ մարդ մըն էր, - ձեր սեղանը քիչ առաջ պարպուեցաւ:

Արմէն եւ Հերրի տեղ առին սեղանին առջեւ, որ կը գտնուէր պատշգամին անկիւնը եւ երկու կողմէ կ'իշխէր ջուրերուն վրայ:

Սպասեակը չհեռացած, Հերրի, առանց ճաշացանկին վրայ նայելու՝ ապսպրեց ըմպելին եւ կերակուրները:

Օրուան գլխաւոր դէպքը Չեյնենըր անջրպետանաւուն պատահած զարհուրելի արկածն էր եւ անոր մէջ տեղ առած եօթը աստղանաւորներուն ողբերգական մահը:

- Կը կարծե՞ս որ այս արկածը վերջ մը պիտի դնէ մարդոց խիզախումներուն, - հարցուց Արմէն:

- Ի՞նչ է քու կարծիքդ:

- Եթէ նկատի առնեմք դարուս կէսէն ի վեր մարդկութեան արձանագրած յառաջդիմութիւնը գիտական մարզի մէջ, անջրպետը նուաճելու ծրագիրները ո՛չ միայն պիտի շարունակուին, այլեւ պիտի զարգանան: Պրոմէթէոսէն ի վեր, մարդ արարածը կը հետապնդէ գերմարդկային երազ մը՝ նուաճելու համար անկարելին:

- Այդպէս կը թուի ըլլալ: Ես կը կարծեմ, որ մարդը կ'աշխատի, կը տֆնի ո՛չ թէ երազ մը իրականացնելու, այլ՝ ժամանակը սպաննելու: Ներկայ մարդկութիւնը բռնուած է մահուան մղձաւանջէն: Վաղը ֆաղափ իջի՞ր եւ նայէ անցորդներու աչքերուն մէջ: Հոն պիտի տեսնես միայն անձկութիւն եւ վախ: Անոնց դէմքին վրայ կը կարդաս միայն ծուղակը ինկած անասունի մը արտայայտութիւնը: Կարծես Մահը թեւանցուկ կը ֆալէ անոնց իւրաքանչիւրին

հետ: Ինչպէ՞ս ձերբազատուիլ Մահուան այս սոսկալի մտերմութենէն: Մէկ միջոց կայ միայն. անտեսել մահուան ներկայութիւնը եւ նայիլ հեռունքը կամ տարբեր ուղղութեամբ՝ դէպի աստղերը կամ միւս մայթին կողմի լուսայորդ ցուցափեղ կերուին, որոնց առջեւէն կ'անցնին իշխանուհիներու պէս զարդարուած կիներ, կամ պերճադիմներու պէս գրգռիչ պարմանուհիներ: Մահուան մղձաւանջէն ազատելու համար կը բաւէ հետապնդել դիւրամատչելի երազներ եւ դիմել արուեստական այն դրախտներուն, որոնց դրան բանալին կը կոչուի Դրամ: Ժամանակին կ'ըսէին. վերը Աստուած, վարը՝ դրամ: Հիմա կ'ըսեն. վարը դրամ, վերը ոչի՛նչ: Մի՛ մոռնար, որ Աստուածորդին վաճառուեցաւ երեսուն արծաթի: Երկրային հաճոյքները անմիջական են ու մատչելի բոլորին: Ո՞վ չ'ուզեր ունենալ հանգստաւէտ բնակարան, ճոխ սեղան եւ գեղեցիկ կին: Նայէ՛ շուրջդ եւ պիտի տեսնես, որ յետին աւագակը, եթէ նոյնիսկ աւելի տգեղ է, քան Քաղիմոտոն կամ Թրիպուլէն, կրնայ վայելել կեանքի բոլոր բարիքները եւ ունենալ աշխարհի ամէնէն գեղեցիկ կիները, եթէ դրամ ունի:

- Դրամը սատանային մեծագոյն գիւտն է, որուն շնորհիւ կը տիրապետէ աշխարհին վրայ: Դրամին տիրանալու համար ի՛նչ ահաւոր ոճիրներ կը գործուին, ի՛նչ կեանքներ կը փնանան: Մատղաշ աղջիկներ կը վաճառեն իրենց մարմինը, երիտասարդներ իրենց ծնողքին խնայողութիւնները կը մսխեն կանաչ սեղաններու շուրջ, պաշտօնեաներ թշնամիին կը ծախեն իրենց երկրին պետական եւ զինուորական գաղտնիքները: Դրամը դադրած է միջոց մը ըլլալէ եւ դարձած է գերագոյն նպատակ: Ժամանակին մարդիկ իրենց հոգին գրաւի կը դնէին Խաւարի Իշխանին՝ քանի մը տարի երիտասարդանալու համար, այսօր

մարդիկ կը ծախեն իրենց հաւատքը, պատիւը, ազգութիւնը եւ սրբութիւնները՝ դրամ դիզելու համար: Այդ դրամը՝ որ հարուստները կը մսխեն, հազար հնարքներով, սուտերով եւ խաբէութիւններով, աղփատներուն ձեռքէն խլուած հացի արդար բաժինն է: Հարստութիւնը կը սպաննէ մարդու հոգին:

- Ի՞նչ կը հասկնաս հոգի ըսելով:

- Հոգին ներքին ուժ մըն է, որ մարդուն մէջ կը ստեղծէ ժամանակին եւ միջոցին մէջ տարածուելու, ըսեմք՝ անմահանալու ձգտումը:

- Այո՛, կը հաւատամ այդ ուժին:

- Վերցո՛ւր այդ ձգտումը, ջնջէ՛ այդ ուժը մարդուն մէջ եւ կ'ունենաս երկոտանի անասուն մը, որ կապիկէն շատ քիչ կը տարբերի:

- Ապա միտքը, իմացականութիւնը:

- Առանց հոգիի՝ միտքը պիտի ըլլար անասնական բնագոյն մէկ նրբացած տեսակը, հաղորդակցութեան կապ մը իր եւ անմիջական շրջապատին միջեւ: Առանց հոգիի՝ մարդ պիտի չմտածէր իր սկիզբին եւ վախճանին մասին, անդեմականին եւ յաւիտեանականութեան մասին: Պիտի չգրադէր փիլիսոփայութեամբ եւ գիտութեամբ, պիտի չստեղծէր գրական եւ գեղարուեստական գլուխգործոցներ:

- Նայէ՛ շուրջդ եւ տես՝, միլիաոներ հաշուող մարդկութեան մէջ քանի՞ հոգի կը լրացնեն բոլոր սահմանումդ: Ի՞նչ անուն պէտք է տալ մնացեալներուն:

- Ես գանձնք կը կոչեմ մարդակերպ: Մարդոց մեծամասնութիւնը կը ծնի առանց հոգիի: Ուրիշներուն մէջ հոգին մեռած է կամ մահաբաժնի մէջ է: Հետեւաբար անոնց միտքը վերածուած է անասնական բնագոյնի, որ գիրենք կը մղէ անմարդկային արարքներու:

- Զե՞ս կարծեր, որ վճիռդ շատ ծանր է ու անարդար:

- Ես վնիռ չեմ արձակեր, այլ կը նկատեմ: Ուրիշ ձեռով չեմ կրնար բացատրել աշխարհի անհեթեթությունները:

- Յոռետեսությունը արդար մօտեցում մը չէ՝ աշխարհի բաները բացատրելու համար: Դո՛ւն, որ փիլիսոփայութեան մասին կը խօսիս, պէտք է յիշես Մեծն Լայպնիցի այն տեսությունը, թէ «Մեր աշխարհը կարելի աշխարհներուն լաւագոյնն է»:

- Լայպնից կ'ապրէր ժէ դարուն, երբ տակաւին կը հաւատային մարդուն արժանապատուութեան, անոր ազնուացման եւ յառաջդիմութեան: Եթէ Լայպնից ապրէր մեր օրերուն, ան պիտի ըլլար նոր Շոփենհաուերը մը:

- Կ'ուզե՞ս որ բեզի բուեմ մեզի ժամանակակից հարիւրաւոր Լայպնիցներ, համբաւի եւ գիտութեան տէր մարդիկ, որոնք կը փառաբանեն մարդը եւ անոր զարգացուցած ֆաղափարքութիւնը:

- Ի՛նչ աշխարհ, ի՛նչ ֆաղափարքութիւն, ուր՝ տեղ չկայ պարկեշտ մարդոց համար, ուր կ'ոտնակոխուին չֆաւորները եւ համեստները, ուր կը բռնաբարուին փոքր ժողովուրդներուն արդար իրաւունքները: Թո՛ղ այլեւս լռեն մեծ ու պզտիկ փերեզակները, որոնք միջազգային բեմերէն կը բարբառին ազգերու ինքնորոշման եւ մարդկային իրաւունքներու մասին: Թո՛ղ վերջնականապէս ոչնչանայ կեղծիքի այն վարագոյրը, որուն ետեւը կը սարփուին սուտի եւ մահուան սադայէլական գաւեշտները:

- Ես համաձայն եմ ըսածներուդ, բայց գիտեմ, որ ո՛չ մէկ ուժ կրնայ ֆանդել մամոնայի ամրակուռ բերդը եւ վերջ դնել փերեզակներու հիմնած դրութեան: Պէտք է համակերպիլ կամ անձնասպան ըլլալ:

Կամ պայքարիլ՝ առանց

խտրութիւն դնելու միջոցներու միջեւ: Մէկ խօսքով՝ բռնամիտն դէմ գործածել անոր գէնները, անոր ռազմավարութիւնը...

Լոյսի փունջեր կը ծփային ուկրաինական վրայ ու կը զարդարէին գիշերուան փէշերը: «Թոռնա ա Սոռիէն-թօ» թաւշային եւ կարօտաբաղձ մեղեդին կը սփռուէր ջուրերուն վրայ, բայց այս ծովը Միջերկրականը չէր եւ դիմացի կողմերը չէին կոչուեր Իսփա կամ Գափրի:

- Մե՛նք՝ հայերս, - ըսաւ Հերրի, - վաչկատուն եւ նստակեաց ցեղախումբերու խառնուրդ մըն ենք, այդ պատճառով, հակառակ մեր թիւին, չենք ունեցած մեծ ոստաններ, ինչպէս Նիւուէ, Բաբելոն, Անտիոք կամ Տիգրոն: Ու գաղթած ենք ըստ բախտի եւ ըստ կարելիութեանց՝ ֆանի մը հազար այստեղ, ֆանի մը հարիւր այնտեղ: Ո՞ւր են այսօր Լեհաստանի հայերը, ո՞ւր են Հնդկաստանի, Պուկարիոյ եւ Ռումանիոյ հայերը: Եւ ի՞նչ կ'ընեն մեր ղեկավարները այս ազգակործան յորձանքին առաջը առնելու համար. գրեթէ ոչի՛նչ: Մեր ղեկավարները միշտ ուշ մնացած են եւ փոխանակ կանխելու եւ առաջնորդելու զանգուածը՝ հետեւած են անոր:

- Իրաւունք ունիս, հայ ժողովուրդը միշտ նմանած է ոչխարներու հօտի մը, որուն հովիւը կը ֆնանայ եւ երբ արթննայ՝ կը վազէ հօտին ետեւէն: Բայց արդէն հօտը ցրուած ու կորսուած կ'ըլլայ: Միջին-Արեւելքի վերջին դէպքերը այս ասիւններուն վրայ հարիւր հազարաւոր հայեր նետելով կասեցուցին կորստեան եւ ձուլման հոլովոյթը, բայց ֆանի՞ տարուան համար: Այդ նորեկները երբեմն շատ աւելի արագ կը ձուլուին, քան հինէն եկածները: Անոնք մեծ փութկոտութեամբ եւ մեծ հանդիման կը հրաժարին իրենց անցեալէն եւ ինքնութենէն, ծիծաղելով հայ մնալու մեր յամառութեան վրայ:

- Բայց այն ատեն, ի՞նչ պիտի ըսենք այն միլիոնավոր նահատակներուն, որոնք կը սպասեն, որ իրենց զաւակները «դայիմ պահեն իրենց հաւատքը» եւ արժեւորեն իրենց արիւնով գրուած կտակը: Ինչո՞ւ մեռան անոնք, եթէ մենք այժմ դիւրութեամբ պիտի դժէիմք մեր ուխտը: Ինչո՞ւ այսպանել այն հայերը, որոնք արհաւիրքի օրերուն կրօնափոխ եղան՝ փրկելու համար իրենց կեանքը եւ ինչքերը: Այսօր արհաւիրք չկայ, կեանք եւ ինչքեր փրկելու հարց չկայ, բայց հայութիւնը նահանջի մէջ է եւ եթէ այսպէս շարունակուի, քանի մը տարիէն հայերէնը պիտի դառնայ մեռած լեզու մը եւ հայերէն կարդալու համար պէտք պիտի ըլլայ դիմել գերեզմանաբերուն:

Ով կ'իյնայ իսրայէլէն է՝ մարգագետնի մը պէս, որուն ծաղիկները լոյսի փունջեր էին, իսկ քաղաքը դարձած էր լոյսերու ովկիանոս մը, որուն բոցավառումը կը խափանէր երկինքի աստղերը:

- Գիտե՞ս որ ամբողջ աշխարհը հիացումով կ'արտասանէ այս քաղաքին եւ այս նահանգին անունը եւ կը նախանձի անոր բնակիչներուն, - ըսաւ Հերրի:

- Մեր պարագան տարբեր է: Եթէ աշխարհին համար այս նահանգը կը ներկայացնէ երազային էլտորատոն, կորսուած դրախտը, մեզի համար ան կը նշանակէ «վերջին հանգրուանը»:

Հերրի չպատասխանեց: Իր քարեկամին անձկութիւնը սկսած էր գինք ալ վարակել: Մէկ ումպով պարպեց գինիի բաժակը:

Ճաշարանը գրեթէ ամայացած է: Հերրի ապսպրեց նոր շիշ մը:

- Ճիօրնիօ՛, ըսաւ Հերրի, - գինիդ պատուական է, բայց մեզի տխրութիւն պատճառեց:

- Ձեր խօսակցութիւնը չհասկցայ, բայց գիտեմ, որ հայերէն է: Երբ երկու հայեր իմ քովի գան, կը խօսին իրենց

հայրենիքի մասին: Մի՛ մոռնա՛, որ գինին ձեր ազգային ըմպելիքն է եւ ձեր մէջ կարօտ կ'արթնցնէ: Ճիշդ է, որ այս գինին իտալական է: Եթէ խմած ըլլայի՛ք ֆրանսական, սպանական կամ նոյնիսկ ամերիկեան գինի, արդիւնքը նոյնը պիտի ըլլար, որովհետեւ աշխարհի բոլոր գինիները ձեր հողէն բան մը կը պարունակեն: Խաղողին հայրենիքը Հայաստանն է: Նոյն նահապետ, երբ դուրս ելաւ տապանէն, գինին պատրաստեց այդ հայկական խաղողէն:

- Ուրեմն խմե՛նք Հայաստանի եւ բոլոր հայրենիքներու կենացը: Խմե՛նք կենացը այն բոլոր մարդոց, որոնք կ'ապրին իրենց հայրենիքէն հեռու եւ խմե՛նք կենացը այն բոլոր հայերուն, որոնք Արարատ մը կը պահեն իրենց սրտին մէջ:

Խմեցին:

- Ճիօրնիօ՛, գիտեմ որ գիշերը քաւական յառաջացած է, եւ դուն ալ հանգիստի պէտք ունիս: Կը խնդրեմ, որ այդ իտալական գեղեցիկ երգերէն ետք, քանի մը հայկական երգ ունկնդրենք:

Ու Հերրի, գրպանէն հանելով քաւէք մը, տուաւ նաշարանապետին, որպէս զի զայն գետեղէ ձայնասփիւռ մեքենային մէջ:

Արմէն՝ զարմացած, կը նայէր քարեկամի երեսին:

- Ջարմանալի բան չկայ, - ըսաւ Հերրի ժպտելով, - այս քաւէքը միշտ հետս կը պտտեմք: Սայաթ-Նովայի երգերն են: Ո՞ր մէկ հայը չի սիրեր Սայաթ-Նովան, ո՞ր մէկ հայը «Հայր մեր» մը չ'ըսեր քննալէ առաջ:

Ու աշխարհի մեծագոյն ովկիանոսի փին հնչեց երկու դար առաջ եկեղեցիի մը մէջ նահատակուած հայ աշուղին երգը.

«Դուն էլ գլխէն իմաստուն իս»...

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԻՈՒՏԵԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՌԸՆՉՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Իտալացի կոմպոզիտոր, իտալական վիպաշտական ոպերային դպրոցի ներկայացուցիչ, *bel canto* արուեստի վարպետ, երաժշտական թատրոնի փայլուն գիտակ, Գաետանոյ Դոնիցետտին (1797-1848) Վինչենցոյ Բելլինիի մահից յետոյ (1835) գլխավորեց իտալական օպերային դպրոցը (Ջոակինոյ Ռոսսինին օպերային կոմպոզիտորի իր կարիերան ավարտել էր դեռևս 1829ին՝ «Վիլհելմ Թելլ»-ով): Ընդհուպ մինչև 1840-ականների կեսերը, մինչ Վերդիի առաջին յաղթարշաւը նա, իրաւամբ, համարոււմ էր ազգային երաժշտական թատրոնի անգերազանցելի վարպետն ու խոշորագոյն հեղինակութիւնը:

Դոնիցետտիի հեղինակած 74 օպերաներից մեզ՝ հայերիս համար, առաւել թանկ ու հոգեհարազատ է «Պոդիկտոսը», որի իրադարձութիւնները ծաւալոււմ են Գ. դարում, Հայաստանում: Աւելորդ չենք համարում նկատել, որ Դոնիցետտիի աւագ եղբայրը՝ իտալացի դիրիժոր, մանկավարժ ու կոմպոզիտոր Ջուզեպպէ Դոնիցետտին (1788-1856) 1828 թուականին հրաւիրուել էր Կ. Պոլիս եւ նշանակուել սուլթանական արքունիքի գլխավոր երաժշտական ղեկավար, երաժշտութիւն դասաւանդել տեղի երաժիշտներին, կազմակերպել Թուրքիայում եւրոպականացուած առաջին զինուորական նուագախումբը: Գաետանոյ Դոնիցետտին «Պոդիկտոսն» ստեղծել է ֆրանսիացի դրամատուրգ Պիեռ Կոռնելի (1606-1684) «Պոլիեկտ» ողբերգութեան հիման վրայ, որը գրուել է 1641-42 թուականներին: Պիեռի հիմնում ընկած են 16րդ դարի

քիւզանդացի պատմաբան Սիմէոն Մետաֆրասթէսի «Վարք սրբոց» աշխատութիւնը եւ կարդինալ Ցեզար Պարոնիուսի «Եկեղեցական նոթերը»: Ըստ Կոռնելի, «Պոդիկտոսը ապրել է 205 թուականին, հայ էր... Նա պատուեց կայսեր հրամանը, փշրեց կռուների արձանները, որոնք, հայերի կողմից պաշտուելու համար զետեղոււմ էին պատուանդանների վրայ... Չանսալով իր կնոջ պաղատանքներին, աներոջ խնդրանքին՝ վերդաւնալ հնոց հաւատքին», Պոդիկտոսը ընդունեց քրիստոնէութիւնը, ենթարկուեց հետապնդումներին եւ, ի վերջոյ, տանջամահ արուեց հէնց աներոջ կողմից: Իրադարձութիւնները ծաւալուել են Միլետա՝ մեզ յայտնի Մալաթիա քաղաքում:

Դոնիցետտին օպերան գրեց 1838ին. մէկ տարի անց գրաւնութիւնն արգելեց «Պոդիկտոսը»՝ կոմպոզիտորը մեկնեց Փարիզ: Փարիզում, 1840ին, *Grand-Opera*-յում բեմադրուեց օպերան՝ «Նահատակները» (*Les Martyrs*) վերնագրով, նոր խմբագրութեամբ: Հայրենիքում «Պոդիկտոսը» բեմադրուեց միայն 1848ին՝ Նէպոլի «*San Carlo*» թատրոնում:

Իտալական պրեմիերայից 130 տարի անց (1978), Խորհրդային Միութեան ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարեանի խնդրանքով Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Առաջինը «Պոդիկտոսի» պարտիտուրը ստանալու նպատակով քանակցութիւններ է սկսում իտալական նոտային գրադարանի հետ: Շուտով պարտիտուրը հասնում է Հայաստան.

1993 թուականի յուլիսի 17ին երեւանի Ալ. Սպենդիարեանի անուան օպերայի եւ րալետի թատրոնում Հայաստանի Հանրապետութեան ժողովրդական արտիստ Տիգրան Լեւոնեանի բեմադրութեամբ տեղի ունեցաւ «Պողիկտոսի» հայկական պրեմիերան՝ ձօնուած Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700 ամեակին: Վերածնունդ «Պողիկտոսը» հէնց հայոց հողում: 1996ին Հայկական մշակոյթի օրերի շրջանակներում Դոնիցետտիի սակաւ յայտնի այս օպերան ներկայացուեց Մոսկուայի «Մեծ թատրոնում», որին յաջորդեցին օպերային թատրոնի հիւրախաղերն Իսպանիայում 1998ի ամրանը. Դասական արուեստի միջազգային հնագոյն անտիկ ամֆիթատրոնի տարածքում 2 օր անընդմէջ ներկայացուեց «Պողիկտոսը»: Մամուլի գնահատմամբ «ներկայացումը դարձաւ փառատօնի մեծ աստղը»:

Օպերայի լիբրետոյի հեղինակն էր Սալվատորէ Կամմարանոն. նրա անուան հետ էր կապուած Դոնիցետտիի լաւագոյն գործերից մէկի՝ «Լուչիա դի Լամբրմուր» օպերայի ստեղծումը, որը բեմադրուեց 1835ին Նէապոլում: Յատկանշական է, որ լիբրետիստ Կամմարանոն համագործակցել է նաեւ Վերդիի հետ. համագործակցութեան շնորհիւ լոյս աշխարհ եկան «Ալզիրա» (1845, Նէապոլ, San Carlo), «Ճակատամարտ Լենյանոյի մօտ» (1849, Հոմ, Argentina), «Լուիզա Միլլեր» (1849, Նէապոլ, San Carlo) օպերաները: Վերդիի եւ Կամմարանոյի վերջին համատեղ աշխատանքը «Տրուբադուրն» էր, որի ստեղծումը ձգձգուեց Լեբրետիստի հիւանդութեան պատճառով. անաւարտ թողնելով լիբրետոն՝ Կամմարամոն յանկարծամահ եղաւ 1852ի ամրանը:

«Տրուբադուրը» բեմադրուեց Հոմում 1853ին: Պատահականութիւն էր արդեօք, թէ՛ զուգահէյտութիւն, որ 1864թ. օգոստոսին Պետերբուրգում լոյս տեսաւ օպերայի հայերէն կլաիւրը՝ Յովհաննէս Սահրատեանի թարգմանութեամբ: Միւսայէլ Նալբանդեանի շնորհիւ (նա էր խորհուրդ տուել Սահրատեանին թարգմանել օպերան եւ հետամուտ եղել մինչեւ վերջ) երեւան եկաւ հայկական առաջին թարգմանչական օպերան՝ իր պրեմիերայից ընդամէնը 11 տարի անց:

1859ին, յընթացս եւրոպական իր շրջագայութեան, Մայնի Ֆրանկֆուրտում Միւսայէլ Նալբանդեանը (1829-1866) գրում է «Իտալացի աղջկայ երգը» քանաստեղծութիւնը՝ ձօն առ իտալական ժողովրդի ազատագրական պայքարը: Իտալացիներն իրենց ազգային դրօշը պարգած՝ նետում են մարտի դաշտ, կործանելու աւստրիական շղթաները: Իտալիայի ազատագրումը ձեռք է բերում նրա որդիների արեամբ, եւ քանաստեղծը երազում է այն պահը, երբ նրանց խանդավառութեան կէսը կամ գոնէ կէսի կէսը՝ կ'երեւար եւ հայերի մէջ: Նա կշտամբում է հայերին եւ քաջալերում միաժամանակ.

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի.
Բայց երանի, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի:

Իտալական ազատագրական շարժումները հնարաւորութիւն տուեցին քանաստեղծին՝ իր ժամանակակիցներին եւ հետագայ սերունդներին հաղորդել ազգային-ազատագրական պայքարի այս պայծառ աւանդը:

Յատկանշական է, որ այս քանաստեղծութիւնն էլ ընկած է ներկայիս Հայաստանի հանրապետութեան պետական օրհներգի հիմքում: 1907ի յուլիսին Կոմիտասն (1869-1935)

Արշակ Զօպանեանի ընկերակցութեամբ այցելում է Սուրբ Ղազար՝ Վենետիկի ձեռագրատանը մասնագիտական ուսումնասիրութիւններ կատարելու նպատակով: Միֆթարեան միաբանութեան դահլիճում եւ Մուրատ-Ռափայէլեան վարժարանում կոմիտասը դասախօսութիւններ է կարդում հայ ժողովրդական- եկեղեցական երաժշտութեան մասին՝ զուգահեռաբար երգերի կատարմամբ հաստատելով իր տեսական դրոյթները: Բանախօսութիւններից ստացուած հիացական տպաւորութիւնները գետեղուել են «Բազմավէպի» յուլիս-օգոստոսի համարում «հայկական երաժշտութիւնն ի Վենետիկ» վերտառութեամբ յօդուածում:

Զ. Վերդիի մահուան քօթից ցնցուած կոմիտասը գրում է «Յովսէփ Վերդի» յօդուածը (1904, «Տարագ», Թիֆլիս)՝ տալով մարգարէական

գնահատականներ. «Վերդին ոչ միայն անցեալի երաժիշտ է, այլեւ ապագայի: Նա նուագերգութեան պատմութեան մէջ գրաւում է մի ընդարձակ տեղ»:
«Վերդին մեռաւ: Իտալական երաժշտութիւնն անժառանգ մնաց», - եզրափակում է իր յօդուածը կոմիտասը:

Յաւարտ խօսքիս փափաքում եմ, որ դարերի պատմութիւն ունեցող հայ իտալական երաժշտական կապերը հետզհետէ է՛լ աւելի սերտանան ու ամրանան, քանզի քաղում են ընդհանրութիւնները մեր եղբայրական ժողովուրդների նախատաքում, պատմութեան մէջ եւ մշակոյթում: Լիալիյս եմ, որ դեռ մենք քաղում առիթներ կ'ունենանք համատեղ մշակութային ծրագրերի իրականացման, քաղմաշերտ, եւ քաղմարնոյթ համագործակցութեան համար:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐԵԱՆ

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

Ինֆնուօքեան հարցը Շ.Ռ.Պերպերեանի «Հուսկ Բանֆ»երի եւ մի շարք այլ հրապարակումներում Ա.

«Հարցում մը արդէն ատեններէ ի վեր խուլ կը խօսի ձեր մէջ եւ վաղը պիտի խօսի աւելի տիրաբար ու սարսէ ձեր ներսը. *ի՞նչ, ըլլալ, ո՞վ ըլլալ, որուն՞ն պէս ըլլալ...*»: * (1)

Այս խօսքերը սփիւռահայ իմաստասէրը, արուեստագետն ու մանկավարժը ուղղել է Պոլիսի Պերպերեան վարժարանի տարեկան հունձփին՝ մեծ կեանք մտնող Հայ պատանի աշակերտներին:

«Ի՞նչ ըլլալ, ո՞վ ըլլալ, որուն՞ն պէս ըլլալ...», սրանք ինֆնուօքին փնտռող ու կերտող մարդու հիմնահարցերն են, որոնց լուծման առաջնորդում է Շ. Պերպերեան իմաստասէրը: Բնական է հեղինակի «Հուսկ Բանֆ»երը եւ միւս գրութիւնները որ յիշատակելու ենք այստեղ կենդանի խօսքեր են, հոնտորական, կրթական նաւոր են կամ դասախօսութիւններ, նախատեսուած աշակերտներին եւ ժողովրդի գաւազան խաւերը ընդգրկող ունկնդիրների համար, որի նպատակը նախ լուսաւորչական եւ ուսուցողական է: Ուստի գործ ունենք բերանացի խօսքի հետ որտեղ կարելի չէ ծաւալուն ու համակարգուած իմաստասիրական վերլուծութիւններ գտնել, ամէն պարագայի այն արժանի է լուրջ ուշադրութեան: Եւ առաջին հերթին այն պատճառով, որ արդիական է, ունի իմաստասիրական եւ գրական-գեղարուեստական արժէք, ինչը որ Պերպերեանի գործերի մէջ ժամանակին նկատելի է Պերպերեանի գործընկեր, արեւմտահայ գրագետ ու գնահատ Յակոբ Օշականը: Վերջինս իր «Համապատկեր Արեւմտահայ գրականութեան» երրորդ հատորում խօսելով իմաստասէրի հօր՝ Ռեթէս Պերպերեանի, մասնաւորաբար նրա «Հուսկ Բանֆ»ի մասին, տողատակում գրում է. «Մենք ունինք Պերպերեանի տղուն, Շահան Պերպերեանի ֆանի մը հուսկ-բանֆեր: Ասոնց մէջ խորքը գեղեցիկ նմոյշ մըն է նորոգուած *հասարակ-տեղիքի*, ֆանի որ, ուզենք չուզենք, ստիպումին տակն ենք մեր խօսքը առնելու այդ շտեմարանէն: Բայց Պր. Շահան Պերպերեանի մօտ այդ խօսքը կ'ենթարկուի *որոշ նորոգման*, որ փաներորդ դարու իմացական մեծ *տիսիրիկներուն* յաճախանքովը կազմուած մտքի մը գործողութիւնն է: Անշուշտ հոգին չի փոխուիր: Բայց այդ հոգին տեսնելու, հասկնալու, բացատրելու կերպարը կը մնայ ենթակայ մնայուն շրջափոխման մը: Իր իմացական սնունդը 1840-50ական բարեխառնութենէ մը նարած (ֆրանսացի ռոմանթիկները, Քուզէնը իր ընտրողական իմաստասիրութեամբ. - *բարին, նշմարիտը, գեղեցիկը* սին տարազներով, քիչ մը գոիցեցրիական մանկավարժութիւնն ու դպրոցներու մէջ դասախօսելի իմաստասիրութիւն) Ռեթէս Պերպերեան մեր հրապարակին վրայ չէ իրագործած ոչ մէկ նորոգում: Տղան նոյն նիւթերը անցուցած արդի, բոլորովին նոր մտաւորական ձգտումներուն ցանցէն: Արդիւնքը՝ վնասական է: Կը կարդանք Պր. Շահանի խօսքերը ու կը մտածենք, ինչպէս ինք մտածեր էր գտնուէ: Կը կարդանք Ռ. Պերպերեանի խօսքերը եւ կ'անցնինք անդին»(2):

Յայտնի է թէ սփիւռում հայ վարժարանի մէջ տարուող հայապահպանման կամ նոյնիսկ կարելի է որոշ պարագաների ասել հայացման տիտանական աշխատանքը կարող է արդիւնաւորուել միայն այն դէպքում, երբ ուսանողները գիտելիքների, հայերէն տարուող կրթութեան, հմտութիւնների հետ միաժամանակ ձեռք բերեն ազգային գիտակցութիւն:

Ազգային վարժարանը ինքնաբարձր մի վայր է, որտեղ արիւնով՝ ծագումով հայ աշակերտը հաղորդուելով ինքնահասկացողութեան տուեալներին՝ մայրենի լեզուին, պատմութեան, հարազատ մշակոյթին, կերտում է ի՛ր հայ, ազգային ինքնութիւնը: Նա զգացական ու ժառանգական հայութիւնը փոխկերպում է գիտակցական հայութեան:

Ազգային ինքնութեան ստեղծումը ու վերաստեղծումը հայ վարժարանում սկզբնաւորուող բայց չվերջացող մի ընթացք է, արարման, զարգացման յաւատե շրջան: Իր իսկ ինքնութեան արարիչ մարդը, կեանքի ընթացքին ենթակայ է բազմաթիւ փոխակերպումների, այլակերպումների, նորաստեղծումների

մինչև որ հասնի նրա՞նի ու ոգիի ներդաշնակութեան, անհատի ու ամբողջի՝ տիեզերականի համակեցութեան ու զառնայ «Յաւերթական Կենդանութիւն»: Այսինքն ինքնութիւնը անցնում է Եւ-Մենք-Յաւերթ նաճապարհը:

Պերպերեանի մօտ ինքնութիւնը՝ «ինքզինք» լինելը ստեղծագործական լինելութիւն է, արարումի անընդհատ (պրոցես)՝ գործընթաց, մի տեսակ «Կեանքի Արուեստ» կամ կարելի է սակ նաեւ տեսութիւն: Պերպերեանական «Կեանքի Արուեստ»ում մարդը ինքնախնայակցմամբ՝ գիտակցելով ու մեկնաբանելով «ինքզինք», աստիճանաբար հասնում է ստեղծագործութեւ՝ Ես-ի: Այժմ Սոկրատեսի «ծանր գեղեցիկ» ստանում է նոր արակ, այն է՝ ճանաչի՛ր, որպէսզի ստեղծես քեզ:

Արուստի սեջ մարդու արարման ճիգով ծնում է գեղեցիկը, իսկ մարդու ինֆուսեան կերտումով յայտնում է բարին: Այդ կեանքի քնական ինֆնադրսերումն է, եղափոխութեան՝ «էվոլյուցիայի պրոգրեսիւ» շարժումը: «Կեանքի Արուստա»ում գեղեցիկը հանդէս է գալիս բարիքի հետ միաձույլ, իսկ բարիքը մարդու համար ոչ այլ ինչ է քէ է «ինֆիկիմ» լինել: Նրբ դրուած է ինֆուսեան խնդիրը, կարելի է ասել թէ սկսած է եւ նրա կերտումը:

Իմաստասերը հարցը բաժանում է երեք մասերի՝ հանգրուանների, ու իր աշակերտների եւ հիմա ընթերցողին, այսինքն կեանքի արուեստագետին պարզապես առաջարկում է կատարելու ընտրություն: Ինքնուրուիւնը այստեղ հանդէս է գալիս որպէս ընտրողական տուեալ, թէւ բնագանցօրէն նախապէս տրուած, բայց լոկ որպէս հնարաւորութիւն եւ այն՝ «ի սկզբանէ եղող Բանին ցոյլը մեր մէջ» որ հարկ է իրագործել: Նախապէս տրուածութիւնը պէտք է հասկանալ որպէս թէ ծրագրուած ու նախատեսուած, այլ հենց հնարաւորութիւն, հակառակ պարագային կեանքի արուեստագետը՝ մարդը, ստեղծագործից կը վերածուի արհեստաւորի, անընդհատ գործ ունենալով մամուլութիւնների ու կրկնութիւնների հետ: Եւ-ը ինչ որ առումով այստեղ փորձառական սկզբունք է:

Ուղեցոյց հարցումները հետեւեալներն են.

1. «Ի՞նչ ըլլալ»– այս վերաբերում է անհատի ապրելակերպի, նկարագրի յատկութիւններին: Կենսաւոր, առարկայական Նս-ի հարց է: Այստեղ ընտրութիւնը կատարւում է անլի գգացական-իմացական հարթութեան մէջ, ասեմք այսպէս՝ մարդուն դիտում ենք ներքեւից:
2. «Ո՞վ ըլլալ»– այս հարցը ուղղուած է ենթակային, Նս ինքնագիտակից հոգեւորին: Անհատի ինքնութեան հարցն է: Նս-ը ձեռք է բերում հոգեւոր տարածք, նա գործում է ներքին փորձառութեամբ: Այժմ մարդ-սուրբկտին դիտում ենք վերեւից:
3. «Որտե՞ղ պէս ըլլալ»– հարցադրում կարելի է կառուցել եւ այսպէս, թէ ի՞նչ սեռի եւ տեսակի պատկանելիութիւն ունեմ ես: Սա ազգային, էթնիկական ծագման՝ Մենքի հարց է որն ի վերջոյ վերածւում է տիեզերական հարցի: Մարդը ներհայեցողութեամբ, յայտնատեսութեամբ. բարձրանալով ու ծաւալուելով ազգային գիտակցութիւնից վեր, ինք իրեն տեսնում է որպէս երկնափառաբացի: Մարդը երեւում է իր ողջ հասակով:

Ինչպես պիտի տեսնենք՝ Պերպերեանի եռասուինն իննուերկու արուեստագիտական առարկայ է, ուստի պահանջում է արուեստագիտական մօտեցում։ Չենք սխալուի, եթէ ասենք թէ հայ իմաստասէրը իննուերկուը նկատում է որպէս աստուածանալու արուեստ, ուր քնականաբար մարդ անցնում է նախ մարդացման պրոցեսը։ Նա թէ՛ արարման ճիւղն է եւ թէ՛ վայրը։ Ուրեմն մարդը սահմանային էակ է։ Համահունչ է Նիչիի մարդ-կամուրջ նկատողութեանը, սակայն գերմանացի իմաստասէրը կոչում էր յաղթահարելու մարդը, իսկ Պերպերեանը առաջարկում է արարել։ Հայ իմաստասէրը ինչպէս եւ մարդը, իսկ Պերպերեանը առաջարկում է արարել։ Հայ իմաստասէրը ինչպէս եւ Նիչիէն այս առումով խորհրդապաշտ է։ Շահան Պերպերիանի նկարագրած մարդը ինքնաբարբառու է, կեանքի արուեստագետ ու արուստի ինքնաստեղծ մի գործ։ Մարդը երգ է, կեանքի պարը ու «Յանբաժական Կենդանութիւն»։

Մարդը անընդհատ այլափոխությունով պետք է ինքնադարձի, նրա միակ ձգտումը կոսմոպոլիտն է՝ Յաներթը: Իսկ Յաներթին մերձենալու և միանալու կարելի է միայն նախ մտերմանալով «ինքզինքի» հետ: Տիեզերքի նամբան անցնում է մարդու միջով: Եթե անշուշտ այդպիսի նպատակ դրուած է մեր առջեւ՝ ձգտում դէպի աստուածամարդ, դէպի երկնափառափառութիւն: Ժամանակակից արեւմտեան մտածողութիւնը, Յաներթին կամ երկնափառափառութեան նկրտող մարդուն փոխարէն, դրել է պարզապէս մարդը, այնպիսին ինչպիսին որ կայ՝, չափազանց երկրային, լիովին թեքնաբանացուած «մեքենայ-մարդեր», նոյնական, միատեսակ, խախտուած, կորած աւանդութիւններով, յանախ ապագայանացուած, կապուած ժամացոյցային ներկային, օտարացած ինքն իրենից, անզգայացած ու անզգամացած: Պէտքեանական ինքնութիւնը երբեք շփոթելի չէ նոյնութեան, միատարութեան, համասեռութեան միանշանակութեան հետ: Մի խօսքով նոյնութիւնը հենց ինքնութեան չգոյութիւնն է (նիշտ կը լինի եթէ ասեմք «ոչ ինքնութիւն» է որովհետեւ ինքնութեան զրօ չի կարող լինել): «Ոչ ինքնութիւնը» Պէտքեանը գնահատում է որպէս նոյնութիւն, միադէմութիւն՝ ամէն բան և ամէն ոք հաւասարեցնող: Եւ ահա այս միանշանակ մարդկանց արհեստական որակին ապարդիւն փորձ է կատարում երջանկացնել: Բայց համահարթեցուած մարդը կարողանում է միայն ուրախանալ եւ ընդամենը ժամանակի որոշակի պահերին սոսկ գոհունակութիւն ապրել: Սա ապերջանկութիւն է: Ըստ Պէտքեանի իրաւ երջանկունակը ինքնա-արարող արուեստագէտ մարդն է, նա որ անընդմէջ անցնում է այլակերպութիւնների տառապանքի միջով: «Ինքզինք» լինելն է իրաւ երջանկութիւնը եւ «ԲԱՐԻՔԼ»: «Ինքզինք» լինելու երջանկութեան զգացումը «ստատիկ» վիճակ չէ այլ շարժում, կատարելագործում, բարութում, եթէ ոչ պիտի լինէր չիմաստաւորուած:

Ինքնութիւնը այլափոխող, արժէք է, որտեղ կենսաւոր մարդը սկզբնական տուեալն է, իսկ երկնափառափառ մարդը՝ աստուածացուածը, կամ այսպէս ասած Յաներթին ընձիւղուածը, վախճանական: Ըստ որում վախճանը եւ կամ այստեղ կարելի է ասել նպատակը աւարտ չի ենթադրում, ինքնութիւնը անվերջ մեծի ձգտող արժէք է: Այն յաներթ է ինչպէս արուեստի ցանկացած գործը: Եւ մենք գտնում ենք անընդհատ ինքնաստեղծման մէջ, ուստի ապրում այլակերպումների մի ամբողջ ու անընդհատ շրջան: Ինքնադարձումը մարդու գոյութեան կերպն է՝ գոյգէ՝ միակ կերպը: Մարդ ամէն ակնբարբ ձգտում է դառնալ այնպիսին ինչպիսին տակաւին չի եղել: Նա հոսում է:

Բոլոր մարդիկ ի բնէ կամենում են աստուածանալ, ուրեմն եւ արարել: Հետաքրքրական է, որ Պէտքեանը մարդուն դիտում է ոչ թէ ժամանակի փրիստոնէական մտածողութեանը յատուկ տեսանկիւնով, որ է փրկուող մարդ, այլ իրրեւ արարուող մարդ: սակայն խորքի մէջ արարումը ինքնին փրկութիւն է ենթադրում, անցում ժամանակաւորից դէպի յաներթութիւն:

Հիմա՝ «Ի՞նչ ըլլալ»՝ լինել կեանքի արուեստագէտ, վերջինիս հարազատ բոլոր յատկութիւններով, այսինքն ունենալ արուեստագէտի խառնուածք, լինել ստեղծագործ նկարագրով մարդ, վարել ինքնագիտակից կեանք: Ինքնութիւնը մարդու ստեղծագործ կամքի արդիւնքն է: Ուրեմն «ո՞վ ըլլալ»՝ լինել արարիչ: Սեփական «Ես»ը գիտակցում է իրեն որպէս ստեղծագործող: Դեկարտեան «*cogito ergo sum*» սկզբունքը դառնում է՝ «արարում եմ ուրեմն կամ» սկզբունքի, եւ արարումն ու միտքը համընկնում են: Պէտքեանը ստեղծագործող սուրբկտի՝ ենթակայի տակ տեսնում է ինքնագիտակից եւ ստեղծագործ «ինտուիցիայով», յայտնատեսութեամբ օժտուած մարդուն: Հետեւելով հեղինակին կարելի է եզրակացնել, թէ ինքնութիւնը աւելի է բան ինքնագիտակցութիւնը ու գիտակցութիւնը ընդհարապէս: Ինքնութիւնը ինտուիտի՝ յայտնատեսութեամբ ըմբռնուող մի տեսակ կոչումային՝ քնազանցական տուեալ է, սակայն որը պէտք է տակաւին իրագործել: Մարդը ամեն պարագայի ազատ է իրագործելու, հետեւելու իր կոչմանը, հնարաւորութիւնը իրականութիւն դարձնելու եւ կամ ոչ:

«Ի՞նչ ըլլալ, ո՞վ ըլլալ...: Հարցուցէք այդ՝ արուեստագէտին, երբ պատրաստ է ստեղծագործութեան:

- Ինճգինքս ըլլալ: Ըլլալ իմ ա՛յն Եսս ուր կը խօսի Յաւերժական Կենդանութիւնը... Այսպէս պիտի տայ իր պատասխանը»: (էջ 210)

- Մարդու վարքը պէտք է նմանուի արուեստագետի գործելակերպին, քանի որ իւրաքանչիւր անձ իր «արարքներուն արուեստագետն» է: Իր ինքնութիւնը կերտող անհատը նմանակն է գեղագիտական արժէքներ ստեղծող արուեստագետ-մարդու: Նա կեանքը ապրում է ստեղծագործարար- այս արուեստագետ մարդու վարքագիծն է, ներկայութիւնը աշխարհում: Մարդու մէջ առկայ է կամք առ ինքնաբարձրում, ինչպէս ցանկացած արուեստագետի մօտ կամք առ արարում: Կամքը այս պարագային բացառում է պատճառահետեւանկային կապը: «Ինճգինք»ութիւնը վեր է դետերմինիզմից: Մարդը ինքն է կամենում, թէ «ինչ ըլլալ, ով ըլլալ», այդ մեր որոշումն է, մեր ընտրութիւնը, մեր ստեղծագործ ներգործումը: Ինքնութիւնը ուղղուած է դետերմինիզմից դուրս, ինչ որ առումով դուրս ժամացոյցային ժամանակից տարածքից- կեանքի արուեստագետ մարդը ապրում է, կամ աւելի ճիշտ իր կեանքը կարգաւորում է «եքստրա-տալանտալ» ժամանակով: Սա աշխարհից փախուստ չէ, այլ աշխարհի արարում ներսից: Ռուս մտաւորական Մ. Մ. Բախտինը իր «Արուեստ եւ պատասխանատւութիւն» գործում գրում է, թէ արուեստը եւ կեանքը նոյնը չեն, քայց իմ մէջ պէտք է դառնան միեւնոյնը, ես պէտք է պատասխանատու լինեմ նրանց համար: Պէրպլեքսանի կեանքի արուեստագետ մարդը հենց այսպիսի մէկն է: Նման մարդը միաժամանակ ներկայ է կեանքի մէջ որպէս կենսաբանական էակ եւ ներկայ է արուեստի մէջ որպէս հոգեւոր:

Պէրպլեքսանը յորդորում է հետեւելու արուեստագետի ստեղծագործական պրոցեսին: Արուեստագետը սիրում է ստեղծագործութեան նիւթը, քանակաւորութեամբ ազդում նրա վրայ, ներշնչուած գործում է, ներքին անկեղծութեամբ, իր արուեստով խօսում է մարդկանց հետ՝ արուեստը ըմբռնողի հետ, դնում իր ինքնատիպութեան կնիքը, «իր ռեժ ստեղծագործման մէջ, ու այսպէս կը հասնի այլազանութեան եւ միութեան, մասնաւորութեան եւ տիեզերականութեան այն գերազանց կշռոյթներուն եւ ներդաշնակութիւններուն որ Գեղեցիկը կը կոչուին ու Կեանքին մարմնաւորումներն են Արուեստին պատկերներուն մէջ» (էջ 210):

Պէրպլեքսանի մեկնաբանութեամբ «ինճգինքնիս ըլլալ»ը կամ ինքնութեան կերտումը ստեղծագործական պրոցես է, ուր նիւթը մարդին ինքն է, ազդակը՝ սէրը: Այս կարելի է կոչել գիտակից մարդու ինքնակերտում, ինքնաբացա-յայտում, ինքնահրապոյծում, ինքնաներկայութիւն, անվերջ ինքնակայացում: Ինքնութիւն ունեցողը ինտեգրալ մարդ է հայեցող, նախադ, ստեղծող, գործող, արուեստագէտ: Պէրպլեքսանը իրաւացիօրէն ասում է թէ այսպիսին «Սիրոյ մարդ է»: «Սիրոյ մարդու» արուեստը ինքնաստեղծ արուեստ է: Իմաստասէրը ամփոփում է՝ մարդը իր ստեղծագործութիւնների շարանն է: Նման եզրա-կացութեան յանգել են նաեւ Սարտարը, «Կեանքի Արուեստի» փիլիսոփայութեան ջատագով Վիլիամ Շմիդը եւ ուրիշներ: Հայ իմաստասէրը իր հայեացքը ուղղում է դէպի ապագայ- մարդը ա՛յն է ինչ կամենում է լինել, նա իր արարումների շարքն է: Շահան Պէրպլեքսանի ուսուցիչ կեանքի տեսարան Անրի Բերգսոնը այս առթիւ իր խորհրդածութիւնները ձեւակերպել է հետեւեալ կերպ. «Եւ այնպէս, ինչպէս նկարչի տաղանդն է ձեւաւորում կամ ձեւափոխում, յամենայն դէպս փոփոխում իր իսկ ստեղծած գործերի ազդեցութեան ներքոյ, այնպէս էլ մեր վիճակներից իւրաքանչիւրն է մեզանից դուրս գալու պահին փոխում մեր անձը՝ լինելով այն նոր ձեւը, որ ինքններս ենք մեզ տուել: Ուրեմն, իրաւացի են նրանք, ովքեր ասում են՝ մեր արածը կախուած է նրանից, թէ ինչ ենք, քայց պէտք է նաեւ աւելացնել, որ մենք ինչ-որ չափով այն ենք, ինչ անում ենք, եւ որ մենք անընդհատ ստեղծում ենք ինքններս մեզ: Ի դէպ, մարդու կողմից իր սեփական անձի ստեղծումն այնքանով աւելի է ամբողջական, որքանով մարդ աւելի լաւ է խորհրդածում իր արածի շուրջ» (3):

Ուստի քաւական չէ կենսաւոր մարդու գոյութիւնն եւ գործունէութիւնը, պէտք է ստեղծագործել, որպէսզի դառնանք «ինճգինքնիս»: Ինքնութիւնը անհատի եւ նաեւ ազգի գիտակից, ազատ ընտրութիւն է: Պէրպլեքսանը այստեղ

ազատութիւնը դիտում է որպէս ստեղծագործելու, ինքնաարարելու ազատութիւն: Սա պատասխանատւութիւն ենթադրող Ազատութիւն է: Համկետեան «լինել կամ չլինել»ը, այժմ հնչում է «լինել կամ չլինել՝ ես», ունենալ ինքնութիւն, կամ ոչ: Մենք այս պարագային կանգնում ենք անխուսափելի ստեղծագործ ընտրութեան առջեւ, այն քիտում է մարդու ազատութիւնից: Մարդ ընտրողաբար զարգացնում է հնարաւորութիւնները, նա այլակերպւում է: Եթէ որոշուած է լինել, ապա «ինքզինք», արուեստագէտի այլակերպութիւններով հասնել ինքն ինքն: Ինքնութիւնը ինքնաստեղծուողն է: Պէրպէրեանի ձեռնարկած՝ արուեստագէտի այլակերպութիւնը. դա ինքնավերադարձող այլացումների շղթայ է: Նկատենք որ այլութիւնը բազմիմաստ բառ է, այստեղ գործածելու ենք իր դրական լծորդներով որպէս այլակերպութիւն, պայծառակերպութիւն, նորաստեղծում, արտայայտելով ես-ի մի նոր ուռնացած ինքնավերադարձ: Այլութիւն ինչ խօսք նաեւ տարբերութիւն է նշանակում, կամ ասենք հակադիր վիճակ ու հենց այս տարբերութիւնը մի հնարք է որով կերտում է ինքնութիւնը: Տարբերութիւնը յառաջ է գալիս ներգործականորէն որպէս կեանքի արուեստագէտի բարիք արարելու կամքի արդիւնք: Որպէս ինքնութեան հակաբեւեռ, ասելու ենք օտարում, հասկանալով անվերադարձ այլութիւն, անդառնալի այլո՞ւթիւն, կրաւորական վիճակ: Եւ ուրեմն հնարաւոր է՞ այլակերպութեան տարբեր ընթացք- այսպէս՝ դառնալ ուրիշ, այլոք անվերադարձ ինքնաօտարուել: Ո՛չ, այդ արդէն ո՛չ ստեղծագործական պրոցես է, գուրկ է պոզիտիւ զարգացումից, ուստի եւ վերջաւոր շարժում է ու մեր քննարկումից դուրս: Սա կեանքի արուեստագէտի ուղին չէ: Ցանկացած մտքի շարժում որ չի վերածուած «ինքզինք» ըլլալու ճիշդի, ստեղծագործական լինել չի կարող: Այդ սոսկ եղափոխութեան ռեգրեսիւ ընթացք է, չարիք եւ դատապարտուած մահուան: Պէրպէրեանը այլակերպութիւն (revelation) եզրը, ինչպէս նկատելի է, ընդհանրապէս գործածում է դրական իմաստով, ուստի կրկնուելով ասենք, որ յարմար նկատեցինք ինքնութեան չգոյութիւնը՝ «ոչ ինքնութիւնը», այստեղ պարզապէս պայմանականորէն անվերադարձ օտարում, կամ կրաւորական այլութիւն կոչել:*

«Հիմա՝ Ի՞նչ ըլլալ, ո՞վ ըլլալ. հարցնենք թող ձեզի:

-*Ինքզինքնիս* ըլլալ. մեր այն *եւր* ըլլալ ուր կը խօսի Յաներթական Կենդանութիւնը... թող ըլլայ ձեր պատասխանը:

Ու երբ *ստըր* ունենա՞ծ ձեր արարքներու նիւթին, *հաւատքը*, *ներշնչումն* ու *խանդավառութիւնը* եւ *ազատութիւնը* ու տեսակ մը վսեմ *խաղի անշահախնդրութիւնը* ձեր գործերուն, հօգը *կարգապահութիւն* եւ *քանականութիւն* պարտադրէ՞ծ ձեր ուժերուն, ամբողջական *անկեղծութիւնն* ու *ներքին քննականութիւնը* խօսի՞ք մարդերուն, պիտի հասնի՞ք դնելու *ձեր դրոշմը*, *ձեր ինքնատիպ կնիքը*, ձեր ոճը գործին մէջ, ու այդպէս պիտի հասնի՞ք *այլազանութեան* եւ *միութեան*, *մասնաւորութեան* եւ *տիեզերականութեան* այն գերազանց կշռոյթներուն եւ *ներդաշնակութիւններուն* որ **ԲԱՐԻՔ** կը կոչուին եւ Կեանքին մարմնաւորութիւններն են մարդոց Օրերուն մէջ»:(էջ210-211) «Ինքզինք» լինելը միանգամայն **«ԲԱՐԻՔ»** է եւ հոգեւոր արժէք: Պէրպէրեանի «ինքզինք ըլլալ»ու այս գեղեցիկ մեկնաբանութեան մէջ հետաքրքրական է «խաղ» բառի գործածումը, որը ըստ երեւոյթին ստեղծագործական փնտռութիւնի ձեւ է իր կարեւոր մի յատկութիւնով՝ որ է անշահախնդրութիւն: Խաղալ, մեկնաբանել իրենք ու երեւոյթները նորովի, ստեղծել նոր կապեր ու յարաբերութիւններ, փոփոխել արդէն եղածը, կամ մի ուրիշ խօսքով այլափոխել իրականութիւնը եւ ինքներս մեզ: Արուեստագէտը խաղում է իր ներսում ինչպէս մի մանուկ: Նա մանուկի նման անշահախնդիր է, քանի որ արուեստագէտի որոնածը տնտեսական, նիւթական շահը չէ՝ այլ գեղեցիկը, իրեն ընկերակցող բարիով ու նշմարիտով միասին: Խաղը ոչ միայն առաջ է քերում գեղագիտական հաճոյք, վայելք, հոգեկան ուրախութիւն, այլ միեւնոյն ժամանակ սովորեցնում է կարգապահութեան ու քանականութեան- մի քան որ ժամանակին նկատելի էին արդէն ստոյլիկները, Արիստոտելը, Պլատոնը, վերածնունդի եւ քննականաբար մերօրեայ մի շարք մտածողներ: Խաղը դաստաւիրակելու, կրթելու միջոց է, իսկ կեանքի արուեստ-

տագետի խաղը ինքնակրթություն, ինքնանախադրություն և նրա միջով նանա-
չում արտաքին աշխարհի և երեւոյթների: «Ազատ խաղի նանաչառութեան
ընդունակութիւններին» կամ այսպէս ասած հոգեւոր ուժերի խաղի՝ երեւակա-
յութեան և բանականութեան, յաճախ անդրադարձել է Կանտը ի մասնաւորի
«Դատողականութեան ընդունակութեան բնագոյտութիւն» տրակտատում և Շ.
Պերպլեքսանը քաջածանօթ էր թէ՛ գերմանացի մեծ իմաստասերի և թէ՛
ընդհանրապէս իր ժամանակաշրջանի իմաստասիրական, գեղագիտական մտքին,
նրանց զարգացման միտումներին, ուղղութիւններին ու փաստօրէն կարողանում
էր դրանք համաձայնեցնել, հաշտեցնել իր աշխատանքների մէջ ստանալով
միանգամայն նոր գաղափարներ: Հայ իմաստասերի «Ժատօրէն» գործածած
ցանկացած բառ, կամ նախադասութիւն հատօրենքով ենթատեքստ ունի: Պեր-
պլեքսանը խաղում է, նա վերոյիշեալ տեքստում խաղում է հակադիր գաղափար-
ներով՝ «այլազանութիւն և միութիւն» «մասնաւորութիւն և տիեզերականու-
թիւն», և ներդաշնակում ի վերջոյ ունկնդիրին հասկացնելու համար, որ
«ինքնգիտման ըլլալ»ը այլազանութեան միութիւնն է, անփոփոխութեան փոփո-
խութիւնն է, միակութիւն է ընդհանուրի մէջ, տիեզերականութիւնը ընդգրկող
մասնաւորութիւն է: Ինքնութիւնը կարծես Պերպլեքսանի մօտ անտիեմփախան
բնոյթ ունի ուր ներդաշնակում են վերջաւորն ու յաւերժը, մասնաւորը և
տիեզերականը, ազատութիւնը և նախատգիրը, նախապէս տրուածը և
յեղաշրջուողը:

Յօդուածում Պերպլեքսանը «ԲԱՐԻՔ» բառը գործածում է որակելու համար
մարդ էակը: Ցանկացած մարդ «ինքնգիտմ», «ես» լինելու կարողութիւնը՝
պոտենցիալը ունի, վերջինիս իրագործումը՝ կիրարկումը, դառնում է «ԲԱՐԻՔ»
նրա համար, և ինքը մարդ՝ բարու «մարմնաւորութիւն» կամ «էացում»: Բարին
որակապէս նոյնացուած է գեղեցիկի հետ, թէ՛ բարին և թէ՛ գեղեցիկը կան «ըստ
ինքնան», «առարկայնօրէն» սակայն որպէս հնարաւորութիւն ու կարելիութիւն,
ուստի մարդանալու, յաւերժանալու համար անհրաժեշտ է իրագործել այդ
հնարաւորութիւնը: Մարդու համար գերագոյն «ԲԱՐԻՔ»ը «ինքնգիտմ» լինելն է՝
ինքնութիւն ունենալը: «ԲԱՐԻՔ»ը իրականացում է արարումով, ինքնա-
ստեղծումով, ներգործականօրէն ապրուած կեանքով: Մարդուն, ամեն մէկիս,
որպէս կեանքի արուեստագետ. «տրուած է ինքնգիտմ էացնել, կարողութեան
կատարքի անցնել» ասում է իմաստասերը «Արժէքաբանութիւն կամ Արժէքներու
իմաստասիրութիւն» դասախօսութիւնների շարքում և զարգացնում իր միտքը.
«Ամէն վայրկեան մարդ իր մարմնով կը ներկայանայ իրրեւ էակ մը. բայց իր
բուն հոգեկան անձնաւորութիւնը (որովհետեւ մէշտ ապագայ մը պիտի
դիմաւորէ) այդ վայրկեանին եկող ժամանակին մէջ պիտի դրուի ու շեշտուի
իրրեւ էութիւն: Հետեւաբար ամէն վայրկեան մարդ ինքնգիտմ պիտի իրագործէ
ներկային մէջ իրրեւ այնինչ մարդը: Ինչպէս որ ճշմարտութիւնը ինքնգիտմ կը
պարտադրէ մեր միտքին, այնպէս ալ *Բարին* իրրեւ իտեալ, գեղեցկութիւնը կը
ննշէ մեր կամեցողութեան վրայ և մեր կամեցողութիւնը, որ իրեն առարկայ
ունի բարին, չի կրնար մերժել գայն: Հետեւաբար մարդու բարին իր ճիշդ այդ
բնութեամբ իրագործումն է»(4):

Ցանկացած ինքնա-արարում բարոյական արժանիք ունեցող բայլ է:
Պերպլեքսանի իմաստասիրական բարոյականութիւնը սնում է մետաֆիզիկայից՝
Աստուծոյ, յաւերժի, սիրոյ, հոգու, խղի, երաժշտական ժամանակի՝ ներքին
տեւողութեան, արարչագործութեան գաղափարներից:

Քանի որ գեղեցիկն ու բարին փոխապակցուած արժէքներ են ու
հոգեւոր իրականութիւն. ուրեմն չկայ անբարոյ արուեստ, այնպէս չի կարող
լինել անբարոյ արարում և ինքնաարարում: «Ինքնգիտմ» լինելը բարոյական է:
Մարդ երբեք չի կարող ըմբռնել ու խորապէս հասկանալ, թէ ինչ է բարին և
կամ գեղեցիկը եթէ ինք չվերածուի արարչի, չդառնայ ինքնաստեղծուող-
ինքնակայացուող: Արարչագործելը, կատարելութեան ձգտումը մարդու կոչումն
է. հենց իրագործումը մեր մէջ «ի սկզբանէ եղող Բանին՝ ցոլի», կամ
աստուածային ի կարողութեան գտնուող տուեալի: Իմաստասերը վերոյիշեալ
«Արժէքաբանութիւն» դասախօսութեան մէջ, մեկնաբանելով «բարոյական
արժէքին բնութիւնը», մէկ անգամ եւս հաստատում է, որ «ինքնգիտմ» լինելը

մարդու բարձրագույն կոչումն է: Մարդկային կարողութիւններն ու ձգտումները, որ կազմում են մեր «հոգեղէն մարմինը» եւ «միւս կողմէ այդ բոլորը իր տակը առնող եւ անոնց ուժերը գործածելու կարող իմացականութիւն մը եւ այդ իմացականութեամբ զօրացած կարողութեան մը աղբիւրն է, որուն կ'ըսենք ՆՍ եւ որուն տրուած է ինձզինք իրագործել: Ամփոփելով իր միտքը, Պէրպէրեանը եզրակացնում է. - «Այսինքն մարդուն destinée-ն ինձզինք իրագործելն է եւ իրաւ իրագործել, կատարել հոգի մը ընել Աստուծոյ նման: Մարդ ինձզինքն Աստուծոյ նմանցնելու, Աստուծոյ կողմէ Աստուծոյ նման ստեղծուած ըլլալու գերազանց պատիւը, արժանաւորութիւնը ունի: Այդ պատուին արժանի ընել ինձզինքն իրեն տրուած է, որուն կ'ըսուի մարդկային արժանաւորութիւն: Արդ ամէն վայրկեանի մէջ ինձզինքն իրագործենք մեր արարքներով, մեր մտածման եւ ամէն կարգի սիրելութեան արարքներով: *Մեզմէ կը սպասուի մեր արարքներով բռն, կատարել մարդը ընել ինձզինքնին, մեր բոլոր արարքներու ներդաշնակութեամբ վաւերական, իրա՛ւ մարդը իրագործել մեր մէջ»* (5):

Ինքնութեան կերտումը ենթադրում է այլափոխութիւն, այլակերպութիւն, Պէրպէրեանը, ասում է նաեւ պայծառակերպութիւն: Իմաստասէրը նկատի ունի ստեղծագործական, ներկայ ու ներգործող ապրելակերպում, արարքների արուեստագիտական իմաստաւորում: Մարդը ստեղծագործաբար այլանում է՝ այլափոխում, ինչպէս կաւը արուեստագէտի ձեռքերում, ինչպէս մեղեդին երաժշտի արարումների մէջ, ինչպէս մարմինը պարաստեղծի յօրինուածքներում: Եւ իմաստասէրը իր թէ՛ գրաւոր, թէ՛ բանաւոր խօսքի մէջ ունկնդիրներին կոչել է կեանքը դարձնել երգ, մեղեդի. «գայն իմաստի մը մէջ հանելով ու իմաստի մը մէջ պայծառակերպելով» (6): Բայց իմաստից դուրս կրաւորական այլացումը արարում չէ, այլ սոսկ անդարձ օտարում, յետան, այս ոչ-ինքնութիւն է, կամ այլ կերպ ասած ինքնութեան չգոյութիւն է: Այդ պարագային գիտակից արուեստագէտը՝ «ինձզինքն» եղողը բացակայ է, եւ կա՛յ միայն կրաւորական այլոքը, անդառնալի օտարացումը, այլասերումը, փլուզումը: «Ինձզինքն» լինել նշանակում է ապրած օրերի երկվայրկեանների իմաստաւորում, իսկ չմեկնաբանուած արարքը, չիմաստաւորուած կեանքը, խախտում է մեղեդու բնական կշռոյթը եւ անհատը կորցնում է «ինձզինքն» ու այդ իսկ պատճառով դժբախտանում: Ինքնութեան կերտումը՝ նորաստեղծումը դա միաժամանակ իմաստի արարում է: Անիմաստութիւնը դժբախտութիւն է:

«Ինձզինքն» չլինելը, կամ ինքնութեան փայփայումը, անվերադարձ օտարումը՝ երբ այլեւս ոչ մի նոր բան չի ստեղծում, կեանքը դառնում է «տա-ռապագին բեռ մը»: Այլակերպուած կեանքն է սոսկ արժանաւոր՝ ապրելու համար, իմաստասէրը շարունակում է. «Այդպէսով է միայն որ կեանքը կը դադրի *կրուած բնութիւն* մը ու յաճախ տառապագին բեռ մը ըլլալէ ու կը դառնայ իրապէս *ներգործականօրէն ապրուած*, իրբեւ *արուեստի մը՝ կեանքի՝ Արուեստին*. գործ ստեղծուած բան մը»: Որովհետեւ կ'ըսէր. «*Իմացեալ՝ կեանքը միայն նշմարիտ կեանք է՝ ու կը դառնայ արժանի անմահութեան*» (7):

Այս պարագային չկայ մինչեւ իսկ մահուան վախը՝ անակնկալ կորչելու սարսափը, որովհետեւ մեր «ընդհատուած լինելութիւնը» կանգնում է «յաւերժութեան դիմաց» որպէս Շուպէրի մի «Անուարտ համանուագ»: Պէրպէրեանը գտնում է՝ թէ այն մարդը որ իր կեանքը վերածում է արուեստի գործի, մահով՝ «գերագոյն կնիքով» է՛լ աւելի է վսեմացնում, ամբողջապէս իմաստաւոր ապրած օրերը:

Իմաստաւորուած է միայն «ներգործականօրէն» ներկայ կեանքը, ոչ թէ կրաւորական ձեւով առկայ կեանքը: Փաստօրէն կրաւորականօրէն առկայ, իմաստագոյր կեանքը ինքնին բեռ է, երբ, ասեմք ստեղծագործ կեանքը, ներգործականն ու իմաստաւորուածը, նոյնիսկ մահուան շեմին, հրճուանք է ու երջանկութիւն: Այսպէս է ան-մահացել սուրբը, հերոսը եւ հանճարը: «Իմացեալ կեանքը» պատասխանատւութեամբ, «մարդկային արժանաւորութեամբ», արժա-նապատւութեամբ ապրուած կեանք է, որտեղ Նս-ը պատասխանատու է իր արարքի համար, ինչ խօսք եւ մահուան՝ այս աշխարհից մեկնելու համար: Իմաստասէրը ասում է. «Պէտք է ընդունիլ որ արժանաւոր մահուան մը միշտ

պատրաստ գտնուիլը արժանաւոր կեանք մը ապրելու միջոցներէն մէկն է»(8): Պատասխանատւութեան գիտակցութեամբ ապրողը չի կարող հենց այնպէս հեռանալ, անիմաստ ու հասարակ: Սուրբը ուրիշներին նման չէ իր վարքով, անգամ իր մահով, նա միակն է այդպիսին: Եթէ սուրբը միակութիւն է, բացառութիւն է, ուրեմն այդ պէտք է որ փաստուի եւ մահուան մէջ: «Ինքզինք» լինելը արդէն եմքադրում է միակութիւն, բայց միայն այնքանով որքանով որ Ես-ը իրագործում է այդ միակութիւնը: Պատկութիւնը, ստեղծագործ տառապանքի չգոյութիւնը, անշարժութիւնը, վարքի անպատասխանատւութիւնը, գործելակերպի իմաստազրկութիւնը, սուրբին դարձում է ամբոյս, հանճարին՝ խեղճ:

«Իմացեալ կեանք» արժանի է անմահութեան՝ «Յանբրժական կենդանութեան»: Ինքնանաւաչողութիւնը տանում է յանբրժական ինքնարարման: Ինքնաիմացումը կամ ինքնագիտակցումն է որ կենսաւոր Ես-ից ստեղծում ու վերաստեղծում է հոգեւոր Ես-ը: Այդ Ես-ը անընդհատ է, կենսունակ, գեղեցիկ ու բարի, ինքնատիպ, միակ: Նրա գլխաւոր յատկութիւնը «տեսողութիւն» է, կամ իմաստասէրի իսկ բնորոշմամբ՝ «նեքին երաժշտական ժամանակը»-ինքնագիտակից, աւելի՛ Ես-ը յայտնատեսական վիճակների անընդհատ շարք է, որտեղ իւրաքանչիւր պահ իր մէջ կրում է անցեալը եւ թելադրում ապագան: Եւ կեանքի արուեստագէտի գործունէութեան հիմնական ոլորտը հոգեւորն է՝ հոգու նեքին տարածքը, որ Պերպէրեանը կոչում է տիեզերքի «հիմքերորդ մէկ փլան»:

«Իմացեալ կեանք»ով կեանքի արուեստագէտը հասել է «այլազանութեան եւ միութեան, մասնաւորութեան ու տիեզերականութեան», այժմ կարող է ասել, թէ «ինքզինքն» եմ, իմ «արարքներուն արուեստագէտը»: Շ. Պերպէրեանը նկատում է.

«Ու որովհետեւ Արուեստագէտը ամենախոնարհ կաւէ սափորին մէջ կը հասնի Ոճին որ այդ ամանն է, դուք ձեր ամէնօրեայ ամենախոնարհ գործերուն մէջ կրնաք հասնիլ այդ *արարքներու ոճին* որ անոնց գեղեցկութիւնը կը շինէ»:

Ահա ինչ որ պիտի ընէք:

Ահա ինչպէս դուք պիտի ըլլաք ձեր գործերուն ու կեանքին արուեստագէտները. այսինքն՝ օրերու դէպքերուն ու պատահարներուն ստեղծողները»:(էջ211) «Մարդն է իր ապագայի ճարտարապետը, «արարքներուն արուեստագէտը», որ պիտի ունենայ իւրօրինակ ապրելաճ: Ունենալ ապրելաճն նշանակում է ապրել գեղեցիկ: Այս բարիք է մարդու եւ ընկերութեան համար: Ապրելու ոճ պէտք է ունենան, թէ անհատները եւ թէ հաւաքականութիւններն ու ազգերը»:

«Ոճ»ը իմաստասէրի բնորոշմամբ այն ազդակն է, «որ միւս բոլոր ազդակները իրենց վերջին իրագործման կը բերէ» (9): Սա փիլիսոփայ արուեստագէտի ոճն է:

Անհատը դնում է իր «դրոշմը», «ինքնատիպ կնիքը» բոլոր պատահարներու վրայ, նոյնիսկ նրանց՝ որոնք կարծես «մեր ձեռքը չեղող եղելութիւններ» են, արտաքին երեւոյթներով, ուժերով պայմանաւորուած, «յաճախ Բախտէն կախում ունին»: Զակատագիրը թուում է ընդհատում է կեանքի «մեղեդին», նրա միութիւնը, շարայարութիւնը, սակայն Պերպէրեանը «Բախտին» մարտահրաւեր է նետում. «Բայց ճիշդ հող է խնդիրը. կեանքին, գիտակից կեանքին մէջ կարեւորը այն չէ թէ զայն կազմող եղելութիւնները ի՞նչ են իբր առարկայական իրողութիւն, այլ թէ ի՞նչ է այն իմաստը զոր մենք կու տանք անոնց: Էականը, այն կերպն է որով կ'ընդունինք ու կը գործածենք մեր կեանքի պատահարները: Ու նշանակութեան այդ տուչութիւնը եւ պարագաներու այդ օգտագործումը մեզմէ՛ է որ կախում ունին»:(10)

Իր կեանքի արուեստագէտը եղող մարդը, միեւնոյն ժամանակ կեանքը իմաստաւորողն է, դրա մեկնաբանը, թարգմանը օրյկտիւ «եղելութիւնների» մէջ սուրյկտիւ կապեր տեսնողն ու միեւնոյն ժամանակ կապեր ստեղծողը, փորձարկողը: Այսպէս փոխէք «Բախտի» հասցրած հարուածին տրուած մեկնաբանութիւնը, եւ դուք կը փոխէք նրա ընթացքը: Զակատագիր այն է ինչից մեկնաբանութիւնը, եւ դուք կը ընտրութիւնն է: Իմաստասէրը բերում է մարդ չի ուզում խուսափել, դա մեր ընտրութիւնն է: Իմաստասէրը բերում է Սոկրատեսի եւ Բրիստոսի մահուան օրինակները՝ «մահ իմացեալ անմահութիւն

է»։ Մեկնաբանուած, իմաստաւորուած կեանքէ հեռացումը իրաւ անմահութիւն է. հոգու, գաղափարի մշտատեւ ներկայութիւն։ Մնում է որ Պերպէրեանը պատասխանի իր կողմից առաջ քաշած երրորդ հարցին. «որու՞ն պէս ըլլալ», որ մենք կոչեցինք Ազգային ծագման հարց։

Իմաստասէրը զարգացնելով կեանքի ստեղծագործ, պայծառակերպութեան իր միտքը, գրում է. «Այդպիսի Արուեստի մը իրագործման մէջ ձեր հոգին պիտի անի. ու պիտի լեցուի անպատում, մեծ կեանքով ու դուք պիտի ըլլաք այն ակերէն որոնցմէ Անոր Ալիքը կը յորդի մարդերուն վրայ, հաղորդուելու համար աշխարհին։ Ու գերագոյն ու սուրբ ու անմահի չընուանք պիտի լեցնէ ձեզ, խոնարհ ձեռներով գործողներդ, ինչպէս կը լեցնէ Պէթովէնի մը ոգին երբ անոր տառապանքի ուրուականը համանուագ կը դառնայ իր մէջ»։(էջ211)

Կեանքի արուեստագէտի հոգին պայծառակերպութիւնների մէջ անում է, հասնում մի որոշ աստիճան մեծութեան ու դուրս յորդում։ Նա մի օր արթնանալով հասկանում է որ իր Ես-ը դարձել է Մենք, այլափոխուած է ազգի, այն եւս հոգի է. «Ազգ մը հոգի մըն է»(11)։ այս հոգին կարելի է կոչել արարողների, նորաստեղծողների եւ նորաստեղծողների համակեցութիւն։

Ուշադրութեան արժանի է «կեանքի արուեստագէտի» հոգեւոր անը, որ անցնելով ինքնահասկացողութեան, ինքնաարարման տառապանքների միջով, հգնում է բարիք իրագործել իր եսականութիւնից աւելի վեր ազգային ու համամարդկային մակարդակի վրայ։ Եւ ի վերջոյ «իրենուանքը պիտի լեցնէ» մարդուն, որովհետեւ «նորաստեղծուած է», «վերստին ծնած»։ Նա երջանիկ է։

Յօդուածի սկզբում իմաստասէրի հարցադրած ինքնութեան երեք մակարդակները փոխկապակցուած են։ Պայմանականօրէն ասած, վարի մակարդակը իմաստաւորում է իրենից վեր եղածով, որի գագաթը «յաւերժաստեղծ Յաւերժն» է։

Այսպիսով, մարդու վերելքի երրորդ մակարդակում Պերպէրեանը խնդիր է դնում. «որու՞ն պէս ըլլալ»՝ եւ պատասխանում՝ հայի նման, «հերոսատիպ եւ հպարտ» ցեղի։ Իսկ ինչպիսի՞ն է այդ ազգը, այդ մեծ հոգին, որ մասնաւորները համախմբելով դառնում է տիեզերական։

Իմաստասէրը ասում է, թէ Հայ հոգին...այն հոգին է, որ երգած է գողթան երգերը, ծնած Նարեկը, կերտած ճարտարապետական կոթողները, սրբացրած հայ կիճն ու ընտանիքը, աշխատասիրութեան ոգի պարգեւած բանորին ու աշխատաւոր երկրագործին.

«Հայ հոգին... ա՛յն հոգին որ ա՛յնքան խորութեամբ փրփտողնէացաւ եւ որ ա՛յնքան խորխորութեամբ գիտցաւ դիւցազուններ ծառացնել անիրաւութեան դաւերուն դիմաց։

«Հայ հոգին... վերջապէս ա՛յն հոգին որ կը հնչէ Մասիսին ստորոտը, Անիի անբակներուն մէջ, որոնց վրայ Ալիշանի լուսիներ կը հսկէ միայն։

«Հայ հոգի՛ն... որ սակայն զօրութեամբ եւ խորութեամբ կը հաւատանք, ու հաւատացէք դուք ալ, պիտի վերածնի»(էջ206)։

Ինչն է որ մեզ կը զարմացնէ, դա իմաստասէրի ծայրայեղ, «կոյր» լատենտութիւնն է, Պերպէրեանի գրութիւններում գրեթէ չէք հանդիպի մութ ու խաւար էջի, ոչ մի յիշատակութիւն հայ հոգու անիրաւուած լինելու մասին, եթէ միայն «Անիի անբակները» կը յուշեն աղետը եւ Մեծ Սպանդը։

Պերպէրեանը ինքը Եղեռնի խեղճ է մնացորդաց՝ սակայն «Ազգային Աղետ»ին անդրադառնում է գրեթէ միշտ տողատակերում։ Այդ թուացեալ «մոռացում» է, յիշողութեան վերականգնում՝ վիշտը յաղթահարելու համար։ Պերպէրեանը թելադրում է մեզ ոչ թէ պարզապէս վիշտը կրել, քանի որ տալ ու դարձնել բառիս բուն իմաստով «կիրք» այլ բարձրացնել այն ինչպէս մի ծանրաձող։ Նրա գրութիւնների մէջ վշտի, «Ազգային Աղետի» կարծեցեալ «մոռացութիւնը» յիշատակների չգոյութիւն չէ եւ ոչ ժխտում, սրբում, ուրացում, բայց միայն զսպուածութիւն, աւելի ստոյգ լուսութիւն։ Յիշատակի լուսութիւնը յիշելու կերպերից մէկն է։ Այն խօսուն լուսութիւն է, իմաստուն ու յաղթանակած։ Յիշատակը ջնջուած չէ, այլ վերապրուած ու «կեանքով նոր նշանակութիւն ստացած»։ Մարդը եւ կամ ազգը յաղթելով ցաւին գտել է իր հոգեկան

Այսպիսով կեանքի արուեստագետը վշտալի յիշատակների կրաւորութիւնից, որ ոչ ազդում է, ոչ հակազդում, այլ միայն ինքնաշարժում, ազատագրութեամբ համար դրանք վերածում է «համակ ներգործութեան»: Նա յանկարծ ապրում է ստեղծելու մի գորաւոր փափաք ու ներշնչում: Իմաստասէրը յիշեցնում է, թէ «Հոգեւոր միութեամբ» չի հասկացուի առանց «ներշնչման շնորհի», կարելի է ասել այն յատուկ է միայն ստեղծագործ յայտնատեսութեամբ կեանքը իմաստաւորող մարդուն: Այժմ արուեստագետ-մարդու հոգին՝ «մեր իսկական Անճը որ ինքն իր վրայ փաթեւած կը պահէ ամբողջ մեր անցեալը» յաղթականօրէն բարձրացնելով վշտի բեռը, կարող է ֆայլել դէպի ապագան: Ինքնաստեղծուող՝ արարելու ներշնչում ապրող մարդը հզօր է ու տոկուն, նրա վիշտը լուռ է՝ աղաղակելու կարիքը չունի, որովհետեւ կրաւորական կիրք յիշատակին փոխարինելու է եկել «յարձակողական»-ստեղծագործականը. «Կ'ընդունիմ, ու հիմա կը տեսնեմ որ Հոգեւոր միութեամբ մէկ արդիւնք է հոգւոյն իրապէս գործելուն ընդհանուր առմամբ, եւ Ստեղծագործելուն մասնաւորաբար. կա՛յ այն ատեն միայն երբ հոգին՝ ձգելով, այսինքն ըսեմք, իր լոկ «պաշտպանողական» դիրքը գոյութեան ծանրութեան, հարուածներուն, վտանգներուն՝ որով եւ վիշտերուն եւ անձկութիւններուն դիմաց, կ'անցնի, այսպէս ըսելու համար, «յարձակողականի»: Արդ հոգւոյն «յարձակողականը» Ստեղծագործութիւնն է մանաւանդ. ըլլա՛յ ան ճշմարտական ու Գեղեցկական Արժէքները իրացնող գործերուն Ստեղծագործութիւնը, ըլլայ ան Բարոյական Արժէքը իրացնող *ակտերուն*, ու գերազանցապէս Հերոսական ու Սրբական Ակտերուն Ստեղծումը»(15):

Լաւատես իմաստասէրը գտնում է որ «Ազգային Աղէտը» կարելի է յաղթահարել վերստին արարելով: Նոյնը առիթ հանդիսացաւ որ Հայ հոգին վերադառնայ ինքն իրեն: Թերեւս գայթակղիչ կը հնչէ՝ այնուամենայնիւ՝ ջարդը մարմնի անզգայացած մէկ մասի անդամահատութիւնն է, բայց պէ՛տք է ապրի միւս կէտը, պէ՛տք է արթնանայ նիրհած գիտակցութիւնը: Թուրքին սոսկ դանակն էր որ հասաւ ոսկորին: Աղէտը ազգին ստիպեց վերագտնելու ինքնագիտակցութիւնը, մենք այսօր վերադառնում ենք սկզբնականին, անաղարտին: Ինքնավերադարձը ցաւոտ է, տառապալի, որովհետեւ ծնունդ է՝ նորաստեղծում: Իսկ սպանդը նախքան թուրքի եթաղանով լինելը կամ գործադրուելը արդէն եղած էր մեր մէջ որպէս ինքնութեան կորուստ, ինքնաստարում: Հայը ինքնաստարուել էր եւ այլեւս ինքը չէր իր կեանքի արուեստագետը: Անշուշտ չի կարելի անտեսել ջարդին նախորդող տարիների արեւմտահայ գրականութեան ծաղկումը, բայց միթէ՞ այդ նման չէր ձման, երկրաշարժից առաջ օդի տաքացման եւ ծառերի յանկարծահաս բողբոջելուն:

Պերպերեանը մտապահեստից ներկայ բերելու արժանի համարում է միայն այն ինչ այսօր հայ ազգի համար ուղղեցիկապէս արժէք ունի, որ կարող է դառնալ եւ արդէն դարձել է յարատեւութեան, առաջընթացի, հոգեւոր միութեամբ խորհրդանիշ ու ներշնչման անսպառ աղբիւր, ինչպէս օրինակ՝ քրիստոնէական վերածնող հաւատքը, հայ գիրը, մշակութիւնը՝ երգը, երաժշտութիւնը, գրականութիւնը, որոնցից առանձնացնում է Նարեկացու բանաստեղծութիւնը, ապա նշում է «հայկական նարտապատկերական տաճարներն ու անոնցմով արուեստի սրբութեամբ սրբուած հայ հողը», հայ ընտանիքն ու ասանդութիւնները: Արժէքաւորը՝ ուղեկցիւն, յաղթական, պրոգրեսիւ, ներգործող յիշողութիւնն է, որ օգնում է եւ մղում ապրելու ու վերըստին արարելու: Արարումը մէկ օրուայ խնդիր չէ նոյնիսկ Աստուածաշնչեան ըմբռնումով: Հայ ժողովուրդը արժէքների ընտրութեամբ սկսել է իր այլափոխութիւնների ընթացքը՝ ինքնութեան վերակերտումը: Այս ազգի ժառանգականութեան օրէնքն է: Որտեղ երբէք անցեալի ուրացում չկայ, այլ յիշողութեան նկատմամբ «բնական ընտրութեան գործադրում», եւ այս եղափոխութեան՝ ուրիշ կերպ ասած եղաշրջման պահանջն է:

(Շարունակելի) ԶԱՔԱՐԻԱ ՔԷՆՅ. ՍԱՐԻԲԵԿԵԱՆ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆ

*Այսուհետև իմաստասերի տպագրուած «Հուսկ Բանք»երից մեջըբերում կատարելիս նշելու ենք միայն դրանց էջը հեղինակի «Իմաստասիրական ժողովածու» գրքից: Մեջըբերումները կատարելու ենք ծաւալուն, (վստահելով ընթերցողի համըբերութեան), դա հնարաւորութիւն կ'ընձեռնի այստեղ աւելի լաւ հասկանալու հեղինակին:

Ա)«Հուսկ Բանք», էջ 193-196:

Բ)«Հուսկ Բանք-Ընկերականութիւնն ու հայ հոգին», էջ196-202

Գ«Հուսկ Բանք-Կեանքի ոնին համար», էջ202-208:

** «Ինքզինք»ութիւնը բացատրող Պերպերեանական բոլոր համեմատութիւնները, եզրերը կամ մեր մեկնաբանութիւնները կը մնան ոչ ամբողջական, սոսկ որպէս ուղի, նանապարհ դէպի ինքնութիւն: Ինքնութիւնը բառային տարազներով նկարագրելը անիմաստ է, որովհետև «Ինքզինք» կարելի է միայն լինել:

(1)Շահան Ռ. Պերպերեան, Իմաստասիրական ժողովածու, կազմեց Շահան Վրդ.

Սարգիսեան, Անթիլիաս 1992, 349 էջ, էջ208:

(2)Յակոբ Օշական, Համապատկեր Արեւմտահայ գրականութեան, երրորդ հատոր, Կրտսեր Ռոմանթիքներ, Նրուսադէմ, 1954, էջ 163:

(3)Անրի Բերգսոն, Ստեղծարար Էվոյուցիա, Նրեւան, 2003, 431էջ, էջ 65-66:

(4) Տե'ս Շահան Ռ.Պերպերեան (1891-1956), Արժէքաբանութիւն կամ արժէքներու իմաստասիրութիւն, կազմեց Արտաւազդ Արք. Թրթոնեան, Անթիլիաս, 1976, էջ 127-128

(5) Նոյն էջ 128-129

(6) Շահան Ռ. Պերպերեան, Իմաստասիրական ժողովածու, կազմեց Շահան Վրդ. Սարգիսեան, Անթիլիաս 1992, 349 էջ, էջ57:

(7)նոյն էջ57:

(8)Նոյն էջ 56:

(9) Տե'ս Շահան Ռ.Պերպերեան (1891-1956), Արժէքաբանութիւն կամ արժէքներու իմաստասիրութիւն, կազմեց Արտաւազդ Արք. Թրթոնեան Անթիլիաս, 1976, էջ52:

(10) Շահան Ռ. Պերպերեան, Իմաստասիրական ժողովածու, կազմեց Շահան Վրդ. Սարգիսեան, Անթիլիաս, 1992, 349 էջ, էջ56 :

(11)նոյն էջ223:

(12) նոյն էջ78-79 :

(13)Ն. Լուկասելիչ, Դետերմինիզմի մասին, Տրամաբանական ուսումնասիրութիւններ, Թողարկում քիւ 2, Մոսկուայ, 1993, էջ205

(14) Շահան Ռ. Պերպերեան, Իմաստասիրական ժողովածու, կազմեց Շահան Վրդ. Սարգիսեան, Անթիլիաս 1992, 349 էջ, էջ81-82 :

(15) նոյն 83 էջ:

ԴԱՏԱԿԱՆ

ԱՐՏԱՇԱՏԸ ՀԱՅՈՑ ԴԱՐՁԻ ՆԱԽՕՐԷԻՆ ԵՒ ՅԵՏՈՅ

Արտաշատը հիմնադրուել է մ.թ.ա. 185/8թթ. Արտաշէս 1-ի կողմից, որպէս վերամիաւորութեան Հայաստանի մայրաքաղաք, Արաքս եւ Մեծամոր գետերի միախառնման տեղում, Խոր վերապի 12 մեծ եւ փոքր բլուրների վրայ նրանցից հարաւ եւ հարաւ-արեւելք ընկած հարթավայրում: Գտնուելով միջազգային առևտրական ճանապարհների խաչմերուկում, այն բուռն վերելք ապրեց եւ շուտով դարձաւ Հայաստանի քաղաքական, տնտեսական եւ մշակութային խոշոր կենտրոնը, հեղինակական աշխարհի մեծ ու նշանաւոր քաղաքներից մէկը:

Արտաշատը, իբրեւ մայրաքաղաք, նաեւ կրօնական կենտրոն էր: Դա այդպէս էր եւ նախաքրիստոնէական շրջանում, եւ քրիստոնէութեան տարածումից յետոյ ինչպէս Հայաստանում (Վան, Արմաւիր, Երուանդաշատ, Արտաշատ, Վաղարշապատ, Դուին եւ այլն), այնպէս էլ միւս երկրներում (Հռոմ, Անտիոք, Ալեքսանդրիա, Կոստանդնուպոլիս, եւ այլն): Մայրաքաղաքների միջոցով էր իրականացում պաշտօնական կրօնական քաղաքականութիւնը: Այն՝ պետութեան գոյութեան եւ կայունութեան գրաւականն էր:

Ըստ Մովսէս Խորենացու (II, 49), Արտաշէսը Արտաշատում մեհեան կառուցեց (VI, բլուր) եւ Բագարանից փոխադրեց Լուսին-Անահիտ-Արտեմիսի արձանը եւ բոլոր հայրենական կուռքերին, իսկ Արեգ-Միհր-Ապոլլոն-Հելիոսի արձանը կանգնեցրեց քաղաքից դուրս՝ ճանապարհին (Արաքսի աջ ափին), իբրեւ Հերմես: Տրդատ I-ի օրոք Տիրը համադրուեց Ապոլլոն-Հերմեսի հետ եւ այնտեղ կանգնեցուեց նաեւ Տիրի արձանը:

Մ. Բ. առաջին դարերում Միջերկրականի արեւելեան շրջաններում, Փոքր Ասիայում պաշտամունքային ուժեղ պայքար էր տեղի ունենում, որի արդիւնքն առաջին հերթին լինում էր մի շարք աստուածների յատկանիշների համադրութիւնը մէկի մէջ: Որոշ աստուածների վերագրում էին նոր ֆունկցիաներ, որոնք համընդհանուր դառնալու հակում էին ցուցաբերում: Դրանք բոլորը մեռնող եւ յառնող աստուածներն էին եւ նրանց հետ կապուած աստուածամայրերը (1) (Կիբելա-Ատտիս, Իշտար-Թամուզ, Իզիդա-Օզիրիս, Աֆրոդիտէ-Ադոնիս եւ այլն): Դա կապուած էր բնութեան զարթոնքի, նրա ցիկլայնութեան հաւատալիքներին հետ: Սինկրետիզմը հեթանոսական կրօնի զարգացման տրամաբանական վախճանն էր: Հռովմէական կայսրութեան կրօնափոխութեայական միտքը՝ ստոյիկները: Պլուտարխոս, ճեղքատոնականները, աւելի ու աւելի յաճախ էին դիմում միաստուածութեան գաղափարին (2):

Քրիստոնէական գաղափարները նոր չէին Արեւելքում: Աստծոյ Որդու աշխարհ գալու եւ իր տանջանքներով աշխարհը եւ մարդկանց մեղքերը քանդելու եւ փրկելու ուսմունքը բնորոշ էր հին արեւելեան շատ կրօնների: Այդպիսին էին վերոյիշեալ մեռնող եւ յառնող աստուածների կրօնները: Քրիստոնէութիւնը ձեւաւորուեց արեւելեան այդ միջավայրում եւ դրանց ազդեցութեան տակ: Մեռնող եւ յառնող աստուածների դէմ մղած անհաշտ պայքարի ընթացքում քրիստոնէութիւնը նրանցից շատ բան վերցրեց, որն էլ նպաստեց նրա յաղթանակին: Մեռնող եւ յառնող աստուածների տառապանքներն ու տանջանքները շատ մարդկային էին:

Նրանք մեռնում էին, որպես զի նորից յարութիւն առնէին, պայծառ, երջանիկ կեանքի համար:

Քրիստոնէութիւնը, սակայն, ոչ մի կրօնի դէմ այդպիսի յամառ ու ծանր պայքար չի մղել, ինչպէս Միհրի: Միհրը կապուած էր լոյսի, երկնքի, արեւի հետ, ուստի ամէն ինչի ստեղծողն ու արարիչն էր: Նրա պաշտամունքը տարածուած էր Միջին Ասիայից, Հիւսիսային Հնդկաստանից մինչեւ Ատլանտեան Ովկիանոս: Հռոմէացիները Միհրին ծանօթացան Կիլիկեան ծովահէնների դէմ Պոմպէյոսի մղած պատերազմների ժամանակ:

Միհրն Արեւմուտքում յայտնւում է, սակայն հռոմէացիների Հայաստան կատարած արշաւանքներից յետոյ (3): Տրդատը 65թ. Հռոմում ներդնին դիմում է. «Եկել եմ ես դէպի քեզ, իմ աստծուն, երկրպագելու քեզ, ինչպէս Միթրային...» (4): Նա ներդնին մասնակից է դարձնում միհրական հաղորդութեանը, քրմերի գաղտնի ճաշին (խորհրդաւոր ընթրիք): Միհրի պաշտամունքն Արեւմուտքում տարածուեց յատկապէս, երբ Վեսպասիանոսի (70-79թթ.) ժամանակ փոքրասիական, արեւելեան (Կապադովկիա, Կոմագիենե, Պոնտոս եւ այլն) պրովինցիաներից, որտեղ միթրաիզմը շատ տարածուած էր, սկսեցին հաւաքագրել լեգիոներներ (5):

Հայաստանում համընդհանուր դառնալու հակում էին ցուցաբերում Անահիտն ու Միհրը: Անահիտը Հայաստան աշխարհի եւ Արտաշատ մայրաքաղաքի, իսկ Միհրը՝ Երուանդունիների, Արտաշէսեանների եւ Արշակունիների հովանաւորն էր: Հայկական հեթանոսական պանթէոնում, որը գլխաւորում էր Արամազդը, քացառիկ տեղ էր գրաւում Անահիտը: Նրա պաշտամունքը տարածուած էր Առաջաւոր

Ասիայում, Միջին Ասիայում, Իրաքում, Փոքր Ասիայում: Սակայն ոչ մի տեղ նրան այդքան ունակութիւններ չվերագրուեց եւ այնքան ժողովրդականութիւն չվայելեց, ինչպէս Հայաստանում: Անահիտի պաշտամունքի առջեւ նսեմանում էր անգամ Արամազդը:

Անահիտի մի շարք քարեմասնութիւններից ընդգծուել է յատկապէս մեծ աստուածամօր, մեծ մօր, մեծ տիկնոջ յատկանիշը՝ պատկերելով նրան մանկան հետ միասին: Դրա մէջ ամփոփուել ու շեշտուել են նրա պտղաբերութեան, ամենայն հայոց աշխարհի հովանաւորի ու պահապանի, արգասաւորութեան յատկանիշները. «... մանաւանդ այսմ մեծի Անահտայ տիկնոջս, որ է փառք ազգիս մերոյ եւ կեցուցիչ, զոր եւ թագաւորք ամենայն պատուեն, մանաւանդ թագաւորն Յունաց. որ է մայր ամենայն զգաստութեանց, քարերար ամենայն մարդկան բնութեան, եւ ծնունդ է մեծին արին Արամազդայ» (6):

Միհրի պաշտամունքը խոր արմատներ է բողել հայ իրականութեան մէջ (7): Այդ եւ վկայում տարբեր վայրերում կառուցուած տաճարներն ու սրբավայրերը: Միհրի պաշտամունքն ու առասպելն արտացոլուել է նաեւ հայկական ժողովրդական էպոսի մէջ, ուր Միհրը միհրն է (8): Էպոսում լոյսի՝ Միհր-Միհրի կոչւն է խաւարի, վիշապների ու դեւերի դէմ, աշխարհի փրկութեան եւ արդարութեան համար: Առիւծ Միհրը Առիւծ արեւն է: Միհրը նոյնպէս ժայռածին Միհրի նման փակւում է վիթխարի քարածայռի, Ագռաւի քարի մէջ (9):

Ուրարտացիների գլխաւոր աստուած Խալդեն եւս, Միհրի, Արայի, Արեգի նման, մեռնող եւ յառնող աստուած էր: Ուստի, Վանի ժայռի «Խալդեի դուռը», որտեղից դուրս էր գալիս Խալդեն, յետուրարտական

շրջանում դարձաւ «Միերի դուռ» եւ ժայռի դռնից այժմ դուրս էր գալիս Միերը եւ այլն:

Միերի հետ եւ կապւում Տիգրան III-ի դրամների Բ երեսի ոտքը քարձրացրած ձին, Տիգրան IV-ի եւ էրատոյի դրամների վրայ պատկերուած ձիերը, կնիքների եւ կնիքադրոշմների ձիւ մէջքին եւ գլխին կանգնած թռչուններով պատկերները, Արտաշատից յայտնաբերուած, տարբեր յօրինուածքներով պատկերուած Անահիտի եւ Միերի կաւ եւ բրոնզէ արձանիկները, որոնք, ամենայն հաւանականութեամբ, նրանց պաշտամունքային պաշտօնական կերպարների, մոնումենտալ քանդակների ազատ ընդօրինակութիւններն են:

Ըստ աւանդութեան, I դ. երկրորդ քառորդին Յիսուսի աշակերտներ՝ առաջին առաքեալներ Սուրբ Բարթողիմէոսը եւ Սուրբ Թադէոսը Հայաստան գալով հանդիպում են Արտաշատի բլուրներից մէկի վրայ, որն իբրեւ սրբատեղի կոչւում է Օթեաց Խաչ: Ըստ պատմական աւանդութեան, այս առաքեալների հետ է կապւում Հայոց եկեղեցու մի շարք նուիրական սրբութիւնների Հայաստան բերելը (10):

Քրիստոնէութիւնը III դարում լայնօրէն տարածուած էր Եդեսիայում եւ Հռոմէական կայսրութեան արեւելեան մարզերում, Փոքր Հայքում, Կապադովկիայում, Կիլիկիայում, ըստ որում՝ սոցիալական տարբեր խաւերի մէջ: Այն բացայայտ կամ գաղտնի ձեւով տարածուած էր Փոքր Հայքի զինուորականութեան (Նիկոպոլսի հայկական լիգիոնների) շրջանում, քաղաքային քնակչութեան մէջ (11) եւ այլն: Եւ, ինչպէս ճիշտ կերպով ենթադրում է, եթէ հռոմէական կայսրերի հալածանքները չլինէին, քրիստոնէութիւնը այնտեղ կարող էր պաշտօնական կրօն դառնալ նոյնիսկ

III դ. երկրորդ կէսին (12):

Միաստուածութեան գաղափարը տարածուած էր նաեւ Փոքր Հայքում: Դրա կրողներից էր Ս. Եւստրատիոսը՝ արավրակացի Տէր Յուսիկը (13): Մեծ Հայքի ժողովուրդը դժուար թէ անտեղեակ լինէր Փոքր Հայքում կատարուող իրադարձութիւններին: Բնականաբար այդ երկրները, եւ յատկապէս Փոքր Հայքը, մշտական կապի մէջ էին Մեծ Հայքի հետ: Անկասկած այնտեղից առաքեալներ են եկել Մեծ Հայք քարոզելու: Ուստի III դ. կէսերին քրիստոնէութիւնը Մեծ Հայքում նոյնպէս նշանակալից յաջողութիւնների էր հասել: Դրան նպաստում էր նաեւ Սասանեան Պարսկաստանի քաղաքականութիւնը: 261-293թթ. նրանք փորձում են Հայաստանում զրադաշտականութիւն տարածել: Արտաշատում փշրում են աստուածների եւ նախնիների արձանները: Այնտեղ՝ Բագաւանում (14) եւ միւս սրբավայրերում, ատրուշաններ են կառուցում: Այսինքն, Հայաստանում անուղղելի հարուած է հասցւում սինկրետիկ հեթանոսական կրօնին:

Տրդատը 287-293թթ. Հայաստանի հռոմէական հատուածի թագաւորն էր, որի կենտրոնը Երեզայի մօտ գտնուող Չրմես աւանն էր: Նա ծանօթ էր այնտեղ տարածուած, քայց դեռ չնանաչուած քրիստոնէական կրօնին: Ներսէսը 293թ. ստանում է Իրանի թագը եւ Տրդատին թողնում նաեւ Հայաստանի պարսկական մասի գահը: Մայրաքաղաքը տեղափոխւում է Վաղարշապատ: 293թ. Մծբնի 40-ամեայ հաշտութեան պայմանագրից յետոյ Տրդատ III-ին անհրաժեշտ էր արագօրէն վերականգնել երկրի տնտեսական ու ռազմական հզօրութիւնը եւ ամրապնդել կենտրոնական իշխանութիւնը՝ հարեւանների ակտիվացող ագրեսիվ քաղաքականութեանը դիմակայելու

համար: Ուստի պէտք էր Հայաստանը միաւորել նաեւ կրօնով: Նա մի շարք ռեֆորմներ անցկացրեց, այդ թուում՝ նաեւ կրօնական:

Զարգացող ֆեոդալիզմի պայմաններում հեթանոսական կրօնն այլեւս ի վիճակի չէր միաւորող դեր կատարել: Կրօնագաղափարախօսական ուսմունքներից դա կարող էր լինել միայն օրեցօր ուժեղացող, լայն տարածում ստացած քրիստոնէութիւնը, որի յաղթանակը դարձի նախօրէին արդէն ապահովուած էր: «Քրիստոնէութիւնը համամարդկային կրօն, հոգեւոր արժեհամակարգ էր, ինչն էլ ընդունելի էր դարձնում ամենատարբեր սոցիալական խւերի եւ ժողովուրդների համար» (15):

Որ քրիստոնէութեան ընդունումից յետոյ էլ մի որոշ ժամանակ մեծ են եղել հեթանոսական սովորութիւններն ու հաւատալիքները, վկայում են նաեւ հնագիտական պեղումների արդիւնքները: Արտաշատում եւ Վաղարշապատում յայտնաբերուած IV-V դդ. կողքի պառկած, ծնկները ծալած անիւններով թաղումները թէեւ պակասում են, սակայն տարածում են ստանում մէջքի վրայ պառկած դիրքով թաղումները, որոնց ուղղութիւնը միշտ չէ, որ արեւմուտք-արեւելք է: Դեռեւս հանդիպում են ուղեկցող նիւթեր: Արտաշատում են նոյնիսկ, այլ իրերի հետ միասին յայտնաբերուել է Անահիտին պատկերող ոսկրէ արձանիկ:

Ուշագրաւ է նաեւ, որ Արտաշատում եւ Վաղարշապատում, որոնք անմիջականօրէն աղբրւում են քրիստոնէութեան ընդունման հետ, քրիստոնէական եւ հեթանոսական թաղումները կատարուել են նոյն դամբանադաշտում: Անհնարին էր, սակայն, ժողովրդի վերադարձը դէպի հետ: Քրիստոնէութիւնը հեթանոսական

կրօնների նկատմամբ ունէր մի շարք առաւելութիւններ, եւ Գրիգոր Լուսաւորչին յաջողուեց, աստուածապաշտութեան խօսքը սերմանելով՝ բոլորին տիրոջ նանապարհի վրայ կանգնեցնել (16):

Քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելուց յետոյ, Մարիամ Աստուածածինն ընդունեց Անահիտին վերագրուող գրեթէ բոլոր յատկանիշները: Անահիտական տաճարները վերածուեցին Աստուածածնի տաճարների, Անահիտական տօները՝ Աստուածածնի տօների, եւ այլն: Մարիամ Աստուածածինն ու Քրիստոսը սկսեցին պատկերուել նոյն ձեւով, ինչպէս Արտաշատից յայտնաբերուած Անահիտի՝ մօր ու մանկան կաւէ արձանիկները: Այսինքն, Անահիտի՝ իբրեւ կանացի բոլոր առաքինութիւնների մօր պատկերագրութիւնը միանգամայն համապատասխանում էր ու յարմար էր նոր կրօնի Տիրամօր կերպարին:

Միհրը արդարութեան, կարգ ու կանոնի երաշխաւորն էր, ծագող արեւի եւ փրկարար լոյսի աստուածը եւ այլն: Քրիստոսն այդ բոլոր յատկանիշներով փոխարինեց Միհրին: Հայկական քրիստոնէական շարականները՝ արեգակի, արդարութեան եւ լոյսի փառաբանման վերաբերեալ, կապուած են Միհրի հետ եւ արտացոլում են նրա պաշտամունքը Հայաստանում: Յիշենք, օրինակ, Ներսէս Շնորհալու (17) (1098-1173) «Առաւօտ լուսոյ»:

Միհրը եւս միջնորդ էր աստծոյ եւ մարդկանց միջեւ ու պայքարում էր չարի դէմ: Նոյնն էր Միհրական, Ատտիսի, քրիստոնէական հացով եւ գինիով հաղորդուելը (Իրմերի սրբազան ճաշն ու Քրիստոսի խորհրդաւոր ընթրիքը), որտեղ արտասանուում էր հաստատուած աղօթքի բանաձեւը եւ այն ուղեկցւում էր երգերով, մկրտութիւնը, աստծու յարութեան ծէսը՝

արիւնով ցողուելը (իրենց, աստուածների կուռները, հողը) եւ այլն:

Միհրի ծննդեան օրը, Դեկտեմբերի 25ին Քրիստոսի ծննդեան օրն արեւմտեան եկեղեցում, Հռոմի Պապը կրում է նոյն խոյրը, ինչ որ Աստիսի գլխաւոր բուրմը (արխիգալլը): Եկեղեցական գործիչ ու մատենագիր Ավգուստինոս Երանելին (IV-V դդ.) յիշատակում է Աստիսի բրմի խօսքերը, թէ «փռիւզիական գլխարկով աստուածը (այն է՝ Աստիսը) նոյնպէս քրիստոնեայ է» (18):

Քաղաքական իշխանութեան թուլացման պայմաններում եկեղեցին սկսել էր մեծ դեր խաղալ Հայաստանի գաղափարաֆաղաքական, հոգեւոր ու մշակութային կեանքում: Երկրորդ խնդիրը՝ եկեղեցու ազգային բնոյթը կարող էր ապահովել ժամասացութիւնը ազգային լեզուով կատարելը: Այդ գիտակցութեամբ էլ Կաթողիկոս Սահակ Պարթեւի ջանքերով, Վռամշապուհ թագաւորի օգնութեամբ այդ կարեւոր խնդիրը, Աստծոյ շնորհով, յաջողութեամբ իրագործեց Մեսրոպ Մաշտոցը, ում ստեղծած հայերէն Այբուբէնը (405 թ.) քրիստոնէութեան ամենամեծ պարգեւն էր հայ ժողովրդին:

Մեսրոպ Մաշտոցը գրերի գիւտից յետոյ վերադարձաւ Հայաստան եւ մօտեցաւ Արտաշատ մայրաքաղաքին, Վռամշապուհ թագաւորը, նախարարների հետ միասին, դիմաւորեց նրան Արաքսի ափին, Տափերական կամրջի մօտ, ինչպէս Տիրանն իր ժամանակին դիմաւորել էր Յուսիկ Կաթողիկոսին, որից յետոյ ուրախութեան ձայներով, հոգեւոր երգերով եւ օրհնութիւններով վերադարձան մայրաքաղաք եւ մեծ տօնախմբութիւն կազմակերպեցին (19): Ծաւալուեց հսկայական թարգմանչական աշխատանք: Թարգմանուեց Աստուածաշունչը եւ այլ աստուածաբանական ու

փիլիսոփայական գրականութիւն (20): Ծիսակատարութիւնները սկսեցին կատարուել հայերէն:

Գրերի գիւտը խթանեց քրիստոնէութեան տարածմանն ու վերջնական յաղթանակին: Հայաստանում քրիստոնէութեան ընդունման վերաբերեալ առաջին գրաւոր շարադրանքը պատկանում է Ագաթանգեղոսին, ում պատմութիւնում Գրիգոր Լուսաւորիչը՝ Քրիստոսի, այսինքն մեռնող (տանջուող) եւ յառնող աստուծոյ հերոսի յատկանիշներ ունի (21):

«Զի եւ ձեր իսկ արկեալ զիս ի խոր վիրապն, յանհնարին տեղին մահուան, եւ ելեալ անտի ողջանդամ կամօքն Աստուծոյ»: «Վասնզի զիս ապրեցոյց ի մահուանէ, որ յաչս ձեր մեռեալ համարեալ էի, որպէս եւ դուք իսկ ձեզէն վկայէք ինձ. եւ դուք զի մեռեալ էիք ի մեղս ձեր՝ ահաւորիկ մեռեալիդ ի ձեռն մեռելոյս կենդանանայք» (22):

Գրիգոր-Գրիգորիոս յունարէն նշանակում է արթուն, այսինքն արթնացող, յարութիւն առնող (23): Քանի որ Ս. Գրիգորն անարգել էր Անահիտ աստուածուհուն (կրօնական անցագործ էր), ուստի նրան ուղարկում են Արտաշատ մայրաքաղաք, Անահիտի տաճարի տարածքում գտնուող ժայռի մէջ եղած հորը (քանդը) գցելու, սոսկալի «Խոր Վիրապ» (24) (=մահը), որտեղ նրան շրջապատում են օձերը եւ կարիւնները:

Երկրում սկսւում են դժբախտութիւններն ու հիւանդութիւնները: Նրա հակառակորդ Տրդատ արքան ստանում է խոզի (Վարազի) կերպարանք: Արքայաժողովը խոսրովի դուխտը եւ Գրիգորին հաց տուող պառաւ կինը փրկում են Գրիգորին: Վերջինս բուժում է արքային, դժբախտութիւններն աւարտւում են: Հենց խոր Վիրապի

ժայռափոսից պիտի դուրս գար Գրիգորը, ինչպէս Միհրը, եւ քրիստոնէութեան տարածման միջոցով լուսաւորէր աշխարհը, որը խորհրդանշելու էր նոր կրօնի յաղթանակը հեթանոսութեան նկատմամբ:

Ըստ Ագաթանգեղոսի (25), Գրիգոր Լուսաւորիչն Արտաշատում եւ աւերուած միւս տաճարների տեղում խաչեր է կանգնեցում, որին պէտք է պաշտէին կուռքերի փոխարէն (26) եւ այդ վայրերում կառուցէին եկեղեցիներ:

IV դարում Արտաշատը դեռեւս մնում էր իբրեւ պաշտօնական մայրաքաղաք եւ կրօնական կենտրոն: Այդ մասին վկայում է Փաւստոսը (27)՝ նշելով, որ Տիրան թագաւորը «...ընդ առաջ ելանէր նմա ի դաշտն յայն կոյս գետոյն Տափերն կամրջի, ամենայն քանակօքն քազմութեամբք: Ապա ողջոյն տուեալք գցանկալի ողջոյնն միմեանց, անցեալ ընդ կամուրջն Տափերայ, մտեալ ի քաղաքն մեծ յԱրտաշատ, յեկեղեցին դառնային եւ նստուցանէին գցանկալի մանուկն Յուսիկ յաթոռ հայրապետական:

Այս կարծիքին են նաեւ Գեղեցբը (28) եւ Լինչը (29): Դա հաստատում է նաեւ Ագաթանգեղոսի վերոյիշեալ վկայութիւնը՝ Գրիգոր Լուսաւորչի կողմից Արտաշատում, խոր Վիրապում, Անահիտի տաճարի տեղում խաչ կանգնելու եւ եկեղեցի կառուցելու մասին: Շապուհ II-ը 368թ. երբ Հայաստանի միւս քաղաքների թուում աւերում է նաեւ Արտաշատը, քանդում է խոր Վիրապի (II-բլուր) եկեղեցին եւ այնտեղ կառուցում ատրուշան: Վերջինս, ըստ Փաւստոսի, աւերում է սպարապետ Մուշեղ Մամիկոնեանը (30): Դրանից յետոյ Արտաշատն աստիճանաբար լիւում է: Կեանքը շարունակում է VI բլրի վրայ (կրօնական կենտրոն) եւ նրանից հարաւ եւ արեւելք ընկած հարթավայրում:

Վերականգնում են VI բլրի պարիսպները, որոնք թէեւ մտնում էին քաղաքի պաշտպանական ընդհանուր համակարգի մէջ, սակայն միւս բլուրների նման իրենցից ներկայացնում էին առանձին ամրոց (31): Այդ են վկայում նաեւ 1999թ. VI բլրի վրայ կատարուած պեղումների արդիւնքները:

Մուշեղ Մամիկոնեան եւ Ներսէս I կաթողիկոսը զօրքի հետ միասին 369թ. մտան Հայաստանի անկախութեան եւ հզօրութեան խորհրդանշիչ Արտաշատ մայրաքաղաք եւ Պապին հռչակեցին Մեծ Հայքի թագաւոր (32):

Յայտնի է, որ պաշտամունքային վայրերը չեն փոխուում: Քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելուց յետոյ, համաձայն Ագաթանգեղոսի, Գրիգոր Լուսաւորիչն ու Տրդատը զօրքերի հետ միասին, առաջինն ուղեւորում են Արտաշատ՝ աւերելու Անահիտի եւ Ապոլլոն-Տիրի տաճարը (33): Եկեղեցիները կառուցուեցին առաջին հերթին թագաւորական պաշտամունքի ու տաճարների տեղերում, առաջիններից մէկը՝ Արտաշատում (34):

Ինչո՞վ փոխարինուեցին Գրիգոր Լուսաւորչի կողմից կոտրատուած հեթանոսական աստուածների փայտէ, քարէ, պղնձէ, արծաթէ եւ ոսկէ նարտար ձեռքերով կերտուած արձանները (35): Ենթադրում է, որ Քրիստոսի խաչուած պատկերը կրող խաչն անհասկանալի կը լինէր նորադարձ հաւատացեալներին (36), իբրեւ փաստ վկայակոչում է վաղ միջնադարեան (VI-VII դդ.) բարձրաքանդակներում խաչելութեան տեսարանի քացակալութիւնը: Նշում է, որ այն փոխարինուել է «Արրահամի գոհաբերութեան տեսարանով, Քրիստոսի դիմապատկերը կրող խաչով կամ էլ խաչաւոր լուսապսակ

ունեցող դիմապատկերով» (37): Քրիստոսի խաչի նշանը նոյնպէս չի ընդունուել, ժողովուրդն ասել է, որ «տաշած փայտ է, ոչ նարտար ձեռքի գործ» (38), թէ այդպիսի փայտով անտառը լիքն է:

Մինչդեռ ինչպէս վերը նշեցինք, հեթանոս մեռնող եւ յառնող աստուածների տառապանքներն ու տանջանքները վաղուց էին յայտնի մարդկանց, եւ ըստ այդ ընկալման նրանց համար Քրիստոսը նման մի աստուած էր, որը մոռացութեան էր մատնելու մեռնող եւ յառնող հեթանոս աստուածներին: Այս առումով մի հետաքրքիր վկայութիւն ունի Բուզանդը. «Սա երթեալ կատարէր անդ, ըստ հանապազ սովորութեանն, զՏեառնն զխաչական զփրկութեանն զպատարագն գոհութեան, զհաղորդութիւն չարչարանաց յիշատակի, զկենդանարարն եւ զազատիչն զմարմինն եւ զարիւն Աստուածորդոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետն Հայոց, հանդերձ թագաւորօքն եւ մեծամեծօքն, նախարարօքն եւ աշխարհախումբ քազմութեամբք պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կռոցն, եւ ապա յանուն աստուածութեանն սրբեցան, եւ եղեն տուն աղօթից եւ տեղի ուխտից ամենայն ումեք: Մանաւանդ յայն ի գլխաւոր տեղին յեկեղեցին ժողովել ի յիշատակ սրբոցն՝ որ էին անդ, կատարել անդ մի ամի եւթն անգամ, որք զնոյն ունէին սովորութիւն առաւել եւս ի մեծի մարգարէարան մատրանն Յովհաննու: Սոյնպէս եւ յառաքելարանս տեառնաշակերտացն, սոյնպէս եւ ի վկայարանս մարտիրոսացն ամի ամի ժողովեալք, զօր տօնին յիշատակի նոցա վարուց գործոց կենաց քաջութեան խմբեալ ցնծային» (39):

Ուշագրաւ են նաեւ Ագաթանգեղոսի վկայութիւնները. «որ վասն զի սիրեցին մարդիկ պաշտել զպատկերս մարդադէմս փայտագործս նարտարագործս հիւսանց՝ եղեւ ինքն պատկեր մարդկան, զի պատկերագործսն եւ զպատկերասէրսն եւ զպատկերապաշտսն յիւր պատկեր աստուածութեանն հնազանդեցուցէ» (40):

Այսպիսով, ըստ Բուզանդի, թագաւորը, Հայոց եպիսկոպոսապետը, մեծամեծների, նախարարների եւ ժողովրդի հետ միասին, այցելում էին արքունական պաշտամունքի հեթանոսական գլխաւոր վայրերը (տաճարները), որտեղ կանգնեցուած են եղել հեթանոսական աստուածների կուռքերը, եւ կատարում են այժմ արդէն Քրիստոսին նուիրուած այն նոյն ծէսերը, որոնք բնորոշ էին մեռնող եւ յառնող աստուածներին: Այսինքն պաշտամունքային վայրերը չեն փոխուել, փոխուել են պաշտուող անունները:

Համաձայն Ագաթանգեղոսի, խաչերը խորհրդանշել են մարդկութեան համար Քրիստոսի եւ նահատակների չարչարանքները: Խաչը նոյնացուել է Քրիստոսի հետ, դարձել նրա խորհրդանիշը, խաչը ներկայացուել է որպէս փրկիչ: Խաչը ձեռք բերեց կենաց ծառի յատկանիշներ: Այն հարստացուեց բուսական, ազգային զարդերով (41): Տաճարներում գոհասեղանները փոխարինուել են խաչերով, որոնց արդէն կուռքերի փոխարէն պէտք է պաշտէին:

Այսինքն, ինչպէս հեթանոսական տաճարներում, աստուածների արձանները կանգնեցուում էին ամենատեսանելի ու մատչելի տեղերում, որպէս զի հաւատացեալը կարողանար հեշտութեամբ մօտենալ, երկրպագել ու աղօթել, նոյն սկզբունքով եկեղեցիներում կանգնեցուել են խաչերը: Գրիգոր Լուսաւորիչը, օրինակ, էջմիածնի տաճարի կենտրոնում

կանգնեցրեց խաչը «... ի տեղին ցուցեալ հրեղէն սեանն ոսկիակալ խարսխին, եւ անդէն բարձր փառաբանութիւն փակեալ գտեղին ի պատիւ, եւ դրամբք եւ դոնափակօք ամրացուցեալ, եւ կանգնեալ եւ անդ զնշան փրկական խաչին. զի առ հասարակ հասեալ ամենայն ոք յայն տեղի՝ ամենագօր Արարչին Աստուծոյ երկրպագեալ ծունր կրկնեսցեն» (42): Կամ Մցխեթայի Զվարիի եկեղեցու կենտրոնում բարձրացող խաչը, որը վրացական քրիստոնեական եկեղեցու ամենամեծ սրբութիւնն (43) էր:

V դարը շրջադարձային եղաւ Հայոց եկեղեցու եւ ժողովրդի կեանքում: Դարասկիզբին ստեղծուեց հայոց այրուբները, ծաւալուեց թարգմանչական եւ ուսումնական լայն գործունէութիւն, Հայոց եկեղեցին անկախացաւ, դարձաւ ազգային, եկեղեցին ստանձնեց երկու մասի բաժանուած երկրի հայութեան միաւորողի, համազգային շահերի արտայայտչի ու պաշտպանի դերը, հաւատի համար մղուող պայքարը նոյնացուեց փառաբանական անկախութեան համար մղուող պայքարի հետ:

Կրօնափոխութեան պայմանները հասունացաւ, մշակեց ու կանոնակարգեց հաւատի խորհրդանշանները, եկեղեցական ողջ արարողակարգը, տաճարների կառուցման սկզբունքները, քրիստոնեայի թաղման ձեւն ու ծէսը, խաչակնքելու կարգը եւ այլն: Ծաղկեց, նոր վերելք ապրեց հեղինակական մշակոյթը, հայերը թարգմանութիւնները կատարում էին յունարէնից, գնում էին սովորելու Փոփր Ասիա, Սիրիա, Ալեքսանդրիա, Յունաստան: Մեսրոպ Մաշտոցն ինքն էլ հեղինակական կրթութիւն ունէր: Փայտաշէն եկեղեցիները փարաշէն դարձան, տաճարները վերակառուցուեցին, Հայաստանում կառուցուեցին հրաշակերտ նոր եկեղեցիներ ու կոթողներ, ուստի V դարն

իրաւամբ անուանուեց «Ոսկեդար»:

V դ. կէսերին, յատկապէս Յագկերտ II-ի օրոք (439-457թթ.) կրկին սաստկացան փառաբանական եւ կրօնական ճնշումները Հայաստանի վրայ, ժողովրդի հալածանքները: Պարսիկները գրաւել էին Հայաստանը, Արտաշատում նորից ատրուշան է կառուցուում: Ապստամբած ժողովուրդն աւերում է պարսիկների գրաւած բերդերն ու աւանները, նախ մեծ Արտաշատը՝ իր աւաններով, հրկիզում է «կրակի պաշտամունքի տեղերը», գրաւում են ատրուշանների սարք ու կարգը, բերում-դնում են եկեղեցում եւ սուրբ փահանների միջոցով նուիրում ի ծառայութիւն տէրունական սեղանի:

Արտաշատում եւ միւս վայրերում ատրուշանների տեղում կանգնեցնում էին նորից «Քրիստոսի փրկական խաչը» (44): Դրանից յետոյ Արտաշատն աւերում է Վասակը: Յագկերտ II-ին պատասխան գործերին ընդառաջ գնալու համար (դէպի Աւարայր), հայկական գործերը հաւաքուում են «թագաւորանիստ վայր Արտաշատում» (45):

Ըստ Վարդան Արեւելցու, Վահան Մամիկոնեանը մարգպան դառնալուց (485թ.) յետոյ կառուցել է Շապուհ II-ի կողմից 360ական բուականներին աւերուած Արտաշատի եկեղեցիները (46): Դրանք, ըստ երեւոյթին, կրկին աւերուել էին 532-572թթ. ընթացքում, երբ Հայաստանին տիրելու համար մղուող պարսկաբիւզանդական մրցակցութեան պայմաններում երկիրը ոտնատակ էր արւում եւ մէկի, եւ միւսի գործերի կողմից: Ըստ որում, երկու երկրներն էլ կրօնական անհանդուրժողականութիւն էին ցուցաբերում հայերի նկատմամբ:

Աստղիկի վկայութիւնից երեւում է, որ պարսիկները Դուինում, հաւանաբար նաեւ Արտաշատում (խոր Վիրապում) եւ այլ վայրերում ատրուշաններ են

կառուցել: Այս ֆաղափականութիւնն էլ պատճառ է դառնում, որ հայերը 572թ. կրկին ոտքի կանգնեն պարսիկների դէմ Վարդան Մամիկոնեանի գլխաւորութեամբ (47): 577թ. Բիւզանդիային յաղթելուց յետոյ պարսիկները նորից գրաւում են Հայաստանը, բայց խոստանում են այլեւս ատրուշաններ չկառուցել: Արտաշատը VII դ. կաթողիկոսարանի դաստակերտներից մէկն էր (48):

Ասողիկը (49) հաղորդում է, որ Ներսէս III Շինարար Կաթողիկոսը (641-661թթ.) Խոր Վիրապում եկեղեցի է կառուցել, որը տեսել (985թ.) եւ նկարագրել է արար մատենագիր Ալ-Մուկադասին: Ըստ նրա՝ դա եղել է «... սպիտակ տաշուած ֆաբրից շինած, ութ սիւնների վրայ (նստած) գմբեթածել գլխարկի նմանուող մի եկեղեցի, որի մէջ գտնուում է Մարիամ կոյսի նկարը... ո՛ր դռնից էլ (ներս) մտնես (եկեղեցի), դու կը տեսնես Մարիամ կոյսի պատկերը» (50):

Այս վկայութեան համաձայն, եկեղեցին կառուցուած է եղել սպիտակ ֆաբից, այսինքն՝ կրաֆաբից, որը անտիկ դարաշրջանին բնորոշ շինաձևն է (Արտաշատ, Գառնի, Դուին, Բենիամին, Հոդմիկ, Զեռնակի Թեփե, Սիսիանի իշխանական դամբարան եւ այլն): Կրաֆաբը լայնօրէն օգտագործուել է Արտաշատի պարիսպների, պալատական, տաճարական, կոմունալ եւ այլ հասարակական շինութիւնների կառուցման համար: Շատ հնարաւոր է, որ եկեղեցու կառուցման ժամանակ օգտագործուել են Արտաշատի աւերուած շինութիւնների մշակուած ֆաբրը: Տուֆի հետ միասին, կրաֆաբ է շարուել նաեւ XVII դ. վերակառուցուած Խոր Վիրապի եկեղեցու պատերի մէջ:

Ս. Խ. Մնացականեանը գտնում է, որ Ալ-Մուկադասու նկարագրած եկեղեցին

«ութ սիւնների վրայ բարձրացող կենտրոնագմբէթ կառուցուած է, որի արեւելեան արսիդում եղել է Աստուածածնի... խնանկարը, որ այն ունեցել է ռազմանիստ միասնական ծաւալներ (51): Նա, Ալ-Մուկադասու նկարագրութեան հիման վրայ, կատարել է Խոր Վիրապի եկեղեցու վերակազմութիւնը, եւ նշում է, որ այն նախորդել է Զուարթնոցի տաճարին (52):

Խոր Վիրապի Ներսէսաշէն եկեղեցու մասին յիշատակում են նաեւ, Յովհաննէս Դրասխանակերտցին (կթդ. 898-929թթ.)՝ «շինէ տաճար սրբութեան եւ ի վերայ Վիրապի սրբոյն Գրիգորի... (53), եւ Կիրակոս Գանձակեցին (մահացել է 1271թ.): Վերջինս նշում է նաեւ, որ տաճարն աւերել են տանիկները. «շինեաց եւ Վիրապն՝ զտեղիս Սրբոյն Գրիգորի. շինեաց եւ զսուրբն Գրիգոր, զգարմացուցիչն տեսողաց, որ յետոյ աւերեցաւ ի տանկաց» (54):

920-ական թուականներին Խոր Վիրապը դառնում է պատերազմի թատերաբեմ, որտեղ Աբաս թագաւորը եւ Վասպուրականի Գագիկ Արծրունին փայլուն յաղթանակ տարան արաբների (55) դէմ: Բիւզանդական բանակը 1074թ. յաղթեց Դուինի ամիրա Աբու-ալ-Ասվարին եւ գրաւեց Սուրմառիի, Ամբերդի, Խոր Վիրապի ամրոցները (56): Նշանակում է՝ Խոր Վիրապի պարսպները դեռեւս կանգուն են եղել:

Կիրակոս Գանձակեցու վերոյիշեալ վկայութեան համաձայն, Խոր Վիրապի եկեղեցին եւ պարիսպներն աւերուել են տանիկների կողմից: Դա կարող էր տեղի ունենալ 1050-ական թուականներից մինչեւ XII դ. վերջն ընկած ժամանակահատուածում, որովհետեւ XII դարի վերջին եւ XIII դարի սկզբին հայ-վրացական միացեալ զօրքերը Հայաստանն ազատագրեցին թուրք-սելջուկներից, որից

յետոյ այն անցաւ Իվանէ Զաֆարեանի իշխանութեան տակ:

Վերջինիս հրամանով Արարատեան նահանգի առաջնորդ տէր Դաւիթի (57), որի օրոք բեմի կենտրոնը նշանաւոր սրբավայր Խոր Վիրապն էր, Իվանէի աթաբեկութեան տարիներին (1212-1227թթ.) Խոր Վիրապում կառուցում է Կաթողիկէ եկեղեցին եւ վանական համալիրի պարիսպները. «Ըստ հրամանի Ա(ստծոյ) Ժամանակի Աթապակ Իվանէի եւ մեղապարտս Դաւիթ, առաջնորդ Արարատեան նահանգի, շինեցի զսուրբ Կաթողիկէն ի Վիրապին եւ շրջանակի պարսպեցի...» (58):

Խոր Վիրապի ամենավառ շրջանը կապուած է ուսուցչապետ Վարդան Արեւելցու (մահացել է 1271թ.) գործունէութեան հետ, որն այստեղ հիմնում է բարձր տիպի դպրոց՝ Վարդապետարան: Նա Կայենաբերդից Խոր Վիրապ է տեղափոխուում 1257-1258թթ. եւ կրթական աշխատանքի հետ ծաւալում նաեւ մատենագրական բուռն գործունէութիւն (59): Մեծ հայրենասէր, մտածող պատմիչին Գրիգոր Բալուեցին կոչում է «հռչակաւոր իմաստասէր վարդապետն Հայոց Վարդան»: Դպրոցը 1260թ. արդէն մեծ համբաւ էր վայելում եւ համարուում էր «տիեզերահռչակ», որտեղ դասաւանդում էին ոչ միայն աստուածաբանութիւն, այլեւ յունական անտիկ փիլիսոփայութիւն, տրամաբանութիւն, ճարտասանութիւն, քերականութիւն: Խոր Վիրապ սովորելու էին գալիս Հայաստանի եւ Կիլիկիայի տարբեր գաւառներից:

Այստեղ ուսանել են շուրջ 40 աշակերտներ (60), այդ թուում՝ Գլաճորի համալսարանի հիմնադիր, ուսուցչապետ Ներսէս Մշեցին, որը Վարդան Արեւելցու մահից յետոյ փոխարինեց նրան եւ դպրոցը բարձրացրեց նոր աստիճանի, Յովհաննէս Երզնկացին (Պլուզ), Գէորգ

Սկեռացին (Լամբրոնացի), Գրիգոր Բալուեցին, Սարգիսը, Տիրացուն եւ այլոք: Վարդան Արեւելցին 1267թ. այստեղ աւարտել է իր նշանաւոր «Պատմութիւն տիեզերական» կամ «Հաւաքումն պատմութեան» աշխատանքը: Խոր Վիրապում է գրուել նաեւ նրա «Աշխարհացոյց»ը (1268-1270թթ.) եւ Դանիէլի մարգարէութեան «Մեկնութիւն»ը (61): Թէեւ Վարդան Արեւելցու մահից յետոյ Խոր Վիրապի դպրոցի հետագայ գործունէութեան վերաբերեալ տեղեկութիւններ չկան, սակայն մեզ յայտնի է տարբեր ժամանակներում (XIII, XIV, XVI-XVIII դարեր) այնտեղ գրուած 12 ձեռագիր (62):

Հետեւաբար, չնայած ժամանակ առ ժամանակ ծայրաստիճան վատթարացող քաղաքական ու տնտեսական իրավիճակին, մշակութային կեանքը շարունակուել է, եւ Խոր Վիրապը պահպանել իր խոշոր կրօնական ու մշակութային կենտրոնի դերը: Վարդան Արեւելցուն փոխարինում է նրա եղբայր Գրիգորը: Վերջինս մի արձանագրութիւն է թողել Վանստանում 1283թ. եկեղեցին սալարկելու մասին (63): Ուշագրաւ է, որ 1441թ. Հայոց կաթողիկոս է ընտրուում Խոր Վիրապի վարդապետ Կիրակոս Վիրապեցին: Նա այնտեղ էր տեղափոխուել 1409թ.: Այդ ժողովին մասնակցել է նաեւ Խոր Վիրապի վանահայր Անտոնը (64):

Զաֆարիա Ագուլեցու (1630-1691թթ.) օրագրութեան համաձայն, Գրիգոր Լուսաւորչի նետուած վիրապի հորը լցուած, իսկ դրա վրայի եկեղեցին աւերուած ու անքնակ է եղել: Դաւիթ Վիրապեցի վարդապետի հրամանով Զաֆարիայի եղբայր Շմաւոնը 1669թ. մահրում է հորը, որի մէջ քացւում է երկու գերեզման, որոնց տապանաքարերից մէկի վրայ գրուած է լինում Ներսէս

վարդապետ, միւսինը՝ վարդան վարդապետ: Նշում է, որ նրանք 10 տարի տարբերութեամբ են մահացել, եւ մարմինները դեռեւս լաւ պահպանուած են: «Ամենեւին մարմինն փտած չէր» (65):

Դժուար թէ դրանք վարդան Արեւելցունը եւ Ներսէս Տարոնացունը լինեն: Հորը XIII դ. 70-ական թուականներին լցուած չէր, եւ սրբացուած հորում դժուար թէ համարձակուէին թաղումներ կատարել: Դա հաւանաբար եղել է աւելի ուշ, երբ հորը լցուած էր եւ եկեղեցին աւերուած:

Ս. Գրիգոր եկեղեցին ուղղանկիւն, միանաւ, թաղածածկ յօրինուած ունի (66): Հիւսիսային մուտքի (միակ վերելում թողնուած շինարարական արձանագրութեան համաձայն, աշխատանքներն աւարտուել են 1669թ.: Եկեղեցու օծումը տեղի է ունեցել 1670թ. (67): Վերոյիշեալ անիւնները 1672թ. վերաթաղուում են եկեղեցու արեւմտեան հատուածում, ստորերկրեայ դամբարանում (68):

10 տարի անց, 1679թ. Յունիսի 4ի ուժեղ երկրաշարժի ժամանակ, որի էպիկենտրոնը Գառնիում էր, այլ յուշարձանների թուում աւերում է նաեւ Խոր Վիրապի Ս. Աստուածածին եկեղեցին, պարիսպները եւ նրան յարող շինութիւնները (69): Դրանց վերականգնմանը նորից ձեռնամուխ է լինում Դաւիթ Վիրապեցին, որը 1695թ. մահանում է եւ չի հասցնում աւարտել շինարարութիւնը: Նա թաղուում է Ս. Աստուածածին եկեղեցու հիւսիսային կողմում, որտեղ պատին կայ չափածոյ մի արձանագրութիւն (23 տող), ուր Դաւիթ Վիրապեցու գործունէութիւնը շատ բարձր է գնահատուում: Նրա մահից յետոյ կառոյցները, XVIII դ. սկզբին (70), իր աւարտին է հասցնում նոր վանահայր Վարդապետը (71):

Ս. Աստուածածին եկեղեցին դրսից

ուղղանկիւն, ներսից երկու որմնամոյթով գմբէաւոր սրահ է, արեւելեան միակ մուտքի դիմաց կառուցուած զանգակատնով: Արեւելեան պատին, լուսամտից վերել, պատկերուած է Հայոց դարձը ներկայացնող հարթաֆանդակը: Յօրինուածքի աջ կողմում կանգնած է Գրիգոր Լուսաւորիչը, ձախ կողմում գրուած է նրա անունը: Վերջինս մի ֆանի անգամ խոշոր է պատկերուած, ֆան Տրդատը եւ միւս ֆիգուրաները: Դրանով ընդգծուում է կերպարի տարբերութիւնը սովորական մահկանացուներից:

Լուսաւորիչը, Սուրբ Դիրքը ձախ ձեռքին բռնած, աջով օրհնում է եւ դիւահարութիւնից բուժում գետնատարած աղերսող Տրդատ թագաւորին: Ս. Գրիգորի երկու կողմերին մէկական հրեշտակ է պատկերուած: Յօրինուածքի ձախ կողմում երկու ֆիգուրներ են կանգնած, որոնցից մէկը Դաւիթ Վիրապեցին է: Նրանց ոտներից ներքեւ երեք տողանոց արձանագրութիւն է գրուած. «Տր Դաւիթ շինող եւ սպասաւոր Սր Վիրապիս յաղաւթ յիշ»: Հարթաֆանդակի աջ եզրին վերից վար գալարուող օձ է, որը խորհրդանշում է ստորերկրեայ աշխարհը, որտեղ նստուել է Գրիգոր Լուսաւորիչը, եւ օձերի ու կարիճների հարեւանութեամբ, սրբի՝ վիրապում անցկացրած 13-15 տարիները:

Կեանքը Խոր Վիրապում աշխուժանում է նորից Սիմէոն Երեւանցի Կաթողիկոսի օրոք, որը թուարկում է Խոր Վիրապի թեմին հարկատու գիւղերը (72): Յայտնի է Խոր Վիրապում XVIII դ. գրուած մի ֆանի ձեռագիր, որ նշանակում է՝ մշակութային կեանքը շարունակում էր այնտեղ (73):

Խոր Վիրապի նշանաւոր ուխտատեղին ինչպէս միջին դարերում, այնպէս էլ այսօր չի դադարել դէպի իրեն ձգել աշխարհի տարբեր կողմերից եկող

ուխտաւորներին ու ճանապարհորդներին: XVII-XVIII դդ. Խոր Վիրապ ուխտի են եկել եւ վանքին նուիրատուութիւն կատարել ոչ միայն հայերը, այլեւ շրջակայ բնակավայրերի թուրքերն ու քրդերը (74):

Այսպիսով, քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու նախօրէին եւ դրանից յետոյ Արտաշատ մայրաքաղաքն ապրում էր քաղաքական, տնտեսական ու մշակութային աշխոյժ կեանքով: Մայրաքաղաքը թէեւ 484թ. Արտաշատից տեղափոխուեց Դուին, սակայն Խոր Վիրապը դարձաւ Արարատեան թմի կենտրոնը, եւ իբրեւ նշանաւոր սրբավայր, եւ ուխտատեղի շարունակում է իր գործունէութիւնը:

Քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելը շրջադարձային, դարակազմիկ նշանակութիւն ունեցաւ ոչ միայն հայ ժողովրդի կեանքում, այլեւ համաշխարհային պատմութեան համար: Քրիստոնէութեան հումանիստական բարձր գաղափարներն առաջինն

ընդունուեց ու խրախուսուեց հայկական թագաւորութեան կողմից: Դրանով իսկ Հայաստանում սկիզբ դրուեց նոր հոգեւոր զարթոնքի: Ճիշտ ընկալուեց գիտութեան ու մշակոյթի դերն ու նշանակութիւնը ազգային ոգու ինքնութեան հաստատման կարեւոր գործում: Եկեղեցիները դարձան նաեւ դպրութեան ու գրչութեան կենտրոններ: Հոգեւոր աննախադէպ վերելքը նպաստեց կրօնի, կրթութեան, արուեստի, գիտութեան, գրականութեան բնագաւառում անանց արժէքների երեւան գալուն: Ստեղծեցին նարտարապետական, պատմագրական, փիլիսոփայական եւ այլ ամմահ ստեղծագործութիւններ, որոնք հարստացրեցին համաքրիստոնէական մշակոյթի գանձարանը: Պետականութեան բացակայութեան պայմաններում ժողովուրդն ապաւինեց եկեղեցուն, որը դարձաւ համազգային շահերի արտայայտողն ու պաշտպանը:

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐԻԱՆ

¹ Ժ. Դ. Խաչատրյան, Ամահիտ դիցուհու պաշտամունքն ու պատկերագրությունը Հայաստանում և Երաւա-դերները հելլենիստական աշխարհի հետ, Պատմա-Բանասիրական Հանդես (ՊԲՀ), 1985, N 1, էջ 132:

² М. Н. Кудрянов. Возникновение христианства, Эпоха, идеи, искания. Москва, 1974, с. 51; Г. А. Кошелев. Фридрих Энгельс и проблемы изучения раннего христианства. Вестник древней истории (ВДИ), 1970, N 4, с. 33; Плутарх, Об Исида и Осирисе. LXVII, ВДИ, 1977, N 4 (пер. Н. Н. Трухановского).

³ Н. А. Кун, Предшественники Христианства (восточные культы в Римской империи), Москва, 1922, с. 112-113.

⁴ Դիոն Կասիոս, գիրք 63, գլ. 5 (թարգմ. Ս. Մ Կրկաշարյանի), Երևան, 1976:

⁵ Н. А. Кун, Там же.

⁶ Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց (Քննական բնագիրը՝ Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի), Երևան, 1983, § 53, էջ 40:

⁷ Թ. Ավդալբեգյան, Միհրը հայոց մեջ, «Հայագիտական հետազոտություններ», Երևան, 1969, էջ 13-29:

⁸ И. А. Орбели, Армянский героический эпос, Ереван, 1956, с. 120-127; Թ. Ավդալբեգյան, Գլ. աշխ. էջ 43:

⁹ Կ. Մելիք-Օհանջանյան, Միթրա-Միհրը Սասնա Մոռի մեջ. «Գրական-բանասիրական հետախուզումներ», գիրք Ա, Երևան, 1948, էջ 305-306; Ժ.Դ. Խաչատրյան, Իրանա-հայկական դիցաբանական աղերսների հարցի շուրջ, ՀՍՍՀ ԳԱ, Լրաբեր Հասարակական Գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ), 1981, N 2, էջ 54-73:

¹⁰ Մ. Օրմանեան, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1913, էջ 20-35:

¹¹ Ե. Տեր-Մինասեան, Հայոց եկեղեցու յարաբերությունները ասորոց եկեղեցիների հետ, Ս.Էջմիածին, 1908, էջ 1-62; Լրաչ Բարթիկյան, Քրիստոնէությունը Փոքր Հայքում. ազգային կրոնական և սոցիալ քաղաքական իրավիճակը նահանգում III դ. II կեսին (ըստ IV դ. Սրբոց վկայաբանության), ՊԲՀ, 2001, N 2, էջ 3-43:

¹² Նույն տեղում, էջ 32:

¹³ Նույն տեղում, էջ 38:

¹⁴ Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց (աշխատ.՝ Մ. Աբեղեան եւ Ս. Թարությունեան), Տփղիս, 1913, գիրք Բ, ՀԷ, էջ 216:

¹⁵ Կ. Միրումյան, Քրիստոնությունը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, «Հայոց Եկեղեցի և պետություն», Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2000, էջ 16:

¹⁶ Ազաթանգեղոս, § 782:

¹⁷ Հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Երևան, 1979, էջ 86:

¹⁸ И. А. Кун, Ук. соч., с. 58, 147, 152, А. Б. Равнович. О раннем христианстве. Москва, 1959, с. 72-73; Մ. Ն. Բոտվիննիկ, Մ. Ա. Կոզան, Մ. Բ. Ռաբինովիչ, Բ. Պ. Սելեցկի, Դիցաբանական բառարան, Երևան, 1985, էջ 31; Գր. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1945, էջ 61:

¹⁹ Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, աշխատասիրությամբ Ա. Ա. Մաթևոսյանի, Երևան, 1994, էջ 91-92:

²⁰ Ն. Աղոմց, Հայացած Աստվածաշունչը և ամոր պատմական տարրությունը, ՊԲՀ, 2002, N 3, էջ 4:

²¹ Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 61-62: Ն. Աղոմց, Հին հայոց աշխարհայացքը, «Պատմական ուսումնասիրություններ», Փարիզ, 1948, էջ 223-293:

²² Ազաթանգեղոս, § 251, էջ 138:

²³ Գր. Ղափանցյան, նույն տեղում:

²⁴ Ազաթանգեղոս, § 136, VI բլրի վրա:

²⁵ Ազաթանգեղոս, § 841:

²⁶ Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. ԶԶ:

²⁷ Փավստոսի Բիզանդացու Պատմություն Հայոց, Երևան, 1987, Երրորդ դպրություն, գլ. ԺԲ, էջ 50:

²⁸ Երվ. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., էջ 25, ծան. 1:

²⁹ Հ. Ֆ. Լինչ, Հայաստան, Ուղևորություններ և ուսումնասիրություններ, Պոլիս, 1913, էջ 189-250: Վրթանեսի մահից հետո Հուսիկը բարձրացավ հայրապետական գահ, և արարողությունը կատարվեց Արտաշատում:

³⁰ Փավստոս Բուզանդ, Հինգերորդ դպրություն, գլ. Ա:

³¹ Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանի անտիկ շրջանի պաշտպանական կառույցները, ՊԲՀ, 1987, N 4, էջ 167-168:

³² Հայ ժողովրդի պատմություն, հ. II, էջ 102:

³³ Ազաթանգեղոս, § 78:

³⁴ Նույն տեղում, § 841:

³⁵ Նույն տեղում, § 71:

³⁶ Հ. Պետրոսյան, Խաչելիության ազգային ընկալումն ու պատկերագրությունը վաղմիջնադարյան Հայաստանում, «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը», Երևան, 2000, էջ 189:

³⁷ Նույն տեղում:

³⁸ Մովսես Խորենացի, գիրք Բ, գլ. ԶԶ:

³⁹ Փավստոս Բուզանդ, 3-րդ դպրություն, գլ. Գ, էջ 51:

⁴⁰ Ազաթանգեղոս, § 80, էջ 54, տե՛ս նաև §§ 82, 83, 747, 749, 751, 769:

⁴¹ Н. М. Токарский, Джрвеж, II, Вохджаберд, Ереван, 1964, рис. 16, 24; Դարթի Ամյաղթ փիլիսոփայի ներբողեան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ՝ «Դարթի Ամյաղթ փիլիսոփայի մատենագրությունք եւ թուղթ Գիտալ Կաթողիկոսի առ Դարթի», Վենետիկ, 1932, էջ 18; Հ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 190-192:

⁴² Ազաթանգեղոս, § 770, էջ 432:

⁴³ Ս. Խ. Մնացականյան, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, էջ 18:

⁴⁴ Եղիշե, էջ 64, 73, 117:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Լ. Եսայան, Ստորագրություն կաթողիկե Ս. Էջմիածնի և հինգ գաղաղացի Արարատայ, հ. II, էջ-միածին, 1842, էջ 278; Մ. Հասարթյան, Հայոց դարձի նախակիրք սրբավայր խոր Վիրապի վանքը, «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001, էջ 184:

⁴⁷ Վարք եւ վկայաբանությունը սրբոց. հատընտիր քաղեալք ի ճաղընտրաց. Հ I-II, Վենետիկ, 1874, էջ 125; Ստեփանոսի Տարոնեցու Ասողկան Պատմություն տիեզերական, Ս.Պետրբուրգ, 1885, էջ 84; ՀԺՊ, հտ. II, էջ 250-257:

⁴⁸ ՀԺՊ, հտ. II, էջ 322:

⁴⁹ Ասողիկ, ԳՂ.աշխ., էջ 80:

⁵⁰ Караулов, Сведения арабских писателей, Сборник материалов по описанию местностей и племен Кавказа, вып. XXXVIII, Тифлис, 1908, էջ 16: Հայերեն թարգմանությունը վերցված է Ս. Խ. Մնացականյան, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, էջ 18-19:

⁵¹ Նույն տեղում, էջ 20:

⁵² Նույն տեղում, էջ 110, 222, գծ. 52:

⁵³ Թովհանուր Կաթողիկոսի Դրասխանակերտցու Պատմություն Հայոց, Երևան, 1996, էջ 86:

⁵⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 61:

⁵⁵ Թովմայի վրդ. Արծրունու Պատմություն տանն Արծրունեաց, Տփլիս, 1917, էջ 299-302; ՀԺՊ, հտ. III, Երևան, 1976, էջ 63:

⁵⁶ Georgius Cedrenus, Historiarum compendium, Bonnae, II, 1839, p. 561; ՀԺՊ, հտ. III, էջ 430:

⁵⁷ Տեր Դավիթը Վանատանի վանքի հիմնադիրն էր և վանահայրը:

⁵⁸ Ashk. Kalantar, The Mediaeval Inscriptions of Vanstan, Armenia, Neuchâtel- Paris. 1999, p. 12-13.

⁵⁹ Փ. Անթապյան, Վարդան Արևելցի, հ. Ա, Երևան, 1987, էջ 40-41; Կ. Մաթևոսյան, խոր Վիրապի վանքը և նրա գրչության կենտրոնը, «Էջմիածին», 1997, հմր. Բ-Գ, էջ 175:

⁶⁰ Լ. Մանանդյան, Լ. Աճառյան, Հայոց նոր վկաներ, Վաղարշապատ, 1903, էջ 105:

⁶¹ Փ. Անթապյան, ԳՂ. աշխ., էջ 40-41:

⁶² Այդ մասին մեզ հայտնել է Մատենադարանի ճամաչված ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանը: Տե՛ս նաև Կ. Մաթևոսյան, ԳՂ. աշխ., էջ 174-178:

⁶³ Ashk. Kalantar, ԳՂ. աշխ., էջ 20-21; Լ. Ս. Մելքոնյան, Գ. Գ. Սարգսյան, Վանատանի վանքը, Հայագիտական հանդես, N 2, Երևան, 1999, էջ 123:

⁶⁴ Թովմա Մեծոփեցու Հիշատակարանը, հրատարակեց իր առաջաբանով Կ. Կոստանյանց, Թիֆլիս, 1892, էջ 52, 54; Կ. Մաթևոսյան, ԳՂ. աշխ., էջ 177:

⁶⁵ Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը, Երևան, 1938, § 42, էջ 81:

⁶⁶ Ստ. Խ. Մնացականյան, ԳՂ. աշխ., էջ 20:

⁶⁷ Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը, էջ 81-83:

⁶⁸ Նույն տեղում; Մ. Հասարթյան, ԳՂ. աշխ., էջ 188:

⁶⁹ Զաքարիա Սարկավագի Պատմություն, Վաղարշապատ, հտ. II, 1870, էջ 104:

⁷⁰ Մ. Հասարթյան, ԳՂ. աշխ., էջ 189:

⁷¹ Կ. Մաթևոսյան, ԳՂ. աշխ., էջ 178:

⁷² Սիմեոն Երեւանցի, Զամբո, Վաղարշապատ, 1873, էջ 280:

⁷³ Կ. Մաթևոսյան, ԳՂ. աշխ., էջ 178:

⁷⁴ Լ. Ս. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. II, գիրք Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1904, էջ 205-206:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՀԱՅՈՑ ԳԻՐԵՐԸ

"L'alphabet armenien est un chef-d'oeuvre."

«Հայ այբուբենը գլուխ-գործոց մըն է»:

Antoine Meillet

«Քանի կը մնայ Հայուն փարումը
հանդէպ իմացական եւ ոգեկան
արժէքներուն, ապագան ապահովուած
պէտք է նկատել»:

Շահան Շահնուր

Մեսրոպաստեղծ հայոց այբու-
բենը՝ 1600 տարիներու տողանցով
մեզի հասած մեծագոյն պարգեւը, որուն
շնորհիւ հայ ժողովուրդը ստացաւ իր
ինքնուրոյն դիմագիծը եւ ապահովեց
իր դարերու գոյապահպանումը,
հանդիսացաւ ոսկեդարի թագն ու պսակը:

Հայ ազգը բախտաւորներու
շարքին պէտք է դասել վասն զի
վաղագոյն դարերէն ան օժտուեցաւ
հարազատ գիրեր ունենալու սեփական
պատեհութեամբ: Հայ դպրութեան
սկզբնաւորութեամբ, ողջ հայութիւնը
ֆրիստոնէական դաստիարակութիւն
ստանալով, ճանչցաւ իր հոգեւոր ու
բարոյական արժէքները:

Ե. դարը, որ մեր պատմութեան
մէջ իրաւամբ կոչուած է Ոսկեդար, եւ
որուն շրջանին իրագործուեցան մեծ
ծրագիրներ, կ'ապրէր փառափառ
խառն ու բախտորոշ ժամանակաշրջան,
վասն զի Հայաստանը երկփեղկուած,
կը հեծէր ու կը կէր օտար
տիրապետութեանց ներքոյ: Օտարի
լուծը արդարեւ ծանր էր ու անտանելի:

Հայաստանը բաժնուած էր երկու
մասի՝ արեւելեան եւ արեւմտեան: Անոր
արեւելեան մասը պարսկական գերիշխա-
նութեան ու հզօր ազդեցութեան տակ
էր: Բանաւոր խօսքի մէջ պարսկերէնը

տիրապետող լեզու էր: Արժունական
գրագրութիւնը եւս պարսկերէն էր:
Անդին, Հայաստանի արեւմտեան մասը
ինկած էր Բիւզնդիայի տակ, ուր
յունական ազդեցութիւնը ամենուրեք
զգալի էր: Եկեղեցւոյ եւ պետական
լեզուն յունարէնն էր: Հայ եկեղեցին
յունական եպիսկոպոսութեան ենթակայ
էր: Այսպիսով, Հայաստանի երկու
հատուածները հետզհետէ կը հեռանային
իրարմէ եւ կ'օտարանային եւ առ ի
հետեւանս այդ ընթացքին, հայութեան
ձուլումը ի մէջ այլ ազգերու կ'արագնար:

Վերջնականապէս թօթափելու
համար այն ծանր լուծը որուն տակ
հետզհետէ կը տառապէր ու կ'ընկնուէր
հայոց եկեղեցին, մէկ կողմէ պարսիկ
իշխանութեան ու կռապաշտութեան
ներքոյ, իսկ միւս կողմէ ասորական
լեզուի ու եկեղեցւոյ իշխանութեան
ներքեւ, հարկ էր ունենալ հայերէն գիր
ու դպրութիւն: Այդ աւելորդ ճնշումէն
մէկընդմիջտ ձերբազատելու համար
վրացիք եւ աղուանք, Մեսրոպ կը հոգայ
նաեւ անոնց այբուբենը՝ միացեալ զօրեղ
նական ստեղծելով ընդդէմ
պարսիկներու եւ ասորիներու:
Արեւմտեան Հայաստանի մէջ տիրող
լեզուն յունարէնն էր: Յոյները կը
ջանային իրենց գերիշխանութեան տակ

պահել Հայաստանի այդ մասը եւ Հայ եկեղեցին: Քաղաքական այս քաժանումը Հայաստանի երկու հատուածներու միջեւ պատճառ եղած էր որ Հայ եկեղեցին կորսնցներ իր ներքին միութիւնը եւ մնար կտրուած ու անջատ: Մաշտոց եւ իր համախոհ գործակիցները այս ահաւոր կացութիւնը նկատի ունենալով կը յանգին այն եզրակացութեան, որ միակ զէնքը որ կարելի է ազդեցիկօրէն գործածել բռնատէր ռոսիին դէմ՝ գիրն է ու դպրութիւնը:

Երկու ժողովրդահատուածները ի մի բերելու, զանոնք գիրով ու դպրութեամբ հայացնելու եւ քրիստոնէական գրականութեամբ ներշնչելու եւ առաջնորդելու համար խիստ կարիք կը զգացուէր կրթեալ ու նուիրեալ մշակի մը, որ դառնար լուսատու փարոս եւ ռահվիրայ՝ համայն հայ ժողովուրդին: Յանձին Մեծն Մաշտոցի, որ Տարօնի Հացեկաց գիւղէն էր, հայ ժողովուրդը ի վիճակի դարձաւ իր միտքը բանալու գիտութեան լոյսին, զայն մշակելու, զարգացնելու, ուճացնելու եւ ընթանալու լուսաւոր ճանապարհով:

Մասնաւորելով կարեւորութիւնը նման գիտակից ու անձնորդ անհատի մը, Գուրգէն Սեւակ շատ գեղեցիկ կերպով կը գրէ. «Փոթորկալից ու օրհասական չորրորդ դարը պէտք է գտնէր ժամանակի բոլոր կնճռոտ հարցերի ելքը, պէտք է ծնէր մի այնպիսի համապարփակ հանճար, որը կարողանար մարմնաւորել ժողովրդի, հայրենիքի, պետութեան եւ եկեղեցու բոլոր հոգեւոր ուժերը, միաւորէր նրանց եւ դնէր նպատակասլաց անսայթափ հունի մէջ: Եւ նա ծնուեց՝ ժամանակի մեծագոյն մարդը, հայ հանճարի անկրկնելի դրսեւորումը՝ տարօնցի

Մեսրոպ Մաշտոցը»:

Մաշտոց զարգացած անձնաւորութիւն էր եւ յատկապէս՝ յունական դպրութեան քաջատեղեակ: Ան կը տիրապետէր կարգ մը լեզուներ, ինչպէս՝ յունարէն, ասորերէն, պարսկերէն, վրացերէն: Ղազար Փարպեցի իր մասին կը վկայէ հետեւեալը. «Ի տիս մանկութեան իւրոյ ուսեալ դպրութիւն զյոյն»: Իբրեւ քարտուղար եւ ապա իբրեւ զինուորական ծառայելէ ետք, Մեսրոպ «մերկանայր այնուհետեւ զիշխանակիր ցանկութիւնսն, եւ առեալ զխաչն պարծանաց՝ ելանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն»: Այնուհետեւ անոր առջեւ կը բացուի հոգեւոր ասպարէզ եւ կ'ուղարկուի Գողթն գաւառը եւ ապա Սիւնիք՝ քրիստոնէութիւն քարոզելու:

Ե. դարու մեծ իմաստասէր Եզնիկ Կողբացի շատ խոհեմօրէն կը գրէ. «Կարճամիտք ի փոքունց կ'ընկնուին: Մեսրոպ իբրեւ երկայնամիտ (իմա համբերատար) առաջնորդ, մտատանջութեանց ենթարկուեցաւ, ցմրուր ճաշակեց դառնութեան ու վշտի քաժակը, բայց երբեք չվհատեցաւ:

Կռապաշտութենէ դէպի քրիստոնէութիւն դարձի հրատապ հարց մը կար որ հարկ էր գլուխ հանել կարելի փութով: Մեսրոպի հիմնական դրդապատճառը գիրեր ստեղծելու՝ լուսաւորել էր հայոց աշխարհը Աւետարանի լոյսով եւ բարձրացնել անոր իմացական մակարդակը: Հայ գիրերու ու դպրութեան պակասի պատճառով, հայ մտղաշ սերունդի զաւակները իրենց հայեացքները կ'ուղղէին օտար ուսումնական կեդրոններու վրայ: Մեսրոպ «յարաժամ տրտմէր», կը գրէ Կորիւն, երբ կը տեսնէր որ որոշ երիտասարդներ իրենց ուսման համար կը դիմէին օտար՝

ասորական ու յունական դպրոցները:

Մեսրոպ Մաշտոց՝ *ակումիտ վարդապետը Հայկազեան ազգի, առաջինը եղաւ աղօթքով, ծումապահութեամբ ու տփնաշանութեամբ, հիմք դնելու հայ գրականութեան ու ծաղկման: Սուրբին կենսագիրը՝ Կորիւն, որ Մեսրոպի կրտսերագոյն աշակերտն էր, իր «Վարժ Մաշտոցի» աշխատութեան մէջ կը նկարագրէ թէ Մաշտոց ինչպիսի «սրտմական հոգով՝ պաշարեալ եւ թակարդապատեալ եւ անկեալ ի ծուփս խորհրդոց, եթէ որպիսի արդեօք ելս իրացն գտանիցէ», որ է ըսել՝ «տխուր հոգերով պաշարուած, թակարդուած եւ խորհուրդներու ծփանքին մէջ ինկած էր, թէ ինչպէս կրնար ելք մը գտնել այդ րանին»: Այս ճարահատ ելքը յոյժ կենսական էր, վասն զի հայ ազգը իր այդ կացութեամբ դատապարտուած էր ամլութեան ու ձուլման: Ահա այս պատճառով, ուսուցչապետն հայոց եռանդով ու խնադավառութեամբ փարած էր իր սիրելի գործին՝ գիրերու գիւտին՝ քաջ գիտակցելով որ հայ ազգային կեանքի գոյատեւումը անմիջականօրէն կապուած է բնիկ ու սեփական գիրերու գիւտին հետ:

Մեսրոպ Մաշտոցի հիմնական նպատակը հայ գիրերը ստեղծելու, կը կայանար քրիստոնէութիւնը հայ գիրքերով տարածելու եւ ամրացնելու մէջ: Հայապահպանումը՝ յաւերժական դպրութեան ճանապարհով եւ Հայաստանի երկու հատուածներու միասնութիւնը ամրացնելը, նուազ կարեւորութիւն չէր ընծայեր Մաշտոցին:

Ս. Ղ. Ղազարեան կը գրէ որ գիրը եթէ չըլլար, «չէր ստեղծուի

ժողովուրդների պատմութիւնը, չէր զարգանայ հասարակութեան գոյութեան ու առաջընթացի հիմնական գործիքը՝ լեզուն...: Մարդը գիտակցել է գրի անգերազանցելի ուժը եւ աշխատել է տիրապետել նրա գաղտնիքներին»:

Դարերու ընթացքին, հայ ժողովուրդը իր ինքնագոյութեան համար, դիմած է ամէն կարելի միջոցի. մերթ սուրը ձեռքին խիզախաբար կռուած ոսոխին դէմ, մերթ լծուած ծանր աշխատանքի՝ արօտավայրերը հերկելով, մշակելով, ծաղկեցնելով եւ մերթ ալ դիմած իր մշակոյթի հզօրացման: Հայոց գիրերը պիտի գային քրիստոնէական կրօնի հաստատման, ինչպէս նաեւ մաքառման՝ ընդդէմ հեթանոսութեան:

Կորիւնի յիշատակութենէն յայտնի կ'ըլլայ որ Մաշտոց գիրեր ստեղծեց նաեւ վրաց ու աֆղան ժողովուրդներուն համար: Հայկական գիրերը ստեղծուեցան Եդեսիոյ մէջ, իսկ վրացական գիրերը՝ Արեւելեան Հայաստանի մէջ: Բուն Աղուանք կը գտնուէր Կուր գետի ձախ ափին: Բենիամին երէցի օգնութեամբ, Մեսրոպ ստեղծեց Գարգարացիներու լեզուի համար գիրեր: Մանուկ Արեղեան կը գրէ. «Մաշտոցը, հանդէս է գալիս իբրեւ անսպառ եռանդի տէր, շնորհալի եւ ազդեցիկ տղամարդ, որ մտածում եւ հոգում է ամբողջ հայութեան, այլեւ հարեւան ժողովուրդների համար»: Այս ժրջան ու լուսամիտ եկեղեցականը իմաստութիւնը ունեցաւ Ե. դարու սկիզբը լուսաւորելու Հայոց Աշխարհը իմացական անշէջ լոյսով: Այս լոյսէն շող մըն ալ մեզի կը հասնի այդ փառաւոր դարէն, վասն զի գիրերու գիւտը լայն

*«Ակումիտ» յունարէն բառ է, որ կը նշանակէ արթուն, հսկող, անփութ, տփնող: Այս մակդիրը շնորհուած է Մ. Մաշտոցին Թէոդոս Փոփր Կայսրին կողմէ:

հնարաւորութիւն ընձեռեց հայ մտաւորական դասին զարկ տալու թարգմանական անվերջ աշխատանքին: Նուիրեալ մշակներու հոյլ մը թարգմանեց Աստուածաշունչը, կրօնական գիրքեր եւ այլ անթիւ գրական կոթողներ: Պարզապէս ապշեցուցիչ է այն աշխատանքը որ կատարուած է Ե. դարու սկիզբը՝ շնորհիւ հայ գիրքերու գիւտին:

Այբուբենով վերստին մկրտուեցաւ եւ քրիստոնէացաւ հայ ազգը ու օժտուեցաւ դպրութեամբ: Չկայ ազգ առանց մշակոյթի: Հայ մարգարտեայ գիրքերը լիցեաւորեցին ու քարեգարդեցին մեր գրական կեանքը, հարստացուցին մեր ինքնութիւնը, արդարացուցին մեր լինելութեան նպատակը աշխարհի վրայ եւ զմեզ դասեցին ի շարս քաղաքակիրթ ազգերուն:

Ազգերու ու լեզուներու պատմութենէն մեզի ծանօթ է որ կան լեզուներ որ չունին իրենց սեփական այբուբենը, հետեւաբար եւ՝ փոխառութեան ճանապարհով կը գործածեն արաբական կամ լատինական տառեր: Անտարակոյս, այդ օտար գիրքերը չեն համապատասխաներ տուեալ լեզուի հնչիւնաբանութեան եւ հարկադրաբար կը կիրարկեն յաւելանշումներ (Ֆր. *Signe diacritique*) կամ հնչիւնատարբերիչ նշաններ որպէս զի յստակօրէն կարենան արտաբերել բոլոր հնչիւններն ու հնչոյթները: Նոյնը պատահեցաւ նաեւ Մեսրոպ Մաշտոցին, երբ ոմն ասորի Դանիէլ եպիսկոպոս իրեն մատուցեց «հայերէն» գիրքեր եւ Սուրբ փորձեց զանոնք որոշ ժամանակ մանուկներու վրայ, սակայն ի զուր, վասն զի այդ գիրքերը չէին համապատասխաներ հայ լեզուի հնչիւնաբանական օրէնքներուն եւ անբաւարար կը նկատուէին լրացներու լեզուական բոլոր պահանջները: Կորիւն

կը նշէ որ այդ նշանագիրքերը «ուրիշ դպրութիւններէ քաղուած եւ յարուցուած էին»: Ցաւօք սրտի, Կորիւն չի յայտնեւ աւելին. չի նշեր թէ ո՞ր ազգի տառերն էին անոնք: Այդ պատճառով, քաղուած են թարգմանութիւններ կատարուած են հայագիտութեան մէջ անոնց ծագման պատկանելիութեան ուղղութեամբ, ինչպէս՝ սեմական, յունական, պարսկական եւն: Դանիէլեան գիրքերու ուսուցման ձախող փորձէն ետք, երանելին դիմած է սեփական գիրքերու ստեղծման՝ սերտելով զանազան լեզուներու այբուբեններ: Մաշտոց վստահաբար ուսումնասիրեց տարբեր ազգերու գիրքերը եւ ստուգեց անոնց հնչիւնական համապատասխանութիւնը հայոց լեզուի հետ: Այս ամբողջը քարեխղճօրէն ու քծախնդրօրէն կատարել է ետք, յանգեցաւ այն ճիշդ եզրակացութեան, որ հայերէնը կարիք ունի իր սեփական գիրքերուն, որպէս զի ճշդագոյն կարենայ արտայայտել բոլոր առանձնայատկութիւնները:

Մէկընդմիջտ յստակ պէտք է ըլլայ որ Մաշտոց չէ ստեղծած աւելորդ գիրքեր: Մեսրոպ որդեգրած է «մէկ հնչիւնին՝ մէկ գիր, մէկ գիրին՝ մէկ հնչիւն» սկզբունքը: Իւրաքանչիւր գիրի եւ հնչիւնի միջեւ եղած է կատարեալ համապատասխանութիւն: Արեւելահայերէնի ներկայ եռահնչիւն համակարգը (բ,պ,փ/գ,կ,ֆ/դ,թ,տ/ծ,ձ,ց/չ,ջ,ն) ճշգրիտօրէն ու լիովին կը համապատասխանէ Ե. դարու գրաբարի հնչիւնական համակարգին, որտեղ կը գտնենք հարազատ արտացոլում մեսրոպաստեղծ գիրքերու հնչիւններուն: Այբուբեն ստեղծելու նախապայմանը կը կայանայ տուեալ լեզուի բովանդակ հնչիւններու եւ հնչոյթներու մանրագնին սերտողութեան ու ֆննդութեան մէջ: Մեծահանճար Մաշտոց այդ էր որ կատարեց

յաջողապէս: Անոր քծախնդիր հոգատարութիւնը եւ հմտութիւնը մեծ դեր խաղցաւ գիրքերու գիտին մէջ:

Մեսրոպ Մաշտոց եղաւ նաեւ դասական հայերէնի ուղղագրական կանոններու հիմնադիրը: Ան առաջնորդուեցաւ լեզուի հնչիւնական սկզբունքով: Ի պատիւ հայոց առաջին լեզուաբանին՝ Մեսրոպ Մաշտոցին, հայ գիրքը եւ ուղղագրութիւնը կոչուեցան՝ Մեսրոպեան գիրքը կամ այբուբէն եւ Մեսրոպեան ուղղագրութիւն:

Մեսրոպեան կամ Դասական ուղղագրութիւնը Հայաստանի Խորհրդանշանաւորութիւնը կրեց մեծ փոփոխութիւններ: Յայտնի է որ 1922 թուին, պաշտօնապէս ընդունուեցաւ Մանուկ Աբեղեանի մշակած ուղղագրական նոր կանոնները: Այդ լեզուական-ուղղագրական «բարեփոխութիւնները» աղմատեցին լեզուն ու խաթարեցին անոր իսկական ու հարազատ պատկերը: 1939 թուին, վերանայման ենթարկուեցան որոշ օրէնքներ ու վերականգնուեցան որոշ գիրքեր: Միով բանիւ, պատասխանատու անձնաւորութիւններ գործեցին անպատասխանատու արարքներ, որոնց վնասները ցարդ կը կրենք մամէնքս: Այդ հիմնական, կամայական ու անբխիժ փոփոխութեանց բացարձակապէս չհետեւեցաւ արեւմտահայը: Ան հաւատարիմ մնաց բուն Մեսրոպեան ուղղագրութեան:

Հայ գիրքերու գիւտի կատարելիութեան անդրադառնալով Ֆրանսացի մեծ լեզուաբան ու հայագէտ՝ Անթուան Մէյէ, կը գրէ. «Հայ հնչարանութեան հնչիւններէն իւրաքանչիւրը յատուկ նշանով մը արձանագրուած է, եւ սիստեմը այնքան լաւ հաստատուած է, որ հայ ազգին հայթայթած է հնչարանութեան վերջնական արտայայտութիւն մը, որ

պահպանուած է մինչեւ այսօր անփոփոխ, առանց բարելաման կարիք ունենալու, վասն զի սկիզբէն իսկ ան կատարեալ էր»:

Գիրքերու գիւտը հայ ազգի համար եղաւ խիստ անկիւնադարձային: Հայը ինքզինքն գտաւ զարգացման երկար ուղիի վրայ ուրկէ հաւատարմօրէն ընթացաւ անվերջ դարեր: Հայ գիրքերու գիւտը եզակի երեւոյթ է հայ իրականութենէն ներս. ան մեզի տուաւ հարազատ ինքնութիւն, իւրայատուկ մտածելածն ու գործելակերպ, ինչպէս նաեւ՝ ինքնուրոյն հոգեբանութիւն ու նրբազգացողութիւն: Գիրն է որ կը մշակէ ու կը պայծառակերպէ ողջ ազգը: Ինքնաշարժութիւն գրի ու գրականութեան միջոցաւ ազգեր կ'արտայայտեն իրենց մտածումները, խոհերը, հոգեկան ապրումները, յոյզերը, տենչերը, իղծերը, պահանջները, երազները: Մեծն Մեսրոպ յոյժ զգաց կարեւորութիւնը գրի ստեղծման եւ այդ պատճառով չյուսահատեցաւ եւ չվհատեցաւ ի դիմաց բիւրաւոր խոչընդոտներու: Գուրգէն Սեւակ պիտի ըսէր, Մեսրոպ Մաշտոց «գիւնեց ժողովրդին ազգային գրի ու դպրութեան անխորտակ վահանով»: Բազում դարերու զօրեղ հոսանքներուն դիմաց հայ գիրը եղաւ հայուն գրահը, պաշտպանը, «անխորտակ վահանը»:

Հայ գիրն ու գրականութիւնը առաջին հերթին կը ներթափանցէ Մաշտոցի կողմէ հաստատուած Գողթնի ու Սիւնիքի վանքերուն մէջ, ուր կը սկսի մայրենի լեզուի դասընթացքը հայ հարազատ գիրքերով: Հայ գիրքերու մուտքով ի վերջոյ կը վտարուին յունարէնն ու ասորերէնը եւ հայ դպրութիւնը կը սկսի հասակ առնել ու ծաղկիլ: Գրի անհրաժեշտութիւնը ամէնէն շատ զգալի էր վանականին համար, որովհետեւ ան

կը զրադէր գրագիտութեամբ ու թարգմանական աշխատանքով, իսկ եկեղեցին կարիք կը զգար հայ գիրին որովհետեւ ժողովուրդը չէր հասկնար օտար լեզուով կարդացուած աղօթքները եւ կատարուած արարողութիւնները: Անդրադառնալով այս կարեւոր երեւոյթին Մանուկ Աբեղեան կը գրէ. «Վանքերն ազգայնանում են եւ դառնում են հայկական դպրոցներ, ուր պատրաստում էին հայերէն լեզուով գրագէտներ ու քարոզիչներ եւ գրիչներ, այսինքն արտագրողներ»: Այսպիսով, կը հայանան վանքեր, դպրոցներ, մատենաներ: Նոր սերունդը կը դաստիարակուի հայկական ոգիով: Նոր տարազ ու իմաստ կը զգենու հայեցի կրթութիւն հասկացողութիւնը:

Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1600 ամեակի առիթով, Վիքթօր Համբարձումեան անդրադառնալով Սուրբին մատուցած անգնահատելի ծառայութեան, ըսած է. «Մեր մշակոյթի պատմութիւնը տուել է բազմաթիւ կարկառուն դէմքեր, սակայն բոլոր այդ գործիչներից հայ ժողովուրդը ամէնից շատ պարտական է Տարօն գաւառի Հացեկաց գիւղի գեղջուկ Վարդանի որդի Մաշտոցին: Այն աշխատանքը, այն չարչարանքները, որ, ինչպէս ասում է աւանդութիւնը, կրել է նա իր մեծ գիւտի համար՝ յիրաւի տիտանական են: Նրա գիւտը հսկայական դեր խաղաց մեր ժողովուրդի միասնութեան, ինքնուրոյնութեան պահպանման համար»:

Հարիւր տարի առաջ, արեւմտահայ փայլուն գրագէտ՝ Գրիգոր Զօհրապ, իր մէկ ճառին մէջ խօսելով հայ գրի գերազանցութեան մասին, կը նշէ հետեւեալը. «1500 տարի ետքը այսօր մեր այրուքէն ունէ պակասութիւն չի կրեր: Եթէ բոլոր օտար լեզուները

արտասանելու մէջ հեշտութիւն ունինք, ատիկա մեր այրուքէնին ճոխութեան կը պարտինք... Մեր եկեղեցին տառերու գիւտը ընողները սուրբերու կարգը անցուց: Ի՞նչ է սրբութիւնը: Միթէ եկեղեցիներու եւ վանքերու մէջ առանձնանալ, ծով՝ պահել, ոչ ոքի չարութիւն չընել, կը բաւե՞ն սրբութեան համար: Ոչ: Սրբութիւնը ան է որ մարդ ուրիշներուն ցաւերը կ'ամոքէ եւ իր անձը մոռանալով անոնց համար կ'աշխատի»: Մաշտոց սրբացաւ իր անձուրաց ծառայութեամբ՝ հայ ազգին օգնութեան փութալով նակատագրական պահի մը:

Հասկնալի պատճառներով, տասնեակ տարիներով «Թարգմանչաց Օր»ը կը տօնախմբուէր հայ եկեղեցւոյ կողմէ միայն: Հայոց եկեղեցին երբեք մոռացութեան չյանձնեց Մեսրոպ Մաշտոցի պանծալի յիշատակը, այլ դարեր շարունակ յարգեց ու պատուեց զայն իբրեւ հայ դպրութեան հիմնադիր, ջատագով ու ախոյեան:

Ս. Մեսրոպ ու Ս. Սահակ, կը գրէ Jean Balard, «փրկած են հայ գիրքը անիշխանութենէ ու մոռացումէ: Իրենց ժողովուրդին տուած են գիրը, իր յաւերժութիւնը դարբնող գէնքը: Ան կը փոխարինէ բառերու «ասեղնագործութիւնը» մտածուած, կշռուած երկաթագիր վկայութեամբ մը, մնայուն եւ անհերքելի, որ գրուած մտածումն է... Հայութեան ամէնէն պանծալի այս երկու զաւակները՝ Ս. Մեսրոպ եւ Ս. Սահակ ապահովեցին յաւերժութիւնը հայ հանճարին, ճառագայթումը հայկական մշակոյթին՝ մինչեւ մեր օրերը»:

Մինչեւ մեր օրերը ապահովուած ու արդ մեզի փոխանցուած գիրն ու գրականութիւնը, կը յանձնուին մեր հոգատարութեան: Արտասահմանի այս

դժնդակ, աննպաստ ու աններող պայմաններուն մէջ, հայ բեկորին կը վստահուի գրական, մտաւորական ասպարէզը, որ ինք շարունակէ իւրովսանն շէնցնել այդ իմացական ածուն քաղմագան ստեղծագործութիւններով: Ժամանակը լոկ ցոյց պիտի տայ թէ ինչքան գործունէութիւն ծաւալած ենք ու յաջողութիւն արձանագրած: Մինչ այդ, սակայն, հայը կը ջանայ իր համեստ լուման ընծայարբերել մեր մշակոյթի հարուստ գանձարանին: Մեծ գրագէտ Շահան Շահնուր՝ Պր. Գրիգոր Քէօսեանին ուղղած 1974 թուակիր մէկ նամակին մէջ կը գրէ. «Սփիւռփահայը բնաւ տրամադիր չէ վերջ դնելու իր ստեղծագործական եիգին: Արդիւնքը համեստ է, քայց ան մերն է, եւ պէտք է որ մենք հպարտ ըլլանք մեր պտղաստանին հունձով: Այդ հունձը ձեռք բերուած է քրտինքով, արցունքով եւ արիւնով: Սփիւռփահայ գիրքի մը

400 տպաքանակը այնքան նուիրական է, որքան երեսանի 40 հազարը»:

Հայոց դարաւոր պատմութեան մէջ երեք պանծալի անուններ միշտ կապուած պիտի մնան հայ գիրքնու ստեղծման ու հայ դպրութեան սկզբնաւորման հետ. անոնք են՝ Ս. Մեսրոպ Մաշտոց, Ս. Սահակ Պարթեւ եւ Վռամշապուհ թագաւոր:

Մաշտոց՝ երիցս մեծ վարդապետը հայ դպրութեան, անվերջ դարերու մտքի սրբազան առաքնալը, լուսաւորիչը, ուսուցիչը, քարոզիչը, հասարակական գործիչը, իր ստեղծագործական հանճարով, իր ջերմ շունչով ու պատկառելի շուքով, պիտի տողանցէ դարեր շարունակ: Պիտի անցնին դարեր ու հայ ազգը անմահ, երախտագիտութեամբ պիտի յիշէ այս անխոնջ ու նուիրեալ մշակին անունը:

ԶԵՆՈՐ ՔԶՆՅ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

ՀԱՅ/ՀԱԿԱՀԱՅ

«Հէ՛գ Ուիլսըն, չհասկցաւ թէ սահման մը որ սուիսներով,
գործով եւ պատուով չէ պաշտպանուած, ոչ մէկ այլ սկզբունք
կրնայ զայն ապահովել:»
Քեմալ Աթաթուրք

Տեսնելէ, պտըտելէ, վայելելէ ետք
Փարիզի, Լոնտոնի շփեղ պողոտաները եւ
անոնց վրայ նեմող փաղափակիրք ու
գրաւիչ մարդոց քաղաքիւնները,
տպաւորուած անոնց գրաւչութենէն ու
փաղափներու քարգաւան վիճակէն,
օսմանեան քարենորոգիչ Զիա Փաշան
1868ին կը հրատարակէ իր ֆնարական
տպաւորութիւնները Լոնտոն լոյս տեսնող
«Հիւրրիէթ» թերթին մէջ եւ եւրոպական
նստանները կը քաղդատէ իրեն հարազատ
Սթամպուլին հետ:

Ո՛վ հրաշագեղ ճարտարապետումը
մարդկային մտքի ստեղծագործ թռիչքին,
չկայ մարդ որ տեսնէ այդ գեղեցկութիւնն
ու չտարուի անոր հմայքէն, նոյնիսկ եթէ
այդ անհատը օսմանեան թուրք մըն էր
որ այդքան դառնօրէն կ'ըմբռնէր
ֆանդակուած շփեղանքը Փարիզի ու
Լոնտոնի եւ այնքա՛ն աղապատանքով
կ'ափսոսար որովհետեւ կ'անդրադառնար
վերջապէս թէ պերճանքը այն փաղափին
որ ինք տեսեր էր ամէն օր ու աներ անոր
շուրհին ներքեւ, իրենցը չէր այլ զաւթուած
փաղափակրթութեան մը ու անոր
հրաշագեղ կոթողումին՝ Կոստանդնու-
պոլսոյ: Իր տեսած ու հաստատած
քարգաւան ու քարեկեցիկ կեանքը
եւրոպական փաղափներուն, մտքին մէջ՝
կը գրէ

- Մենք (թուրքերը) պիտի չըլլանք
օգտուողներն ու համտեսողները նման
քարգաւանումէ գալիք քարիքներուն, այլ
ատենը մէկ հոն (Պոլիս) պիտի երթանք

իրեւ փայտավաճառ ու ածխավաճառ եւ
տխրօրէն փաղափ պիտի դիտենք:

Այս դառն անդրադարձը պիտի
անէր ու խռովեցնէր ու նախանձի մատներ
հրապարակի յաջորդական թուրք
դեկավարները հասցնելով զիրենք գոր-
ծածելու այդ նախանձը իրեւ
արդարացուցիչ պատրուակ
ցեղասպանութեան անկախ անկէ որ այդ
արժեւորումը սխալ ու անհիմն էր: Թէ
թուրքերը պիտի չուզէին իրենց իսկ
մայրաքաղաքին մէջ ածխավաճառներ
ըլլալ, բնական էր քայց թէ իրենք
այդպէս կը զգային, թերեւս այնքան ալ
անիրական չէր պարզապէս որովհետեւ
թուրքերը որեւէ մէկէ աւելի լաւ գիտէին
թէ իրենց ապրուստը կ'ապահովէին
ոչ-թուրք ազգաբնակչութեան կեղեքումով
եւ ուրեմն ուշ թէ կանուխ այդ կացութիւնը
կրնար փոխուիլ ոչ ի նպաստ իրենց:
Ասկէ մեկնելով, կը յստականայ
հեղինակին՝ Մէնկոյի քաջատրութիւնը.
«Իսլամ թուրքերը անհանգստացնող
հարցումը ա՛յն չէր թէ երկիրը գոյութիւն
պիտի ունենար թէ ոչ, այլ ա՛յն թէ իրենք՝
թուրքերը պիտի գոյատեւե՞ն կամ ոչ»: Աթաթուրքի նուիրուած Անտրիւ Մէնկոյի
հատորին նախաբանը կը վերջանայ
մէջբերուած նախադասութեամբ:

Յանախանքի վերածուած վախն
ու հալածախտը թուրքերուն պիտի
յանգեցնէին ահռելիօրէն սահմոկեցուցիչ
ֆայլերու: Յայտնի չէ թէ Զիա Փաշան
ապրեցա՞ւ այնքան մը երկար որ տեսնէր

թէ իր կասկածները ո՛րք հասան եւ թէ մանաւա՛նդ անտեղի էին: Իր հայրենակիցները շատ աւելի վնոական էին իր նախատեսած հեռանկարին իրականացումը ամէն գնով արգիլելու համար:

Մեծ Եղեռնի իննըսունամեակն է այս տարի եւ անոր ապրող իրականութիւնը այլեւս տաղուած է իւրաքանչիւր հայու էութեան վրայ՝ այնքան ատեն որ անհատը վերջնականապէս ինքզինք խզած չէ մեր պատմութենէն ու անհրաժեշտ չափով... արդիականացած ու զարգացած չէ որպէս զի հանդուժող անտարբերութեամբ մը հասկնալ փորձէ Թուրքին հոգեվիճակը՝ 1915ին եւ կամ համագոր նկատէ ցեղասպանութեան ոճիրը ազատագրական մեր պայքարին հետ:

Մօտ տարի մը առաջ «Նոր Օր»-ի մէջ գրախօսական մը կարդացի էնտրու Մէնկոյի «Աթաթուրք» հատորին մասին: Գիրքը կը քննարկէ թուրք դիւանագիտութեան դիմագրաւած դժուարութիւնները 1915-1923 տարիներուն, կը նկարագրէ իթթիհատականներու ծագումն ու իշխանութեան գալը, կ'արժեւորէ Թուրքիոյ պարտութիւնը Առաջին Համաշխարհային Պատերազմին ու Քեմալ Աթաթուրքի հետեւողական աշխատանքը բանակի միասնականութիւնը պահելու՝ Անատոլիոյ եւ արեւելեան նահանգներու մէջ, կը փորձէ բացատրել հայելութուրք յարաբերութիւններն ու Մեծ Եղեռնը, տալով թուրք պետական դէմքերուն բացատրութիւնները անոր մասին, ուրկէ նաեւ այս անդրադարձ-ակնարկը: Այստեղ կատարուած մէջբերումներուն մեծ մասը առնուած է այդ հատորէն:

Սուլթան Համիտի ջարդերէն սկսեալ, Հայն ու Թուրքը իրարու հետ ունեցած այն յարակցութիւնը ինչ որ

ունին նիւթն ու հականիւթը բնագիտութեան մէջ՝ անգետեղելի իրարու մօտ, եւ իրարու հակոտնեայ ձգտումներով ու խառնուածով: Յստակացնելու համար ըսել ուզուածը, պէտք է բացատրել բնագիտական օրինակը: Եթէ ենթա-աթումական մասնիկները՝ էլեկտրոնն ու իր հակադիրը պոզիտրոն, որոնց միակ տարբերութիւնը իրենց ունեցած էլեկտրական հակադիր լիցքերն (electrical charge) են, գծային արագացուցիչի մը մէջ ամենի արագութեամբ իրարու բխիկն, երկուքն ալ կ'անէնան: Տառացիօրէն նիւթը կ'աննիւթանայ ու կը վերածուի էլեկտրամագնիսական ճառագայթումի: Այս է հիմնական կիզակէտը հայու եւ թուրքի փոխ յարաբերութեանց: Մենք չէ որ ստեղծեցինք այդ իրավիճակը այլ անոնք որոնք կը հանդիսանան հեղինակը հետեւեալ պատճառաբանութեան բացատրելու համար տեղահանութիւնն ու ցեղասպանութեան ոճիրը.

- Կա՛մ իրենք (հայերը) կա՛մ մենք (թուրքերը) պիտի մնայինք այստեղ: (Իթթիհատական ղեկավարներու տուած բացատրութիւնը Եղեռնի մասին): Աւելի մասնաւորելով հասցէները, ահա նաեւ Թալաաթի եւ տարբեր իթթիհատական ղեկավարի մը բացատրութիւնները.

- (Մենք է՛շ Խալիլին, Պերլինէն վերադարձին Թալաաթ կը յայտնէ թէ ինք որոշեց հայկական հարցը սխալ կամ ճիշդ կերպով լուծել նախքան Խալիլի վերադարձն ու նախքան առիթ ունենալը տեղեկացնելու թէ գերմանացիք ի՛նչ կը մտածէին անոր մասին)... Որովհետեւ եթէ ես մաքրած չըլլայի գիրքն (հայերը), իրենք մեզ (թուրքերը) պիտի մաքրէին: Իրականութեան մէջ, իրենք (հայերը) արդէն սկսեր էին: Ազգային գոյատեւման պայքար մըն է:

- (Տօքթ. Մեհմէտ Ռէշիտ, Տիյարպէֆիքի

- Տիգրանակերտ - կառավարիչ, անձնասպան՝ ամբաստանուել է ետք իբրեւ ոճրագործ, իբթիհատական տարբեր ղեկավարի մը՝ Միթիատ Շիւքրիին հետեւեալ բացատրութիւնը կու տայ)... կա՛մ հայերը թուրքերը պիտի ոչնչացնեն եւ ըլլան տէրերը այս երկրին եւ կա՛մ թուրքերը զիրենք պիտի ոչնչացնեն:

Այն հարցումին թէ իր խիղճը զինքն չ'անհանգստացնե՞ր, Տօթ. Ռէշիտ կը պատասխանէ.

- Ինչպէ՞ս կրնար չ'անհանգստացնել... հայրենիքիս ու ազգիս սիրոյն, աչքերս գոցեցի եւ խոյացայ յառաջ առանց ո՛չ մէկ տատամսում ցուցաբերելու:

Այս բացատրութիւնները իրենց պարզութեամբ կը թելադրեն ահռելի վախ մը իբթիհատական ղեկավարութեան մօտ ու միեւնոյն ատեն նաեւ միակ բացատրութիւնը որ տուած են արդարացնելու իրենց արարքը առանց անդրադառնալու թէ կուտան նաեւ ամենէն յստակ ու անհերքելի ապացոյցը ծրագրուած ցեղասպանութեան: Ոճրային մտադրութեան այսպիսի յստակացման համար միայն կարելի է շնորհակալութիւն յայտնել... իբթիհատական ղեկավարներուն որովհետեւ շատ աւելի անկեղծ եւ իրականութենէն չ'վախցող են եղած քան զիրենք փոխարինած յաջորդական թուրք կառավարութիւնները՝ Քեմալէն մինչեւ էրտողանի ներկայ վարչակազմը:

Ահա թէ ուրկէ նաեւ վերնագիրը այս յօդուածին եւ վերը ակնարկուած բաղդատականը: Պատկերը ճիշդ է՝ բախումը թէեւ տեղի չ'ունեցաւ բայց... ճառագայթային վերափոխման ենթարկուեցաւ մեր ժողովուրդին կէսը կառավարման վերածուած իր երկրին մէջ, իսկ միւս կէսը տարտղնուեցաւ աշխարհով մէկ: Ինքնըսուն տարի շարունակ ան կը փորձէ հասկնալ պատահածը, կը ջանայ վերատիրանալ իր

հողերուն հակառակ ինքնըսուն տարիներու ուրացումներուն, ժխտումներուն, սուտին, եւ յորդորներուն՝ լեզու գտնելու մարդոց հետ որոնք յստակօրէն որոշեցին մեզ ոչնչացնել եւ գրեթէ յաջողեցին: Կ'ուրախանանք այժմ թուրք մտաւորականներու դատապարտումովը եղածին, պնդումովը թէ իրենց կառավարութիւնը պէտք է ճանչնայ ցեղասպանութեան ոճիրը: Կ'ուրախանանք առանց անդրադառնալու թէ այդ մարդիկը չեն խօսիր հատուցման մասին ու երբ խօսին կը թելադրեն մոռնալ հողերը:

Պիլկի համալսարանի մէջ վերջերս կազմակերպուած գիտաժողովին ծանրակշիռ ու յանդուգն ելոյթներ են ունեցած Հալիլ Պերթալը, Ֆիքրէթ Ատանըրը, Թանէր Ահչամը, Ճէվտէթ Այֆանը եւ ուրիշներ: Ըստ Պոլսոյ «Մարմարա»-ին մասնաւորաբար ցնցիչ է եղած Պամըն Օրանի ելոյթը որ իր ընդհանրապէս ճիշդ ախտանշումներուն ու դիտարկումներուն մէջ յայտնած է նաեւ այն կարծիքը թէ «հայերը այլեւս պէտք է հրաժարին... որ... Թուրքիան հատուցում վճարէ եւ հող վերադարձնէ»: Հրանդ Տինք իր կարգին թուրքերուն ուշադրութիւնը հրաւիրած է այն իրողութեան թէ «հայերը աչք ունին այս հողերուն վրայ բայց անոր տակ թաղուելու համար»: Հասկնալի են Օրանի ելոյթն ու իր թելադրութիւնը եւ թերեւս օր մը կարենանք իրարու հետ համաձայնութեան եզրեր գտնել: Տինքի պարագային պէտք է յիշեցնել թէ արդէն մէկ ու կէս միլիոն հայ այդ հողին տակ յաւիտենօրէն կը ննջէ չ'հաշուած հազարամեակներու ընթացքին ննջողները: Անոնք որոնք հողերը կը պահանջեն, անոր տակ թաղուելու համար չ'է որ կը մնան իրենց պնդումին վրայ, այլ այդ աճիւններուն կ'ուզեն կեանք տալ եւ անոնց երգն ու աղօթքը լսել մեր հանդերուն ու մեր

կործանուած ու վերաշինուած տաճարներուն մէջ վասն զի «մերձեցաւ ոսկր առ ոսկր առ իւրաքանչիւր յօդս, եւ ահա ջիւի եւ մարմին պատէին, եւ ձգէր ի վերայ նոցա մորթ, եւ եմուտ ի նոսա շունչն, եւ եղեն կենդանի, եւ կանգնեցան, կացին ի վերայ ոտից իւրեանց, ժողովուրդ քաղում» ինչպէս սքանչելի Մարգարէն՝ Եզեկիէլ հազարամեակներ առաջ պատկերած էր իր տեսլիքին մէջ:

Այդ գիտաժողովին ներկայ է եղած նաեւ ականաւոր գիտնական ու բնագիտութեան դոկտոր-փրոֆէսէօր եւ նախկին վարչապետ էրտալ Ինէօնիւն՝ զաւակը Իսմէթ Ինէօնիւի: Իր դոկտորականը ստացած է Գալթէէն 1951ին եւ դասաւանդած թրքական շարք մը համալսարաններու մէջ: Արդ, ան գիտէ ու կը գնահատէ կարեւորութիւնը թիւերուն եւ ճշգրտութեան անհրաժեշտութիւնը: Իր հաշուարկումներու ճշգրտութեան հետեւանք էր իրեն տրուած Ուիկընրի անուան պատկառելի մրցանակը: Հաւանաբար որեւէ մէկէ աւելի ինք տեղեակ է թէ ինչի՞ մասին կը խօսէին այդ գիտաժողովին: Թերեւս ամենէն հեղինակաւոր անձնաւորութիւնն է թէ՛ իբրեւ քաղաքական գործիչ եւ թէ իբրեւ գիտնական-մտաւորական ամբողջ Թուրքիոյ մէջ: Իրեն առիթ է տրուած ու քարոյական պարտադրանքին տակն է կրկնելու Ատենաուրի քաղաքացիի ու քաղաքական գործիչի խիզախութիւնը՝ հրապարակաւ ընդունելու ցեղասպանութեան ռոքի պատասխանատուութիւնը թուրք ժողովրդի անունով եւ փրկելով արժանապատուութիւնը իր ժողովրդին եւ թուրք մտաւորականութեան: Դժբախտաբար, շատ հաւանական չէ այդպիսի յանդուգն ելոյթ մը:

Անկախ տարեդարձներու թիւերէն, տասնամեակ կամ հարիւրամեակ, այրող բնոյթն ու խորհուրդը իրականութեան

կախում չունին ժամանակէն, բացի ռիթմին առթած խոռովէն, երբեմն պարտադրուած ամօթի անթեղումէն ժամանակի մոխիրին ներքեւ, երբ մենք մեր մէջ, մեր սահմաններուն մէջ - աշխարհագրական սահմաններու մասին չէ խօսքը այլ անհատական ըմբռնումներու եւ խառնուածքներու - կը փորձենք արժեւորել, փնտռել լաւագոյն գործօնները հասնելու հո՛ն ուր կ'ուզենք: Ականատեսները կ'ըլլանք սակայն մարդոց որոնք կը խօսին ազատագրական մեր պայքարի ու ռիթմի համաչափութեան մասին առանց տեսնելու, հասկնալու դրդապատճառը խժալուր այն աղմուկին որ տակաւ կը բարձրացնեն թուրք նախկին եւ ներկայի դիւանագէտները իրենց ուրացումով ու մերժումով: Այս վատութեան մէջ ունենալով նաեւ օժանդակութիւնը իրենց օտար վարձկան մտքի վարձակներուն: Զարմանալի է երեւոյթը ախտագին իր հեզմանքին մէջ՝ թուրք փնտռտուփի մէջ զինք գերազանցել ուզող նենգամիտ պնակալէզներու:

Թուրք դիւանագէտներու ուղեղային ճանկոտութիւնը կը թելադրէ հիմնականին մէջ միակ երեւոյթ մը՝ գիտակցութիւնը իրենց գործած ռիթմին ահաւորութեան եւ ուրեմն, կը փորձեն ոչ թէ խուսափիլ այլ մեղմել հետեւանքները կամ բոլորովին չէզոքացնել զանոնք: Ինչո՞ւ չէ, թերեւս ալ յաջողին եթէ մենք շարունակենք մնալ մեր քննադատութիւններուն մէջ եւ չկարենանք կիզակէտել մեր նպատակներն ու զանոնք իրականացնելու միջոցները ինչպէս նաեւ ներողամտութեամբ դիտել տակաւ ստուարացող խաֆիէներու շարքերը: Թերեւս սխալ չէր բանաստեղծը երբ իր ժամանակները փոխադրելով Թոնդրակեցիներու դարաշրջանին, կ'ուզէր հաստատել հինգ մարդոց մէջ առկայութիւնը երեք մատնիչի: Հո՛ս է որ մենք պէտք է զգուշանանք եւ չարտօնենք

որեւէ թուլացում թրջական ֆծնոտ շոշորթութեանց հանդէպ:

Միշտ ի մտի պիտի ունենանք Քեմալի պատգամը երկրի հողային ամբողջականութեան մասին. «երկրին սահմանները ճշդած ենք: Օտարներու պիտի չյանձնենք զայն: Ամբողջութեամբ վստահ ենք»: Կարելի չէ Քեմալը այսպանել իր համոզման հաստատականութեան մէջ, որովհետեւ մենք եւս ամբողջութեամբ վստահ պիտի ըլլանք, եթէ չենք արդէն, թէ «օտարները» մենք ենք եւ գիտենք թէ «սահմանները» որ ճշդած է ինք, իրենց մէջ կ'ընդգրկեն մեր երկիրը. եւ ոչ մէկ ատեն չենք ուզած այդ երկիրը զիջիլ ո՛չ Քեմալին եւ ո՛չ ալ իր յաջորդներուն: Այս վստահութիւնն է որ կը սպասենք մեր դիւանագէտներէն եւ ոչ թէ Արշակ Բ. յիշեցնող իրենց կեցուածքը՝ յոխորտ մեր մէջ բայց անուշիկ գառնուկի մը նման խոնարհ օտարներու մէջ:

Հասկնալու համար անցնող իններսուն տարիներու թուրք դիւանագիտութեան հալածախտային անգիշողութիւնը, շարք մը իրողութիւններու անդրադարձը անհրաժեշտ է: Առաջին հերթին ըստ Մէնկոյի, Քեմալով ղեկավարուող թուրք դիմադրական շարժումը կը յաջորդէր իթթիհատականներուն որոնք օսմանեան կայսրութիւնը պատերազմի մղեր էին Արեւմուտքի դէմ, թէ Արեւմուտքը, մանաւանդ Անգլիոյ կառավարութիւնը, սխալ էր իր գնահատութեան մէջ քեմալական շարժումը բաղդատելով իթթիհատականներուն հետ եւ զայն նկատելով նոյնքան կայսերապաշտ՝ նախկին տարածքներուն վերատիրանալու միտումով: Մէնկօ կը շարունակէ ըսելով թէ հիմնականին մէջ քեմալականները կը ձգտէին պահել երկիր մը որուն սահմանները նշուած էին 1918ի գինադադարի համաձայնագրով եւ որուն

քնակչութեան իսլամ (թուրք եւ քիւրտ) տարրերը մեծամասնութիւն կը կազմէին: Էրզրումի ժողովը կայացած 1919ի Յուլիսին կը բանաձեւէր եւ նոյն տարուան Սեպտեմբերին, Սվազի համաժողովը կը վերահաստատէր այդ երկրին սահմանները որոնք կ'ընդգրկէին նաեւ Արեւելեան նահանգները:

Թէ՛ էրզրումի եւ թէ՛ Սվազի յայտարարութիւններուն հրամայականը այն էր թէ Արեւելեան Նահանգները անբաժանելի մասը կը կազմէին օսմանեան պետութեան: Այս համոզման իրականացումն է որ Քեմալ եւ իր ընկերները միակամօրէն կը հաստատեն: Հետեւաբար, ամէն գնով այդ շրջանները պէտք էր ապահովել, եւ չէզոքացնել հայկական պահանջները անոնց ուղղութեամբ: Ուրեմն, զինուորական գործողութիւնները պիտի ընթանային ըստ այնմ՝ վերացնելու հայկական վտանգը իբրեւ գործօն եւ ամրագրելու արեւելեան սահմանները նախքան յոյներէ ազատագրումը Թուրքիոյ մնացեալ շրջաններուն: Տարի մը ետք Գարապեքիրի յարձակումը Կարսի վրայ, անոր գրաւումն ու Ալեքսանդրապոլի պարտադիր դաշնագիրը, պիտի ըլլային Էրզրումի բանաձեւին յաղթական պսակումները:

Մէնկոյի այս բացատրութիւնը նիշդ է, եւ այս համոզումը զիրար շաղկապող հասարակ յայտարարն էր Քեմալի ղեկավարած դիմադրութեան առաջնորդող դէմքերուն: Ատենին Թալաթի յայտնած այն կարծիքը թէ իթթիհատէն դուրս ազդեցիկ անհատականութիւններ չկային, ճշգրիտ դուրս կու գար որովհետեւ քեմալական շարժման ղեկավարները, գրեթէ ամբողջութեամբ, նախկին իթթիհատականներ էին որոնք «Քեմալին մէջ այժմ ունէին յստակատես առաջնորդ մը որ կը միացնէր խոհեմութիւնն ու վճռականութիւնը»: Ահա ուրեմն,

բրիտանական դիւանագիտութիւնը սխալած էր թէ ոչ քեմալական շարժման իր արժեւորման մէջ երկրորդական է, որովհետեւ Քեմալ յստակացուցած էր երկրին սահմանները ինչպէս քիչ վերը մէջքերուած հաստատումը ցոյց կու տայ: Այս համոզումին արձագանգած էր էրզրումի համաժողովի որոշումներէն մին. «եթէ օսմանեան կառավարութիւնը լիք կամ անտեսէ արեւելեան նահանգները (Արեւմտահայաստանը), ժամանակաւոր կառավարութիւն մը պիտի ստանձնէ շրջանը պաշտպանելու եւ կառավարելու պատասխանատուութիւնները»: Ո՛չ մէկ կասկած եւ ընկրկում գոյութիւն ունէր այս մօտեցումին մէջ եւ այդ համոզումն ու որոշումը կը հանդիսանային թուրք դիւանագիտութեան բոլոր նախաձեռնութեանց եւ գործընթացներուն գլխաւոր առանցքը անկախ այդ նահանգներուն իրական իրաւագէտներու պահանջէն:

Թուրք ազգայնականներու մտասեւեռումը ուրեմն երկրի ազգաբնակչութեան մաքրագտումն էր անկախ գործադրուած միջոցէն: Իրենք տէրերն էին երկրին ու կայսրութեան եւ ուրեմն տէրերը ստրուկներու պիտի չվերածուէին: Այս ըմբռնումը աւելի եւս շեշտուեցաւ երբ կայսրութեան սահմանները սկսան կծկուիլ եւ երբ պատերազմէն ետք եւ իբր հետեւանք անոր, «կղկղանք ուտել» ետք, (տառացիօրէն Թալաթի բառերով), թուրքերը դուրս շարտուեցան բոլոր երկիրներէն եւ Քեմալին ու իր ընկերներուն համար Փոքր Ասիական թերակղզին կը վերածուէր այն հողատարածքին որմէ ոչ մէկուն ոչինչ պիտի զիջէին: Հող հասնելէ առաջ սակայն, իթթիհատական թուրք ղեկավարութիւնը գործադրեց ցեղամաքագտման ամէնէն արմատական միջոցը՝ տեղահանութիւնն ու ցեղասպա-

նութիւնը դիւրացնելով քեմալականներու որոշման գործադրութիւնը: Պատերազմէն ետք դաշնակիցներու անըմբռնելի մէկ սխալին հետեւանք՝ բոլորովին չկազմալուծելու օսմանեան բանակը, առիթ ընծայեց քեմալական շարժման ստեղծման եւ Քեմալի ու իր ընկերներուն որոշումին՝ Թուրքիան նկատելով իրենցը ներկայի սահմաններուն մէջ: Զարմանալի չէ բնաւ այլեւս որ անոնք - թուրքերը - եւ «տեղւոյն (Սվազ) մահմետականները որոնք տիրացեր էին հայերու ինչքին, չէին ուզեր հայերու վերադարձը տեսնել»:

Արդ, այս գոյգ մտահոգութիւնները՝ միաձոյլ իսլամ ժողովրդի մը գոյութիւնը բաղկացած թուրքերէ եւ քիւրտերէ, զայն իրականացնելու կոչուած ցեղասպանութիւնը եւ պահելու թուրք ցամաքամասի սահմաններուն ամբողջականութիւնը եղան իթթիհատականներու եւ անոնց յաջորդած քեմալականներու քաղաքական գործընթացները եւ այս է որ կը բացատրէ թուրք պետական դէմքերուն ջալլամային մերժումը ցեղասպանութեան:

Հոս կրկին կու գանք... Քեմալին որովհետեւ ներկայ թուրք պետութիւնը արցախեան հարցի կարգաւորման համար կը խաղայ ինքնակոչ միջնորդի, կաւտի եւ ազերիներուն պահապան հրեշտակի երբեակ դերերը: Ներկայ կացութիւնը կ'ընծայէ շարք մը պատեհութիւններ նոր մօտեցումներու որպէս զի մենք մեր հաշուեյարդարը կատարենք: Տրուելիք բացատրութեանց եւ առաջարկներուն իբրեւ ուղեցոյց եւ չափանիշ պիտի ունենանք Քեմալէն մէջքերուած բնաբանը այս յօդուածի սկիզբին: Պիտի նաեւ օգտագործենք Քեմալի նախաձեռնութիւններէն ումանք իբրեւ նախընթաց եւ օրինակ արցախեան եւ հայեւթուրք հարցերու լուծման:

Ազերիները պէտք է կրկին ու

կրկին անգամ կարդան այդ յայտարարութիւնն ու նաեւ ստորեւ մէջբերուած հեռագիրը որպէսզի չմոռնան բնաւ: Եւ վստահ պէտք է ըլլան թէ մենք աւելի վեհանձն ենք քան Քեմալը որովհետեւ սիրով պիտի վերադարձնենք կարգ մը շրջաններ եթէ իրենք եւ թուրքերը գոհացնեն ինչ վարք պարզութիւնի առաջարկներն ու պայմանները:

Այսպէս առաջ, հաստատենք անմիջապէս թէ այն մտացածին գաղափարը որ շրջանառութեան մէջ դրուած էր քանի մը տարի առաջ՝ Զանգեզուրը փոխանակել Արցախով որպէս զի ազերիները կարենան կապուիլ Նախիջեւանի ու Թուրքիոյ հետ պարզապէս կը հանդիսանար Հայաստանի շրջափակումը յաւերժացնելու փորձ մը եւ ուրեմն նկատի պէտք է չէ առնել: Պատմական կարգ մը նախընթացներ ի մտի պէտք է ունենալ Քեմալի մօտեցումը կիրարկելու համար: Ահաւասիկ:

Ապրիլ 24, 1920ին Քեմալ Թուրք Ազգային Ժողովի նախագահ կ'ընտրուի ու իր առաջին նախաձեռնութիւնը կ'ըլլայ հեռագրով մը Քազիմ Գարապէտիին՝ այդ օրերու ամենէն տիրական ու հեղինակաւոր ազգայնական զօրավարը, տեղեակ պահել իր ընտրութենէն որպէս զի ապահովէ Գարապէտիին հաւատարմութիւնն ու զօրակցութիւնը:

Ապրիլ 26ին Քեմալ հետեւեալ հեռագիրը կը յղէ Մոսկուայի կառավարութեան.

- Համաձայն ենք գործակցելու ռուս պոլշեիկներու հետ որոնք կը նգնին ննշուած ժողովուրդները կայսերապաշտ պետութիւններէ ազատել: Եթէ պոլշեիկները որոշեն վրաստան մտնել եւ զայն միացնել իրենց պետութեան անգլիացիները դուրս շարտելէ ետք, Թուրքիան իր կարգին պիտի գործողու-

թեանց դիմէ կայսերապաշտ հայ կառավարութեան դէմ եւ պիտի ապահովէ Ատրպէյճանի միացումը պոլշեիկ երկիրներու խումբին:

Սեպտեմբեր 16, 1920ին պատասխանելով արեւմտեան ճակատի հրամանատար Ալի Ֆուատին, Քեմալ կը յստակացնէ իր մտադրութիւնը «որեւէ օգնութիւն որ պոլշեիկները կու տան պիտի ընդունինք, բայց անոնց համամտութիւնը կամ համաձայնութիւնը պիտի չ'առնենք Հայաստանի վրայ արշաւելու՝ դէպի Ատրպէյճան տանող ճանապարհը քանալու համար»:

Հինգ շաբաթ ետք, Հոկտեմբեր 24ին, Գարապէտիին կը հրահանգէ Կարսը գրաւել, իսկ Հոկտեմբեր 28ին ռուս լիազօր ներկայացուցիչը Լըզրան երեւանի մէջ ստորագրուած համաձայնագրով Կարսը կը նկատէ մասը Հայաստանի տարածքին: Նոյն օրը, Գարապէտի կը սկսի Հայաստանի դէմ ռազմական գործողութիւններուն եւ երկու օր ետք Հոկտեմբեր 30ին Կարսը կ'իյնայ:

Դեկտեմբեր 2, 1920ին Ալեքսանդրապոլի (Կիւմրի) դաշնագիրը կը կնքուի Հայաստանի ու քեմալական Թուրքիոյ միջեւ: Գրին հեղինակը դաշնագրին մասին յատկանշական մանրամասնութիւն կու տայ նաեւ՝ «Գարապէտիին Կիւմրի դաշնագրին համար քանակցած էր պոլշեիկներուն հետ»: Այլ խօսքով, Ալեքսանդրապոլի դաշնագրի համաձայնութիւնը կատարուած էր թուրք եւ պոլշեիկ կառավարութեան միջեւ եւ պարտադրուած Հայաստանի Հանրապետութեան ինչպէս պիտի պարտադրուէին Մոսկուայի ու Կարսի դաշնագրերը 1921ին:

1920ի պատմութեան այս հակիրճ ամփոփումը անհրաժեշտ էր հոս ըստելիքներուն համար: Որեւէ մէկ քանէ առաջ թուրքերը որպէս զի կարենան

որեւէ դեր խաղալ, նախ պէտք է ֆաշուին կիպրոսէն... յօրինակ ալլոց... ալլապէս իրենց զիրենց կը զրկեն բարոյական իրաւունքէն միջնորդի դեր խաղալու:

Քիչ վերը տեսանք թէ Քեմալ շատ դիւրութեամբ Ատրպէյճանը սկստեղի վրայ դրած յանձնեց (թէեւ ուրիշ ելք չունէր) պոլշեիկներուն որպէս կաշառք լեւինին, որպէս զի ինք իր կարգին Հայաստանը չէզոքացնէր ու միանար Ատրպէյճանի հետ: Փանթուրֆիզմը միայն էնվէրի ուղեղին թոխչքը չէր, ալ թուրք ազգայնական դիւանագիտութեան էական նպատակներէն մին:

Եթէ Քեմալ 85 տարի առաջ «գոհեց» Ատրպէյճանը, ժամանակն է որ թուրք պետութիւնը... սրբագրէ սխալը եւ վարձահատոյց ըլլայ Ատրպէյճանին, վերադարձնելով Կարսի ու Արտահանի Նահանգները իրենց իրաւատիրոջ, Հայաստանին եւ Հայաստանը իր կարգին կը փոխադարձէ վեհանձնութիւնը, վերադարձնելով շարք մը շրջաններ, որոնք այժմ կը գտնուին Հայոց իշխանութեան ներքեւ, անշուշտ երբ Ատրպէյճանը վերադարձնէ Նախիջեւանը Հայաստանին որմէ այդ նահանգը պոկուած էր ու նուիրուած Ատրպէյճանին Գարապէտիի եւ պոլշեիկներու միջեւ համաձայնութեան իրրեւ հետեւանք:

Ահաւասիկ, Քեմալ թերեւս չէր մտածած, քայց որովհետեւ թուրքերը գայն կը նկատեն իմաստուն եւ հեռատես առաջնորդ մը եւ հիմնադիրը արդի թուրք հանրապետութեան, մենք պիտի չուզէինք հակառակը պնդել երբ արցախեան համաձայնութիւնը ընթանայ ֆեմալական օրինակին համաձայն: Ընդհակառակը, մենք պիտի խուսափինք Քեմալի ամբարտաւանութենէն ու պիտի չըսենք ընաւ թէ ազերիները «պատուով չեն պաշտպաներ» իրենց սահմանները:

Անշուշտ նաեւ թէ Ատրպէյճանին պէտք է տրուի տարանցիկ նամբայ Հայաստանէն դէպի Թուրքիա քայց նախնական այդ արտօնութեան, թուրք պետութիւնը պէտք է Հայաստանին շնորհէ տարանցումի ազատ ուղի Կիւմրիէն դէպի Տրապիզոն եւ Կարսէն դէպի Ատանա, հինգէն-տասը ֆիլոմֆեր լայնութեամբ եւ Հայաստանի գերիշխանութեան ներքեւ՝ եւ այդ զոյգ ֆաղափներու նաւահանգիստներուն մէջ Հայաստանի գերիշխանութեան տակ դրուած ազատ շուկայի փարպիներ:

Այս է լաւագոյն ձեւը ցեղասպանութեան նանաչման եւ հատուցման որմէ ետք որեւէ հարց գոյութիւն չունենար Հայաստանի ու Թուրքիոյ սահմանները բանալու:

Երբ ցեղասպանութեան նանաչումը տեղի կ'ունենայ արդար հատուցումով, ո'չ մէկ դժուարութիւն կ'ունենանք վերահաստատելու այն բարեկամութիւնն ու դրացնութիւնը որ գոյութիւն ունէին նախնական իթքիհատականներն ու Սուլթան Համիտը: Այսպիսով, ոչ մէկը երբեք հանրապետութիւններէն պիտի փորձէ միւսը անպատուել եւ հարցադրումի ենթարկէ արժանապատուութիւնը մէկուն կամ միւսին ինչպէս Քեմալ ըրած էր յայտարարութեամբ: Պատմական փաստը աչքի առաջ ունենալով, թուրքերը երբեք պիտի չուզէին գտնուիլ էլէկտորնի կամ պոզիտորնի դերին մէջ՝ երկուսին ալ պարագային արդիւնքը բնաջնջումն է բախման ատեն, եւ ինչպէս իրենց կը հաստատեն այժմ, մեր պարագային սխալ դուրս եկան: Այդ սխալն է որ այժմ կը հետապնդէ, կ'անհանգստացնէ զիրենց եւ ոչ թէ ածխավաճառի վերածուած ըլլալու հեռանկարը որ յուժմպէտս կը տագնապեցնէր թուրք դիւանագիտութիւնը 137 տարի առաջ:

Աւելին, Քեմալ հիմնովին կը սխալէր եթէ կը կարծէր թէ հայ զինուորը

«պատուով» չէր պաշտպանած իր հայրենի սահմանները: Հայրենանուէր հայ մարտիկը ոչինչ կրնար ընել երբ իր հայրենիքը շրջապատող չորս պետութիւններէն երեքը եւ հիւսիսի իր կոմունիստ կարծեցեալ պաշտպանը միասնաբար կը դաւադրէին մեղսակից վատութեամբը շարք մը իր հայրենակիցներուն, ու այսպիսով կը ջլատէին մարտունակութիւնը երկրապահ զօրքին: Այլապէս, Քեմալ պէտք է յիշէր թէ նոյն այդ հայ մարտիկը միայն երկու տարի առաջ սփանչելի խիզախումով մը փախուստի մատնեց իր հայրենիքը պաշտպանելու «պատուէն» զրկուած թուրք զօրաբանակը Սարտարապատի, Բաշ Աբարանի ու Ղարաֆիլիսայի մէջ: Այդ խոյանքին արդիւնքն է այսօր որ Հայերը եղան իրենց կողին խրուած ու զիրենք արիւնոյ տէգը, այլապէս, թուրքերը առանց Սարտարապատի, ժամավաճառ պիտի չըլլային ցեղասպանութեան

ճանաչումով զբաղելով: Այդ ճանաչման հարցը իրենց համար վաղուց վերածուած պիտի ըլլար բիւզանդական վէճի մը թննուկին:

Հէ՛գ Աթաթուրք, բնաւ չհասկցաւ իր այնքա՛ն սիրած եւրոպացիներէն, Հռովմէական զօրավարին պատգամը թէ «եղի՛ր հպարտ պարտութեանդ մէջ ու խոնարհ յաղթանակիդ մէջ», եւ չանդրադարձաւ երբէք թէ իր սնափառ յոխորտանքը օր մը պիտի վերադառնար եւ տարիներով հալածէր, ու խռովէր թուրք պետութիւնը եւ հարցադրէր անոր՝ թուրք պետութեան բարոյական կախում չունին ժամանակէն, բացի ոճիրին առնականութիւնը խիզախօրէն ու արժանապատուութեամբ դիմագրաւելու զինք յաւիտենօրէն խառանող ու խոցող ամօթն եւ ամէնէն շատ զբաղեցնող ու տագնապեցնող իր ձեռակերտը՝ ժողովուրդը մը ոչնչացնելու փառքերորդ դարու առաջին ոճիրը:

ՄԱՐԶՊԵՏ ՄԱՐԿՈՍԵԱՆ

ՎԵՐԱՐԺԵՖԱԿՈՐՈՒՄ

«Ի հպել նորա նմանող լինի նմա»
(Իմաստութիւն Սողոմոնի, Դ.2)

Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի գործի դրդապատճառները, դերը եւ յարաձիգ նպատակը ամբողջութեան մէջ ճանաչելու համար տարբեր փորձեր են արուել: Դրանք կանխակալ ըմբռնողութեան պայմաններում յաճախ յարմարցուել են ուսումնասիրողների նիւթակա-
նացուած պատկերացումներին:

Գրականագիտութիւնը շատերի շարքում Մաշտոցին եւս ներկայաց-
րել է հիմնականում որպէս լոկ գիտնական՝ սահուն կերպով յետին պլան
մղելով նրա հոգեւոր գործունէութիւնն ու դիմագիծը՝ իբրեւ ներելի մի
թուլութիւն: Այլ խօսքով՝ հերձում է նրա վարդապետական հոգեկերտ-
ւածքի ամենատեղական կողմը եւ խանգարում՝ հանճարի աշխարհայեացի
օգնութեամբ ազգային գերիխնդիրների խորհային շերտերը հասկանալուն:

Անաչառ ուսումնասիրութեան համար կը փորձենք հաշուի նստել
թէ՛ գիտական, թէ՛ հոգեւոր պատմագրութեան ու գրականութեան հետ:

Ըստ աշխաւիկ պատմագրութեան (օտար աղբիւրների եւ Մ. Խորե-
նացու վկայութիւնների) 384 թուականին Հայաստանի թագաւորութիւնը
բաժանում է երկու մասի՝ ենթարկուելով Բիզանդիային եւ Պարսկաս-
տանին: Բիզանդական մասում գտնուող Բարձր Հայքի նահանգը, Պապի
որդի Արշակ թագաւորի մահից յետոյ (387) սկսում է կառավարուել
յոյների կողմից նշանակած կոմսերի կողմից:

Պարսից բաժնում Շապուհ արքան հայոց թագաւոր է նշանակում
Արշակունի Խոսրովին (384-387), որի օրօք կաթողիկոս է ընտրւում
Ներսէս Մեծի որդի Սահակ Պարթեւը (387):

Նրա մասին Մ. Խորենացին գրում է. «...Մշտնջենաւոր պաշտ-
մամբ կատարէր գկանոնն, որպէս գայնս, որք յանապատս էին, եւ
հոգայր գաշխարհս, որպէս գայնս, որք յաշխարհի են»:¹

Փաստագրութեանը զուգահեռ՝ ընթանում էր նաեւ տեսիլային
պատմագրութիւնը, որը դիտւում էր առաջատար եւ ազդում գործողու-
թիւնների ընթացքի վրայ:

Լինելով ժամանակի մեծագոյն մտաւորական կրօնաւորներից մէկը՝
Մաշտոցն անշուշտ, քաջատեղեակ էր թէ՛ հնագոյն ու վաղ միջնադա-
րեան ողջ մշակոյթին, թէ՛ մարգարեական ու տեսիլային գրականութեա-
նը, թէ՛ պատմագրութեանն ու ժամանակի գիտութիւններին: Նթէ այսօր՝
տասնեակ դարեր յետոյ, մեր մէջ սկսել է հետաքրքրութիւն արթնանալ
Գրիգոր Լուսաւորչի, Ներսէս Մեծի, Սահակ Պարթեւի, Մեսրոպ Մաշտո-
ցի, Սովսէս Խորենացու մարգարեական կանխատեսումների հանդէպ,
ապա նրանց ապրած ժամանակում այդ յայտնութիւնները պէտք է որ

¹ «...Եկեղեցական պաշտամունքների կանոնը անխափան կատարում էր
անապատականների նման եւ մեր աշխարհի հոգը քաշում էր աշխարհականների
նման» (Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երեւան-1981, էջ 39-95):

ընկալուելին՝ իբրեւ անհերքելի, բայց դեռ սպասուող իրողութիւններ՝ ժամանակից դուրս:

Հարկ ենք համարում տեսիլային պատմագրութիւնից բերել օրինակներ, որոնք նախորդեցին եւ զուգադիպեցին Հայաստանի երկփեղկման, Արշակունեաց թագաւորութեան անկման եւ Գրիգոր Լուսաւորչի տոհմի քահանայապետութեան ւաւարտին:

Տիրան թագաւորը 348 թրածեծ անելով՝ սպանեց Յուսիկ կաթողիկոսին: Վերջինիս որդիները չուզեցին յաջորդել հօրը եւ հրաժարուեցին հայրապետական պատուից: Տիրանը գահին առաջարկեց Դանիէլ քորեպիսկոպոսին: Սա ոչ միայն մերժեց, այլեւ ծանր նախատիկմներ տուեց հայոց աւագանուն եւ, մասնաւորապէս, Տիրան թագաւորին ու շեշտեց, որ Գրիգոր Լուսաւորչի ժառանգին սպանելու եւ հրեաների կատարած բոլոր չարագործութիւնները կրկնելու պատճառով կարն ժամանակ անց՝ Արշակունեանց թագաւորութիւնը եւ Լուսաւորչի սերնդի քահանայապետութիւնը կը դադարի գոյութիւն ունենալուց, իսկ ժողովուրդը ու իր երկրի սահմանները Խարայէլի նման ցրիւ կը գան, կը մատնուեն օտար թշնամիների ձեռքը, ու դա կը տեսի շատ երկար. ստրկութեան լուծը դարեր չի վերանայ ու չի պակասի:

Այս ծանր կանխասացութիւնից յետոյ Տիրանը ծերունագարդ Դանիէլ կաթողիկոսին խեղդամահ է անում: Իսկ երկու տարի անց, երբ Տիրանին պարսիկները կուրացնում են, խոստովանում է իր յանցաւորութիւնը եւ վկայում, որ նրա կանխատեսումները սկսել են իրականանալ:

Տարաբախտ վախճան են ունենում նաեւ նրա յետնորդները՝ Արշակ երկրորդը, Պապը...

Գնէլի սպանութեան համար Արշակին յանդիմանելիս՝ Ներսէս Մեծը եւս նոյն կանխատեսումն էր արել, թէ Արշակունիները կը խմեն արքեցման եւ կործանման վերջին բաժակը: Այդ մասին մանրամասնում է Փաւստոս Բիւզանդը:

Այս դէպքերին յաջորդում է Սահակ Պարթեւի յայտնի տեսիլքը, որը տրուել էր նրան, ըստ իր վկայութեան, դեռեւս եպիսկոպոսական ձեռնադրութիւնից առաջ եւ ուր հաստատում են նախորդ մարգարէութիւնները. «...լու՛ր ստուգապէս, զի լոնսցէ մերձ ընդ թագաւորութիւն յազգէդ Արշակունեաց, եւ քահանայութիւն ի ցեղէ արծանաւոր քահանայապետին Գրիգորի...ծանիր հաւաստեալ, զի մերձ յերեւումն պղծոյն անապատի՝ դարձեալ յառնէ թագաւոր յազգէդ Արշակունեաց, եւ նորոգի աթոռ հայրապետութեան ի շառաւղէ Սրբոյն Գրիգորի»:²

Պէտք է կարծել, որ այս բոլոր անցուդարձին քաջածանօթ լինելով եւ իր ուսուցչին լաւ ֆանաչելով է, որ Մովսէս Խորենացին գուսպ, բայց խորհուրդաւոր ձեռով գրում է Մաշտոցի՝ արքունիքից հեռանալու փաստի մասին՝ որպէս թէ իր հիացմունքը յայտնելով, թէ Մաշտոցը հեռացել է աշխարհիկ ասպարէզից ֆիշտ ժամանակին՝ հոգեւոր զինանոց

² «...լսիր եւ ճշմարտապէս իմացի՛ր, որ շատ շուտով պէտք է լոնն Արշակունեաց տոհմի թագաւորութիւնը եւ քահանայութիւնը՝ արծանաւոր քահանայապետ Գրիգորի տոհմից...իմացիր, որ անապատի պղծի երեւալու մօտ դարձեալ պէտք է թագաւոր ելնի Արշակունեաց տոհմից, եւ պիտի նորոգուի հայրապետական աթոռը Սուրբ Գրիգորի շառաւղի կողմից» (Ղ. Փարպեցի, Հայոց Պատմութիւն, Երեւան-1982, էջ 76-79):

ստեղծելու վնասկան եւ երկնամերձ նպատակադրմամբ. «Տեսեալ, թէ վերջ հասեալ է թագաւորութիւնն Հայոց, եւ յիտոպութիւնն նիւթ իւրոյ համբերութեանն գտեալ Մեսրոպայ...սա սիրեաց զմիայնակեցութեան վարս. որպէս ասաց ռմն, թէ ի նաւահանգիստ փութայ նաւ խոռովեալ, եւ անձն ժուժկալ խնդրէ զանապատ. նոյնպէս եւ նորա փութացեալ յաշխարհական զբաղմանց եւ ընկեցեալ յետս մարմնական պատիւն՝ զհետ ընթանար Երկնաւորին»³.

Եթէ դատելու լինենք արդի գրաքննադատութեան դիրքերից, կարելի է կարծել, թէ Մաշտոցը փախուստ տուեց իրականութիւնից, թերացաւ պայքարի մէջ: Բայց նրա գործի արդիւնքը լրիւ հակառակն է ապացուցում:

Վարքի նոյն դրսեւորումն տեսնում ենք նաեւ Սահակ Պարթեւի մօտ. արեամարանք դիրքին կեանքի նկատմամբ՝ յանուն բնական կողմից ըմբռնելի խորհային ու առանցքային արժեքների. «Այսպէս, Մեծն Իսահակ արեամարեալ զհայրենի պայագատութիւն Պարթեւագանց, ընտրեաց զեկեղեցական անփառութիւն. եւ Սուրբն Մեսրոպ լեւեալ զարքունի գործակալութիւն, առանձնացաւ անապատ»⁴, - յետագայում գրում է Մխիթարեան միաբանութեան հոգեւրական, շարականագետ Գաբրիէլ Աւետիքեանը:

Մաշտոցը (ըստ վարքագիր Կորիւնի, Մ. Խորենացու եւ այլոց) դարձաւ անապատական այր, որպէսզի իր ողջ ջանքերն ու բազմաժամանակեայ մտածութիւնն ուղղի մի նպատակի, որը տեղատուութիւն ապրող ժողովրդի համար կ'ապահովէր յաւիտենական լինելութիւն՝ տալով յարամնայ պայքարի եւ գոյութեան զօրեղ առեւտուհայ: Իսկ դա Աստուածաշունչ Մատեանն էր, որ հայ մարդու սափական էութիւնը դարձնելու համար՝ գիր էր պէտք: Եւ այն պէտք է ստեղծուէր՝ որպէս միջոց, քայլ՝ համագգային բաղձանքների սրբագործման երկար քանակապարհին:

Այդ տարիներն էր, որ ախտերեցին Մեծն Յովհան Ոսկեբերանին, ու այդ պատճառով Բիւզանդիայի մայրաքաղաքում յուզումներ ծաւալուեցին. պատերազմում էին իրարու եւ պարսիկների դէմ:

Խորենացին գրում է, որ պարսից Վոսաւ արքան հայոց թագաւորին՝ Վոսաւշապուհին, կարգադրում է՝ գնալ Միջագետք եւ երկու կողմերի վեճերը վճել: Վոսաւշապուհը քարտար թարգմանի-քարտուղար չունենալու պատճառով դժուարութիւնների է հանդիպում, քանի որ

³«Տեսնելով, որ հայոց թագաւորութեան վերջը հասել է, խոռովութեան մէջ համբերելու նիւթ գտնելով՝ Մեսրոպը...սիրեց մեռակեացի վարքը, ինչպէս ասել է մէկը, թէ ակեթածուած նաւն շտապում է նաւահանգիստը, իսկ ժուժկալով մարդը անապատ է փնտռում. նոյնպէս եւ նա աշխարհային զբաղմունքներից փախչելով եւ դեն գցելով մարմնական պատիւը՝ ընթանում էր Երկնաւորի ետեւից» (Մ. Խորենացի, Հայոց Պատմութիւն, Երեւան-1981, էջ 388-89):

⁴«Այսպէս Մեծն Իսահակը արեամարեց հայրենի Պարթեւական ազնուական ժառանգութիւնը, ընտրեց եկեղեցական անշխարհութիւնը, եւ Սուրբ Մեսրոպը լեւեալ արքունական գործակալութիւնը, առանձնացաւ անապատ» (Գ. Աւետիքեան, Բացատրութիւն Շարականաց, Վենետիկ-1814, էջ 550):

պարսկական գիր էր գործածում: Մաշտոցն արդեն հեռացել էր արժույթից եւ մենակեցութեան տրուել Գողթն գաւառում:

Վերադառնալով Հայաստան՝ Վոսադապուհը տեսնում է, որ Սահակ Պարթեւը եպիսկոպոսական ժողով է գումարել՝ հայերէն գրեր ստեղծելու մտադրութեամբ: Մինչ այդ՝ հայոց արքային Միջագետքում արդեն Յարել ֆահանան առաջարկել էր Դանիէլի մօտի գրերը:

Սահակ Պարթեւը եւ Մեսրոպ Մաշտոցը մտնում են Վոսադապուհ քաղաքի մօտ, խրախուսում եւ ընդգծում են սպասուելիք գիտի անկորնչելի արժէքը՝ ասելով. «Ճեպեա յաղագս մեծ եւ օգտաբեր աշխարհիս Հայոց գիտիս այսորիկ ի ժամանակս քո, որ շատ աւելի առ յապայնս բերէ քեզ շահ, յիշատակ անմոռաց եւ օգուտ երկնաւոր վայելից, քան զիշխանութիւն քաղաւորութեանդ քո, եւ կամ որպէս յառաջ քան զքեզ նախնիքդ որ էին յագգէն Արշակունեաց»:⁵

Դատելով այս մեծ ոգեւորութիւնից եւ երկնային վայելքների յորդորից՝ պէտք է ենթադրել, որ Սահակ Պարթեւը իր տեսիլքին հաւատում եւ ընթացք է տալիս, ուր բացայայտ ակնարկներ կան ոսկէ դարի, գրի եւ նրանց խորհրդաւոր դերի մասին. «Եւ ի վերայ սկուտեղն կար...մագաղաթ հատուածածն չորեքուսի, գրեալ ի սկզբանն կարգս ինչ սակաւ՝ ոսկետեսիլ գրով սփանչեալէս, իբր քէ ձեռամբ գրչի ճարտարի. եւ ի միջոյ կողման մագաղաթի, յետի ոսկեգիր կարգացն, երեւէին այլ կարգք ինչ եղծեալք ջնջագիրք, որոց ոչ ինչ բնաւ երեւեր տեսիլ գրոյն եւ կամ կերպարան: Եւ հուսկ մագաղաթին, հետի ի ջնջագիր կարգացն, դարձեալ տեսանէի այլ եւ կարգ մի եւ կէս կարգի, գրեալ ոսկեգիր գրով առաւել սփանչեալէս, ըստ տեսոյ առ աջին կարգացն գրելոց ի սկզբանն մագաղաթին: Եւ կիսագիր կարգին մինչեւ ցմիջոց գրոյն՝ եւս առաւելագոյն էր ոսկով, եւ այլն կարմրադեղով էր»:⁶

Իսկ տեսիլքի մեկնութեան մէջ ասում է. «Եւ մագաղաթն հատուածածն, որ ցուցաւ քեզ գրեալ ի սկզբանն կարգս ինչ ոսկեղէն գրով՝ զձեռնադրութիւն արանց սրբոց՝ եցոյց քեզ շնորհք Հոգւոյն Սրբոյ, որ ի գաւակէ երանելոյն Դրիգորի՝ յաջորդեսցեն արժանապէս զաթոռ ֆահանայապետութեան. նոքա են արք ընտիրք, գրեալք ոսկետեսիլ գրով ի դպրութիւն Կենաց»:⁷

⁵ «Մտապի՛ր, որ քո ժամանակում լինի Հայոց աշխարհի համար մեծ ու օգտաբեր այս գիտն, որը ապագայում քեզ պիտի բերի առաւել մեծ շահ, անմոռաց յիշատակ եւ երկնային վայելքների օգուտ, քան քո քաղաւորական իշխանութիւնն է քան քեզանից եղած քո Արշակունեաց տոհմակից նախնիները» (Ղ. Փարպեցի, Հայոց Պատմութիւն, Երեւան-1992, էջ 32-33):

⁶ «Եւ սկուտեղի վրայ կար...քառակուսի կտրուած մի մագաղաթ՝ սկզբից մի փնչ, որպէս ճարտար գրչի ձեռքով գրուած ոսկեգեղով գրով, սփանչելիօրէն շողշողուն, իսկ մագաղաթի միջի ոսկեգեղով գրից հետո երեսում էին մի քանի տող եղծեալ գրեր՝ ջնջուածի պէս, որոնց ոչ ձեւերն էին երեսում ո՛չ գրատեսակը: Եւ միայն մագաղաթի վերջում՝ ջնջնգիր տողերից հետո, դարձեալ տեսնում էի մէկ ու կէս մագաղաթի վերջում՝ ջնջնգիր տողերից հետո, առաւել սփանչելի՝ մագաղաթի առաջին տողերի տող գրուած ոսկեմաշշ տառերով, առաւել սփանչելի՝ մագաղաթի առաջին տողերի տող գրերի նման: Եւ մինչեւ այն կիսատ տողի մէջտեղը դարձեալ ոսկեգոյն էր, նրանից դեմը՝ կարմրադեղով» (նոյն տեղում, էջ 68-69):

⁷ «Եւ մագաղաթը հատուածածն, որ քեզ երեսաց սկզբում մի քանի տող գրուած ոսկեղէն գրով, նշանակում է Սուրբ Հոգւո շնորհած արժանաւոր այն մարդկանց

Ի՞նչ լեզուով էին ոսկե գրերը: Տեսիլի շարադրանքը եւ պատմագիրը լուծւում են այդ մասին: Բայց դժուար չէ կոսակել, որ դրանք հայերէն էին: Յաւելեմ, որ Ոսկեդարի գրերի ընտիր այրը՝ Մաշտոցը եւս Ս. Գրիգորի տոմարից էր եւ Ս. Սահակ Պարթեւի մահից յետոյ կաթողիկոսական գործերում փոխարինեց մեծ կրօնաւորին եւ վախճանուեց նրանից վեց ամիս անց:

Յիշեմ, որ չնայեա՞ծ Ս. Սահակ Պարթեւը մինչեւ իր մահը ֆանանչուեց եւ ընդունուեց՝ որպէս Հայոց կաթողիկոս, բայց Պարսկաստան կանչուելով գահընկէց էր արուել դեռեւս 428 թուին՝ Հայոց թագաւորի դէմ ապստամբած նախարարներին չմիանալու պատճառով: Նրան յաջորդող երեք հակաթոռ կաթողիկոսներից հիասթափուած նախարարները, երբ 437 թուին բազում թախանձանքներով դիմում են Ս. Սահակ Պարթեւին, նա մերժում է ու ասում. «Երբայք յինէն ի բաց...մի՛ բռնադատէ միսիթարել զիս ի վերայ բեկման ժողովըրդեան իմոյ: Վասնզի գանցս աղէտիս այստրիկ յառաջ քան ձեռնադրելն զիս յեպիսկոպոսութիւ՝ եցոյց ինձ վերին կանխասացութիւն, գիտելութիւն յանուրջս, ըստ օրինակի մարգարեական տեսեանն, որ ցուցաւ Սուրբ նահատակին Գրիգորի, գիտութիւն իրաց առ ի յապալ եղիլոցս»:⁸

Այս ներկայացնելով պատմութեանը քաջ յայտնի տեսիլքը՝ գահ չվերադառնալը հիմնաւորում է հենց դրանով, ըստ որի՝ իրենով աւարտում է Լուսաւորչի տոմարի ֆախանայապետութիւնը, եւ դարերի լուսաւորչից յետոյ միայն (ինչպէս յիշատակուեց) Սուրբ Գրիգորի շառաւղից պիտի նորոգուի հայրապետական աթոռը:

Այս հիմնաւորումը ուշագրաւ երեւոյթ է եւ արժանի է լուրջ ուսումնասիրութեան:

Առանց ջանք թափելու էլ նկատում ենք, որ այս մարգարեութեան հեղինակը ոչ թէ հլու ֆակտագրապաշտ է, այլ դժուարին մաքառումներից չերկնչող առաջնորդ, որ նայում է դարերի միջով եւ անկեղծօրէն մտածեցուած է իրենից յետոյ եկողների համար:

Ունենալով խորհրդաւոր բովանդակութիւն՝ տեսիլային գրականութեան եւ պատմագրութեան այս հագուագիւտ մամուլը եւս միւսների պէս մնացել է չլուսաբանուած՝ չնայեա՞ծ իր մէջ թագցնում է անպարագրելի հարստութիւն:

Մեզ չի յաջողուել ուշտել, թէ առաջինը ով է Ոսկեդար անուանել հայոց 5-րդ դարը, բայց, ինչպէս նկատում ենք, դրա պարզ ակնարկը եւս կայ 4-րդ դարի երկրորդ կեսին ենթադրուող այդ տեսիլում:

Նախկինում անդրադարձել ենք Ոսկեդարի եւ դրա կայացման մէջ հայատառ Աստուածաշունչ մատնանի դերին:

ձեռնադրութիւնը, որոնք երանելի Գրիգորի տոմարից արժանապէս պիտի յաջորդեն ֆախանայապետութեան աթոռին: Նրանք ընտիր մարդիկ են՝ Կեանքի Գրքում գրանցուած ոսկեղէն գրով» (նոյն տեղում, էջ 78-79):

⁸ «Հեռացէք ինձանից...Մի՛ ստիպէք, որ ես միսիթարեւմ իմ ժողովրդի կործանման վրայ, որովհետեւ այս աղէտի անցքերը դեռեւս եպիսկոպոսութեան ձեռնադրութիւնից առաջ ինձ ցոյց էր տուել վերին կանխագիտութիւնը, որ մարգարեական տեսիլի օրինակով երեւաց Սուրբ նահատակ Գրիգորին՝ հասկացնելով այն իրողութիւնը, որ ապագայում է լինելու» (նոյն տեղում, էջ 64-65):

Ուզում եմ 2024-ից մեծ շարականների խնդիրը, որը մեզ պակաս կարեւոր չի թուում:

Եթե մի կողմ թողնենք «շարական» բառի արեղեմական եւ այլ ստուգաբանութիւնները (որոնք լոկ բառային են), ապա իմաստային ստուգաբանութեան համար բառականին հետաքրքիր նիւթ կը գտնենք դարձեալ Ս. Պարթեւի կանխասացութեան մէջ. «...կայր Սեղանն ոսկի ի պատուական ականց ընդելուզեալ- Սրբոյ Երրորդութեանն ծանուցանի միասնականութիւնն, որ գվարս եւ զնգնութիւն արդարոցն, որպէս զպատուական ականց զանազանումն առ ինքեան տպաւորեալ զուարեացն»⁹:

Այս է վկայում մեծ շարականի հատուածը, որը մեծ կարելի է դիտել որպէս իւրատիպ մեկնաբանութիւն.

Թագ պարծանաց Արշակունեաց կազմեալ.

առաքելական վարում տէր Գրիգորիոս.

յօրինեցար բազմագոյն ականքք

հանդիսից մահատակութեան.

վայելուչ պսակ հիւսեալ

Սուրբ Եկեղեցւոյ»¹⁰:

Գտնում ենք, թէ այս մուշներն էլ բառական են, որպէսզի հասկանանք, որ միջին դարերում եկեղեցական մեր մտաւորականները մահատակութեան հանդէսը եւ սրբերի վարքը նկատում էին՝ իբրեւ թանկագին քարերի շարք, որն ընծայաբերում էր Սուրբ Երրորդութեանը՝ իր եկեղեցու միջնորդութեամբ: Եւ դա հոգեւոր երգերով էր արտահայտւում: Ուստի պէտք էր վաւերացուէր առաւել դիպուկ անուամբ՝ «շարական», ուր կենդանի գիրը՝ բանաւոր Պատարագը անարատ ու ճգնական զոհաբերութիւնն է. դրան աշխարհիկ հանդիմանքը չեն խառնում: Անձը՝ եւր սրբօրէն է մեռած՝ ինչպէս մագաղաթ, բայց եւ կենդանի է՝ ոսկէ գրերով լցուած մագաղաթի պէս:

Ընտիր քարերի շարքը հանդիպում ենք Հնգամատեանում, Եսայի գրքում, Յովհաննէս Եպիսկոպոսեանի մէջ, Նարեկացու Ողբամատեանում...

Աստուածաշնչում յատուկ նպատակով մասնաւորում են ընտիր քարերի եւ նրանց շարքերի անուանումները (ըստ որում՝ անփոփոխ հերթականութեամբ). Լանջապանակի՝ ոսկով ընդելուզուած տասներկու քարերը Իսրայէլի տասներկու ցեղերի անուններով էին: Եւ դա զարդարում էր Սուրբ Խորան մտնող քահանայի կուրծքը:

Լայն լուսաբանումը թողնելով յետագային՝ դարձեալ դառնանք առաջին Թարգմանիչներին, որոնց շարականներում յստակ ուրուագծում է նրանց ճգնական սուրբ վարքը:

Ահա Մաշտոցի ապաշխարութեան շարականներից մի մուշ.

Յամենայն ժամ աղաչանք իմ այս են.

⁹ «Կար պատուական քարերով ընդելուզուած ոսկէ Սեղան, որ ցայց է տալիս Սուրբ Երրորդութեան միասնականութիւնը, որը սրբերի վարքն ու ճգնութիւնը, որպէս պատուական քարերի տարբերութիւններ իր վրայ առնելով՝ ուրախացնում է» (նոյն տեղում, էջ 74-75):

¹⁰ «Շարական, Ս. Վարդան հրատ. 1986թ. էջ 266, Կանոն Սրբ. Գրիգոր Լուսաւորչի մուտն ի Վիրապն»: (Շարականների կառոյցը չխախտելու համար ձեռնպահ ենք մնում դրանց թարգմանութիւնից):

Ի մեղաց իմոց սուրբ արա զիս, Տէր:
Յանցանաց իմոց զարիւրի սիրտ իմ,
աղաչեմ գճեզ, թող ինձ, Տէր:
Արտասուաց իմոց մի՛ լոեր, Տէր,

զի պանդուխտ եմ ես յանցաւոր երկրի:¹¹

Մեղանչած կը լինենք Մաշտոցի դէմ, եթէ կարծենք, թէ նա մման շարական գրելիս՝ ներքուստ վստահ չէր իր գրածի անկեղծութեանը: Պարզ եւ բազմաշերտ տողերում բացում է նրա զգայուն, մեղսագիտակ եւ ազնիւ էութիւնը, որը չի ձգտում տիրանալ անցողիկ երկրին՝ իրեն եւ դիտելով որպէս անցողիկ եւ օտար: Մեծ կատարելութիւն, ուժ եւ շնորհական հաւատ էր պէտք՝ ապրելու, անդուլ գործելու եւ գոհաբերելու այդ ձեւով, որպէսզի դպրոցներում, Նկեղեցում ձեւաւորուէր ազգը եւ ըմբռներ անցեալին դէպի ապագայ ձգտող իր երթի կարեւորութիւնն եւ իմաստը: Դրա համար ստեղծելով գիրը՝ նա ոչ միայն Սուրբ Գիրքը թարգմանեց եւ գրեց շարականներ՝ ուսուցման եւ Առաքելական Նկեղեցու համար: Այլ նաեւ «...սկսեալ երանելոյն Մաշտոցի քառս յաճախագոյնս դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի լուսաւորութենէ եւ ի հիւթոյ գրոց մարգարեականաց կարգել եւ յօրինել, լի ամենայն քաջակօֆ Աւետարանական հաւատոցն հշմարտութեան»: ¹² Ու դրանով նա, Սահակ Պարթեւի հետ միշտ միաբան, պայքարում էր աղանդների եւ ուսուցման համար ոչ պիտանի սնտոի գրականութեան դէմ եւ արմատախիլ անում դրանք:

«Եւ զայս առնէր զամենայն ժամանակս իւր՝ վասն անձին եւ վասն աշխարհի. քանզի սովոր իսկ են հշմարիտ վարդապետք՝ զանձանց առաքիւնութիւնս կանոն աշակերտացն դնել»: ¹³

Այս ամէնով հասկանալի է դառնում գրի գիտի անգնահատելի դերը: Իսկ թէ դա որքան է կարեւորել դարերի մէջ, երեսում է նաեւ վարդան Արեւելցու հեղինակած շարականներից:

- Որք զարդարեցին տնօրինաբար զիմաստս Անեղին՝
հաստատելով յերկրի զգիր կենդանի՝
հովուել զհօտ Նոր Իսրայէլի՝
երգով քաղցրութեան հնչմամբ զԱստուած օրհնեսցումք:
...Որք զօրութեամբ Հօր իմաստութեան էին Անեղի՝
հաստատեցին զաթոռն Սրբոյն Գրիգորի՝
թարգմանութեամբ նշանագրութեան.
երգով քաղցրութեան հնչմամբ զԱստուած օրհնեսցումք...
...Որ խորհրդեամբ Հշմարիտ Լուսոյ փառաց Անեղին
նկարագրեցաւ մեզ գիր կենդանի
յարգանդ մաքուր մեծին Մեսրոպայ,

¹¹ Նոյն տեղում, էջ 205, Կանոն Երրորդ Կիրակէի Արուեսցից:

¹² «Երանելի Մաշտոցն...սկսեց կարգել եւ յօրինել յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմի քառեր՝ մարգարեական գրքերի լուսաւորութիւնից եւ հիւթից՝ Աւետարանական հշմարիտ հաւատի ամեն քաջակներով լիքը» (Վորիւն, Վարք Մաշտոցի, Երեսան-1941, էջ 78-79):

¹³ «Եւ այս անում էր իր ամբողջ կեանքում՝ իր անձի եւ աշխարհի համար: Որովհետեւ հշմարիտ ուսուցիչներն իսկապէս սովոր են իրենց առաքիւնութիւնները աշակերտների համար օրինակ դարձնելու» (նոյն տեղում, էջ 82-83):

անմատոյց Լուսոյն երկրպագեցուի:
Նմանալ Մովսէսի, տէր վարդապետ,
բերելով զգիր օրինաց ի Հայաստան աշխարհս.
որով լուսաւորեցան ազգ որդւոց Յակոբայ:
Արդ, աղաչեմք զգոյնն հեգութիւնդ. տէր վարդապետ,
բարեխօսեա առ Հայր ի յերկինս՝
վասն քո սօնողացս.
բանգի քե լուսաւորեցան
մանկունք Սուրբ Եկեղեցւոյ»:¹⁴

Մաշտոցը համեմատում է Մովսէս մարգարէի հետ, որը հրեական տասներկու ցեղերի առաջնորդն էր եւ որին վիճակուել էր՝ 430-ամեայ եգիպտական գերութիւնից ազատելու իր ժողովրդին եւ 40 տարի առաջնորդելու Սինայի անապատով՝ դէպի Աւետեաց երկիր: Դրա համար Սինա լեռան վրայ ստացաւ տասը պատուիրանները՝ Աստծոյ ձեռամբ գրուած. եւ քարէ տախտակների վրայ բերեց իր ժողովրդին:

Ռամզես երրորդ փառաւորի ժամանակ (1180-1148թ.Վ.Ք) հրեաների կրած այդ փորձութիւնները ռամք դիտում են՝ որպէս Իսրայէլի ժողովրդի ծննդեան պայման:

Նման զուգահեռ է անցկացւում Մաշտոցի եւ Մովսէսի միջեւ. մէկն առաջնորդեց Հին Իսրայէլին, միւսը՝ Նոր Իսրայէլին՝ Հայ ժողովրդին:

Շարականագիրը չի վարանում՝ Սուրբ Մեսրոպին համեմատելու անգամ Տիրամօր հետ, իսկ հայոց գիրը՝ Բանն Աստծոյ հետ: Այդ հատուածը Գաբրիէլ Աւետիքեանը վերլուծում է այսպէս. «Անդ ի վեց տան («Որ խորհրդեամբ») վայելուչ նմանութիւն դնի. իբր ասել...նկարագրեցաւ կամ կերպաւորեցաւ գիր կենդանի՝ ի մահուր արգանդի մեծին Մեսրոպայ...որպէս եւ ի մահուր արգանդի Կուսին կերպացաւ Բանն Աստուած մարմնովն՝ իբրեւ Գիր կենդանի. գի որպէս գիր փակէ յինքեան եւ երեւցուցանէ զձայնն եւ զիմաստ բանին, այնպէս մարմինն Տէրունական յինքն կրէր զՀոգին Բանական եւ զԱստուածութիւնն Անմարմին»:¹⁵

Ս. Մեսրոպ Մաշտոցի, Ս. Սահակ Պարթեւի եւ նրանց հետեւորդների ժառանգութիւնից նկատում ենք, որ նրանք ջանք են արել, մասնաւորապէս շարականներով, այն աստիճանի սրբագործել հայոց գիրն եւ նրա ասելիքը, որ մերձեցայ, հպուի Աստծոյ խօսքին, ներդաշնակի սուրբգրային բարոյականութեանը, որպէսզի բազմաբնոյթ մարտահրաւերներում անկումներից ոտքի կանգնեցնի՝ մարգարէի կանխասացութեամբ, ցրուած սահմաններ ժառանգած ազգին, դեռ ասելին՝ դուրս բերի նրան յաղթանակած ու վեհացած: Դժուար չէ կոնաւել նաեւ, որ Սրբոց Թարգմանչաց համար ոգեշնչման աղբիւր է եղել թէ՛ այն համոզուածութիւնը, որ Երկնային Զեոքն է գրել հայ

¹⁴ Շարական, էջ 692-697, Կանոն Սուրբ Թարգմանչաց:

¹⁵ «Շարականի վեցերորդ տան մէջ («Որ խորհրդով...») վայելուչ նմանութիւն է դնում, ասում է, որ իբր նկարագրուեց կերպարանուեց մարմնով Բանն Աստուած՝ իբրեւ Կենդանի Գիր. բանգի ինչպէս գիրն իր մէջ պարփակում եւ ցուցանում է նաեւ ձայնն ու խօսքի իմաստները, այնպէս Տէրունական մարմինն իր մէջ կրում էր Բանական Հոգին եւ Անմարմին Աստուածութիւնը» (Գ. Աւետիքեան, նոյն տեղում, էջ 550):

այրուքներ, քե՛ւ Մաշտոցի մարմինն ուղեկցող Խաչալոյսը: Դրանց մասին խնամքով ու երկիւղածութեամբ տեղեկացնում են Մաշտոցի ժամանակակիցները եւ ուղեւոր ընդունում՝ հագուագիւտ միակամ երկու խոշոր ուսուցիչների աշխարհայեացքը, վարքը եւ յայտնութեանական վկայութիւնները:

Ամբողջացնենք մեր ասելիքը այդ ոգեշնչումը բացող կանոնական շարականներով, որոնք յագեցուած են տեսիլային գրականութեան պատկերներով, կանխասացութիւններով եւ միաժամանակ զարմանալիօրէն պարզ են ու խորհրդապաշտ:

Հրաշափառ Աստուած եւ միշտ բարեխնամող.

որ յառաջ գիտութեամբ գիրկութիւն

Հայաստանեայց սկզբնաւորեալ,

ի Պարթեական մեղապարտ ազգէն

Լուսաւորիչ մեզ շնորհեցեր.

վասն որոյ բարեխօսութեամբ սորա,

Փրկիչ, կեցո զմեզ այժմ

Եւ ի Բո յահաւոր գալստեանն:¹⁶

Որ յարմատոց հարցն սրբոց

մեզ գաւազան բոխեցեր

գիսահակ Սուրբ հայրապետ՝

հովուել գիտ Բո, Բրիստոս:

Որ գիսաւարն անգիտութեան

Հայաստանեայցս լուծեր.

գիմաստութեան ծագեալ զոյս

սովաւ որդւոց Թորգոմայ.

որ գեանդերնեալ խորհուրդ Բո, Տէր,

տեսլեամբ Սրբոյն ծանուցեր.

յիշատակի սորա ընկալ

գոսնողացս աղաչանս:¹⁷

«Խոր է խորհուրդն ու վսեմ»:- Միայն այս բնորոշմամբ կարող ենք աւարտել մեր ասելիքը՝ բնական լայն ուսումնասիրութիւնը բողոքով ապագային:

ՍԱՍՈՒՆԻԿ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ

¹⁶ Շարական, Կանոն Սրբ. Գրիգոր Լուսաւորչին Եւանդոյն ի Վիրապէն, էջ 558:

¹⁷ Շարական Սրբոյն Խաահակայ Պարթեւի հայրապետին, էջ 572:

«ՃԻԿԷՐՈՎ ՊԱՐԵՑԷՔ...»

Եղեռնի ոգեկոչման 90-ամեակին առիթով հրաւիրուած էի Աւստրալիա, ուր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, Աւստրալահայ Միացեալ Ընկերակցութեան եւ «Նոր Բեմ» Թատերական Միութեան կողմէ երկօրեայ հանդիսութեամբ Յունիս 25-26, ծրագրուած էր ոգեկոչելու յիշատակը՝ եղեռնի զոհերուն:

Առաջին օրը՝ Սիտնիի Համալսարանի թատերասրահին մէջ բեմադրուեցաւ մեր հեղինակած վերջին թատերգութիւնը՝ «Որբին Մառը», զոր նուիրած էինք եղեռնի զոհերու յիշատակին: Հանդիսութեան երկրորդ օրը, Աւստրալահայ Միացեալ Ընկերակցութեան Կեդրոնին մէջ, հրաւիրուած էի բանախօսելու հայ գաղութին:

Ձոյգ ձեռնարկներէն ետք, տասնօրեայ մեր կեցութեան ժամանակացոյցը կը տնօրինէր «Նոր Բեմ»-ի հիմնադիրներէն եւ թատերախումբի տաղանդաշատ բեմադրիչ՝ Սագօ Կիւլէսէրեանը:

Ըստ սովորութեան, օր մը առաջ, ան կը տեղեկացնէր մեր այցելելիք շրջանները, ըլլան անոնք թուրիստական թէ ազգային հաստատութիւններ:

Իրիկուն մը, ան իր ազնուափայլ կնոջ՝ Մարկօյին հետ եկաւ մեզ կարեւոր տեղ մը տանելու: Վայրը անակնկալ մըն էր: Ճամբայ ելլելէ ետք, պարզուեցաւ որ «Նոր Բեմ»-ին զօրավիգ կանգնած հաստատութեան մը կեդրոնը պիտի այցելէինք:

Սիտնիէն աւելի քան ժամ մը հեռու... Ֆէյրֆիլտ կոչուած շրջանն ենք հիմա:

Մութը սեւ վարագոյրի նման

իջած էր այն թաղամասը՝ ուր կը գտնուէր շրջանի «Բանոյեա» Հայ Կեդրոնի գեղեցիկ կառոյցը:

Դուրսը՝ թեթեւ մաղուող անձրեւին տակ, Հայ Կեդրոնի Խնամակալ Մարմնի ատենապետ Կիրակոս Պաֆալեան, իր ընկերներուն հետ մեզ կը դիմաւորէ, բարի գալուստի ջերմ խօսքերով: Կը ձեռնուինք փոխադարձ յարգանքի ընկերական ոգիով:

Կիրակոսը մեզ կ'առաջնորդէ կեդրոնի երկրորդ յարկի սրահը, ուր կը գտնուին Հ.Մ.Ը.Մ.ի, Հ.Օ.Մ.ի, Համազգայինի, Խնամակալ Մարմնի գրասենեակները:

Լեւոն Տէմիրեան իր կարգին, քացատրութիւններ կու տայ մշակութային իրենց գործունէութեան մասին, ցոյց տալով մեզի կեդրոնի փոքր՝ սակայն հարուստ գրադարանը:

Աւելի քան 120 երիտասարդ երիտասարդուհիներ, ծնողներ, վարչականներ ներկայ էին այդ գիշեր:

Սրահը կ'եռար ու կը յորդէր հայկականութեամբ:

Հեռաւո՛ր Աւստրալիոյ մէջ այսպիսի ազգային եռուն կեանք... Ի՛նչ մեղֆս պահեմ, ես տեսած չէի անգամ Կլէմտէյի Հայ Կեդրոնին մէջ, այն օրերուն երբ...

Զջարունակեմք: Անցնինք:

Պարի յատուկ սեւ համազգեստներ հագած, հիմա դիմաց շարուած են հայ նոր սերնդականներ: Վաղուայ դեկավարները նոյն հայ գաղութին: Բոլորը ուրախ ու զուարթ պատրաստ են ծրագրուած յայտագիրը սկսելու: Բոլորն ալ անհամբեր կը սպասեն իրենց դեկավար՝ Ասատուր Հանեանի հրամանին:

Կիրակոսը կը մօտենայ ուրախ

տրամադրութեամբ, բացատրութիւններ կու տայ իրենց գործունէութեան եւ վերջապէս օրուայ ծրագրին մասին:

Դէմքին վրայ կարելի էր կարդալ այն արդար հպարտութիւնը, որ իրն էր, եւ իր նուիրեալ ընկերներուն, որոնք հակառակ ամէն խոչընդոտներու ու անտեսումներու, կը շարունակեն իրենց մեղուաջան աշխատանքը, վառ պահելով մշակոյթի ջահը, «Բանոյեան» կեդրոնը եւ մանաւանդ շրջանի «Փափագեան» շաքաթօրեայ վարժարանը:

Ու ահա Ասատուրի առաջին ազդանշանին վրայ կը հնչէ դիմաւորութիւնը... ու կը պարէ նոր սերունդը... կը պարէ ուրախ ու հպարտ... միակամ... աշխոյժ... շէնքը դղրդրացնելով իրենց ոտներուն տակ:

Այժմ կը լեցուն ուրախութեան արցունքով: 122 պարման-պարմանուհիներ մէկ երդիքի տակ հաւաքուած են այս գիշեր ու «գինովցած» հայ արուեստով: Մեծ մասը աւստրալիածին սերունդ են, որոնք հայերէն կը խօսին, կը կարդան ու կը գրեն:

Կը նայիմ կողքս նստած Սագօյին ու Մարկոյին, մեզի ընկերակցող «Նոր Բեմ»ի միւս վարչականներուն, ծնողներուն... բոլորին դէմքին վրայէն հպարտութեան զեփիւռ մը կ'անցնէր կարծես, ստեղծագործող ազգի մը զաւակները ըլլալու արդար հպարտութիւն մը:

Ու եղեռնի 90-ամեակի հանդիսութիւններէն ետք, ակամայ կը յիշեմ Սարոյեանի խօսքերը: «Աշխատեցէ՛ք, կործանեցէ՛ք այս ցեղը, անապատները դրկեցէ՛ք... վառեցէ՛ք անոնց տուններն ու եկեղեցիները... տեսէ՛ք թէ դարձեալ պիտի չապրի՞նք անոնք: Տեսէ՛ք թէ դարձեալ պիտի չխնդա՞նք անոնք: Տեսէ՛ք թէ ցեղը դարձեալ պիտի չապրի՞ք երբ անոնցմէ երկուքը իրար հանդիպին

ու խօսին իրենց մայրենի լեզուով»:

Մտածումներս կ'ընդմիջուին յանկարծ: Ասատուրն է հիմա, որ ինծի մօտեցած բացատրութիւններ կու տայ յաջորդական պարբերուն մասին:

Կը դիտեմ կլանուած, հիացած տարուած աշխատանքին վրայ:

Կը հարցնեմ Ասատուրին մասին:

Տեղեկութիւններ կը փոխանակուին:

Հալէպահայ երիտասարդ մը, համեստ ու ազնիւ, հայրենասէր, որ նախնական եւ երկրորդական ուսումը ստանալէ ետք տեղւոյն վարժարաններուն մէջ, կը մեկնի հայրենիք ուր կը հետեւի պարարտութեան ճիւղին: Ու հիմա... հեռաւոր Աւստրալիոյ խուլ մէկ անկիւնը, հայ կեդրոնի ջերմ յարկի տակ, այդ արուեստը կը փոխանցէ մեր նոր սերունդին:

- Ի՞նչ դժուարութեամբ այս խումբը հոս հասցուցինք... - կը պատմէ Ասատուրը, ու կը շարունակէ - սկիզբը իրար չէինք հասկնար: Երբ պարի շարժումներ կը սորվեցնէի, պարզ մարմիններն կը շարժէին միայն: Կրա՛կ ու ոգի՛ չկար մէջերնին: Կը պոռայի... ճիկէրով պարեցէ՛ք: Ու տղաքը զարմացած երեսս կը նայէին: Հո՛ս ծնած են, ի՞նչ կրնաս ընել: Ըսէ՛ ինծի... ինչպէ՞ս կրնաս տղոց ու աղջիկներուն բացատրել... հասկցնել... սորվեցնել, որ այս պարերը մերն են, հայկական են, պէտք է ճիկէրով պարել, ապրիլ պարին հետ:

Ու Ասատուրը լռեց... պահ մը նայեցաւ պարող խումբին... նայեցաւ աչքերուս ու արդար հպարտութեամբ ոտքի ելաւ յայտագիրը շարունակելու:

Ու տղաքն ու աղջիկները մինչեւ ուշ գիշեր պարեցին... պարեցին երկա՛ր... ապրումով պարեցին... ճիկէրով պարեցին:

ՆԱՀԱՊԵՏ ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Տ. ԿՈՐԻԻՆ ԱՅՂ. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ

ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՅՈՒՆԱՑ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԺԻ ԱՅՅԸ ՀԱՅՈՑ
ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Ուրբաթ, 2005 թուականի Նոյեմբերի 18-ին, հետեւելով վաղեմի աւանդութեանը, Հայոց Պատրիարքարան այցելեց Յունաց Նորընտիր Թեոֆիլոս III Պատրիարքը: Վանքի աւագ դրան մօտ Պատրիարք Սրբապանին հիւրընկալեց Հայոց Աւագ Թարգմանը եւ *դասանելով* առաջնորդեց ընդունելութեան դահլիճ, ուր Նորընտիր Պատրիարքի դիմաորեցին Ամենապատիւ Թորգոմ Սրբապան Պատրիարքը եւ Լուսարարապետ Նուրիան Արքեպս. Մանուկեանը:

Հիւրասիրութիւնից յետոյ ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Թորգոմ Պատրիարք Սրբապանը, շնորհաորելով Թեոֆիլոս III Պատրիարքին իր պատրիարքական ընտրութեան առիթով: Այնուհետեւ պատասխան ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Յունաց Պատրիարքը: «Շնորհակալ եմ, որ ընդառաջեցիք մեր ցանկութեանը եւ հանդիպելու այս բացառիկ առիթը ընծայեցիք: Բաջատեղեակ ենք այն բոլոր անհամաձայնութիւններին ու հիմնախնդիրներին, որ վերջին տարիներին ծագեց մեր երկու Պատրիարքարանների միջեւ, սակայն դա մեր միաբանութեան հաւաքականութեան ցանկութիւնը չէր, այլ մի անհատի, որ պարագաների բերումով մեր առաջնորդն էր ընտրուել: Մեր նպատակն ու ցանկութիւնն է վերականգնել մեր երբեմնի գործօն եւ արդիւնատէտ համագործակցութիւնն ու յարաբերութիւնները, վերականգնել քրիստոնէական միութիւնը եւ վստահութիւնը երկու եկեղեցիների հաւատացեալների միջեւ»: Շարունակելով իր միտքը, Ամենապատիւ Թեոֆիլոս III աւելացրեց. «Չինական առաժը ասում է. «Խաւարը անփծելու փոխարէն, աւելի լաւ է մի մոմ վառել»: Վստահ եմ, որ այս այցելութիւնը հենց այն լոյսը պէտք է լինի, որի կարիքը երկու կողմերն էլ պզում էին, եւ որը պիտի առաջնորդի առկայ հիմնախնդիրների լուծման: Իմ խորին համոզմամբ երկխօսութիւնը հիմնախնդիրների կարգադրման լուսագոյն միջոցն է»: Պատրիարք Սրբապանը պատասխանելով Յունաց Պատրիարքին նշեց, - «75 տարի է, որ Երուսաղէմում եմ, եւ իմ կեցութեան ընթացքում հայերի եւ յոյների միջեւ ոչ մի անհամաձայնութիւն չի եղել, միայն նախորդ Իրեմիոս Պատրիարքն էր, որ չարիք ստեղծեց մեր երկու Պատրիարքարանների միջեւ եւ վերջ որեց բարի յարաբերութիւններին, եւ այդ ամէնը պատահեց Աւագ Շաբաթուայ Լոյսի արարողութեան ընթացքում իր թոյլ տուած ստատուսքոյի խախտման պատճառով: Լիայոյս ենք, որ Դուք պէտք եղած ողջախոհութիւնը կը դրսեւորեք եւ գիտակցելով մեր երկու պատրիարքարանների եւ միաբանութիւնների միջեւ բարի յարաբերութիւնների խիստ կարիքը՝ կը համագործակցեք եւ կը լուծեք այդ հիմնախնդիրը»: Ապա Արիս Եպս. Շիրվանեանը առաջարկեց վերականգնել երկու պատրիարքարանների ստատուսքոյի յանձնախմբերը եւ վերակսել աշխատանքը առկայ հիմնախնդիրների լուծման համար:

Հանդիպումը, որ տեւեց աւելի քան 45 րոպէ, աւարտուեց խմբային լուսանկարով եւ հրաժեշտի ողջագումբով:

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԵՐՈՒՍԱՂԵՍԻ
ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Շաբաթ, 2005 թուականի Դեկտեմբերի 15-ին, Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի նախաձեռնութեամբ եւ Պատրիարք Սրբապան Հօր

նախագահությամբ, վերանորոգում արքայատկերների մի ինքնատիպ ցուցահանդես էր բացուել պատրիարքարանի նախագաղթում: Վերոյիշեալ արքայատկերները, որոնք պահպանում են Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարում եւ Պատրիարքարանում, երկար տարիներ վերանորոգման կարիք ունեին: Նախորդ տարի, Լուսարարապետ Սրբապան Հօր նախաձեռնությամբ հնարարոր եղաւ դրանք նորոգել Թել-Ավիվում գործող ռուս արհեստավարժ վերանորոգողների կողմից: Սրբապատկերները իրենցից ներկայացնում են մշակութային եւ պատմական մեծ արժէք. նրանցից ամենահինը երկու հարիւր տարուայ հնութիւն ունի:

Յուցահանդէսին ներկայ էին Միաբանութեան անդամներ, քաղաքապետարանի քրիստոնէաների բաժնի պատասխանատու Տիար Մորդէիայ Լեւին, Իսրայէլում հաւատարմագրուած օտար դեսպաններ եւ հիւպատոմներ, ինչպէս նաեւ հայ համայնքի ներկայացուցիչներ: Յուցահանդէսի բացումը կատարեց Գեր. Արիս Եսա. Շիրվանեանը, ով իր բացման խօսքում հսկիրձ կերպով ներկայացրեց Հայ Եկեղեցու սկզբնաւորման եւ հիմնադրման պատմութիւնը, ինչպէս նաեւ Սրբապատկերների ունեցած դերն ու նշանակութիւնը Հայ Եկեղեցում: Ելոյթ ունեցաւ նաեւ Տիար Մորդէիայ Լեւին: «Մեր բոլորի յիշողութեան մէջ դեռ թարմ է հայկական ձեռագրերի բացառիկ ցուցահանդէսը, որ ցուցադրեց Հայոց Պատրիարքութիւնը Երուսաղէմի հին քաղաքի գրառումից յետոյ: Հայոց Պատրիարքութիւնը երբեք փակի տակ չի պահել իր հնաւանդ զանաւոր՝ գիտակցելով որ դրանք ոչ միայն հայկական, այլեւ՝ համամարդկային, համաշխարհային մշակոյթի նմուշներ են, ուստի առիթ պէտք է ստեղծել դրանք ոչ հայ հանդիսատեսին եւս հասանելի դարձնելու համար», - իր խօսքում նշեց Տիար Մորդէիայ Լեւին: Նրա խօսքից յետոյ ելոյթ ունեցաւ վերանորոգող անձնակազմի պատասխանատու Տիկ. Ելենա Գոլդինգը, ով իր խօսքում ասաց. «Մենք շատ շնորհակալ ենք, որ Հայոց Պատրիարքարանը իր բացառիկ արժէք ներկայացնող այս արքայատկերների նորոգութեան աշխատանքը մեզ վստահեց: Մենք փորձել ենք լաւագոյն կերպով նորոգել դրանք, այն գիտակցութեամբ, որ մեր գործը պիտի փոխանցուի նաեւ գալիք սերունդներին»:

Յուցահանդէսը շարունակուեց եւս մէկ օր, որի ընթացքում բազմաթիւ հայ եւ օտար հետաքրքրաւորներ այցելեցին ցուցահանդէս, եւ իրենց անթաքոյց հիացմունքը եւ գնահատանքը յայտնեցին այս ձեռնարկի կապակցութեամբ:

ԿԱԼԻՓՈՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՍԵՆԱԹՈՐ ՀՕ ՄԻՄԻԹԵԱՆԻ ԱՅՅԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԶԱՐԱՆ

Երկուշաբթի, 2005 թուականի Դեկտեմբերի 12-ին Կալիֆոռնիայի նահանգային Սենատոր Հօ Միմիթեանը այցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան: Տիար Միմիթեան Սուրբ Երկիր է այցելել Կալիֆոռնիայի Նահանգի Օրէնդրական Մարմնի 8 այլ անդամների հետ:

Հիւր Սենատորը նախ մասնակցեց Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարում կատարուած երեկոյեան ժամերգութեանը, որի աւարտին Գեր. Տ. Արիս Եսա. Շիրվանեանի ողեկցութեամբ կարճատեւ զբօսաւարոյտ կատարեց Հայկական Թաղամասում՝ այցելելով Ժառանգաւորաց եւ Թարգմանչաց Վարժարաններ, Գալուստ Գուլբենկեան Մատենադարան, Եղուարդ եւ Հելեն Մարտիկեան Թանգարան եւ Ս. Հրեշտակապետաց Վանք: Ապա Տիար Հօն հանդիպեց Պատրիարք Սրբապան Հօր հետ: Հանդիպման ընթացքում Սրբապան Հայրը խօսեց Հայոց Պատրիարքարանի հոգեւոր, կրթական եւ

մշակութային առաքելությունների և երուսաղեմի հայ համայնքի մասին: «Մեր օրերում կուսակրոն քահանայ լինել ցանկացողների թիվը շատ է նուազել, ինչն էլ խոչընդոտում է դժուարեցնում է մեր առաքելությունների ակթերի և լաւագոյնս կատարելու գործին», - հանդիարման ընթացքում ասեց Սրբալան Հայրը: Իր միտքը շարունակելով Սրբալանը ւաւելացրեց. «Մենք կարիք ունենք Սփիւրքում թէ Հայրենիքում երուսաղեմը սիրող, ինչպէս նաեւ երուսաղեմի հիմախնդիրներին քաջատեղեակ և հասկացող անհատների և կապակերպութիւնների, որոնց օգնութեամբ և կատարելիք ներդրումների շնորհիւ միայն կարելի կը լինի իրականացնել մեր ապագայի ծրագրերը»:

Տիար Սիմիթեանը երախտագիտութիւն յայտնեց Հայ երուսաղեմին ծանօթանալու իրեն ընձեռնուած առիթի համար և իր գոհունակութիւնը յայտնեց Պատրիարք Սրբալանին՝ երուսաղեմի Պատրիարքարանի ծաւալած գործունէութեան համար: «Եւ խոստանում եմ, որ կը փոխանցեմ Ձեր օրինութիւնները Կալիֆոռնիայի հայ համայնքին և կը քաջալերեմ, որ օգնեն երուսաղեմին և ուխտի գան Սուրբ Երկիր», - ասաց Սենաթորը:

Հանդիարման աւարտին Պատրիարք Սրբալանը իբր յուշանուէր Տիար Սիմիթեանին նուիրեց Տիրոջ Գերեզմանը պատկերող օբսիդեան յուշատախտակ, ինչպէս նաեւ Սրբոց Յակոբեանց տպարանում լոյս տեսած գրքերի հաւաքածու:

Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՆՈՐԵԱՅ ՀԱՆԴԵՍ

Ուրբաթ, 2005 թուականի Դեկտեմբերի 30-ին, Ժառանգաւորաց Վարժարանի արաիի մէջ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Վարժարանի ամանորեայ հանդէսը: Վարժարանի սաները ամանորեայ ուրախ և խանդավառ երգերով, պարերով և ուղերձներով հաճելի և անմոռանալի պահեր պարգեւեցին իրենց ծնողներին և ներկայ հանդիսականներին:

Հանդէսի աւարտին արաի մուտք գործեցին նաեւ Կաղանդ Պապուկը և Ձինանուշը, ովքեր էլ աւելի բարձրացրեցին ներկաների խանդավառութիւնը և ամանորեայ տրամադրութիւնը: Վարժարանի սաները Կաղանդ Պապուկից և Ձինանուշից ստացան նաեւ իրենց ամանորեայ նուէրները:

Հանդէսին մասնակցում էին նաեւ Պատրիարք Սրբալան Հայրը և Միաբան հայրերը:

Հանդէսը աւարտուեց սաղիմահայ կանանց պատրաստած ամանորեայ համեղ անուշեղէնների հիւրասիրութեամբ:

ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ ԱՄԱՆՈՐԵԱՅ ՀԱՆԴԵՍ

Ուրբաթ, 2006 թուականի Յունուարի 13-ին, Ժառանգաւորաց Վարժարանի արաիի մէջ տեղի ունեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի և Ընձայարանի ամանորեայ հանդէսը: Ժառանգաւոր սաները ամանորեայ երգերով, արտասանութեամբ և դաշնամուրի գեղեցիկ համարների կատարմամբ ներկաներին պարգեւեցին ամանորեայ հաճելի տրամադրութիւն և մթնոլորտ:

Հանդէսին ներկայ էին Պատրիարք Սրբալան Հայրը և Միաբան հայրերը, ինչպէս նաեւ Ժառանգաւոր սաների ամէնամեայ ամանորեայ նուէրները նուիրող Պատրիարք Սրբալանի եղբայր Սուրէն Մանուկեանը և

նախկին ժառանգաւոր Հայկ Գրիգորեանը, ովքեր Սուրբ Երկիր էին ժամանել Լոս Անձելոսից:

Հանդէպ աւարտուեց Պատրիարք Սրբապանի փականան խօսքով: «Ամանորը, իւրաքանչիւրիս համար, ինքնաքննութեան եւ ինքնանորոգման հիմնարկ առիթ է: Աւելին, Ամանորը նաեւ նոր ծրագրեր մշակելու, ինչպէս նաեւ անցնող տարուայ չիրականացած ծրագրերը իրենց աւարտին հասցնելու առիթ է», - իր խօսքում նշեց Պատրիարք Սրբապանը եւ իր խօսքը ուղղելով ներկաներին շնորհաւորեց բոլորի Նոր Տարին եւ յաջողութիւն մաղթեց Ամանորի առթիւ:

Երեկոյեան ժամը 8-ին, Պատրիարք Սրբապանը Պատրիարքարանի դահլիճում հիւրընկալեց Միաբանութեան հոգեւորական անդամներին, ուր մատուցուեց նաեւ ամանորեայ միաբանական ընթրիք: Իսկ կէսգիշերին, Վանքի բակում Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի Ամանորը աւետող պանգակների ղողանջի տակ Ժառանգաւոր սաները երգեցին «Փառք ի Բարձունս» փառաբանական երգը: Երգեցողութիւնից յետոյ, Ռումինիայի եւ Բուլղարիայի Առաջնորդ Տիրայր Արքեպս. Մարտիրոսեանը ներկաներին փոխանցեց ամանորեայ բարեմաղթանքներ:

Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՁ

Շաբաթ, 2006 թուականի Յունուարի 7-ին, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարում տօնախմբուեց Ս. Ստեփանոս Նախավկայի տօնը (ըստ հին տոմարի): Երուսաղէմում, Ս. Ստեփանոս Նախավկայի տօնը առանձնանում է նրանով, որ այդ տօնին արարողութիւնը կատարում է առանձնապատուկ շուրով եւ հաղիսաւորութեամբ: Սարկաւազները «Փառք ի Բարձունս» երգի սկզբից մինչեւ առաւօտեան ժամերգութեան աւարտը պգեստարտում են զանաւորից յատուկ այս տօնի նպատակով դուրս բերուած մարգարոտաշար եւ թանկարժէք այլ քարերով հիւստած սաղաւարտներով եւ շապիկներով: Աւելացնենք նաեւ, որ օրուայ սարկաւազապետները (սարկաւազապետները այս տօնին վարդապետներ են լինում), պատարագիչը եւ արարողութիւնների պաշտօնեաները ընտրում են սարկաւազների կողմից:

Պատարագի աւարտին, ըստ աւանդութեան, սարկաւազները՝ սարկաւազապետների առաջնորդութեամբ հիւրընկալուեցին Պատրիարք Սրբապանի կողմից Պատրիարքարանի դահլիճում, ուր ի պատիւ սարկաւազների տրուեց հիւրասիրութիւն, այնուհետեւ, կրկին հետնելով աւանդութեանը, սարկաւազները՝ սարկաւազապետների առաջնորդութեամբ այցելիցին Սրբապան եւ Վարդապետ հայրերին եւ հիւրասիրուեցին նրանց կողմից եւ սուսան դրամական պարգէտ:

Երեկոյեան, Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի ճաշարահում, ի պատիւ սարկաւազների, տեղի ունեցաւ միաբանական ընթրիք Պատրիարք Սրբապանի ներկայութեամբ: Ընթրիքի ընթացքում սարկաւազները նախ երգեցին Ս. Ստեփանոս Նախավկային նուիրուած «Նախասարկաւազ» շարականը, իսկ սարկաւազների անունից ելոյթ ունեցաւ Արուսկ Մարկաւազ Յակոբեանը: Ելոյթ ունեցաւ նաեւ սարկաւազապետ Հոգ2. Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեանը:

Ընթրիքն աւարտուեց Պատրիարք Սրբապանի փականան խօսքով: «Ս. Ստեփանոս Նախավկան քրիստոնէական եկեղեցու երկու հապարամեայ պատմութեան մէջ հանդիսացել է ծառայասիրութեան եւ ներողամտութեան տիպար օրինակ, որից ներշնչուել են հետագայ դարերի շատ սուրբեր եւ

Եկեղեցու հայրեր», - իր խօսքում նշեց Սրբապան Հայրը եւ ասա իր խօսքը ուղղելով սարկաւագներին աւելացրեց. «Ձեզ մաղթում եմ Ս. Ստեփանոսի ծառայասիրութեան ոգին, առանց որի, Ձեր ծառայութիւնը կը վերածուի պարտականութեան, իսկ արարողութիւնները՝ ձանձրացուցիչ եւ յոգնեցող ծէսի»:

ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԺԻ ԱՅՅԸ ՊԱՂԵՍԻՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հինգշաբթի, 2006 թուականի Յունուարի 12-ին, հետեւելով վերջին տարիների ընթացքում ձեւաւորուած սովորութեանը, Երուսաղէմի Հայ Պատրիարք Տ. Թորգոմ Արքեպ. Մանուկեանը, ընկերակցութեամբ Տնօրէն ժողովի անդամների, այցելեց Պաղեստինի նախագահ Նորին Վսեմութիւն Տիար Մահմուտ Աբբասին: Պատրիարք Սրբապանը եւ Նրան ընկերակցողները հիւրընկալուեցին Ռամալլահ քաղաքի Սուբաթաայի նախագահական նստավայրում:

Ձերն ընդունելութիւնից եւ հիւրասիրութիւնից յետոյ Պատրիարք Սրբապանը նախ նախագահին շնորհաւորեց Իսլամական Առեւտրի տօնի առթիւ (այս տօնը նուիրուած է Աբրահամի կողմից Իսահակի փոխաբերմանը), այնուհետեւ Նրան հրաւիրեց ներկայ գտնուելու Յունուարի 18-ին եւ 19-ին Բեթլեհէմի Սուրբ Ծննդեան Տաճարի մէջ տեղի ունենալիք Հայկական Ծննդեան եւ Աստուածայայտութեան տօնակատարութիւններին:

Նախագահ Աբբասը սիրով ընդունեց հրաւերը, իսկ Պատրիարք Սրբապանը եւ իրեն ընկերակցողները հրաժեշտ տուին Նախագահին եւ իրենց շնորհակալութիւնը յայտնեցին Նրա կողմից դրսևորուած բարեացականութեան համար:

ՀԱՅ ՈՒՒՏԱԴՈՐՆԵՐԻ ԱՅՅԸ ԵՐՈՒՍԱՂԵՍ

Երուսաղէմը իբր Սուրբ Բաղաթ, միշտ դէպի իրեն է գրաւել բազմաթիւ ուխտաւորներ: Ուխտաւորների շարքում, իրենց թուով միշտ առանձնացել են հայ ուխտաւորները, որոնց հոսքը երբեք չի դադարել դարերի ընթացքում, նոյնիսկ այն ժամանակ, երբ Երուսաղէմը գտնուում էր ոչ-քրիստոնէայ կառավարիչների ձեռքում: Այսօր եւս, թէեւ փոքր թուով, հայ ուխտաւորները շարունակում են այցելել Երուսաղէմ եւ մասնակցել Ծննդեան եւ Յարութեան հոգեպարար արարողութիւններին:

Երուսաղէմում Բրիտանի Սուրբ Ծննդը եւ Աստուածայայտութիւնը տօնախմբում է Յունուարի 18-ին՝ ըստ Յուլեան տոմարի:

Յունուարի 6-ին Բրիտանի Ս. Ծննդեան աւետիսը արդէն ընկալած հայ հոգեւորականներ եւ հաւատացեալներ Երուսաղէմ ժամանեցին նաեւ մեկ հետ մասնակցելու Ծննդեան արարողութիւններին՝ բաժնեկից դառնալով Երուսաղէմի աւետաբեր օրհնութեանը:

Յունուարի 9-ին ուխտաւորաբար Երուսաղէմ ժամանեց Ռումինիայի եւ Բուլղարիայի երկարամեայ առաջնորդ Գեր. Տ. Տիրայր Արքեպ. Մարտիրոսեանը, իսկ Յունուարի 15-ին Սբ. Էջմիածնից ժամանեցին Գեր. Տ. Ներսէս Արքեպ. Պոպապալեանը, Գեղարքունիքի առաջնորդ Հոգ. Տ. Մարկոս Վրդ. Յովհաննիսեանը եւ Վազգէնեան դպրանոցի տեսուչ Հոգ. Տ. Սկրտիչ Արդ. Պողոսեանը: Սուրբ Ծննդեան տօներին մասնակցելու նպատակով Երուսաղէմ ժամանեց նաեւ Հարաւային Ռուսաստանի հայոց

թեմի առաջնորդ Գեր. Տ. Մովսէս Եպս. Մովսիսեանը: Ծննդեան տօներին մասնակցելու նպատակով այս տարի Հայաստանից ժամանել էին նաեւ ուխտաւորների փոքրաթիւ խումբ Արժ. Տէր Տիրայր Աւագ Բն. Սահրաղեանի ուղեկցութեամբ:

Ուխտաւորները մասնակցեցին տօնական արարողութիւններին եւ իրենց կեցութեան կարճ ժամանակամիջոցում առիթ ունեցան նաեւ այցելել Երուսաղէմի տարբեր կրօնական սրբավայրեր, Բէթղէմէն, ինչպէս նաեւ Մոռեալ ծով եւ Գալիլիայի շրջան, ուր ծանօթացան մշակութային եւ պատմական արժէք ներկայացնող հնութիւններին եւ հոգեպէս հաղորդուեցին քրիստոնէական սրբութիւններին: Հիւր հոգեւորականները նաեւ մատուցեցին ուխտի պատարագներ, մասնակցեցին ամենօրեայ ժամերգութիւններին եւ հանդիսապետեցին մի շարք արարողութիւններ:

Յունուարի 22-ին, Հայաստանից ժամանած հոգեւորականներն ու ուխտաւորները իրենց ուխտը նորոգած եւ հոգեկան մեծ լիցք ստացած վերադարձան Հայաստան, իսկ Յունուարի 24-ին իր թեմ վերադարձաւ Գեր. Տ. Մովսէս Եպս. Մովսիսեանը: Յունուարի 26-ին Սբ. Գերեզմանի վրայ Անտանակոչութեան Սուրբ Պատարագ մատուցելուց յետոյ՝ Ռումինիա վերադարձաւ Տ. Տիրայր Արքեպս. Մարտիկեանը:

Լիայոյս ենք, որ հետագայում հայ ուխտաւորների հոսքը դէպի Երուսաղէմ կ'աւելանայ եւ այն կը ստանայ շարունակական բնոյթ:

ԿՈՐԻԻՆ ԱԲՂ. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

Շր. 12 Նոյ. 2005.- Սրբոյն Յովհաննու Ոսկերերան Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան:

Կիր. 13 Նոյ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Հայկազուն Արդ. Եղիայեան:

Ուր. 18 Նոյ.- Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս եպս. Շիրվանեան:

Շր. 19 Նոյ.- Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Թեոդորոս Վրդ. Զաֆրեան:

Կիր. 20 Նոյ.- Դարձեալ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան: Ըստ սովորութեան կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն Ս. Աթոռյ բարեբարոյի Աղաւնի Ճէվահիրեանի եւ պարագայից հոգիներուն ի հանգիստ: Հանդիսապետեց Տ. Սեւան եպս. Ղարիպեան:

Շր. 26 Նոյ.- Առաքելոցն Անգրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Համարձում Վրդ. Քէշիշեան:

Կիրակի 27 Նոյ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Բագրատ Վրդ. Պուրեւեան:

Շր. 3 Դեկտ.- Տօն Ամենայն Արքայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

- Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 4 Դեկտ.- Ընծայումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Տ. Սեւան եպս. Ղարիպեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժեով իջան Գեքսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց եւ քարոզեց Տ. Սեւան եպս. Ղարիպեան:

Ս. Պատարագէն ետք, կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն: Կիւլլապի Կիւլպէնկեանի եւ իր գերդաստանի հոգիներուն ի հանգիստ: Հանդիսապետեց Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Շր. 10 Դեկտ.- Գրգորի Մանչեւագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կորիւն Արդ. Բաղդասարեան:

Կիր. 11 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

Ուր. 16 Դեկտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Արիս եպս. Շիրվանեան:

Շր. 17 Դեկտ.- Առաքելոցն Թադէոսի եւ Բարթոլոմէոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 18 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Թեոդորոս Վրդ. Զաֆրեան:

Դշ. 21 Դեկտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Եշ. 22 Դեկտ.- Յօուսէին Ա. Աստուածածնի: Առաւօտուն, Տ. Սեւան եպս. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժեով իջան Գեքսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց Տ. Սեւան եպս. Ղարիպեան:

Շր. 24 Դեկտ.- Արքայն Նիկողայոսի Միւռայ Մանչեւագործ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Մակար մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Հայկազուն Արդ. Եղիայեան:

Կիր. 25 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ծախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարը եւ քարոզչին էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Ուր. 30 Դեկտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Շր. 31 Դեկտ.- Ա. Յակոբյայ Մծբնայ
Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի
Ս. Դիսաղիր: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ.
Մանկասարեան:

Կիր. 1 Յուն. 2006.- Ս. Պատարագը
մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր
վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս
Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Բագրատ
Վրդ. Պուրնէժեան:

Դշ. 4 Յուն.- Պատրիարք Սրբազանը
նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած
Աւագ Տօներու առաջին հանդիսաւոր
նախատօնակին, որմէ ետք Միաբանութիւնը Ս.
Աթոռոյ «Օրհնեցէ՛ք զՏէր» շարականի
երգեցողութեամբ բափօրով բարձրացաւ
Պատրիարքարան:

Եշ. 5 Յուն.- Ա. Դաւթի Մարգարէին եւ
Յակովբայ Տեառնեղբօր (Տօն Առաքելական Ա.
Աթոռոյս երուսաղէմի): Ըստ սովորութեան,
առաւօտեան ժամերգութեան ընթացքին,
Պատրիարք Սրբազան Հայրը, շուրջաւ եւ եմփոքոն
զգեցած բարձրացաւ Տեառնեղբօր Աթոռի
պատուանդանին ուր մնաց մինչեւ ժամերգութեան
աւարտը, եւ ընդունեց Միաբանութեան եւ
դպիրներուն շնորհաւորութիւնները:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը
Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Տ.
Արիս Եպս. Շիրվանեան:

- Պատարագին աւարտին Պատրիարք
Սրբազան Հայրը նախագահեց Ս. Աթոռոյս
հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար
կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին:

Ուր. 6 Յուն.- Կէսօրէ ետք Պատրիարք
Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին
մէջ պաշտուած Ս. Ստեփանոսի նախատօնակին:
Բուրվառակիր հայրերն էին Տ. Թէոդորոս Վրդ.
Զաւարեան եւ Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

Շր. 7 Յուն.- Արքայն Ատեփանոսի
նախասարկաւագին եւ առաջին Մարտիրոսին:
Առաւօտեան ժամերգութեան աւարտին Ս.
Աթոռոյս քարեշնորհ սարկաւագները եւ
ուրարակիրները, թիւով 10, առաջնորդութեամբ
երկու բուրվառակիր վարդապետներուն,
մարգարտագարդ սաղաւարտներով, տապանակ
ու բուրվառ ի ձեռին, կատարեցին «Սարկաւագաց
Հանդէսը»: Արարողութեան նախագահեց
Պատրիարք Սրբազան Հայրը: Ս. Պատարագը
մատուցուեցաւ Աւանդատան մէջ գտնուող Ս.
Ստեփանոսի խորանին վրայ: Ժամարարն էր Տ.
Կորիւն Արդ. Բաղդասարեան:

- Դիշերասկիզբին ժառանգաւորաց

նաշարահին մէջ տեղի ունեցաւ Միաբանական
ընթրիք՝ Սարկաւագաց Տօնին առթիւ:

Խօսք առին դպրոցին Փոխ Տեսուչը Տ.
Հայկազուն Արդ. Եղիայեանը, սարկաւագապետ-
ներէն Տ. Թէոդորոս Վրդ. Զաւարեանը,
ուսուցիչներէն Պրն. Եղիա Տիգրանեան:

Պատրիարք Սրբազան Հայրը ըրաւ իր
փակման խօսքը եւ հանդէսը վերջացաւ
«Պահպանիչ»ով:

Կիր. 8 Յուն.- Ս. Պատարագը
մատուցուեցաւ Մայր Տաճարի աջակողմեան
դասին մէջ գտնուող Ս. Կարապետ խորանին
վրայ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Էմմանուէլ
Վրդ. Աբաջանեան: Դիսաւոր Առաքելոց
նախատօնակին հանդիսապետեց Տ. Արիս Եպս.
Շիրվանեան:

Բշ. 9 Յուն.- Ա. Առաքելոցն Պետրոսի եւ
Պօղոսի: Մայր Տաճարի Ս. Պետրոսի
վերնամատրան մէջ Ս. Պատարագը մատոյց Տ.
Իսահակ Արդ. Մինասեան:

- Կէսօրէ ետք Պատրիարք Սրբազան
Հայրը «Հրաշափառ»ով մուտք գործեց Մայր
Տաճար, ուր Որդւոց Որոտման տօնի հանդիսաւոր
նախատօնակին նախագահելէ ետք, Ս. Աթոռոյ
«Որ էճն յէութեան» շարականի երգեցողութեամբ
Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան:

Դշ. 10 Յուն.- Տօն Արքայն Որդւոցն
Որոտման: Մայր Տաճարի Ս. Դիսաղիրի մատրան
մէջ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց
եւ քարոզեց Պատրիարք Սրբազան Հայրը:
Առընթերակայ վարդապետներն էին Տ.
Համբարձում Վրդ. Քէշիշեան եւ Տ. Բագրատ
Վրդ. Պուրնէժեան, բուրվառակիր վարդապետներն
էին Տ. Հայկազուն Արդ. Եղիայեան եւ Կորիւն
Արդ. Բաղդասարեան: Պատրիարք Սրբազան
Հայրը, ամպիոպանիի տակ խաչափայտի մասունք
ի ձեռին, նախագահեց եռադարձ մեծահանդէս
բափօրին: Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը
բափօրով Ս. Աթոռոյ «Որ էճն յէութեան»
շարականի երգեցողութեամբ բարձրացան
Պատրիարքարան: Պատրիարք Սրբազան Հայրը
օրհնուած ճշխար բաժնելով բոլորին, փակեց
Աւագ տօներուն շարքը:

Ուր. 13 Յուն.- Իրիկնաղէմին, Պատրիարք
Սրբազան Հայրը եւ Միաբանութիւնը ներկայ
եղան ժառանգաւորաց վարժարանի սրահին մէջ
տեղի ունեցած «Կաղանդի» հանդէսին:

Շր. 14 Յուն.- Կաղանդ: Նոր Տարի քսա
Հին Տաւաքի: Մայր Տաճարի Աւագ Սեղանին
վրայ պատարագեց եւ քարոզեց «Ժամօրհնող»
Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 15 Յուն.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Տիրայր Արք. Մարտիկեան: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արք. Յովհաննիսեան:

Դշ. 18 Յուն.- Զրագալոյց Ս. Ծննդեան: Առաւօտեան ժամը 9.30ին ընդհանուր ոստիկանապետը, երուսաղէմի ոստիկաններ Պատրիարք Սրբազանին այցելեցին Ս. Ծննդը շնորհաւորելու համար եւ դէպի Բեթղեհէմ թափօրին հսկողութեան համար: Ժամը 10ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով ճամբայ ելաւ դէպի Բեթղեհէմ:

Ճամբու կիսուն Յունաց Ս. Եղիափանին առջեւ դիմաւորելու եկած էին Պէյք-Սահուրի, եւ Պէյք-Ճալայի ֆաղաֆապետները, Բեթղեհէմի փոխ ֆաղաֆապետ եւ պետական ներկայացուցիչները:

Իսրայէլեան հինգ ոստիկան ձիաւորներ ընկերացան Պատրիարք Սրբազանի ինքնաշարժին, առջեւէն եւ ֆովերէն, մինչեւ Թաֆէի գերեզմանը, որմէ ետք թափօրը Պաղեստինեան հինգ ձիաւորներով առաջնորդուեցաւ դէպի Բեթղեհէմ: Քաղաքի մուտքին, ինքնաշարժներէն դուրս ելլելով Պատրիարք Սրբազանը եւ Միաբանութիւնը յառաջացան դէպի հրապարակ:

Բեթղեհէմի հրապարակին վրայ դիմաւորուելով, Բեթղեհէմի կառավարիչէն, ընդհանուր ոստիկանապետէն, ֆաղաֆապետէն, Հ.Ե.Մ.իութեան եւ Հ. Մ.Ը.Մ.իութեան եւ այլ սկաւտական խումբերէն, «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ թափօրը քարձրացաւ Ս. Ծննդեան Տաճարի Հայոց Վանք: Յետ Միջօրէի ժամը 2ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»ով մուտք կատարուեցաւ Ս. Ծննդեան Տաճար եւ Ս. Այր: Զրագալոյց Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատուցեց Տ. Մարկոս Վրդ. Յովհաննիսեան: Ապա՝ Միաբանութիւնը քարձրացան Հայոց Վանք, բակին մէջ կարդացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարան եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս»:

Եշ. 19 Յուն.- Տօն Ծննդեան եւ Աստուածայայտութեան: Կէս-գիշերէն առաջ ժամը 10ին գիշերային պաշտամունքէն յետոյ, Միաբանութիւնը կ'իջնէ Ս. Ծննդեան այր ուր կը շարունակուի «Փառք ի բարձունս»ի երգեցողութիւնը: Պաղեստինեան կառավարութեան նախագահ Մահմուտ Աքրաս եւ ներկայացուցիչներ, ներկայ եղան: Աւարտին, Պատրիարք Սրբազան Հօր Ծննդեան հայերէն եւ Անգլերէն պատգամներէն յետոյ մեկնեցան, շնորհաւորելով Պատրիարք Սրբազան Հայրը:

Պաշտամունքները շարունակուեցան Տաճարի մէջ: Պատրիարք Սրբազանը եւ Լուսարարապետ Սրբազանը վերադարձան Երուսաղէմ:

Աւագ Սեղանին վրայ պատարագեց Տ. Մկրտիչ Արք. Պողոսեան:

Ջրօրհնէ՛լի արարողութեան հանդիսապետեց Տ. Մովսէս Եպս. Մովսիսեան:

Ս. Ծննդեան Այրի մէջ պատարագեց Տ. Մովսէս Եպս. Մովսիսեան: Պաշտամունքներու աւարտին ժամը 6.30ին Միաբանութիւնը թափօրով եւ երգեցողութեամբ կը քարձրանայ Հայոց Վանք: Բակին մէջ կը կարդացուի Ս. Ծննդեան Աւետարանը եւ կ'երգուի «Փառք ի բարձունս»: Միաբանութիւնը կը վերադառնայ Երուսաղէմ:

Երուսաղէմի մէջ Զրագալոյցի արարողութիւն կը կատարուի Ս. Յարութեան Տաճարին մէջ: Ս. Գերեզմանին վրայ կը պատարագէ Տ. Նորայր Արք. Գագագեան: Նախատօնակին հանդիսապետն էր Տաճարին Տեսուչը՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Արարողութիւնները կ'աւարտին Տաճարին Տեսչարանին մէջ:

Առաւօտուն, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Սեղանին վրայ պատարագեց Տ. Նորայր Արք. Գագագեան: «Ջրօրհնէ՛լ»ի արարողութեան հանդիսապետեց Տ. Ներսէս Արք. Պօգապալեան:

Ուր. 20 Յուն.- Յիշատակ Մեռելոյց: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Աւագ Թարգման Տ. Գուսան Վրդ. Այնանեան, Հոգեհանգստեան կարգին հանդիսապետեց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շբ. 21 Յուն.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղի: Ժամարարն էր Տ. Կորին Արք. Բաղդասարեան:

Կիր. 22 Յուն.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Ներսէս Արք. Պօգապալեան: Ժամարարը եւ ֆարոգիչն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէքեան:

Ուր. 25 Յուն.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Եշ. 26 Յուն.- Տօն Անուանակոչութեան Տեառն: Առաւօտուն, Տ. Տիրայր Արք. Մարտիկեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Օրուն հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց եւ ֆարոգեց Տ. Տիրայր Արք. Մարտիկեան:

- Դէպի վանք դարձին հայոց թաղի մուտքէն Միաբանութիւնը «Լոյս ի լուսոյ» շարականը երգելով քարձրացաւ Պատրիարքարանի դահլիճը: Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց

«Տնօրհնէ՛լ»ի արարողութեան, որ կրկնուեցաւ վարդապետաց սեղանատան մէջ:

Ուր. 27 Յուն.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Շր. 28 Յուն.- Տօն Մենքեան Ս. Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Ս. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 29 Յուն.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Ս. Թէոդորոս Վրդ. Զաւարեան:

Շր. 4 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Ս. Նորայր Արդ. Գազազեան:

Կիր. 5 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Ս. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Ս. Հայկազուն Արդ. Եղիայեան:

Շր. 11 Փետր.- Արքայն Գրիգորի Աստուածաբանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Ս. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 12 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Ս. Էմմանուէլ Վրդ. Աբաջանեան:

Շր. 18 Փետր.- Ս. Սարգսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգսի մատրան մէջ: Ժամարարն էր Ս. Իսահակ Արդ. Մինասեան:

Ըստ սովորութեան կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն, հանգուցեալ ազգային քարերար Գալուստ Պէյ Կիւլպէնկեանի եւ ծնողաց՝ Սարգսի եւ Տիրուհւոյ եւ գերդաստանի ննջեցելոց հոգիներուն ի հանգիստ. հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Կիր. 19 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարն էր Ս. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Շր. 25 Փետր.- Արքայն Իսահակայ Պարթեւի Հայրապետին մեքայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Ս. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

Կիր. 26 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Ս. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Ս. Կոմիտաս

Վրդ. Շերպէթեան:

- Տեառներնդ առաջի մեծահանդէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, կատարուեցաւ «Անդաստան» եւ «մումալա-ռութիւն»: Նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

- Գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Եկեցէ՛ք»ի հսկման կարգը: Հանդիսապետեց Ս. Արիս Եպս. Շիրվանեան:

Բշ. 27 Փետր.- Տեառներնդ առաջ: Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց Ս. Արիս Եպս. Շիրվանեան:

Դշ. 1 Մարտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Եշ. 2 Մարտ.- Ս. Վարդանանց Զօրավարացն Մերոց 1036 վկայիցն: Յիշատակ Մեռելոց եւ Տօն Ազգային: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց ժառանգաւորաց վարժարանի փոխ տեսուչ Ս. Հայկազուն Արդ. Եղիայեան: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Ս. Գուսան Վրդ. Ալեանեան:

- Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անուան տօնին առթիւ կատարուած «Հայրապետական Մաղթանք»ին:

Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ, մեր ազգի հին եւ նոր ննջեցեալներուն հոգիին ի հանգիստ: Նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Ուր. 3 Մարտ.- Ըստ սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ Ասորոց Ս. Մարկոս Աւետարանիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Ս. Արիս Եպս. Շիրվանեան, որ նաեւ քարոզեց: Ժամարարն էր Ս. Նորայր Արդ. Գազազեան: Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ Ասորոց Տեսուչին կողմէն:

Շր. 4 Մարտ.- Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն Հարիւր Յիսուսն Հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Ս. Գուսան Վրդ. Ալեանեան:

- Կէսօրէ ետք, Մայր Տաճարի Աւագ խորանը, սեղանները եւ գլխաւոր սրբանկարները, Համբարձի շարականը երգուած ժամանակ վարագուրուեցան Պատրիարք Սրբազան Հօր, Գերաշնորհի եւ Հոգեշնորհ Հայրերու ձեռնով:

Կիր. 5 Մարտ.- Բուն Բարեկենդան: Փակեալ խորանի Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց Ս. Բարսեղ Վրդ. Դպրատեան: Դպրապետի պաշտօնը վարեց Ս. Գուսան Վրդ. Ալեանեան: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Ս. Թէոդորոս Վրդ. Զաւարեան:

Դշ. 8 Մարտ.- Սկիզբն Կարգաց Մեծի

Պահոց: Առաւօտեան Մայր Տանարի մէջ տեղի ունեցաւ «Արեւազալ»ի առաջին, իսկ կէսօրէ ետք «Խաղաղականի» առաջին ժամերգութիւնը:

ԵՂ. 9 Մարտ.- Մեծ Պահոց առաջին հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց եւ ֆարոգեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Ուր. 10 Մարտ.- Նախատօնակը պաշտուեցաւ Մայրավանքի Ս. Թորոս եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը:

Շր. 11 Մարտ.- Արքայն Թէոդորոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թորոս: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

- Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տանար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց պայծառութիւն: Թափօրապետն էր Տ. Աւետիս Վրդ. Իփրանեան:

Կիր. 12 Մարտ.- Քառասնորդաց: Արտաւանան: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Լուսարարապետ Սրբազան Հօր երկրորդ մուտքէն ետք մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

«Հայր Մեր»էն առաջ ֆարոգեց Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ս. Պատարագէն ետք, կատարուեցաւ մեծահանդէս եռադարձ Թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ մէկ անգամ Պատանատեղւոյն շուրջ, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Գշ. 14 Մարտ.- Իրիկուան հսկումին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց եւ ֆարոգեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

ԵՂ. 16 Մարտ.- Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետեց եւ ֆարոգեց Լուսարարապետ Սրբազանը:

Շր. 18 Մարտ.- Ա. Կիւրդի երուսաղիմացւոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տանարի աւանդատան, Ս. Կիւրդի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

Կիր. 19 Մարտ.- Քառասնորդաց: Անառակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Կորիւն Արդ. Բաղդասարեան: «Հայր Մեր»էն առաջ ֆարոգեց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Գշ. 21 Մարտ.- Իրիկուան հսկումին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց եւ ֆարոգեց Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

ԵՂ. 23 Մարտ.- Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետեց եւ ֆարոգեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Գշ. 22 Նոյ. 2005 - Երուսաղեմի Յոյն Պատրիարքական նորոգման Թեոֆիլոս Պատրիարքի գահակալության արարողության, Ս. Յարութեան Տաճարի մէջ, ներկայ գտնուեցան Արիս Եպս. Ծիրվանեան եւ Ս. Յարութեան Տաճարի Տեսուչ Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Իսկ յետ միջօրէին, Երուսաղեմի Նոթրը Տամ Կեդրոնին մէջ կազմակերպուած շնորհաւորանքի ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Ծիրվանեանի, Գուսան Վրդ. Ալեանեանի, եւ Իսահակ Արդ. Միմասեանի:

Եշ. 27 Դեկտ.- Կաթոլիկ եւ Բողոքական Եկեղեցիներու Ս. Ծննդեան տօնին առիթով, Ս. Յակոբեանց Միաբանութիւնը գլխաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր, նախ շնորհաւորութեան գնաց Ֆրանչիսկեան Կիւսթոտին, այնուհետեւ՝ Լատինաց Ամեն. Պատրիարքին, ուր հաւաքուած էին միւս յարանուանութեանց եկեղեցական ներկայացուցիչներ եւ: Ամմիջապէս ետք, Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Արիս Եպս. Ծիրվանեանի շնորհաւորութեան գնաց Պապական Նուիրակին:

Գշ. 29 Դեկտ. - Իսրայէլի նախագահ Մօշէ Բաքաթի կողմէ, ի պատիւ Քրիստոնեայ Համայնքներու կրօնապետներուն, նախագահական ապարանքին մէջ կազմակերպուած Նոր Տարուան եւ Հրէական Խանութային առթիւ հիւրասիրութեան մասնակցեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Ծիրվանեանի, Սեւան Եպս. Դարիպեանի եւ Գուսան Վրդ. Ալեանեանի:

Բշ. 9 Յունիս. 2006 - Յոյն Ողորդապետ Եկեղեցւոյ Ս. Ծննդեան տօնի առթիւ, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը գլխաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր, շնորհաւորութեան գնաց Յունաց Պատրիարքին: Նախնական պայմանաւորութեան համաձայն, յաջորդաբար Յունաց Պատրիարքարան ժամանեցին միւս յարանուանութեանց եկեղեցւոյ պետերն իրենց հետեւորդներով:

Կիր. 15 Յունիս.- Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան առիթով Երուսաղեմի հոգեւոր պետերը միասնաբար, կէսօրէ ետք ինքնաշարժերու թափօրով մեկնեցան դէպի Ռամալլա քաղաք: Պատրիարք Սրբազան Հօր կ'ընկերակցէին Արիս Եպս. Ծիրվանեան, Սեւան Եպս. Դարիպեան եւ Իսահակ Արդ. Միմասեան: Պաղեստինի Կառավարութիւնը՝ ներկայութեամբ նախագահ Մահմուտ Ապպահին, Վարչապետին եւ Խորհրդարանի նախագահին,

հիւրասիրութեամբ պատուեց հիւրերը: Եղան շնորհաւորական եւ բարեմաղբանքի խօսքեր:

Բշ. 16 Յունիս.- Բեթղեհեմի շրջանի Իսրայէլեան զինուորական Իշխանութեան ներկայացուցիչներ Հայկական Ծնունդի նախապատրաստութեան եւ շնորհաւորանքի առիթով Պատրիարք Սրբազան Հօր այցելութեան եկան:

Եշ. 19 Յունիս.- Երեկոյեան, Պապական Նուիրակ եւ Վատիկանի Ընդհանուր Դեսպան Մօնս. Փիէթրօ Սամպիի երկար տարիներու ծառայութենէն ետք, «Բարի Երբ»-ի առթիւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն Երուսաղեմի Նոթրը Տամ Կեդրոնին մէջ: Ընդառաջելով Պապական Նուիրակին հրաւերին, Պատրիարք Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ, ընկերակցութեամբ Արիս Եպս. Ծիրվանեանի, Գուսան Վրդ. Ալեանեանի եւ Իսահակ Արդ. Միմասեանի:

Ուրբ. 21 Յունիս.- Հայոց Ս. Ծննդեան տօնի առիթով Պատրիարքարան շնորհաւորանքի եկան Յունաց Ամեն. Թեոֆիլոս Պատրիարքը եւ Լատինաց Ամեն. Միշէլ Սապպահ Պատրիարքը ընկերակցութեամբ իրենց անդամներու, ինչպէս նաեւ Կաթոլիկ եւ Բողոքական, Հայէշ, Դպտի եւ Ասորի Ողորդապետ Եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ: Աւելի ուշ, Ֆրանչիսկեան Միաբանութիւնը ժամանեց գլխաւորութեամբ Գուստոսին: Իսկ Պապական Նուիրակ Մօնսր. Փիէթրօ շնորհաւորանքի այցելութեան եկաւ իր անդամներով:

Կէսօրէ ետք, Քաղաքապետարանի եւ Կրօնից Նախարարութեան ներկայացուցիչներ շնորհաւորանքի համար Պատրիարք Սրբազան Հօր այցելութեան եկան:

Բշ. 23 Յունիս.- Ընդառաջելով Երուսաղեմի քաղաքապետ Ուրի Լուփոյեանսիի հրաւերին, 2006 Նոր Տարուան առթիւ, Քաղաքապետարանին մէջ կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Ծիրվանեանի, Գուսան Վրդ. Ալեանեանի, Բագրատ Վրդ. Պուրմէճեանի եւ Իսահակ Արդ. Միմասեանի: Արարողութեան ներկայ էին Ս. Քաղաքի հոգեւոր պետեր, համայնքապետներ, հիւպատոսներ եւ այլ պետական անձեր:

Եշ. 2 Փետր.- Հայաստանի Փուտրոյի բարձրագոյն առաջնութեան ակումբներէն «ՄԻԿԱ» տղամարդկանց խումբը Իսրայէլ կը գտուէր մրցումներու մպատակով: Հինգշաբթի, խումբն իր ամբողջ կազմով այցելութեամբ եկաւ Պատ-

բիարբարան, ղեկավարութեամբ տնօրէն Տիար Կարլոս Ղազարեանի: Պատրիարք Սրբազան Հայրը բարձր գնահատեց խումբին աջակցող անձանց կատարած ջանքերը՝ հայ մարզիկները տեսնելու Սուրբ Երկրին մէջ, միաժամանակ խրախուսելով, որ վերջիններս բարձր պահեն հայրենիքին պատիւն ու յարգանքը եւ ցուցաբերեն յուսալի արդիւնքներ մարզական կեանքին մէջ:

Շր. 18 Փետր.- «Շուէտական Քրիստոնեայ Կեդրոնի» նախկին տնօրէն Քէնթ Մալմուիսթի «Բարի Երթ»-ի, եւ միաժամանակ նորանշանակ տնօրէն Մարիա Ուոլթսընին «Բարի գալուստին»

առթիւ, Հին Քաղաքին նոյնանուն կեդրոնին մէջ տրուած հիւրասիրութեան ներկայ եղաւ Էֆիմենիք Յարաքերութեանց Վարիչ Արիս Եպս. Շիրվանեան:

Բշ. 20 Փետր.- Ընդառաջելով Իսրայէլի նախագահ Մօշէ Քացաւի հրաւերին, ի պատիւ Մերձքալթեան երկրներէն Լատվիայի Նախագահ Vaira Vike-Freibergaին, նախագահական ապա-րանքին մէջ կազմակերպուած քարեգալստեան արարողութեան ներկայ եղաւ Էֆիմենիք Յարա-քերութեանց Վարիչ Արիս Եպս. Շիրվանեան:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԵՆ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԽԱՉՔԱՐԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ԻԻՆԵՍԳՈ-ի Կեդրոնի Ընդհանուր Տեսուչ՝ Քօլչինօ Մաքսուրայի ուղղուած նամա-կով, Երուսաղէմի Հայ Պատրիարք, Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, խորին մտահոգութիւն և ընդվզում արտայայտած է ընդդէմ վերջերս հրապարակուած լրատուութեանց՝ Նախիջեւանի միջնադարեան հայկական գերեզմանոցի մը մէջ գտնուող, Ազերի զինուորներու ձեռքով, խաչքարերու սրբապղծութեան և ոչնչացման մասին: Այս խաչքարերը, կը նշէ Պատրիարք Սրբազան Հայրը, պատմական և կրօնական նշանակութիւն ունեցող գերեզմանաքարեր են, նաև ինքնայատուկ հնադարեան հայ քրիստոնէական քանդակարուեստի ստեղծագործութիւններ ըլլալով:

Երուսաղէմի Հայ Պատրիարքարանը այս աւերածութիւնն եւ բռնարարութիւնը կը նկատէ որպէս մշակութային ցեղասպանութիւն և դիմած է ԻԻՆԵՍԳՈ-ին՝ միջամտելու և կասեցնելու այս չարական փորձերը բնաջնջելու հայ քրիստոնէական մշակութային ժառանգութիւնը Նախիջեւանի երկրամասէն, որ Ատրպէյճանի գերիշխանութեան տակ է:

Պատրիարք Սրբազան Հօր նամակը կը յորդորէ ԻԻՆԵՍԳՈ-ին Ընդհանուր Տեսուչին այս ոճիրները միջազգային համայնքին ուշադրութեան յանձնելու, որպէսզի այսպիսի ազգային գանձերու անհետացման անխիղճ արարքներ չի գոյատևեն: Նաև արտայայ-տած է այն յոյսը որ ԻԻՆԵՍԳՈ-ն իր միջազգային ազդեցութիւնը բանեցնէ Ատրպէյճանի կառավարութեան վրայ՝ որ վերջինս յարգէ իր յանձն առած պարտաւորութիւնները պահպանելու իր հողատարածքի կրօնական և մշակութային յուշարձանները:



ՀԱՅԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԿԱՐԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ

ARMENIAN PATRIARCHATE

Թվական
Date

3 January 2006

Nº

Koichino Matsuura
Director-General
UNESCO
7, Place de Fontenoy
75352 Paris
France

Dear Director General Matsuura:

We address this letter to you to express our deep concern and outrage concerning the reports of the on-going desecration and destruction, by Azeri soldiers, of historically and religiously significant tombstones in a medieval Armenian cemetery in the Autonomous Region of Nakhichevan, under Azerbaijani sovereignty. These *khachkars*, or stone crosses, are unique artistic expressions of millennial Armenian religious sculpture.

The Armenian Patriarchate of Jerusalem considers this vandalism and violence as cultural genocide. We appeal to your organization to intervene and put a stop to these malicious attempts to eradicate the evidence of the Armenian Christian cultural legacy from the region.

We also urge you to bring these criminal acts to the attention of the international community so that such unconscionable acts of ethnic cleansing are not allowed to be perpetuated.

We trust that UNESCO will exert its influence over the government of Azerbaijan to honor its commitment of preserving and safeguarding religious and cultural monuments within its territory.

Prayerfully,

Archbishop Torkom Manoogian

Archbishop Torkom Manoogian
Armenian Patriarch of Jerusalem





ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

Թուական

Date

30 October 2005

OFFICIAL COMMUNIQUÉ

On the evening of Thursday, 27 October 2005, an altercation between a group of students, the guard and the Dean of the St. James Brotherhood Seminary and Theological School, V. Rev. Fr. Baret Yeretzian, resulted in bodily injuries to two of the seminarians, the Dean, and the guard on duty at the Seminary entrance.

Upon consulting with His Beatitude the Patriarch, with the immediate arrangements by Archbishop Nourhan Manougian, the Grand Sacristan, and the swift response by the emergency medical services unit, the injured were transported to the hospital, where they received treatment and were then released. Order was restored within the Seminary compound under the guidance of His Eminence the Grand Sacristan.

Fr. Haigazoun Yeghiayian, as the Acting Dean, continues to oversee the discipline of the Seminary.

Երուսաղեմի Հայ Պատրիարքութիւն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հոկտեմբեր 27, Հինգշաբթի գիշեր, Երուսաղեմի Ժառանգատրաց Վարժարանին մէջ անհաճոյ միջադէպ մը տեղի կ'ունենայ Վարժարանի խումբ մը աշակերտներու և Դպրոցի պահակին և Տեսուչ Հոգ. Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեանի միջև, որու ընթացքին ֆիզիքական վերքեր կը ստանան երկու աշակերտներ, Տեսուչ Հայր Սուրբը և Վարժարանի մուտքի պահակը:

Խորհրդակցաբար Պատրիարք Սրբազան Հօր, Լուսարարապետ Գեր. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի անմիջական կարգադրութեամբ, և բժշկական շտապ օգնութեան, սպասարկութեամբ, վիրատրները հիւանդանոց փոխադրուեցան, և խնամքի ենթարկուելէ յետոյ, արձակուեցան հիւանդանոցէն: Ժառանգատրաց Վարժարանի կարգապահութիւնը վերահաստատուեցաւ Լուսարարապետ Սրբազան Հօր հրահանգին համաձայն:

Հոգ. Տ. Հայկազուն Արդ. Եղիայեան, իբրև Փոխ Տեսուչ, կը շարունակէ հսկել Վարժարանի ներքին կարգապահութեան:

ԴԻՒՆ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

#####



ՊԱՏՐԻԱՐԺԱՐԿԱՆ ՏՆՅՈՅ

ARMENIAN PATRIARCHATE

№

Թուական
Date

13 Նոյեմբեր 2005

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻՒ 2

Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց Ժառանգատրաց Վարժարանի և Ընծայարանի կարգապահութիւնը վերահաստատուած է 27 Հոկտեմբերի անհաճոյ միջադէպէն ի վեր՝ որու մասին Պատրիարքարանի պաշտօնական հաղորդագրութեամբ յայտնած էինք և որ հրապարակուեցաւ հայ մամուլին մէջ:

Ժառանգատրներու խստապահանջ առօրեայ կեանքը կը շարունակուի իրենց ուսումնական դասերով և կրօնական պարտականութիւններով: Այս է աւանդական իրավիճակը այն երիտասարդներուն՝ որոնք Սրբոց Յակոբեանց Ժառանգատրաց Վարժարանի և Ընծայարանի եօթնամեայ դասընթացքին մասնակցելով՝ կը պատրաստուին ձեռնադրուելու և նուիրուելու իրենց հոգեւորական ասպարէզին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ ծառայութեան մէջ:

Ճեմարանիս Ուսումնական Խորհուրդը նշանակուած և լիազօրուած Պատուարժան Տնօրէն Ժողովի կողմէ՝ խորհրդատու ըլլալ Ժառանգատրաց Վարժարանի Տեսչութեան, կը զբաղի Վարժարանի ուսումնական կենցաղով, դաստիարակչական, կարգապահական և բարոյական հարցերով, խորհրդակցութեամբ Ամենապատիւ Թորգոմ Արք. Մանուկեան Սրբազան Պատրիարք Հօր: Ուսումնական Խորհուրդը կ'օժանդակէ Փոխ Տեսուչ Տ. Հայկազուն Աբեղայ Եղիայեանին՝ հսկելով ներքին կարգապահութեան և կրօնական և ուսումնական պարտականութիւններու կատարման: Ուսուցչական կազմը կը գումարէ իր հերթական ժողովները՝ վերաքննելու Ժառանգատրներու դաստիարակչական յառաջդիմութիւնը և բարոյական վարքը, ըստ Ճեմարանի կրթական պահանջներուն:

ԴԻՒՆ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



ՊԱՏՐԻԱՐԺԱՐԸՆ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

Թուական
Date

21 November 2005

OFFICIAL COMMUNIQUÉ #3 re: SEMINARY

In his letter dated 25 October 2005, addressed to His Beatitude the Patriarch, Very Reverend Father Baret Yeretzian had expressed his desire to resign from his six-year tenure as Dean of the St. James Seminary and Theological School. Regretfully, the occurrence on October 27 disrupted the normal course of the resignation and was misinterpreted in the press as, "the Dean was dismissed."

Father Baret sought to maintain discipline and order within the Seminary and Theological School, and in the seminarians' participation in religious services.

The Educational Council and the Vice Dean, Father Haigazoun Yeghiayian, are conducting the affairs of the Seminary and Theological School until the appointment of a new Dean by the Holy Synod.

21 Նոյեմբեր 2005

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻՒ 3

Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեան, իր 25 Հոկտեմբեր 2005 թուակիր նամակով ուղղուած Պատրիարք Սրբազան Հօր՝ ցանկութիւն յայտնած էր հրաժարելու Սրբոց Յակոբեանց Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի վեցամեայ տեսչական պաշտօնէն: Յաւալիօրէն 27 Հոկտեմբերի միջադէպը եկաւ խանգարելու հրաժարականի բնական ընթացքը և մամուլի մէջ տեղի տուաւ թիւր մեկնաբանութեան թէ՛ «Տեսուչը հեռացուած է»:

Հայր Պարետ Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի կարգապահութեան հանդէպ խստապահանջ անձ մըն էր թէ Վարժարանէն մերս և թէ եկեղեցական պաշտամունքներու մասնակցութեան տեսակետէն:

Ուսումնական Խորհուրդը և Փոխ Տեսուչ՝ Տ. Հայկազուն Արդ. Եղիայեանը միասնաբար կը վարեն Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի գործերու ընթացքը մինչև նոր տեսուչի մը նշանակումը Պատուարժան Տնօրէն Ժողովի կողմէ:

ԴԻՒՆ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԸՆԻ

#####

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

- Ծննդեան Պատգամ	Գարեգին Բ.	3-5
- Ծննդեան Պատգամ	Վեհ. Կաթողիկոս	6-8
- Christmas Message	Թ.Ա.Մ.	9-10
	T.A.M.	

ԿՐՕՆԱԿԱՆ

- Արտաքինյան Կիրակի	Նուրհան Արք.	11-13
	Մանուկեան	
- Երկու Մոլորակներու	Վարդան Ա. Քհնյ.	14-16
Աւետարեք Ողջագործումը	Տիւրկերեան	
- Յիսուսի Բարձրագոյն	Ալպէն	16-23
Պատուէրը	Նորատունկեան	
- Ս. Սարգսի Տօնին	Ներսէս Արք.	24-27
	Պօղոսյան	
- Մեղայ Զօրութեամբ	Կարէն Ա. Քհնյ.	27-28
Հոգւոյս	Կտանեան	

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

- Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսէն	28
- Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսէն	29
- Կ. Պոլսոյ Հայոց Սրբազան Պատրիարքէն	30
- Հռոմի Սրբազան Պապէն	31
- Ռուսիոյ Սրբազան Պատրիարքէն	32
	33

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

- Միայն Քեզ Մօտ	Յակոբ Արք.	
	Գլենեան	34
- Ծնունդի Գիշեր	Գրիգոր Հոթոյեան	35
- Խրիմեան Հայրիկ	Ներսէս Վանական	36

ԳՐԱԿԱՆ

- Փորձ Համեմատութեան Հայ		
Դողթան Երգերու եւ Երրայական		
Բանաստեղծութեան Միջեւ	Շաւարշ Նարդունի	37-44
- Մեղֆի Ճամբուն Վրայ	Նահապետ Մելիքեան	45-46
- Աշնան Տերեւներու Պէս	Նուպար Զարխուտեան	47-50

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

- Հայ-Իտալական Երաժշտական		
Առընչութիւններէ	Աննա Ասատրեան	51-53

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

- Ինֆնուբեան Հարցը

Շ. Ռ. Պերպերեանի

«Հոլսկ Բանֆ»-երի մէջ

Զաֆարիա Քենյ.

Սարիբէկեան

54-63

ՊԱՏՄԱԿԱՆ

- Արտաշատը Հայոց Դարձի

Նախօրէին եւ Յետոյ

Ժորիս Խաչատրեան

66-79

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

- Հայոց Գիրքերը

Զենօր Քենյ.

Նալպանտեան

80-86

- Հայ/Հակահայ

Մարգարեո Մարկոսեան

87-95

- Վերարժէքաւորում

Սասունիկ Ալեքսանեան

96-104

- «Ճիկէր»ով Պարեցէֆ

Նահապետ Մելիքեան

105-106

- Տեղեկանք Տ. ԿՈՐԻԻՆ ԱԲՂ. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ

- Երուսաղէմի Յունաց Նորընտիր

Պատրիարքին Այցը Պատրիարքարան

107

- Վերանորոգուած Սրբապատկերների
ցուցահանդէս

107-108

- Կալիֆորնիա Նահանգի Սէնաթոր

Ճօ Սիմիթեանի Այցը Պատրիարքարան

108-109

- Ս. Թարգմանչաց Վարժարանի

Ամանորեայ Հանդէս

109

- Ժառանգաւորաց Վարժարանի

Ամանորեայ Հանդէս

109-110

- Ս. Ստեփանոսի Տօնակատարութիւն

110-111

- Սրբազան Պատրիարքի Այցը

Պաղեստինի Նախագահին

111

- Հայ Ուխտաւորների Այցը Երուսաղէմ

111-112

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

113-123

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

124-125



ԴՂ. 28 Դեկտ. 05.- Բեքդեհեմի Ս. Մենդեհան Տանարի տարեկան ընդհանուր մաքրութիւն,
մասնակցութեամբ Հայ, Թոյն և Ֆրանսիսկեան Միարանութեանց:



Ուր. 30 Դեկտ. 05.- Նոր Տարւում Վարդանի Կարգանքի Կենտրոնի Միջին Քարգանքի Զբոսարանը
կողմէ տրուած:



ՊՇ. 17 ՆՈՅ. 05.- Յունաց նորրնտիր Պատրիարք Թեոփիլոսի այցը Հայրը Պատրիարքարան:



ԲՂ. 9 ՅՈՒՆ. 06.- Յունաց և Ղպտի. Ասորի և Հապէշ եկեղեցիներու Աստուածայայտնութեան տօնին առիթով շնորհաւորանքի այցելութիւն Յունաց Պատրիարքարան:



Շր. 7 Յուն. ՕԾ.- Տօն Ս. Ստեփանոսի. Սաղաւարտ ի գլուխ, և ընդհատ ի ձեռքին, (Չախէն Աջ) Պաւլոս Ուր. Կարապետեան, Նարեկ Ուր. Մկրտչեան, Մարքիոս Ուր. Ջաֆարեան, Պաւլոս Սրկ. Դաւթեան, Գրիգոր Սրկ. Աւագեան, Թեոփիլոս Վրդ. Ջաֆարեան, Իսահակ Արդ. Մինասեան, Անտիօն Սրկ. Ալեքեան, Արտակ Սրկ. Յակոբեան, Սամուէլ Ուր. Սաֆարեան, Արարատ Ուր. Ջարգարեան, Սահակ Ուր. Յովակիմեան:

Պատրիարք Սրբազան Հօր հետ ի Պատրիարքարան և ընթրիքին ժառ. Վարժարանի հաշարահին մէջ:



Ռշ. 12 Գուն. ՕՍ.- Այցկուրթին Պաղեստինեան Իշխանութեան նախագահը հարգելով
Արքային - Ռամադան - Հայկական Մեծերէն ատար:



Ուր. 13 Յուն. ՕՃ.- Կաղանդի գիշեր ժառո. Վարժարանի մէջ:



Շր. 14 Յուն. ՕԾ.- Նոր Տարուան Ս. Պատարացի աւարտին, Պատրիարքարանի դահլիճին մէջ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի անունով ուղերձէն յետոյ, Պատրիարք Սրբազանը աւանդական ճարինք թաժենց ներկաներուն:



Եշ. 5 Յուն. ՕԾ.- Տօն Առաքելական Ս. Արողոյ. Դարի Մարգարէին և Յակոբոս Տառննդրայր Առաքելոյն: Տարին մէկ անգամ Պատրիարք Սրբազանը Առաւօտեան ժամերգութեան ընթացքին կը կանգնի Ս. Արողի պատուանդանին:



ԴՁ. 18 Յուն. 06.- Նրուսաղէմի Իսրայէլեան ոստիկանապետեր, Հայկական Մնունդի
նրագալոյցի առաւօտուն Պատրիարքարան կ'այցելեն շնորհաւորանքի եւ բափօրը
առաջնորդելու դէպի Ռեքղեհէմ:

Ս. Նդիայի վանքին առջեւ, ներկայացուցիչներ Ռեքղեհէմէն, Պէյր Ճալայէն,
Պէյր Սահուրէն կը դիմաւորեն բափօրը, եւ Իսրայէլեան ծիաւորներ կ'առաջնորդեն
մինչեւ Թաֆէլի Դերեզման:



ԴՂ. 18 Յուն. ՕԵ.- Պաղեստինեան ձիաւորներով երբ դէպի Ռերզեիէմ: ՄՆՆճեան հրապարակին վրայ դիմաւորում Հ.Ե.Մ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.ի եւ այլ համայնեմներու սկաուտական խումբերէ, Ռերզեիէմի Բաղաճապետէն, Ոստիկանապետէն, Զինուորապետէն, եւ քափօրով մուտք դէպի Հայոց Վանն:




ԴՂ. 18 Յուն. 06.- Քափորը թերթիկների Հայոց վանք կը բարձրանայ: Ենդիսաւորանի մաղաքանները թերթիկների հաղափապետ Տէր. վիթոր Պարարսէի եւ Պաղատիկեան Իշխանութեան նախագահ Մահմուտ Արքայի աւանդով՝ Տէր. Էմիլ Զարմուի կողմէ:



ԴՂ. 18 Յուն. 06.- Ծննդեան տօնին առիթով, Բերդեհեմի Հայոց Վանքի նորոգուած
 ներքնասրահին մէջ հիւրասիրութիւն, ի ներկայութեան Պաղեստինեան իշխանութեան
 Նախագահ Մահմուտ Արրասի:



ԴՂ. 18 Յուն. ՕԶ.- Հայկական Մեծերի կէս գիշերուան պաշտամունքին Գրիստոսի
Մեծերու Լորայրին մէջ, ներկայ գտնուեցան Պաղեստինեան Իշխանութեան Նախագահ
Մահմուտ Աբրա Եւ Ներկայացուցիչներ:



Շր. 21 Յուն. 06.- Հայկական Մեծնդի առիթով Պատրիարքարանի Դահլիճին մէջ շնորհատորանքի այցելութիւն Յունաց եւ Լատինաց Պատրիարքի, Ֆրանսիական միաբանութեան եւ այլ յարանուանութեանց, եւ Ղպտի, Ասորի, Հապէշ Ուղղափառ եկեղեցիներու, Հոգեւոր պետերու եւ Գերկայացուցիչներու:



Կիր. 22 Յուն. Օճ.- Աշխատակցի Ռարրունապետ Իսնան Մեցկերի այցը Պատրիարքարան, Գեղարքի անդամ Յուրի Շրքերի հետ, Էջմիածնէն իրենց վարդապետի առիթով եւ յիշատակներով:




Քշ. 23 Յուն. Օճ.- Նորայակեան Նոր Տարուան առիթով Բաղաճապետարանէն Վեդ. Սեդի Լուիսեանցի Գաղաճապետին հետ:





Եջ. 26 Յուն. ՕԾ.- Տօն Անուանակոչութեան: Ս. Յարութեան Տանարի մէջ Քրիստոսի Ս. Դերեզմանին վրայ պատարագիչ Տիրայր Արք. Մարտիկեան, առաջնորդ Պուլկարիոյ և Թումանիոյ քեմերու: Եւ Տնօրհնէ՛լ Պատրիարքարանի ղաղիկնին մէջ:



Կիր. 29 Յուն. ՕԳ.- Ուխտագնացութիւն դէպի Յորդանան Գետ, Միաբանութեամբ եւ ժողովուրդով:



- Ուխտաւոր Հոգեւորականներ Ս. Էջմիածնէն և Հարաւային Ռուսաստանի թեմէն (Ձախէն Աջ) Մարկոս Վրդ. Յովհաննիսեան (Դեղարժունիի Առաջնորդ), Հարաւային Ռուսաստանի թեմէն՝ Տիար Վալերի և Առաջնորդ Մովսէս Նպս. Մովսիսեան, Թորգոմ Պատրիարհ, Տիրայր Արք. Մարտիկեան (Առաջնորդ Բուլղարիոյ և Ռումանիոյ), Ներսէս Արք. Պօգապալեան, Մկրտիչ Արդ. Պողոսեան (Տեսուչ Անւանի Դպրանոցի):



- Ուխտաւորներ Լուս Աճճեկոսէն՝ Սուրէն Մանուկեան և Հայկ Դրիգորեան: Յիւստէլֆիայէն՝ Տէր. Կարօ Ղարիպեան, Յրէտ Հէսս, Յովհաննէս Խաշիաշեան: Լուս Աճճեկոսէն՝ Հայկ Դրիգորեան:



- Դժ. 18 Յուն. 06.- Ուխտավորներ Երևանի Ս. Յովհաննէս Եկեղեցւոյ հաւատացեալներէն, Բերդեհէմի Հայոց Վանքին մէջ: (Չախէն) Արիս Եպս. Շիրվանեան, Պատրիարք Սրբազան Հայր, Հոգևոր Հովիւ, Տիրայր Ա. Քիւնյ. Սարգսեան, Թեոդորոս Վրդ. Զաւարեան, Լոս Աճճեկոսէն՝ Սուրէն Մանուկեան:



- Եժ. 2 Փետր. 06.- Երևանէն Իսրայէլ ժամանած «Միւս» Հայ ֆութպօլիստներու ալցեկուրիներ Պատրիարք Սրբազան Հօր:

«Սիոն» Ամսագրի բաժանորդագրութիւն

- Սիոն ամսագրի խմբագրութիւնը կը փորձէ սրբագրել եւ ամբողջացնել ցամկը իր բաժանորդներուն:

- Եթէ կը ցամկաք որ ձեր անունը ունենամք ցամկիմ մէջ մեր բաժանորդներուն, հաճեցէք մերքեւի կտրումը յստակ եւ զիջագիր տառերով ամբողջացնել եւ փութով մեր մօր հասցէիմ ղրկել: P.O.Box 14235 Jerusalem, Old City, Isr.

- Նախորդ տարիներուն Սիոն ամսագիրը ձրի ղրկուած է հարիւրներով հասցէներու: Նկատի առած մամաւամդ զումաւոր էջերու տպագրութեամ սղութիւնը պարտաւոր եմք ձեզմէ բաժանորդագիմ խմդրել:

Խմբագրութիւն

ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱԼԷՄ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԻՈՆ

Ամուս.- -----

Տիտղոս.- -----

Կազմակերպութիւն.- -----

Հասցէ.- -----

Հաճեցէք մերփակ գտմել մեր փոխգիրը-----

Իրր բաժանորդագիմ ՍԻՈՆի -----

ՊԱՐՁ կամ ՕԴԱՅԻՆ ԹՂԹԱՏԱՐՈՎ ՂՐԿԵԼՈՒ -----

Ստորագրութիւն

Բաժմեզիմ.-

Պարզ Թղթատարով

US\$108*

US\$200

Մէկ տարի

Երկու տարի

Օղայիմ Թղթատարով

US\$ 128

US\$ 240

*Կամ՝ ձեր երկրիմ համապատասխամ գումարով:



NOTICE TO SUBSCRIBERS

The Armenian Patriarchate of Jerusalem is drawing up a new updated list of subscribers to its official gazette, SION.

In order to ensure that your name is on the list, you are kindly requested to fill in the form below and send it back to us, with your remittance, as soon as possible.

Please write to our new address: POB 14235, Jerusalem, Israel.

We would like to point out that while in previous years it has been the custom to distribute the gazette virtually free of charge to hundreds of subscribers, escalating costs and, particularly, the introduction of colour printing, has imposed upon us the obligation of trying to recover part of these costs.

The Editor

"SION" SUBSCRIPTION RENEWAL FORM

Name:	Address:
Title:	
Organisation:	
Please enter my/our subscription for "SION," for a period of _____ year(s). My/our check for _____ covering the cost of subscription and Surface/Airmail charges, made out to the Patriarchate, is enclosed.	
Signature:	RATES: Surface Mail Air Mail
Official seal:	1 year: US\$108* 1 year: US\$ 128 2 years: US\$200 2 years: US\$ 240
*Or equivalent in your local currency.	